

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ



ԱԿՈՒՆՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 1



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂ

Ա Կ Ո Ւ Ն Ք

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 1

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2011

ՀՏԳ 001
ԳՄԴ 72
Ա 414

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտխորհուրդը

Գլխավոր խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր **Ա.Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Պատասխանատու քարտուղար՝ բան. գիտ. թեկն., դոցենտ **Ա.Ա. ՍԱՐԴՍՅԱՆ**

Համարի պատասխանատու՝ պատմ. գիտ. դոկտոր **Ա.Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Խմբագրական խորհուրդ՝

Հենրիկ Մուշեղի Աբրահամյան – պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Ռաֆիկ Ասքանազի Նահապետյան – պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Սամվել Արշավիրի Առաքելյան – պատմ. գիտ. թեկնածու
Հենգել Գերասիմի Մանուչարյան – քաղաքագիտ. դոկտոր, պրոֆեսոր
Սամվել Պարզևի Մուրադյան – բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Սեդա Քերոբի Գասպարյան – բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Խաչատուր Գարուշի Վարդանյան – բանասիր. գիտ. թեկնածու, դոցենտ
Սեյրան Արտուշայի Ջաքարյան – փիլիս. գիտութ. դոկտոր, պրոֆեսոր
Մելսիկ Պարզևի Սկրտունյան – հոգեբանութ. դոկտոր, պրոֆեսոր
Հարություն Ալեքսանի Մարգարյան – տնտեսագիտ. թեկնածու, պրոֆեսոր

Ա 414 Ակունք. Գիտական հոդվածների ժողովածու / Խմբ. խորհուրդ՝
Հ.Ս. Աբրահամյան և ուրիշ.; Գլխ. խմբ.՝ Ա.Ա. Ներսիսյան. – Եր.:
ԵՊՀ հրատ., 2011 թ. – 128 էջ:

ՀՏԳ 001
ԳՄԴ 72

ISBN 978-5-8084-1422-8

© ԵՊՀ հրատարակչություն, 2011 թ.
© Հեղ. խումբ, 2011 թ.

Պ Ա Տ Մ Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՄԼԵՅԻ՝ ԹԱԳԱՎՈՐ ԴԱՌՆԱԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԴՐԱ ՁԱԽՈՂՄԱՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Ս.Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կիլիկիայի հայկական իշխանության և ապա՝ թագավորության ձևավորման, զարգացման և անկման պատմության մասին շատ է գրվել ու խոսվել: Այդ ամբողջ գործընթացը տեղի է ունեցել հերոսական մաքառման արդյունքում: Նրա առանձին պատմական փուլերում տեղի ունեցած ինքնատիպ հաղթանակները գրանցվել են դիվանագիտության հետ խելացի զուգորդության արդյունքում: Բակ այդ դիվանագիտությունը չի նախատեսել մշտական թշնամիներ և բարեկամներ որոնելու, այլ՝ խուսանավելու, հակադիր ուժերը ճիշտ օգտագործելու քաղաքականություն, որը բնորոշ է եղել հայկական մինչքրիստոնեական քաղաքակրթություններին: Ցավով պետք է նշել, որ սա հատուկ չի եղել Կիլիկիայի իշխանության և մասնավորապես պետության զարգացման բոլոր ժամանակահատվածներին, և վստահորեն կարելի է պնդել, որ այս քաղաքականությունից հրաժարվելու արդյունքում ընկավ Կիլիկիայի հայկական թագավորությունը, որով էլ՝ հայոց թագավորությունների պատմությունն առհասարակ:

Հանրահայտ ճշմարտություն է, որ Կիլիկիայի հայկական իշխանությունը և ապա թագավորությունը ձևավորվեց և զարգացավ համաշխարհային պատմության բավական բարդ և հակասական մի ժամանակահատվածում: Այդ բարդությունը հետևյալն էր՝ մի կողմից խաչակրաց արշավանքներ էին կազմակերպվում դեպի այն տարածաշրջան, ուր այս իշխանությունն էր ձևավորման ընթացքի մեջ, մյուս կողմից՝ այդ արշավանքներն ուղղված էին այն մահմեդական քաղաքական միավորների դեմ, որոնց անմիջական հարևանությամբ էին տեղի ունենում այդ ձևավորումն ու զարգացումը: Հասկանալի է, որ այս իրավիճակում ճիշտ կողմնորոշվելը դյուրին խնդիր չէր. խաչակիրները կարող էին գալ և գնալ, իսկ հարևանները շարունակելու էին մնալ և խաչակիրների գնալու դեպքում արդեն ակնհայտ էր լինելու հարևանների թշնամական վերաբերմունքը: Ուրեմն, անհրաժեշտ էր կիրառել շատ նուրբ քաղաքականություն, այն է՝ իմանալ՝ երբ օգնել խաչակիրներին և երբ մնալ չեզոք՝ նորմալ հարաբերություններ ապահովելով հարևանների հետ: Սա մի հարց է, որ ներկայումս էլ հրատապ է և ունի արդիական հնչեղություն: **Հարկավ, ցանկացած արդյունավետ քաղաքականության ելակետը ուժեղ լինելն է, բայց, ոչինչ, այդ թվում և ուժը հաստատուն չէ, եթե այն միտվածություն չունի հասնելու հզորության, որը ներքին ճիշտ քաղաքականության հետ մեկտեղ պայմանավորված է արտաքին քաղաքական գծի ոչ հարատևության պետական գիտակցությամբ և դրանից մշտական թշնամիներ և բարեկամներ կարգախոսի իսպառ տարանջատմամբ: Մեր խորին համոզմամբ՝ այս ընկալման պետական մակարդակով ընդհանրության չհասնելու պատճառով պետք է հիմնականում պայմանավորել հայոց պետականությունների, այդ թվում նաև Կիլիկիայի հայկական թագավորության անկման փաստը:**

Կիլիկիայի հայկական Ռուբինյան իշխանությունը արևմտյան քրիստոնեական տերությունների կողմից ճանաչվեց թագավորություն Լևոն Բ–ի խելացի քաղաքականության արդյունքում. նրանց խաչակրաց արշավանքների ընթացքում վերջինս նյութապես նրբորեն աջակցել էր նրանց և տվյալ իրավիճակում միանգամայնորեն ճիշտ էր վարվել, քանզի իր իշխանության ուժեղ և խաչակիրներին իր դեմ չտրամադրելու ճիշտ գիտակցությունն ուներ: Նրա աջակցությունն ավելի շատ դիվանագիտական բնույթ էր կրում:

Բայց արդյոք հնարավո՞ր էր Ռուբինյան իշխանության՝ ավելի շուտ թագավորության վերածվելը: Կարծում ենք, որ հնարավոր էր մի ինքնատիպ և խելացի գործչի՝ Մլեհի քաղաքականության արդյունքում, եթե հայ ներքին դավադիր տարրը նրան չզրկեր կյանքից:

Մլեհի (1169 - 1175) կյանքի և գործունեության մասին պատմագիտության մեջ հակասական տեսակետներ են զարգացվել, որի հիմնական պատճառն այն է, որ նա փոխեց արտաքին քաղաքականության ավանդական գիծը, որն ընդհանուր առմամբ նախատեսել է միայն քրիստոնյա տերությունների հետ համագործակցություն: Բացի այդ՝ իշխանության ամրապնդմանը միտված նրա ներքին քաղաքականությունն իր դեմ է տրամադրել որոշ իշխանների և եկեղեցուն, որը, ինչպես հայտնի է, հիշյալ ավանդական քաղաքականության ամենաջերմեռանդ կողմնակիցն էր: Ընդհանրություն կարելի է գտնել նրա և Պապ թագավորի վարած ներքին և արտաքին քաղաքականությունների միջև: Ընդհանրություն կա և նրանց ճակատագրերի միջև: Փորձենք համոզվել այս ամենում: Դրա համար պետք է սկսենք մի փոքր հեռվից՝ համոզելու համար, որ նրա քաղաքականությունը Ռուբինյան իշխան դառնալու ընթացքում նախապես ստացել էր իր հիմնավորումը: 11-րդ դարի վերջերին, երբ սկսվեցին խաչակրաց առաջին արշավանքները, արդեն գոյություն ուներ Ռուբինյան իշխանությունը: Արդեն 1109թ.-ի դրությամբ խաչակիրներն ունեին չորս քաղաքական միավորներ՝ Եդեսիայի կոմսությունը, Անտիոքի իշխանությունը, Տրիպոլիի կոմսությունը և Երուսաղեմի թագավորությունը: Այս իշխանությունները, սահմանակից լինելով Կիլիկիայի հայկական իշխանությանը, դրական դերակատարություն չունեցան նրա ամրապնդման առումով: Սկզբնական շրջանում նրանք Ասորիքի գրավման ժամանակ գորքով իրենց օգնած Կոստանդին Ա–ին (1095 - 1100) թույլ տվեցին իր իշխանության սահմաններն ընդարձակել դեպի արևելք, բայց Թորոս Ա – ի (1100 - 1129) և Լևոն Ա–ի (1129 - 1137) կառավարման տարիներին նրանց վերաբերմունքը խիստ հակասական էր: Այդ հակասականությունը հետևյալն էր՝ սկզբնական շրջանում նրանք օգնում էին հայերին ընդդեմ Բյուզանդիայի, որով նրանց դեմ էին տրամադրում սելջուկյան իշխանություններին, իսկ Հալեպի ամիրա Ռըդվանի կողմից 1104թ. Խառանում կրած սարսափելի պարտությունից շատ չանցած՝ Բյուզանդիայի հետ կնքած պայմանագրով նրան զիջեցին Դաշտային Կիլիկիան և Ասորիքը: Այս իրադարձություններից հետո՝ մինչև խաչակրաց երրորդ արշավանքները, Կիլիկիայի հայկական իշխանությունը միայնակ մնաց Բյուզանդիայի և սելջուկյան իշխանությունների դեմ պայքարում: Բնականաբար, անկախ այդ իշխանության՝ խաչակիրներն ունեցած կողմնորոշումից էլ, սելջուկյան իշխանություններին ձեռնտու չէր նրա ուժեղացումը: Պատահական չէ, որ 1107թ. Իկոնիայի սելջուկները թափանցեցին Կիլիկիա, ավերեցին այն, բայց Բերդուսի մոտ

պարտություն կրեցին Թորոս Ա-ի և Գող Վասիլի գորքերից¹: Սակայն, կարծում ենք, մի բան էր սեփական ուժերով հաղթանակ տանելը և մեկ ուրիշ բան՝ խաչակիրներին և քրիստոնյա Բյուզանդիային ապավինելը, որը ներշնչում էր այն համոզմունքը, թե հայերը ընդդեմ մահմեդականների գործող խաչակիրների և Բյուզանդիայի հետ են: Եվ սա այն դեպքում, երբ վերջիններս, եթե իրենց շահերը չէր համընկնում, միայն ու միայն դեմ էին հայերին: Մրա հակառակն անհնար է պնդել: Պատահական չէ, որ Դաշտային Կիլիկիայի համար պայքարում Թորոս Ա-ի և Լևոն Ա-ի մոլի թշնամիները դարձան խաչակիրներն ու Բյուզանդիան: Դրա ապացույցն էր թեկուզ և այն փաստը, որ Անտիոքի իշխան Ռայմոնդը խաբեությամբ գերեց Լևոնին 1136թ. և միայն մեծ փրկագնով բաց թողեց²: Դա պատահական արարք չէր, քանզի Լևոն Ա -ի ձեռնարկած գործողությունների շնորհիվ 1130-ական թթ., հույներից և խաչակիրներից ազատագրվեցին Դաշտային Կիլիկիայի ծովեզրյա մի շարք քաղաքներ, որով Բյուզանդիան զրկվեց Անտիոքի հետ ցամաքով կապվելու հնարավորությունից: Սա վկայում է մի կարևոր հանգամանքի մասին. **եթե հայերը նվաճումներ են կատարել և ինչ-ինչ հաջողությունների հասել, ապա հիմնականում միայն սեփական ուժերին ապավինելու ճանապարհով:** Եվ հետագայում այս ըմբռնման բացակայությամբ պետք է պայմանավորել Կիլիկիայի հզոր թագավորության թուլացումն ու անկումը:

1137թ. Դաշտային Կիլիկիան արդեն հայկական իշխանության մաս էր, որը չհանդուրժելով՝ Նովիաննես – Կոմնենոս կայսրը մեծ բանակով արշավեց Կիլիկիա, պարտության մատնեց Լևոնին, ապա ընտանիքով գերեց և ուղարկեց Կ. Պոլիս: Միառժամանակ Ռուբինյան իշխանությունը դադարեց գոյություն ունենալ: Ահա այս իրադարձություններից ութը տարի անց հանդես եկավ Մլեհը, նախ՝ որպես եղբոր՝ Թորոս Բ – ի դաշնակից և վերջինիս հետ իշխանությունը վերականգնող, ապա՝ Ռուբինյան մեծ իշխան:

Թորոսը՝ Լևոն Ա – ի որդին, տարբեր տվյալներով 1142 կամ 1145 թթ. փախչում է բանտից և հայրենասեր ուժերին իր շուրջ համախմբելով՝ ազատագրում է Լեոնային Կիլիկիան և վերականգնում հայկական իշխանությունը, ավելին՝ ընդարձակում է նրա սահմանները³: Չերծ մնալով մանրամասնություններից՝ շեշտենք միայն, որ Բյուզանդիան պարտություն կրեց և հաշտվեց Թորոսի իշխանության հետ: Բայց նրա օրոք կատարվեց մի հետաքրքիր իրադարձություն, որը լուրջ եզրակացությունների տեղիք է տալիս: 1160-ական թթ. սկզբներին բավական հզորացել էր Չալեայի սուլթան Նուր աղ – Դինը: Թորոս Բ – ն ընդդեմ նրա միացավ Կիլիկիայի բյուզանդական կառավարիչ Կալումանի, Անտիոքի դուքս Բոհեմունդի և Տրիպոլիի կոմս Ռայմոնդի դաշինքին: 1164թ. Խարիմի մոտ տեղի ունեցած ճակատամարտում վերջիններս պարտություն կրեցին, և Թորոսը հազիվ խուսափեց բռնվելու վտանգից: Սա այն հետևանքն ունեցավ, որ Նուր աղ Դինը սկսեց սպառնալ Կիլիկիային, թեպետ նա գտնվում էր Բյուզանդիայի իշխանության տակ, որի նկատմամբ հավակնություն ունեին Թորոսը և իր եղբայրներ Մլեհն ու Ստեփանեն: Եվ նրանց պայքարը պասկվեց հաջողությամբ: Բյուզանդական քաղաքականությունը Կիլիկիայում և առհասարակ մերձավոր և Միջին Արևելքում սկսեց տեղա-

¹ Տես Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 306:

² Մմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 80:

³ Սամուէլի քահանայի Անեցույ հաւաքմունքի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 131:

տվություն ապրել: Այս պայմաններում առավել հրատապ դարձավ հարևան սելջուկյան և մասնավորապես Հալեպի կառավարիչ Նուր աղ – Դինի հետ հարաբերությունների նորմալացման հարցը, որը լուծեց Մլեհը: Փաստորեն՝ դրա հիմքերն էին՝ ա) Բյուզանդիայի պարտությունը, բ) խաչակրաց իշխանությունների թուլությունն ու երկրիմիությունը, գ) Հալեպի սուլթանության հզորացումը:

Խարիմի ճակատամարտից հետո Նուր աղ – Դինը սկսում է նեղել Անտիոքին և սպառնալ Կիլիկիային, իսկ Բյուզանդիան, զբաղված լինելով հունգարական գահի խնդրով, չէր կարող դիմել վճռական գործողությունների: Այս պայմաններում դիվանագիտական ճշգրիտ լուծումը Նուր աղ – Դինի հետ համագործակցությունն էր՝ ընդդեմ Անտիոքի և Բյուզանդական կայսրության, որն իր գերիշխանության տակ էր ձգտում պահել Դաշտային Կիլիկիան: Եվ ահա դրան գնաց Մլեհը: Համաձայն պատմական որոշ տեղեկությունների՝ Մլեհը իշխանության ձգտել է դեռ Թորոսի կենդանության ժամանակ, թեպետ վերջինիս աջակցել է ընդդեմ Բյուզանդիայի պայքարում իր եղբայր Ստեփանեի հետ, որին 1165թ. դաժանորեն սպանեց Կիլիկիայի բյուզանդական կառավարիչը: Կարծիք կա նաև, որ Մլեհը նույնիսկ կամեցել է սպանել իր եղբայր Թորոսին, որի պատճառով արտաքսվել է Կիլիկիայից: Եթե այսպիսի ցանկություն իսկապես նա ունեցել է, և այս կարծիքը չի ծնվել նրա պայանությունից հետո իր թշնամիների կողմից, ապա կարելի է այն պայմանավորել Թորոսի՝ խաչակիրների հետ ունեցած համագործակցությամբ ընդդեմ Հալեպի սուլթանի, որը, ինչպես համոզվեցինք, անարդյունք վերջացավ: Եղբոր հետ ընդհարվելուց հետո նա ծառայության մեջ է մտնում Նուր աղ – Դինի մոտ՝ վերջինից որպես կալվածք ստանալով Գուրա քաղաքն իր շրջակայքով: Իմանալով այն մասին, որ Թորոսը վախճանվել է՝ իրեն հաջորդ նշանակելով իր փոքրահասակ որդի Ռուբենին՝ Մլեհը, Նուր աղ – Դինի հեծյալների գլուխ անցած, մտնում է Կիլիկիա և խլում իշխանությունը⁴:

Մինչև նրա գործունեության գլխավոր կամ հիմնական կողմերը ներկայացնելը՝ Մլեհի քաղաքական նկարագրի ամբողջացման համար որպես հիմք կարելի է ներկայացնել հետևյալ հայեցակարգային մոտեցումը. **նա անհրաժեշտ էր համարում պայքարել Բյուզանդիայի և լատինական իշխանությունների դեմ՝ այն իրականացնելով ներքին լատինաձև տարրերի դեմ պայքարի համադրությամբ:** Եվ այս առումով նրա հաջողություններն ակնառու էին: Միանգամայն ճիշտ է ասված. «Շատ երևոյթին, Մլեհն այն քաղաքական գործիչն էր, որ հասկացավ, թե խաչակիրների «բարեկամությունը» մեկուսացնում է Ռուբինյանների պետությունը, վիհ փորում նրա և հարևանների միջև»⁵: Այստեղ թերևս միայն ավելորդ է «ըստ երևոյթին» բառակապակցությունը, քանզի հիշյալ ըմբռնումը նա իսկապես ուներ: Նա համոզված էր, որ այդ ուղով կհասներ Ռուբինիանների բացարձակ իշխանության կամ անկախության ճանաչմանը: Եվ Մլեհը դիմում է կտրուկ գործողությունների: Վահկան գրավելով և մեծ իշխան հռչակվելով՝ Մլեհը 1171 – 1173թթ. սկսում է պայքար բյուզանդացիների և խաչակիր ասպետների դեմ: Նա բյուզանդացիներից ազատում է Դաշտային Կիլիկիայի մեծ մասը: Նրա մարտերը հաջող ելքով ավարտվեցին Երուսաղեմի թագավոր Ամորիի և Անտիոքի դուքս Բոհեմունդի դեմ⁶: Հարկավ, այս պայ-

⁴ Մմբատ Սպարապետ, Տարեգիրք, էջ 88:

⁵ Հայ ժողովրդի պատմություն, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1976, էջ 684:

⁶ J. de Morgan, Histoire du peuple arménien, Paris, 1919, p. 171.

քարում նրան օժանդակում էին հարևան սուլթանությունները և մասնավորապես Հալեպի սուլթան Նուր աղ - Դինը: Եթե ավելի կոնկրետ փորձենք արձանագրել Մլեհի հաջողությունները, պետք է նշենք, որ նա Կիլիկիայի հարավ – արևելյան ծովափնյա շրջանները մաքրեց՝ դուրս բշտելով Անտիոքի դքսին և մյուս խաչակիրներին, իսկ բյուզանդական իշխանության մնացորդներից մաքրեց Տարսուսի, Ադանայի և Մամեստիայի ծովամերձ շրջանները, Պոմպեպոլիս քաղաքը: Այս գործողությունների ընթացքում նա ուներ Հալեպի սուլթանի զինական աջակցությունը: Բյուզանդական կուսակալներ Միքայել Վառնան, Կոստանդին Եվփորպեն և Կոստանդին Կալամանը փորձեցին ընդդիմանալ Մլեհին, սակայն նրանց զորքերը, ջախջախիչ պարտություն կրելով, երկրից դուրս շարտվեցին: Մլեհի հաղթանակներն այն արդյունքն ունեցան, որ Ռուբինյան իշխանության մեջ մտան խոշոր նավահանգստային քաղաքներ, նա էլք ունեցավ դեպի ծով, որը նշանակում էր՝ մաքսատուրքը ծովային առևտրից գալու էր հայկական իշխանությանը՝ նպաստելով նրա տնտեսական հզորությանը: Փաստորեն, Մլեհի խելացի ձեռնարկների շնորհիվ Ռուբինյան իշխանությունը վեր էր ածվում ծովային պետության, և նա արդեն հսկայական մի թագավորության անթագ թագավորն էր: Դրանում համոզվելու համար բավական է նշել, որ Մլեհը Նուր աղ – Դինի հետ դրամ է կտրում՝ կարգավորելով երկրի դրամական շրջանառությունը: Իսկ հասկանալի է, որ դրամ ունենալը պետության գոյության կարևորագույն պայմաններից մեկն է:

Մինչև Մլեհի ներքին քաղաքականության լուսաբանմանն անցնելը՝ կարևոր ենք համարում նաև մեկ կարևոր հարցի պատասխանի որոնումը, այն է՝ ինչո՞ւ էր Նուր աղ – Դինը համակերպվում հայկական իշխանության հզորացման Մլեհի ձգտումների հետ և ավելին՝ օժանդակում էր դրանց: Կարծում ենք, պատասխանը միանգամայն պարզ է. **նրան ավելի շատ ձեռնտու էր որպես հարևան ունենալ հայկական հզոր պետություն, որն համենայն դեպս չէր սպառնա իրենց գոյությանը, քան դավադիր խաչակիրներին և Բյուզանդիային, որոնք անում էին ճիշտ հակառակը:** Եվ ամենևին էլ պատահական չէր Մլեհի հետ դրամ հատելու փաստը, որին մեր խորին համոզմամբ հետևելու էր նրան թագավոր Ճանաչելը: Այդ միանգամայն հնարավոր էր, որովհետև տվյալ իրավիճակում այդ ձեռնարկին չէին կարող խանգարել ոչ Բյուզանդիան և ոչ էլ խաչակիրները՝ քանզի իրենց դեմ հանդիման ունեին հզոր ուժ՝ հանձին սուլթանությունների և նրանց հետ դաշնակցած հայկական իշխանության:

Մլեհի թագավոր հռչակվելուն նպաստում էին նաև նրա ներքին կարևոր ձեռնարկները: Նա 1173թ. մայրաքաղաք դարձրեց Միսը, որը մինչև 1375թ. մնաց հայկական թագավորության վարչաքաղաքական կարևոր կենտրոնը: Փաստորեն *de facto* կար պետություն՝ իր մայրաքաղաքով: Մլեհը մի շարք միջոցառումներով թուլացնում է նաև ներքին տնտեսապես հզոր տարրին և լատինամոլ իշխաններին և հոգևորականներին, որոնք դեմ էին իր քաղաքական գծին: Նա «յարքունիս» է գրավում կամ պետականացնում տաճարական տնտեսությունները, ինչպես նաև ուռճացած իշխանների կալվածքները, սահմանափակում է եկեղեցու միջամտությունը պետական գործերին, իրեն է ենթարկեցնում կենտրոնախույս ձրգտումներ ունեցող ուժերին: Մլեհը նաև պայքար է սկսում Լամբրոնի շեթումյանների դեմ, որոնք հայտնի էին իրենց բյուզանդափրոջամբ, սակայն այն սակավարդյունք է վերջանում, քանզի Մլեհը սպանվում է: Այսուհանդերձ, պետք է պնդել, որ Մլեհը իր կառավարման կարճատև ընթացքում կարողանում է երկ-

րում ստեղծել կենտրոնաձիգ իշխանություն: Նրա՝ արտաքին՝ հավասարակշռված և ներքին՝ դավադիր տարրերին զսպելու քաղաքականությունը բոլոր հիմքերը տվել էր թագավոր հռչակվելու համար:

Սակայն հայտնի է, որ հայոց եկեղեցին գրեթե միշտ դեմ է եղել մահմեդական հարևանների հետ համագործակցությանը և ձգտել է պետական այրերին կողմնորոշել դեպի քրիստոնյա տերությունները՝ անտեսելով այն հանգամանքը, որ դրանով վտանգվում էր հայոց անկախությունը: Յավոք, այդ քաղաքական կողմնորոշման մեջ նա միշտ ուներ իր համախոհները՝ հանձինս հայ շատ իշխանների: Այդպիսի վերաբերմունք դրսևորվեց Արշակունի թագավորների հետ 4-րդ դարում⁷, Թեոդորոս Ռշտունու դեմ՝ 7-րդ դարում, Բագրատունիների հետ՝ 11-րդ դարում:

Նույնը կատարվեց և այս իսլամի և հզոր իշխանի հետ: Արևմտամետ տարրերը, որոնց մեջ մտնում էին աշխարհիկ իշխաններ և հոգևորականներ, 1175թ. Միս քաղաքում դավադրություն են կազմակերպում և սպանում Մլեհին՝ փոխանակ նրան թագադրելու որպես հայոց թագավոր, որը դրսից չէր ունենա ոչ մի հակադեցություն: Հետաքրքիր է, որ Սմբատ Գունդստաբլը Մլեհի սպանության մասին հետևյալն է գրում. «Յետ Ե ամի տերութեան իշխանքն Մլեհին խորհեցան խորհուրդս անօրէնութեան և միաբանեալ սպանին զնա ի քաղաքն Միս, յաղագս անհանգիստ բարուց իւրոց»⁸:

Ըստ Սմբատի՝ Մլեհին սպանել են վատ վարքի համար, բայց այստեղ կարևոր է այդ արտահայտության հիմքերի որոնումը: Սմբատն ապրել և գործել է Մլեհից շատ հետո, 1208 – 1276թթ.-ին և Մլեհի մասին տեղեկությունները, հարկավ, քաղել է լատինական կամ լատինամոլ աղբյուրներից: Իսկ դրանք չէին կարող անաչառ լինել:

Թեպետ Մլեհի հաջորդը՝ Ռուբեն Գ –ն, վրեժ լուծեց նրա սպանողներից և շարունակեց նրա արտաքին կուրսը, բայց Ռուբինյան իշխանությունը կորցրեց թագավորություն դառնալու ճիշտ ժամանակն ու հնարավորությունը: Մլեհը թաղվեց Մեծքար վանքում՝ պատմությանը թողնելով հակասական գնահատականներ իր անձի և գործունեության մասին:

Ամփոփելով՝ նշենք, որ այսպիսով Մլեհի արտաքին և ներքին քաղաքականությունը արդեն հանգեցրել էին Ռուբինյան թագավորության փաստացի գոյությանը, բայց այդ գործընթացը կասեցվեց, որովհետև կրկին գլուխ բարձրացրեց այն ավանդական դարձած քաղաքականությունը, որ հայության ազգային անվտանգության երաշխիքը քրիստոնյա տերություններին ապավինելն էր, որի սխալականության մեջ մի ավելորդ անգամ ևս կարելի է համոզվել՝ ուսումնասիրելով Կիլիկիայի թագավորության անկման պատմությունը:

С.А. АРАКЕЛЯН – Вопрос о возможности Мле стать государем и причины его провала . – В статье указано, что великий князь княжества Рубинян Мле превращает в великое государство, ведя не традиционную политику сближения с мусулманскими державами. Его княжество было равно королевству. Но внутренние предательские силы, организовав убийство Мле, лешают княжество Рубинян возможности стать королевством.

⁷ Տե՛ս Ս. Ա. Առաքելյան, Պետական քաղաքական միտքը Արշակունյաց Հայաստանում 4 –րդ դարի 30 – 70 –ական թվականներին, ԵՊՀ Իջևանի մասնձյուղի գիտական հոդվածների ժողովածու, 2010, էջ 5–10:

⁸ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, էջ 89:

**ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑՈՒ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ռ.Ա. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Առաքել Դավրիժեցին հանդիսանում է հայ միջնադարյան հարուստ պատմագրության խոշոր երախտավորներից մեկը: XVII դարում հանդես եկան նաև այլ պատմիչներ, սակայն նրանց երկերն իրենց պատմագրական արժեքով չկարողացան հասնել Դավրիժեցու երկերի մեծությանը: Ղ.Ալիշանի բնութագրմամբ՝ Դավրիժեցին թե՛ իրենից 2-3 դար առաջ և թե՛ հետո եղած պատմիչների մեջ լավագույնն է⁹:

Լեոն Դավրիժեցուն համարում է «առաջնակարգ գրական մի աստղ, որ չունի իր նմանը թե՛ նախորդ դարում և թե՛ իր ժամանակակիցների մեջ¹⁰»: Իսկ Մ.Աբեղյանը բարձր է գնահատել Դավրիժեցու հայրենասիրությունը՝ գրելով. «Խորենացուց ավելի սրտառույ է ողբում յուր հայրենիքը, որից ավելի գեղեցիկ չէր կարող ոչ մի իրեն ժամանակակից բանաստեղծ ողբալ¹¹», կամ՝ «այդպիսի նկարագիրներ մեր պատմության մեջ քիչ կպատահենք Եղիշեի ժամանակից ի վեր¹²»:

Նրա մասին անչափ գովեստով են խոսել իր ժամանակակիցները՝ որպես լայն մտահորիզոնի և մեծ պատրաստվածության տեր մարդու: Չաքարիա Քանաքեռցու վկայությամբ բանիմաց վարպետներից էր «Թավրիզեցի Առաքեալ վարդապետն՝ որ տեղեակ էր ամենայն պատմագրաց, որ և արար զպատմութիւնս անբնական աշխարհիս Արարատեան ի մեծ Շահ-Աբասէն...¹³»:

Ա.Դավրիժեցու երկում նկարագրված են հայ ժողովրդի՝ 1602-1662 թթ. պատմաքաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային իրողությունները: Այն աչքի է ընկնում տվյալների բազմազանությամբ, որտեղ պատերազմական գործողությունների, երկրի ներքին վիճակի, տիրակալների քաղաքականության կողքին տեղեկություններ են հաղորդվում նաև ժողովրդագրության, տեղագրության, քաղաքների, տնտեսական կենցաղի, մասնավորապես արհեստների, առևտրի, ժողովրդի կենցաղի ու սովորույթների, նյութական մշակույթի, մասնավորապես եկեղեցաշինության, հոգևոր դասի գործիչների, նրանց տարազի, հոգևոր մշակութային արժեքների, ժողովրդական տոների, դավանաբանական և այլ՝ ամենատարբեր հարցերի մասին:

Սույն հոդվածի շարադրանքի համար օգտվել ենք տարբեր հրատարակություններից,¹⁴ բայց որպես հիմնական աղբյուր օգտագործել ենք Դավրիժեցու

⁹ Ղ.Ալիշան, Հայպատում, մասն Ա, Վենետիկ, 1901, էջ 131:

¹⁰ Լեո, Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1969, էջ 353:

¹¹ Մ.Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գ. II, Երևան, 1946, էջ 446, 519:

¹² Նույն տեղում, էջ 446:

¹³ Տես «Չաքարեայ Մարկալազի պատմագրութիւն», հ. Գ., Վաղարշապատ, 1870, էջ 4:

¹⁴ Տես Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Լ.Ա. Խանլարյանի, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1990:

երկի Վարագ Առաքելյանի աշխարհաբար թարգմանությունը¹⁵: Գլխավորապես նպատակ ենք ունեցել ներկայացնել հայության ժողովրդագրական պատկերի փոփոխությունների և հայկական բնակավայրերից ոմանց մասին նրա արեքավոր տեղեկությունները:

Առաքել Դավրիժեցին մանրամասն նկարագրում է Շահ Աբաս 1-ի հրամանով 1604 թ. հայերի բռնագաղթը, ժողովրդի տառապանքները: Հայտնի է, որ Շահ Աբասը կիրառեց այսպես կոչված «այրած հողի» մարտավարությունը, այն է՝ ամայացնել ու անմարդաբնակ դարձնել Հայաստանի մի շարք շրջաններ, տեղահան անել հայ բնակչությանը, որպեսզի Հայաստանին տիրելու համար պարսկաթուրքական պատերազմում թուրքերը գրկվեն սննդից, անասնակերից, օժանդակ աշխատուժից: Միաժամանակ ծրագրում էր իր երկրի մի քանի մարզեր բնակեցնել Հայաստանից գաղթեցված աշխատասեր հայ բնակչությամբ, հույս ունենալով՝ հիմնականում հարուստ վաճառականների և հմուտ արհեստավորների, ինչպես նաև հողագործների միջոցով, նրանց ջանքերով ու կապիտալով՝ նպաստել Պարսկաստանի տնտեսական ու մշակութային վերելքին: Նրա մյուս նպատակն էր՝ Հայաստանի շատ գավառներ, հայագուրկ դարձնելով, երկրի բնակչությունն ավելի նտրացնելով, երկար ժամանակ հայերին գրկել պաշտպանունակությունից և ինքնուրույնության համար պայքարելու հնարավորությունից:

Ամիրգունա խանին կարգադրված էր՝ «տարագրել-քշել՝ չթողնելով ամենևին կենդանի շունչ, չհամոզվողներին, թագավորի հրամանը չանսացողներին՝ սրով ու մահվամբ, գերությամբ»: Պատմագիրը այս հրամանը և արարքը համարել է «աշխարհակործան ու դաժան, հողմակոծ հուր»:

Պատմագրի հաղորդման համաձայն նաև «մեծ սովի ու ջալալիների արշավանքների պատճառով հայոց մեծ ազգը ելավ, դարձավ վտարանդի իր տեղերից, հայրենի բնակավայրերից ու երկրներից և գլուխն առած իր երեսի ուղղությամբ ցիրուցան լինելով սփռվեց ամբողջ աշխարհում՝ Կիպրոս, Կոստանդնուպոլիս և սրա շուրջ եղած քաղաքներում, Ուռումելի [Բալկաններ], Բողդան [Մուլդավիա], Իլախների երկիրը [Լեհաստան], Կաֆայի կղզին [Ղրիմ], Պոնտոսի [Սև ծովի] ծովեզրերը, այլև շատերը Ատրպատական երկիրը...: Հայոց ազգի այն հատվածը, որ եկավ զեռեղվեց Ատրպատականում, պարսից թագավորը մեծ ու առաջին Շահ Աբասը, սրանց բոլորին այստեղից էլ քշեց տարավ Պարսկաստանի կենտրոնական տարածքները, մի մասին՝ Ֆահրապատ, մի մասին Սպահան քաղաքն ու նրա գավառները [Դավր., 123-124]:

Պարսկաստան գաղթեցված հայ բնակչությունը տեղաբաշխվեց երկրի գանազան շրջաններում, հիմնականում Սպահանում ու նրա շրջակայքում: Տեղ հասնողներից ովքեր քաղաքացիներ էին, տեղավորվեցին Սպահանում, իսկ ովքեր շինականներ ու գյուղացիներ՝ Սպահան քաղաքի շրջակա գավառներում բնակեցրին, այսինքն՝ Լնջանում, Ալնջանում, Գանդիմանում, Ջղախոռում, Փարիայում և Բուրվարում...» [Դավր., 47]: Հիմնվեցին պարսկահայ նոր գաղթօջախներ:

Բռնագաղթի անմիջական արգասիքը հանդիսացավ հատկապես Նոր-Ջուղան, որը դարձավ խոշորագույնը իրանահայ գաղթօջախներից: Շահ Աբաս Ա-ն ջուղայեցիներին տեղավորեց Ջադենդեռունդ գետի ափին, Սպահանի մոտ, հո-

¹⁵ Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, Երևան, 1988:

դաբաժին հատկացնելով իր անձնական լավագույն, ընտիր հողերից, որոնց մի մասը նրանք ստացան իբրև պարգև, իսկ մյուսները ձեռք բերեցին դրամով¹⁶: Հայերի թիվն այստեղ XVII դարի 20-ական թթ. հասել է 30.000-ի¹⁷: Նոր Ջուղայի հայկական գաղութն ուներ ինքնավարության իրավունք, ընտրում էր իր **քալանթառին**՝ համայնքի ղեկավարին: Այստեղ բնակչությունը բաժանված էր առանձին մասնագիտական, դասաունեցվածքային խմբերի, որոնց գլխավորում էին ավագները: Ավագ էին ընտրվում ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ հայ գործիչներ, որոնք հաճախ նշանակվում էին շահի կողմից: Գաղութի ակնառու անձերից էլ ընտրվում էր ներկայացուցիչ՝ դատական վեճերը կարգավորելու համար:

Ըստ պարսկական շարիաթի՝ **զհմահների** [այդպես էին անվանվում ոչ մահմեդականները, որոնք պարտավոր էին **ջիզյա**՝ գլխահարկ վճարել] միջև ծագած վեճը կարող էր լուծվել մահմեդական **դազհների** (դատավորների) և կամ հոգևորականների միջոցով: Սակայն, ըստ երևույթին, մահմեդականներն իրենց միջամտությամբ ձնշում էին գործադրում հայ համայնքի վրա: Շահ Աբաս Ա-ի ֆերմանի համաձայն մահմեդականների և հայերի միջև ծագած վեճերը պետք է լուծվեին հայերի օգտին [Դավր., 61]: Անգամ, սկզբնական շրջանում «հայերը ամեն կարգ ու դավանություն կատարում էին համարձակորեն. զանգեր զարկել, ժամասացություն անել, ջրօրհներքը մեծախումբ հանդեսով տոնել, նաև ինքը՝ շահն էլ էր գալիս ջրօրհներքին և տեսնելով ուրախանում էր: Մեռելներին հայերը խաչվառով, շարական երգելով հանում էին քաղաքից, անցկացնում էին շուկայի միջով ու տանում թաղելու և պարսիկներից ոչ ոք անարգական կամ հայհոյական բառ չէր ասում: Շահը քրիստոնյաներին այնքան համարձակություն տվեց, որ երբ հրապարակներում կամ շուկաներում քրիստոնյաների ու մահմեդականների միջև վեճ ու կռիվ էր պատահում, կովողները համահավասար միմյանց ծեծում էին և հայհոյում առանց երկյուղի» [Դավր., 62]: Պատմիչը շահի այդ հայանպաստ արարքը մեկնաբանում էր շահի խոսքերով. «Մեծ ծախսերով, ջանքերով ու հնարներով հազիվ կարողացա նրանց այս երկիրը բերել: **Ես նրանց չբերեցի իրենց օգուտի համար, այլ որպեսզի մեր երկիրը շենացվի ու մեր ազգը ավելանա**» [Դավր., 62]: Սակայն միաժամանակ Դավրիժեցիի վկայում է նաև դատական վճիռ կայացնելիս՝ հայերի նկատմամբ մահմեդականների կամայականությունների մասին: Օրինակ՝ մահմեդականի սպանության մեջ մեղադրվող հայը դատապարտվում էր մահվան, իսկ մահմեդականին դատելիս բավարարվում էին նրա մեկ մատը կտրելու վերաբերյալ որոշմամբ [Դավր., 63, 170]:

Պատմիչը ԼԳ գլխում խոսում է, թե ինչ պատճառով և ինչպես հայ քրիստոնյաներին հանեցին Սպահանի քաղաքի կենտրոնից և տարան ծայրամասը, գետից այն կողմ բնակեցրին: Շահ Աբաս I-ը «այն ժամանակ, երբ հայոց ազգը քշում տանում էր Պարսկաստան, այն հայոց ազգից մի մաս քրիստոնյաներ, որոնց դաշտեցիներ են անվանում՝ Գողթան գավառի Դաշտ անվանված գյուղից լինելու համար, բերեց բնակեցրեց այս տեղում՝ [Սպահանի] Շամշապատ կոչված թաղում, մահմեդականների մեջ: Տեղի լավ լինելու համար քաղաքի այլ տեղերից (և արքու-

¹⁶ Տես Հ.Տեր-Նովիհանյաց, Պատմություն Նոր Ջուղայու, որ յԱսպահան, հ. 1, Նոր Ջուղա, 1880, էջ 33-34; Ա.Աբրահամյան, Պարսկահայ գաղթօջախը.- Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ.Ա, Երևան 1964, էջ 256:

¹⁷ Ա.Աբրահամյան, նշվ. աշխ. էջ 256:

նիքում ծառայողներից) նույնպես մեծ թվով մահմեդականներ եկան և բնակվեցին այս թաղում: Բնականաբար, նախանձելով հայերի ստեղծարար գործունեությանն ու ինչքին, պարսիկները «միաբանվելով թագավորի ներքինիների հետ՝ սկսեցին ճնշել դաշտեցի քրիստոնյաներին, որպեսզի սրանց արտաքսեն այդ տեղից» [Դավր., 350]: Եվ որովհետև թագավորը հրաման էր արձակել գինու արգելքի վերաբերյալ (այն մահմեդականների դավանանքի համաձայն՝ անմաքուր էր և օգտագործելը մեղք էր համարվում), ուստի մահմեդականները ամբաստանում են արքային հայերի «գինարբու ազգ» լինելու, «գինով ջուրը պղծելու՝ խաղողը ճմլելով քաղցուն գինի ստանալու, կնձիռը ջուրը թափելու և դրանով ջուրը պղծելու, օղի ստանալով՝ մրուրը ջուրը թափելու, գինու կարասը ջրով մեկ-երկու օր թրջած պահելով լվանալու, լվացաջուրը առվի ջրին խառնելու և այլ ամբաստանական մեղադրանքներով» [Դավր., 350-351]:

Շահ Աբասը դա առիթ դարձնելով և տեղի տալով այդ ամբաստանություններին՝ հրաման է արձակում. «Ուլքեր գինարբու ազգեր են, թող էլնեն բաժանվեն մահմեդականներից և քաղաքամիջից գնան քաղաքի ծայրամասերը, առանձին բնակվեն» [Դավր., 351]: Հարկադրված, մի մասը գնաց ու հիմնադրեց Նոր Ջուղան, մյուս մասն էլ Գավռապատ գնացին և վարձով ապրեցին: Սպահանից հանվեցին նաև այլ թաղամասերում հաստատված Ամիրից, Գազիկից, Բաղեշից, Մուշից, Բերկրիից, Արճեշից, Արծկեից, Երզնկայից, Դերջանից, Բաբերդից, Կարինից, Բասենից, Կաղզվանից, Շիրակավանից, Արարատյան առանձին բոլոր գավառներից, Ալաշկերտից, Մակվից, Խոյից, Սալմաստից, Ուրմիայից (եկածները)...: Սրանց, ինչպես նաև Երևան քաղաքի բնիկ տեղացի հայերին նույնպես հանել և քշել տարել էին Սպահան քաղաքը և քաղաքամեջ մահմեդականների հետ խառնիխուռն և նաև զուտ հայերով առանձին բնակեցրել այն թաղերում, որոնց անունները ասում են Թորոսական և Շխաբանա [Դավր., 352]: Պատմիչը հետևողականորեն ընդգծում է, որ գինու գործածությունը հայերին իրենց կառուցած բարեշեն տներից արտաքսելու համար պատրվակ էր միայն: Այս միջադեպը՝ մեկն էր Սեֆևիների ներքին քաղաքականության մեջ նոր ուղղություն նշանակող երկրի այլադավան համայնքների մեկուսացման գործընթացում, որը սկսեց կիրառվել մասնավորապես XVII դ. 50-ական թվականներին, - գրում է Լ.Դանեդյանը¹⁸:

Ե՛վ երևանցիներին, և՛ մյուս տեղերից եկածներին բնակության տեղ հատկացրին Սպահանի կողքով հոսող գետի մյուս ափին, ջուղայեցիներին մոտիկ: «Քաղաքը և բոլոր մահմեդականները, թագավորի պալատն ու վաճառանոցները և այն ամենը, ինչ կա, որ քաղաքին է վերաբերում, գետի հյուսիսային կողմում են, իսկ ջուղայեցիները՝ հարավային կողմում, գետից դեն են տեղավորված ուրիշ ազգերից զատ ու առանձին» [Դավր., 354]: Հայաստանի տարբեր վայրերից եկածներն այստեղ էլ ունենում են իրենց թաղամասերը՝ Թորոսական, Շխաբանի, Շամշաբադ և այլն:

Տեղահանումը թեև մեծ զրկանքներ ու դժվարություններ առաջացրեց, բայց մահմեդականներից առանձին, ջուղայեցիների հարևանությամբ բնակվելը հետագայում գոհացում պատճառեց հայ բնակչությանը: Այստեղ ընդարձակ տարածքներում մեծ և հարուստ տներ շինեցին, պարտեզներ ու այգիներ հիմնեցին:

¹⁸ Տես Լ.Դանեդյան, Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր, էջ 161-199:

Բացի այդ, «անջատվելով բաժանվեցին մահմեդական օձաբարո ազգից, որ մշտապես կծոտելով նենգում ու տանջում էին քրիստոնյաներին, իսկ այժմ բոլոր քրիստոնյաները մի տեղում են միավորված և ուրախությամբ գոհանում են տեր Աստծուց...» [Դավր., 355]:

Ուշագրավ է, որ Պարսկաստան բռնագաղթած հայերից «անջատեցին քարագործ արհեստավորներին, տարան Սպահան քաղաքը այն արհեստի համար, որ պետք էր գալիս այնտեղ թագավորի տան շինության և ողջ պարսից ազգի համար» [Դավր., 356]: Սրանց Սպահանի հարավային կողմում, գետի այն ափին են բնակեցնում՝ «գավր ազգի» հարևանությամբ: Պատմագիրը «գավր ազգ» է անվանում պարսկական այն ցեղախմբին, որ մինչ իր ապրած ժամանակները հետևում էր զրադաշտական կրոնին և չէր ընդունում մահմեդականությունը:

Հայերի տեղից-տեղ տեղափոխումները շարունակվում են նաև Շահ Աբասի հաջորդների օրոք:

Շահ Աբաս Երկրորդը 1659 թ. մայիսին հայ քարագործ վարպետներին և մահմեդականությունից խուսափած պարսիկներին այստեղից էլ տեղահանում ու բնակեցնում է այնտեղ, որտեղ բնակեցվել էին «երևանցիները, շխաբանցիները և դաշտեցիները», դրանով «բոլոր այլացեղ ու այլահավատ ազգերը առանձնացվեցին մահմեդականներից, որպեսզի մահմեդականները նրանցից անխառն բնակվելով մաքուր մնան (չպղծվեն)» [Դավր., 357]:

Քրիստոնյա ժողովուրդների համար առանձին չարիք էին պարբերաբար կրկնվող մանկահավաքները (Դեվշիրմե)¹⁹: Օսմանյան իշխանությունները յուրաքանչյուր 3-5 տարին մեկ հավաքագրում էին քրիստոնյա 8-20 տարեկան տղաներին, որոնք պետք է ընդունեին մահմեդականություն, անցնեին ռազմական ուսուցում և համալրեին ենիչերների շարքերը: Պարսկական իշխանությունները, մանկահավաքների միջոցով համալրում էր զորաբանակը: Դավրիժեցու մի հաղորդման համաձայն, երբ Ագուլիսում տեղի բնակիչները պարտավոր էին դիմավորել շահին, հայ մանուկներին հավաքագրումից զերծ պահելու նպատակով «վայելչագեղ չերևալու, շահին հաճելի չլինելու և նրանցից չվերցնելու» համար սափրել էին գլուխները: Մա առաջացնում է շահի զայրույթը և քահանա տեր Անդրեսար իր կյանքի գնով, ծնողներին ու մանկանց գլուխները սափրած անձանց փրկելու համար, մեղքն իր վրա է վերցնում [Դավր., 280]: Լինում էին և աղջիկների հավաքներ, երբ քրիստոնյաներից իսկում էին աղջիկներ՝ պալատի և հարեմի համար: Դավրիժեցու հավաստմամբ, հայ աղջիկներին արգելված էր փողոց դուրս գալ [Դավր., 416], կենդանի մնացած աղջիկներն ու ջահել կանայք պարսիկների ձեռքը չընկնելու և նրանց չանարգվելու նպատակով «երեսները ծածկում էին իրենց գլխարկով կամ զգեստով և անսահման բարձրությունից իրենց վայր էին նետում քարայրներից ու մեռնում»:

Հայ բնակչության գաղթը նկարագրելիս, պատմագիրը տալիս է հայկական փոքր ու մեծ քաղաքների ու նրա շրջակա բնակավայրերի անունները, որտեղից Պարսկաստան էին քշվում հայերը, Արարատյան երկրի վերակացու նշանակված Ամիրգունա խանի կողմից: Ժողովրդագրական պատկերի ճշգրտման առումով մեծ արժեք ունեն գրքի այն էջերը, որոնք ընդգրկում են Շահ Աբասի կողմից հայե-

¹⁹ Այդ մասին տես Մ.Զուլյան «Դեվշիրմե-ն» (մանկահավաքը) Օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների («Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2-3, էջ 247-256):

րին Իրանի խորքերը բռնի գաղթեցնելու և հայ ժողովրդի համար այդ գաղթի աղետալի հետևանքների նկարագրությունները:

Չափազանց մանրակրկիտ կարգով հիշատակում է հայկական բնակավայրերը՝ իրենց հին և 17-րդ դարի անվանումներով:

Պատմիչը հառաչանքով է թվարկում դատարկված գավառների, վայրերի անվանումները, գրելով. «Սկսեցին [տեղահանությունը.- Ռ.Ն.] Նախիջևանի սահմաններից, անցան Եղեգնաձոր, Գեղամա ծովի եզերքով, Լոռիով, Համզաչիման գավառը, Ապարանը, Շիրակավանը, Ջարիշատը (Վանանդ կամ Կարս գավառում, կառուցվել է Արտաշես Ա-ի ժամանակ՝ 189-160 Ք.ա., և Արտաշեսի որդի Ջարեհի անունով կոչվել է Ջարեհաշատ-Ջարիշատ), Կարսի գյուղերի մի մասը, Կաղզվանի ձորը անվողջովին, բովանդակ Ալաշկերտը, Մակուի գյուղերը, Աղբակի (Վապուրականի գավառներից մեկը, որտեղով է անցնում Թավրիզ-Վան ճանապարհը), Սալմաստի, Խոյի, Ուրմիայի գավառները, բովանդակ Արարատյան դաշտը, Երևան քաղաքը, Կոտայքի շրջանը, Օաղկունքի ձորը, Գառնու ձորը, Ուրծաձորը), սրանցից առաջ Կարինի, Բասենի, Խնուսի, Մանազկերտի, Արծկեի, Արճեշի, Բերկրի, Վանա գավառները» [Դավր., 52]:

Ա.Դավրիժեցու «Պատմությունը» արժեքավոր է նաև ազգագրական և տեղանվանական բացահայտումների, տեղորոշումներ կատարելու առումներով: Մենք կփորձենք անդրադառնալ ոչ բոլոր բնակավայրերին, տեղանուններին և նրանցում եղած հոգևոր ու կրթամշակութային հարստատություններին:

Նախ առանձնացնենք «Աղջոց վանքը» (Աղջկուց վանք) [Դավր., 18]: Մա վանական համալիր է և գտնվում է Գեղարդից յոթ կմ հարավ-արևելք: Այս վանքի մոտ եղել է նույնանուն գյուղը, որտեղից էր նաև Մելիքսեթ չարահուշ Մելիքսեթ կաթողիկոսը:

Հավոց թառ [Դավր., 23]: Գտնվում է Գառնիից դեպի արևելք, Ազատ գետի ձախ ափին, բարձունքի վրա: Այն եղել է Հայաստանի նշանավոր վանքերից մեկը, Հայաստանի մշակութային ու կրոնական կարևոր կենտրոն: Կառուցվել է 1013 թ. և 1679 թ. ավերվել է երկրաշարժից: Այժմ գրեթե ավերակ է:

Առինջ գյուղ [Դավր., 72]: Գտնվում է Կոտայքի տարածաշրջանում, Երևանին կապած: Պատմիչը այստեղ հիշատակում է նաև *Ղրխբուլաղ* վայրը:

Պատմագիրը հիշատակում է նաև Աշտարակի ենթաշրջանի Կարբի և Օհանավանք, Օշական կոչված բնակավայրերը և նրանցում եղած եկեղեցական համալիրները: Խոսվում է նաև Փլիպոս կաթողիկոսի կողմից Մուղնու Ս.Գևորգ գորավարի վանքի կառուցման, Օշականի Ս.Մեսրոպի տաճար-հանգստարանի վերանորոգման, Ուշի գյուղում Ս.Սարգիս գորավարի վանքի, Բջնի գյուղում Ս.Աստվածածնի տաճարի վերակառուցման, Բջնիում Ս.Սարգիս գմբեթավոր խաչաձև եկեղեցու մասին: Թվարկելով բնակավայրերը, խոսում է հիմնականում նրանցում և մոտակա եկեղեցիների վերանորոգման մասին՝ Թիֆլիսում, Լոռու գավառում, Արարատյան հովտում, Միսական գավառում, Ղափանի գավառում, Նախիջևան քաղաքում և սրա գյուղերում՝ Աստապատի մեծաշուք եկեղեցու, Ճահուկ, Շահակերտ, Գաղ գյուղերի եկեղեցիների, Շոռոթի եկեղեցու, Ագուլիսի վանքի և չորս եկեղեցիների, Թավրիզ քաղաքի եկեղեցու, Դարաշամբի, Յղնայի եկեղեցիների Մովսես և Փլիպոս կաթողիկոսների օրոք (XVII դ.) կառուցման մասին և այլն [Դավր., 278]:

Պատմիչը հիշատակում է նաև **Վժան** անվամբ գյուղի մասին [Դավր., 308], որը Արագածոտն գավառի հնագույն գյուղերից է: Ներկայումս այն Աշտարակի ենթաշրջանի Ուջան գյուղն է:

«Պատմություն» երկում հիշատակվում է **Մազրա** գյուղը, որ կոչվել է նաև Մեծ Մազրա: Ներկայումս այն Զոդ բնակավայրն է [Դավր., 85]:

Կարենիսը [Դավր., 146] **Գյումուշ** (Արծաթ) գյուղի հին անունն է: Այս գյուղում է գտնվում Առաքելոց վանքը, որ կոչվել է նաև Կարենավանք: Այն այժմ ավերակ է: Գտնվում է Հրազդան քաղաքից 16 կմ դեպի հարավ-արևմուտք: Հիշատակվել է **Կաղզվան** [Դավր., 183] բնակավայրը Այրարատ նահանգի Երասխաձոր գավառում:

Ամբերդ գավառ [Դավր., 198]: Սա նույն Արագածոտն գավառն է: Հիշատակվում է նաև Ամբերդ անվամբ բերդ-ամրոցը՝ Արագածոտն գավառում՝ Բյուրականից 7 կմ հյուսիս: Պահպանվել են միայն դղյակի, բերդապարսպի ավերակները, եկեղեցու, բաղնիքի և այլ կառույցների մնացորդները:

Հարենի գյուղ [Դավր., 198]: Այն եղել է Կարբի գյուղի մոտ, բնակչությունից դատարկվել և ավերվել է Շահ-Աբասի բռնագաղթի ժամանակ:

Ըստ պատմագրի՝ Տաթև վանքը սկզբնապես կոչվել է Ստաթեի կամ Եվսաթեի վանք [Դավր., 198]:

Չորո վանք կամ **Ցրվանց**: Այն գտնվել է Տաթև վանքի մոտ:

Թանահատի վանք [Դավր., 200]: Տեղադրման հարցը առ այժօր վիճելի է:

Բարկուշատ [Դավր., 201]: Այն գտնվում է Արաքսի պարսկական ափին, որտեղ գտնվել է Նախավկայի վանքը:

Պատմագիրը տեղեկություններ ունի նաև Գողթն գավառի մի շարք բնակավայրերի և վանական համալիրների մասին: Դրանցից են՝ **Ցղնա** գյուղը, **Ջուղան**, **Վերին Ագուլիս** գյուղաքաղաքը, **Օրդվաթ**, **Շամբ**, **Շոռոթ** գյուղերը: Գավառի հիշատակված վանքերից են՝ Վերին Ագուլիսի Ս.Թովմաս Առաքյալի վանքը, Ցղնայի Ս.Աստվածածին եկեղեցին, Մարվանիսի (Մեսրոպավանի) Ս.Մեսրոպ վանքը: Աստապատ գյուղաքաղաքից 3 կմ հարավ-արևելք ընկած Արաքսի ձախ ափին հիշատակվում է Ս.Ստեփանոս Նախավկայի անունով ամուր պարիսպներով և երկաթապատ դռներով վանքը և այլն [Դավր., 212-214]:

Նրա գործում հիշատակվում են Երնջակ գավառը և Նախիջևան բնակավայրը: Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ Սյունիքի նահապետներից մեկի կինը՝ Երնջակը շինում է իր անունով Երնջակ բերդը և գավառը բերդի անունով կոչվում է Երնջակ²⁰: Այս գավառում հիշատակվում է Ապարան կամ Ապարաններ գյուղը [Դավր., 151]: XVIIդ. սկզբում այն ուներ 500 տուն հայ բնակիչ և կապ չունի Նիզ գավառի Ապարան բնակավայրի հետ:

Ոսկանապատ գյուղ. [Դավր., 25]: Հիշատակվում է Պատմական Հայաստանի **Գարդման** գավառում հիմնված Միակ սարի ստորոտում, Գանձակ գետակի ձախ ափին: Գարդմանը համապատասխանում է ժամանակակից Ադրբեջանի Ղազախի, Թովուզի, հյուսիսային և Շամքորի շրջանի արևմտյան մասերին:

²⁰ Տես Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա.Ա.Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 71:

Հաթերք գյուղ [Դավր., 25]: Գտնվում է Մեծ Հայքի Արցախ նահանգի Հաթերք գավառում: Հիմնադրվել է Տրտու (Թարթառ) գետի ձախ ափին: Այժմյան Արցախի հանրապետության Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղն է:

Խաչեն և Դիզակ՝ Արցախ նահանգի գավառներից են: Դիզակի սահմաններն էին հարավից՝ Արաքսը, արևելքից Մուղանի դաշտը, հյուսիսից՝ Քյոնդուլան գետը, արևմուտքից՝ Քիրս լեռը:

Պատմագրի հաղորդմամբ Արցախ աշխարհի Ջրաբերդ գավառը անվանվել է նաև Ճարաբերդ [Դավր., 474]: Գավառը կրել է նաև Ճարաբերդ, Չլաբերդ, Չլբերդ, Ջերմուկի բերդ, Ճառաբերդ անվանումները: Պատմագիրը մեկ այլ տեղում անվանում է Ծար գավառ [Դավր., 477]:

Շամքոր [Դավր., 201]: Արցախ նահանգի Փառնես գավառն է, որտեղ գտնվում է Փառիսոս քաղաքը, այժմ կոչվում է Կալաքենդ:

Քոչիզ գյուղ: Սա Ծովատեղ գյուղի հին անունն է, որ գտնվում է Արցախ նահանգի Վարանդա գավառում:

Վերին Զակամ: Գտնվում է Արցախ նահանգի Կողթ գավառում, որ հետագայում բաժանվեց երկու մասի՝ Շամքորի և Զակամ գավառների: Վերին Զակամի կամ ուղղակի Զակամի գյուղերից է պատմագրի հիշատակած Մելիքզատան գյուղը [Դավր., 25]:

Քշտաղսի՝ Խանածախ գյուղ [Դավր., 25]: Հին Աղահեջք գավառում, որ հետագայում կոչվել է Քաշաթաղ: Երկու գյուղ կա Խանածախ անունով. մեկը Արցախի Խաչեն գավառում, իսկ մյուսը, որ հիշատակում է պատմիչը, Քաշաթաղում է՝ Գորիսի մոտ:

Հոչանց գյուղ [Դավր., 206]: Հիշատակվում է Սյունյաց նահանգի Աղահեջք գավառում (Քաշաթաղ): Այստեղ հայտնի են եղել Քաշաթաղ և Խոժոռաբերդ ամրոցները:

Բաղք գավառ [Դավր., 225]: Համապատասխանում է Ղափանի շրջանի մի մասին, իսկ **Խոտանանը**՝ Բաղքի գյուղերից մեկն է:

Վասակաշեն անվամբ գյուղ [Դավր., 477]: Այժմյան Վարդենիսն է:

Չարեք գետ [Դավր., 474]: Չարեք փոքր գետը և նույն անվամբ բերդը և վանքը պետք է լինի Արցախ նահանգի Փառիսոս կամ Գարդման գավառում:

Քոթուկլու գյուղ [Դավր., 218]: Այն տեղադրվում է Շուշիի դիմաց, Քառասնից գյուղի մոտերքը:

Երնջակ գավառ: Մեծ Հայքի Սյունյաց նահանգի առաջին գավառն է եղել: Հարավից սահմանակից է եղել Արաքսին, արևմուտքից Նախիջևանին, հյուսիսարևմուտքից Ճահուկին, հյուսիսից Ծղուկ և Գողթն գավառներին: Երնջակի նշանավոր Ապրակունիս գյուղի մոտ պատմիչը հիշատակում է նաև Ս. Կարապետ վանքը:

Խրամ ավան [Դավր., 407]: Գտնվել է Նախիջևան գավառում:

Շոռոթ գյուղ [Դավր., 279]: Մեծ Հայքի Սյունյաց նահանգի Երնջակ գավառի գյուղերից է: Երնջակի հարավային սահմանը հասնում է մինչև Արաքսի ափը: Երնջակը շրջապատված է Գողթն, Ծղուկ, Ճահուկ և Նախիջևան գավառներով:

Մեղրի գյուղ [Դավր. 273]: Մեղրի ներկայիս քաղաքատիպ ավանը հնում կոչվել է Արևիք, որ մտնում էր Սյունաց նահանգի մեջ:

Պատմագիրը շրջել է նաև Արևմտյան Հայաստանում և հիշատակում է բազմաթիվ տեղանուններ, որոնցից ներկայացնենք մի քանիսը.

Խնուս: Խնուսը Բարձր Հայքի Խնուս գավառի վարչական կենտրոնն է եղել:

Արծկե քաղաք [Դավր., 35]: Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Բզնունիք գավառում է հիշատակվում, Վանա լճի հյուսիսային ափին:

Ամուկ գավառի **Այյուր** գյուղ՝ [Դավր., 421], որը Վասպուրականի Առբերան գավառի գյուղերից մեկն է:

Բերկրի քաղաք: Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Առիբերան գավառում է հիշատակվում: Նույն նահանգի Ադիհովիտ գավառի Վանա լճի հյուսիսային ափին է հիշատակվում **Արձեշ** քաղաքը, իսկ Ապահունիք գավառում՝ Մանակերտը [Դավր., 38]:

Աստապատ բնակավայր [Դավր., 273]: Գյուղաքաղաք էր Մեծ Հայքի Վասպուրական նահանգում:

Արտագ գավառ: Մեծ Հայքի Վասպուրական նահանգի 15-րդ գավառն է, որի կենտրոնը Մակու բերդաքաղաքն է: Հնում կոչվել է Շավարշան: Ըստ ավանդության այստեղ է նահատակվել Հայաստանում քրիստոնեության քարոզիչ Թադեոս առաքյալը, որի պատվին էլ Մակուից 20 կմ հարավ-արևելք կառուցվեց Սուրբ Թադեոսի վանքը [Դավր. 275]:

Բազվան կամ **Բագավան** [Դավր., 331]: Բնակավայրը, գտնվում է Այրարատ նահանգի Բագրևանդ գավառի Նպատ լեռան ստորոտում, որտեղ կառուցվել է բազիլիկ մեծ տաճար: Այժմ կոչվում է Ուչքիլիսե:

Բայազետի բերդ [Դավր., 331]: Պատմագիրը նկատի ունի Այրարատ նահանգի Կոգովիտ գավառի Հին Բայազետը:

Խոշաբ բերդաքաղաք [Դավր., 385]: Պատմագիրը նկատի ունի Վանից 35 կմ հարավ-արևելք Խոշաբ գետի եզերքին կառուցված բնակավայրը:

Կեղի գավառ [Դավր., 394]: Պատմական Խորձյան գավառն է, որ գտնվում է Չորրորդ Հայքում և այժմ կոչվում է Քղի:

Ոստանի կապան [Դավր., 394]: Այս բնակավայրը պատմագիրը նկատի ունի Վանա լճի եզերքին գտնվող փոքրիկ այն ավանը, որ մեծանալով դարձել էր քաղաք և կոչվել Ռշտունյաց ոստան, որը հիմնադրել էր Վասպուրականի Գագիկ Արծրունի թագավորը: Ծովի կողմից անհնարին է եղել բերդ մտնել: Ճանապարհն ապառաժի կողի վրա փորված անցքն էր, որ Դավրիժեցին կապ է կոչում²¹:

Աղբակ կամ **Բերս** երկիր [Դավր., 428]: Ըստ պատմագրի սա Վասպուրական նահանգի գավառներից մեկն էր Հադամակերտ (Բաշկլալե) կենտրոնով: Այս գավառում հիշատակվում է նաև Լոռիքան բերդը:

Բարս երկրի էրնկան գյուղ [Դավր., 248]: Պատմիչը գրում է, թե Բարս երկիրը այժմ կոչվում է Աղբակ, որը Մեծ Հայքի Վասպուրականի գավառներից է: Գա-

²¹ Տես Առաքել Դավրիժեցի Պատմություն, աշխարհաբար թարգմանությամբ, գրքի 225 ծանոթ., էջ 550:

վառի կենտրոնը եղել է Հադամակերտ քաղաքը, որն այժմ թուրքերն անվանում են Բաշկալե, որից քիչ հեռու Սուրբ Խաչ վանքն է: Իսկ Էրնկան գյուղը XVII դարում ունեցել է եկեղեցի:

Պատմագիրը հիշատակում է, որ 653 թ. կաթողիկոս Ներսես հայրապետը Դվինում կառուցում է Սուրբ Սարգիսը, որը այժմ գոյություն չունի և Խորվիրապը, որն այն ժամանակ մատուռ պետք է եղած լիներ, իսկ այժմ գոյություն չունի [Դավր., 484]: 786 թ. կառուցվել է Մաքենիսը [Դավր., 484], որը գտնվում է ՀՀ Մարտունու շրջանում, ժամանակին եղել է նաև կրթական օջախ: Պատմագիրն ունի նաև մեզ հայտնի այլ վանական և եղեղեցիական համալիրների հիմնադրման վերաբերող հակիրճ տեղեկություններ [Դավր., 484-485]: Ըստ նրա՝ Ախուրյանի աջ ափին, սահմանի այն կողմում հիմնադրվել է Հռոմոնսի վանքը՝ X դարում Բյուզանդիայից փախած հայ վանականների կողմից, որի համար էլ կոչվել է Հռոմոնսի [Դավր., 485]:

Դավրիժեցին հիշատակում է նաև Երկուերեսի եկեղեցին: Նա այն համարում է մեծ եկեղեցի, որը Օսմանյան Մուրադ խոնդկարը կամեցել է քանդել 1032 [1583] թվականին և քարերը տեղափոխել՝ բերդ կառուցելու համար: Ըստ պատմագրի՝ եկեղեցու Առաքել անվամբ վարդապետին հաջողվել է կանխել եկեղեցու ավերումը, թեև թուրք ելուզակները հասցրել էին պղծել այն [Դավր., 477]: Թորոմանյանի կարծիքով այդ եկեղեցին եղել է այժմյան Չարենցի անվան դպրոցի տեղում, որտեղ գտնվում էր Ս.Գրիգոր Լուսավորիչը, որը կառուցվել է Երկուերեսի տեղում:

Ամփոփելով նշենք, որ Առաքել Դավրիժեցու տեղեկություններն ունեն սկզբնաղբյուրի բացառիկ կարևոր նշանակություն՝ հայոց բռնագաղթերից հետո Պարսկաստանում հայության ստեղծած ժողովրդագրական նոր պատկերի մասին: Իսկ տեղանունների մասին տեղեկությունները կարևոր են քարտեզագիտության և պատմական աշխարհագրության զարգացմանը նպաստելու առումներով:

Р.А. НАГАПЕТЯН – *Сведения Аракела Даврижеци об изменениях этнического образа армян и названиях армянских местностей.* – В статье автор представляет сведения знаменитого армянского историка средневековья Аракела Даврижеци о новом этническом образе армян в Персии, образовавшегося в результате миграции Шаха Аббаса. А так же, здесь выделяются упоминания историка о ряде местностей с армянскими названиями или местожительств, которые важны с точки зрения содействия развитию исторической географии и картоведения.

ՄՅՈՒՆՅԱՑ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՏԱՆ ՏՈՀՄԱԾԱՌԸ

Ս.Լ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Մյունխաց նախարարական տունը մաքուր հայկական ծագում ունի, Հայաստանի բնիկ նախարարական տներից է, գալիս է դյուցազունների (աստվածամարդկանց) սերունդ Հայկ նահապետի ճյուղից: Մովսես Խորենացին ասում է, որ Հայկ նահապետի սերունդներից մեկի անունը Գեղամ է լինում («արի Գեղամ», - ասում է նա), Գեղամը Գեղարքունիքում²² սերում է իր Միսակ²³ որդուն, ումից էլ սերում է Մյունխաց տունը:

Այստեղ մի կարևոր շեշտադրում անենք: Պատմաբանները գտնում են, որ հայերիս տված ցեղային անունը՝ արի (արիացեղ), իրականությանը չի համապատասխանում, որ այդ անունը հայերիս կպցնում են արիադավանները՝ ելնելով ազգային սնապարծությունից: Սակայն Խորենացին ու Սեբեոսը (ով իր «Պատմություն»-ը գրելիս Խորենացուց նման հավաստի աղբյուրներ է օգտագործել), Հայկին ու նրա սերունդներին բնութագրելիս՝ նրանց անընդհատ տված «արի» (կամ՝ դրան նույնական «դիցազն»)՝ Հայկի պարագայում) ցեղանվանումը ասում է այն մասին, որ Հայկն ու բոլոր հայազունները արիական ծագում են ունեցել, ինչպես Հայկին ցեղակից՝ Զրվանը (սա իրանցիների նախնին է) ու նրա սերունդները:

Այսպես, ուրեմն, Միսակը գտարյուն հայ-արիական ծագում ունի: Գեղամի որդի Միսակի մասին Խորենացին գրում է. *«Մի սեզ ու թիկնավետ, վայելչակազմ, ճարտասան և գեղեցիկ աղեղնավոր էր: Նրան (հայրը, - Ս.Մ.) տվեց իր ստացվածքի մեծ մասը և բազմաթիվ ծառաներ»²⁴. և նրան ծառանգական սահման կտրեց (Գեղարքունիքի, - Ս.Մ.) ծովից դեպի արևելք մինչև այն դաշտը, ուր Երասխը սեպացած լեռները ձեռքերով, երկար ու նեղ ձորերով անցնելով, ահագին շառայունով թափվում է դաշտը: Միսակը այստեղ բնակվելով, իր բնակության սահմանները լցնում է շինություններով և երկիրը իր անունով կոչում է Մյունիք. բայց պարսիկներն ավելի ճիշտ կոչում են Միսական»²⁵։* Միսակի ու նրա հիմնած տան՝ հայ ազնվական (երկրի բնիկ, գտարյուն հայ) ծագում ունենալու մասին է հավաստում նաև Միսակյան տան՝ մեզ հասած միակ պատմիչի՝ Ստեփանոս Օրբելյանի ասածը. *«Չկարծես, թե (խոսքն ուղղված է «Մյունիքի պատմության» պատվիրատուին, - Ս.Մ.) այս (Մյունխաց, - Ս.Մ.) տոհմի մարդիկ խառնիճաղանջ ամբոխներից են կամ ինչ-որ առաջադիմության պատճառով և կամ պատահաբար են ստացել նախաթոռ նահապետությունը, այլ աստվածաստեղծ մարդու նախասկզբնա-*

²² Շենի անունը Գեղամն է դրել «իր անունով» (Խորենացի):

²³ Անվան հիմքը *սիս* բառարմատն է, որ նշանակում է սեզ, մեծազույն, փառահեղ (բառարմատը կա նաև Մասիս-ում):

²⁴ Խոսքը պատերազմների ժամանակ գերի վերցված այլազունների մասին է և ոչ այլ հայերի. հնուց կարգի համաձայն հայը (արին) հային (արիին) չպետք է ծառա լիներ:

²⁵ Կարծում եմ՝ «ավելի ճիշտ» ասելը տեղին չէ. հայերենում սիս-ը և սյուն-ը (նշանակում է սեզորեն վեր խոյացած, որը նույնիմաստ է սիս-ին) պարզապես հոմանիշներ են:

կան ազնիվ տոհմից սկսած ակնհայտ հարազատությամբ որդիները հայրերին փոխարինելով հասան նախարարության»:

«Միսակից սերված ցեղը» Խորենացին բնութագրում է որպես «մեծ և անվանի տոհմ»: Իսկ Օրբելյանը Միսակից սկիզբ առած Սյունյաց տանուտերերին համարում է «Սյունյաց վեհափառ տերեր», ովքեր «Միսակի ցեղի երջանկավետ բարեբախտություններն ու նախաթոռ տիրապետություններն» ունեին:

Դժբախտաբար, պատմագրությունը հնարավորություն չի տալիս ամբողջականորեն ներկայացնել Սյունյաց նահապետների և իշխանների հաջորդականությունն ու ճյուղավորումները²⁶: Այնպես որ, բավարարվենք կցկտուրով:

Ո՞վ է հաջորդում Միսակ մեծ նահապետին: Այս հարցին որոշակի հնարավոր չէ պատասխանել: Կարելի է միայն ենթադրել, որ նա լինում է Գառնիկը: Դրան հիմք է տալիս Խորենացու այն ասածը, որ «Գեղամը (Միսակի հայրը, - Ս.Մ.) ... լեռան ստորոտում, մի ամուր ձորակում շինում է մի դաստակերտ և անունը դնում է Գեղամի, որ հետո նրա թոռան՝ Գառնիկի անունով կոչվեց Գառնի»:²⁷ Խորենացին չի ասում, թե Գառնիկը Գեղամի ո՞ր որդու՝ Հարմայի, թե՞ Միսակի որդին է: Բայց քանի որ նա ասում է նաև, որ Գեղամը «Հարմային թողեց Արմավիրում (ոչ Գառնիում, - Ս.Մ.) բնակվելու իր որդիների հետ», - հիմք է տալիս ենթադրելու, որ Գեղամի ցանկությամբ Գառնիում հաստատված «թոռը» լինում է Միսակի որդին: Ով, փաստորեն, լինում է նրա մի սերնդաձյուղը:

Գեղամի՝ Միսակից հետո ծնված որդին է լինում, ինչպես նկատվեց, Հարման²⁷: «Հարման տարիներ ապրելով սերեց Արամին», - գրում է Խորենացին: Արամը մեծամեծ քաջագործություններ է կատարում, հիմնում՝ Հայոց մեծ թագավորությունը: «Որովհետև նա արևելյան և հարավային ազգերը նվաճել և հանձնել էր այս երկու ցեղերին՝ արևելքը Միսակյաններին և Ասորեստանի կողմերը Կադմուսի տան հաջորդներին՝ այլևս ոչ մի տեղից կասկած չունեի, ուստի երկար ժամանակ մնաց արևմուտքում»: Ասվածը հիմք է տալիս ասելու, որ իր ստեղծած մեծ թագավորության արևելյան հատվածի տնօրինությունը Արամը հանձնած է լինում իր հորեղբոր՝ Միսակի Գառնիկ որդուն, կամ՝ նրա սերունդներից որևէ մեկին (Խորենացու «Պատմությունը» հիմք չի տալիս ասելու, թե ինչ է լինում նրա անունը): Միսակյան տան՝ Հայոց թագավորության մեջ երկրորդ-երրորդը լինելը շարունակվեց նաև Արամին հաջորդող Արայի (Արա Գեղեցիկի) թագավորության ժամանակ:

Դժվար չէ կռահել, երբ Շամիրամից սկսած Հայաստանը Ասորեստանի լծի տակ է անցնում՝ այդ կայսրության տիրակալները նեղում են իրենց նախնուն՝ Բելին սպանող Հայկի սերունդներին: Այդ բախտին են արժանանում նաև Միսակյանները: Մի որոշ ժամանակ դադարեցվում է Միսակյան տան՝ Հայոց մեծ տան մեջ գլխավոր դերակատարումը: Պատմիչներն ու վկայագիրներն էլ կարևորություն չեն տալիս Միսակյան տան մասին հիշատակություններ անելուն: Խորենացին ու Օրբելյանն էլ, հիմք չունենալով, դադարեցնում են այդ տան տոհմաձառը ներկայացնելը, և դա մինչև հայոց Վաղարշակ թագավորի ժամանակները: Այս-

²⁶ Սկսած 451-ից եկեղեցու, Մամիկոնյանների և Սյունյաց տան միջև թշնամանք է առաջանում: Ահա և առաջինների հովանավորությամբ գրված «պատմություններում» Սյունյաց տունը այդ թշնամանքի պատճառով հիմնականում մոռացության է մատնվում:

²⁷ Ըստ ասորի պատմիչ Մար Աբաս Կատինայի գրքի (ըստ ասորական հնչունագրաձևի) է Խորենացին ասում Հարմա. բուն հայերեն դա, ըստ երևույթին, պետք է լինի Արման:

պես՝ Սյունյաց տան պատմագիրը՝ Օրբելյանը, ստիպված է լինում խոստովանել, որ «Մինչ այստեղ²⁸, ըստ Սյունյաց նահապետների և իշխանների հաջորդականության ու ազգակցության՝ ասելիք չունենք նրանց անունների ու սերունդների վերաբերյալ, որովհետև առաջին պատմագիրներին էլ անհայտ էին այդ իրողությունները, և մենք ,թեև շատ անգամ ջանացինք, բայց միայն այնքանը գտանք, որը վերը շարադրեցինք»:

Սակայն, թեև Խորենացու և Օրբելյանի «Պատմությունները» հիմք չեն տալիս ասելու, բայց կարելի է ենթադրել՝ Պարույր Սկայորդու (ով Հայկի սերունդներից էր) կողմից Հայոց թագավորության վերականգնումով վերականգնվում է նաև Հայոց նախնի տներից մեկի՝ Միսակյան տան տեղն ու դիրքը Հայոց մեծ տան մեջ: Միսակյան տունը ըստ պատշաճին է գնահատվել նաև Պարույր Սկայորդու հիմնած գտայրուն հայ թագավորական դինաստիայի վերջին երկու հզոր թագավորների՝ Երվանդ Սակավակյացի և Տիգրան Երվանդունու (ըստ Խորենացու՝ Տիգրան Մեծի) կողմից:

Գնանք Արշակունի Վաղարշակ հայոց թագավորի ժամանակները, երբ Վանից սկսած՝ Միսակյան տան նահապետների հաջորդականությունը Խորենացու և Օրբելյանի պատմածներում արդեն ստույգ պատկեր է ձեռք բերում:

Խորենացին գրում է, որ Վաղարշակ թագավորը նախարարություններ և այդ նախարարությունների համար (դրանց գլխավորներից) նահապետներ է սահմանում, «որոնք ծագում էին մեր նախնի Հայկի սերնդից և ուրիշներից»: Հայկ նահապետից սերած նախարարական տներից էր Միսակյան տունը, որը մինչ այդ թագավորին մեծ օգնություն էր ցուցաբերել Հայոց թագավորությունը վերականգնելու հարցում: Թագավորը «(թագավորության, - Ս.Մ.) արևելյան կողմից սահմանում է մեծ և առաջին՝ Միսակյան տոհմի նահապետությունը... Եվ հրաման է տալիս Միսակյաններին՝ լինել հրամանատար արքունի բոլոր զորքերին ու թագավորության երկրորդը...», - գրում է Օրբելյանը: Իսկ Խորենացու ասածը, թե թագավորը՝ «Դատին, որ Գառնիկի զավակներից էր, Գեղամից սերված, նշանակում է արքունական որսերի վրա», հիմք է տալիս ասելու, որ հենց այդ Դատն է նրա կողմից «թագավորության երկրորդ» և Միսակյան նախարարության նահապետ նշանակված լինում: Այս Դատը, - կարդում ենք այդուհետ Խորենացու «Պատմության» մեջ, - Վարժ անունով մի որդի ունեցավ, «որի անունով և այս ցեղը (Վարժունիներ, - Ս.Մ.) կոչվեց, բայց այս հետո եղավ, Արտաշեսի ժամանակ»:

Տակավին այսօր հայագիտության մեջ որոշակիություն չկա առ այն, թե ովքեր են եղել, ինչ ծագումաբանություն ունեն աղվանքցիները՝ պատմական Հայաստանի Աղվանք երկրամասի բնակիչները: Խորենացու «Պատմության» մեջ հարցի հստակ պատասխանը գտնում ենք. «Վաղարշակը հաստատում է (թագավորության, - Ս.Մ.) արևելյան հյուսիսային կողմի մեծ - անվանի բազմաբյուր կուսակալությունը, Կուր կոչված մեծ գետի ընթացքով, որ անցնում է մեծ դաշտով, կուսակալ է նշանակում Առանին, որ անվանի մարդ էր և առաջինը բոլոր մտավորական և հանճարեղ գործերում: ... Այս մեծ և անվանի տոհմը, այսինքն՝ Միսա-

²⁸ Խոսքը Միսակյան տան նախնի Միսակից մինչև Վաղարշակ թագավորի ժամանակը ընկած ժամանակահատվածի մասին է, երբ Միսակի տունը վերստին սկսեց Հայոց մեջ կարևոր դերակատարում ունենալ:

կից սերված ցեղը ժառանգեց Աղվանից դաշտը և այս դաշտի լեռնակողմը... Երկիրն էլ Աղվանք կոչվեց նրա քաղցր բնավորության պատճառով, որովհետև նրան աղու էին ասում: Այս Միսակի սերնդից էր և այս անվանի և քաջ Առանը, որ Պարթև Վաղարշակի կողմից բյուրապետ կուսակալ նշանակվեց»: Այսպես, ուրեմն, - հաստատում է Խորենացին, - հանձին Առանի տան մենք տեսնում ենք Միսակյան տան մի ճյուղավորումը: Ավելին՝ նույն մեր պատմահորից իմանում ենք նաև, որ Առանի տունը մեծանալով – հարստանալով՝ նրա զավակներից սերվում են «Ուտեացիների ազգը և Գարդմանացիների, Ծավդեացիների ու Գարգարացիների իշխանությունները»: Պատմիչից մեր խնդրի առումով կարևոր մեկ այլ տեղեկություն էլ ենք ստանում: Պարզվում է՝ Ռշտունիները, Գողթնեցիները ևս սերում են Միսակյաններից. «Ռշտունիների և Գողթնեցիների մասին գտա պատմված, թե նրանք անկասկած Միսակյան հատվածն են կազմում», - կարդում ենք մեր պատմիչի «Պատմության» մեջ: Ենթադրելի է՝ Ռշտունյաց և Գողթնի իշխանական տները ևս հաստատվել են Վաղարշակ թագավորի օրոք:

Այստեղ կրկին հիշենք Միսակյան զարմից Վարաժին՝ Դատ նահապետի որդուն: Երբ Վաղարշակի թոռ Արտաշեսն է Հայաստանում թագավորում (ով, ի դեպ, թագավորական ավագությունը պարսից թագավորից վերցնում է իր ձեռքը)՝ Վարաժը արքայի կողմից մեծ պատվի է արժանանում. արքան, - գրում է Խորենացին, - «իբ որդի Տիգրանին հանձնում է Վարաժ անունով մի պատանու, որ Գեղամի զարմից Գառնիկի սերունդ Դատի որդին էր, որովհետև այդ պատանին նշանավոր էր կորովի նետաձգությամբ, Տիգրանին սովորեցնելու համար: Նրան նշանակում է վերակացու արքունական որսերի²⁹, պարգևում է նրան գյուղեր Հրազդան գետի մոտերքը. նրա ցեղը նրա անունով կոչում է Վարաժունի»: Այսպիսով՝ Վարաժունիների ցեղն էլ Միսակյան հզոր տոհմաձառի բնի մեկ այլ ճյուղավորումն է իրենից ներկայացնում: Այդ ցեղի հիմնադրի սանը՝ Տիգրանը, հայոց թագավոր դառնալով, ինչպես հայտնի է, հռչակվեց Արքայից արքա, Տիգրան Մեծ, ով հայոց աշխարհի համար աշխարհահռչակ մեծագործություններ կատարեց: Իսկ դրանում, պարզ է, մեծ է եղել նրա ուսուցչի՝ Միսակյան տոհմից սերած Վարաժի դերը:

Տիգրան Մեծի ժամանակ լիովին պահպանվում է Միսակյան տան՝ նրա հորից ու պապերից եկող նախնիներին տեղն ու դիրքը թագավորության մեջ: Ավելին՝ արքան Բագրատունիներից սպարապետությունն ինչ-ինչ պատճառներով վերցնում - տալիս է Միսակյան տոհմից սերած Ռշտունյաց նախարարության նահապետ Բարզավիրանին: Միսակյան սպարապետը, հայոց և պարսից զորքերի գլուխն անցա, հաղթում է հռմեացիներին և հրեաների Հյուրկանոս թագավորի հզոր բանակներին:

Տիգրանից հետո եկող Արշակունի թագավորները իրենց ծագումի սեմական կողմի ուժգնացման հետևանքով աստիճանաբար փոխում են թագավորության վարած ներքին ու արտաքին քաղաքականությունը: Դրա հետևանքով թագավորության աստիճանակարգությունում («Գահնամակում») երկրի բնիկ հայ նախարարական տների զբաղեցրած տեղը աստիճանաբար իջնում է, իսկ ոչ բնիկներինը (մարերինը, հրեաներինը, Աժդահակի սերունդներինը...)՝ բարձրա-

²⁹ Հիշենք, որ Վարաժի հորը՝ Դատին էլ Արտաշեսի պապը՝ Վաղարշակն էր նույնպիսի պատվելի պաշտոն տվել:

նում: Այսպես, օրինակ, Խորենացին վկայում է, որ Արտաշեսը (Մանատրուկի որդին, Արտաշատ քաղաքը կառուցողը) թագավոր դառնալով՝ իր դայակին՝ Բագրատունի Մմբատին³⁰ «բացի նրա հայրենական թագակապ ասպետությունից և արևմտյան գորքի իշխանությունից՝ վստահում է հայոց բոլոր գորքերը (որոնք Տիգրան Մեծի ժամանակ վստահված էին Սիսակյան Ռշտունիներին, - Ս.Մ.), մեր բոլոր երկրի գործակալները և ամբողջ արքունական տունը»: Մյուս հայագուն նախարարական տների պես՝ իր զբաղեցրած նախկին բնական բարձրադիրքից զրկվում է նաև Սիսակյան տունը: Դրա հետևանքով պատմիչները երկար ժամանակ դադարում են Սիսակյան տան մասին հիշատակություններ անել մինչև Տիրան թագավորի (113-134թթ. թագավորածը) ժամանակները: Խորենացին, Բագրատունյաց մի իշխանի հետ կովի բռնվելու հետ կապված, հպանցիկ, հիշատակում է այդ ժամանակներում Մյունյաց տան նահապետ Բակուրի մասին: Դրանից հետո դարձյալ երկար ժամանակ լռություն է տիրում:

Այնուհետև Մյունյաց տան մասին հիշատակություն ենք հանդիպում Ագանթագեղոսի և Օրբելյանի «Պատմություններում»՝ կապված Հայաստան քրիստոնեությունը մտցնողին՝ Գրիգորիսին, Կեսարիա տանելու, այդտեղի եկեղեցական առաջնորդների կողմից նրան քահանայապետ օժել - բերելու հետ: Ագանթագեղոսը գրում է, որ Տրդատ թագավորի հրամանով Գրիգորիսին ուղեկցող «գլխավոր նախարարների ու կուսակալների» թվում լինում է նաև «Մյունյաց երկրի իշխանը» (անունը չի տալիս): Ըստ աստիճանակարգության ուղեկցող պատվիրակության անդամներին թվարկելիս պատմիչը Մյունյաց իշխանին նշում է 11-րդը, փաստ, որն ասում է այն մասին, որ մինչ այդ պահը Մյունյաց տունը դեռևս մնում էր Արշակունյաց արքայատան աչքից ընկած: Հետո, սակայն, ըստ Օրբելյանի, Տրդատը, թագավորությունը կազմակերպելով և իշխաններին «յուրաքանչյուրին ըստ պատշաճի» տեղ ու դիրք տալով, որոշում է Մյունյաց իշխանին «առաջ քաշել» և նրան Մամիկոնյան իշխանի հետ մեկտեղ գահնամակում տալ 7-8-րդ տեղերը: Բացի այդ, - շարունակվում է նույն պատմիչը, - թագավորի կողմից «իր թագավորության երկրորդ ու հրամանատար» նշանակած չորսից մեկը՝ «արևելյան կողմին», լինում է Մյունյաց իշխանը³¹ (անունը, ավա՞ղ, դարձյալ չի նշվում):

Արշակ Բ-ի թագավորելուց սկսած (339 թվական)՝ պատմիչների գործերում Մյունյաց տան տոհմաճառի նկարագրությունը ավելի է որոշակիանում:

Խորենացուց իմանում ենք, որ երբ Շապուհը Տիրանի փոխարեն թագավոր է դարձնում նրա որդի Արշակին՝ հայոց արևելյան գորքի սպարապետ էլ, Վահան Ամատունու փոխարեն, նշանակում է իրեն հավատարիմ Մյունյաց նահապետ Վաղինակին: Նույն մեր պատմիչը պատմում է նաև, որ Արշակ թագավորը իր համար կին է առնում Մյունյաց տնից, ով լինում է տան իշխանուհիներից մեկը՝ Փառանձեմը: Այս ամուսնությունը հատկապես Արշակի համար բախտավոր եղավ. դրանից ծնվեց Պապը, ով հետո դարձավ Արշակունի լավագույն թագավորներից մեկը:

³⁰ Բագրատունիները, ըստ Խորենացու, հրեական ծագում ունեն:

³¹ «Այսպես գտանք հայոց իշխանների գահնամակում, որը գրել էր Ղևոնդը», - գրում է Օրբելյանը: Եթե խոսքը Ղևոնդ պատմիչի մասին է, ապա պետք է ասել, որ նրանից մեզ հասած երկում գահնամակը չի պահպանվել...

Դարձյալ Խորենացուց իմանում ենք, որ Վաղինակից Սյունյաց տան նահապետությունը անցնում է Անդոկին՝ Փառանձեմի հորը: Դա որպես թե տեղի է ունենում Փառանձեմի օգնությամբ. նա «Արշակի ձեռքով սպանել է տալիս Վաղինակին»³² և նրա տեղը նշանակում է իր հորը՝ Անտիոքին (Անդոկին,-Ս.Մ.):

Սյունյաց Անդոկ նահապետը մի շատ անխոհեմ քայլ է անում, որի մասին պատմում է Օրբելյանը: Իմանում ենք, որ երբ պարսից Շապուհ թագավորը / առաջնորդվում ենք Ագանթագեղոսի «Պատմության» մեջ ներկայացված հայոց գահնամակով/ Սյունյաց տիրոջը ընդամենը 14-րդ բարձն է հասկացնում (գահնամակում 17 բարձ է նշված լինում...)՝ վերջինս խիստ չարանում է արքայի դեմ և մտմտում նրան մի վնաս տալ³³: Օրբելից մի օր, երբ Շապուհը, զորքեր հավաքելով, գնում է խազարների դեմ պատերազմելու, Անդոկը իր 1700 ընտիր զինվորներով հանկարծակի հարձակվում է արքայանիստ Տիգրան քաղաքի վրա և «անհաշիվ ավար» առնում: Նահապետն իր զինվորներով ամրանում է Բաղաբերդում: Շապուհը, պատերազմից վերադառնալով և իմանալով այդ ամենի մասին, Անդոկից ոչ պակաս է չարանում: Ամրոցի վրա արքան մեծաթիվ զորք է ուղարկում: Մակայն ապարդյուն. պարսից զորքը չի կարողանում ամրոցը գրավել: Շապուհը երկրորդ, երրորդ անգամ է զորք ուղարկում Բաղաբերդի վրա՝ ամեն անգամ զինվորների թիվը կրկնապատկելով: Բայց ամրոցը մնում է անառիկ: Հիրավի, - շախմատային լեզվով ասած, - «Անդոկի պաշտպանություն»: Արժանապատվությունը վիրավորված Սյունյաց նահապետը իր տարականոն գործողություններով պարսից արքայ փաստորեն ցույց է տալիս, որ ազաթանգեղոսյան գահնամակում Սյունյաց նահապետի զբաղեցրած տեղը բնական իրողությանը չի համապատասխանում: Ավա՜ղ, այդ ցուցադրումը շատ ծանր նստեց Սյունյաց աշխարհի վրա: Պարսից արքան, համոզվելով, որ Բաղաբերդը անառիկ է՝ հրամայում է Անդոկից իր վրեժն առնել նրա աշխարհից ու հարազատներից: Պարսից զորքերը, տարածվելով ողջ Սյունյաց աշխարհով, գերում են «մարդ ու անասուն՝ իրեն ծառայեցնելու համար», փրկված սյունեցիները ցրվում են ողջ Հայաստանով մեկ: «Ոչ ոք չէր համարձակվում տալ սյունեցիների անունը», «Սյունյաց բաղձալի աշխարհը 25 տարի անբնակ ու ավերակ մնաց», - ողբերգորեն գրում է Օրբելյանը: Իսկ Խորենացու մոտ կարդում ենք. «Շապուհը Հայաստանում եղած իր գնդերին մարդիկ է ուղարկում, հրամայելով, որ Սյունյաց տոհմը անզավակ դարձնեն»:

Սյունյաց տեր Անդոկը, - շարունակում է Օրբելյանը, - հարմար օր գտնելով դուրս է գալիս ամրոցից և այլ ելք չունենալով՝ «անցնում է Բյուզանդիա մեծ ինքնակալ Թեոդոսի մոտ»: Այդտեղ՝ Բյուզանդիայում էլ վախճանվում է, «որք, անմխիթար ու միայնակ»՝ թողնելով իր Բաբիկ որդուն, ով հետագայում վերականգնելու էր Սիսակյան տունն ու տան նահապետությունը:

Բաբիկի մասին դարձյալ Օրբելյանից, իմանում ենք հետևյալը: Նա երկար չի մնում օտար երկրում: Հասկանում է, այնուամենայնիվ, որ Սյունյաց աշխարհի ավանդական բարեկամ երկրի՝ Պարսկաստանի, այդ երկրի արքայի օգնությամբ է միայն հնարավոր վերականգնել Սյունյաց նախարարությունը: Նա Բյուզան-

³² Այստեղ, կարծում ենք, Խորենացին եկեղեցական բամբասանքներին է կոչ գնացել. վերջինս, ինչպես հայտնի է, տանել չէր կարողանում Փառանձեմին, նրա հեթանոսական (ազգային) կենսաձևի համար և ամեն ինչ անում էր նրան վարկաբեկելու համար:

³³ Կարծելի է՝ նահապետի չարությունը տեղին չի եղել. պարսից արքան առաջնորդվել է հայերի կողմից իրեն ներկայացրած գրավոր գահնամակով:

դիպից գնում է Պարսկաստան, այդտեղի արքունիքում Շապուհի զորականներից մեկի մոտ ծառայության է մտնում իր անձն ու որստեղից լինելը գաղտնի պահելով: Բաբիլը իր քաջագործություններով արքունիքում արդեն աչքի էր ընկել, երբ հունաց երկրից Հոնագուր անունով մեկը իր ավագակային զորքով ավերում է ամբողջ Պարսից երկիրը: Այս հոնը, վստահ իր ուժին, պարսից արքային ասում է. «Ինչի՞ համար են արյունահեղությունը և բազմաթիվ զորքերի ոչընչացումը. ե՛կ ես և դու առանձին մենամարտենք»: Հոնի հետ կովող գտնելու փնտրտուքը կանգ է առնում Բաբիլի վրա: «Եթե այս վրիժառությունը գլուխ բերես, արտահայտածս մեծամեծ խոստումներին կարծանանաս», - ասում է արքան Բաբիլին: «Արի ու վեհ» Բաբիլը հաղթում է «ահռելի հսկա» Հոնագուրին: Ի պատասխան Շապուհի հարցին, թե «ինչ ես ցանկանում»՝ Բաբիլը, բացահայտելով իր ով լինելը, արքայից խնդրում է, որ «միայն իր հայրենի աշխարհը՝ իր տոհմի նախնական բնիկ տերությունը իրեն վերադարձնի»: Շապուհը կատարում է նրա ցանկությունը և մեծ պատվով նրան ուղարկում Սյունիք՝ արտոնելով «գահակալ դառնալ Բագրատունի և Մամիկոնյան իշխանների հետ հավասար աստիճանով»: «Հայոց Խոսրով թագավորի երկրորդ տարում Բաբիլը Սյունիքի տիրակալ դարձավ. նրանից էլ ստացավ իշխանությունը», - շարունակում է Օրբելյանը: Նույն պատմիչը Անդրկին պես-պես գերադրական գնահատականներ է տալիս. «սոսու պես վայելչագեղ, սիրասուն, շքեղագարդ ու գեղանի..., գովելի գործով և բոլորից գերազանց հավատով»:

Բաբիլը ունենում է մի որդի, որի անունը Վասակ է դնում³⁴: Երբ Վասակը մեծանում է, հայրը նրան տալիս է Պարսից արքա Վռամի արքունիկին՝ ի նշան իր հավատարմության: Երբ Բաբիլը մահանում է, նրա սենեկապետը՝ Սամ Գնթունին, գնում է Վռամ արքայի պալատ՝ մահվան բոթը հայտնելու: Պարսից արքան դրանից տրտմում է և սենեկապետի ներկայությամբ մտածում Սյունիքի իշխանությունը հանձնել Վասակին ու նրան ուղարկել իր երկիր: Սենեկապետը, իմանալով այդ մասին, Վասակին ավետիս է անում: Վասակը վշտից անտարբեր լսելով այդ մասին, «նրան ոչ թե ավետյա է շնորհում, այլ սառն ու անշնորհակալ պատասխանում է. «Ի՞նձ է տեր դարձնում, այն դեպքում, երբ Սյունիքի ժառանգությունը իմ բուն հայրենականն է»: Խորամանկ սենեկապետը մտածում է պահից օգտվել: Նա գնում – լսածը արքային հայտնում է: Վռամ արքան լսելով մռայլվում է և որոշածը չեղյալ է համարում: Վասակի տեղը նա Սյունիքի տեր է նշանակում Սամ Գնթունուն: Սա իշխելով մեկ տարի՝ ինչ-որ մեկի տված թույնից մահանում է:

Սամ Գնթունուց Սյունյաց տան իշխանությունը անցնում է Վաղինակին, ով «Սյունիքի իշխանների բնիկ ցեղից» էր³⁵: Նա իշխեց ինը տարի:

Երբ Վաղինակը մահանում է³⁶, Վռամ արքան ուղղում է իր սխալը և Սյունյաց տանտերությունը հանձնում է Վասակին, ով իր իշխանությունը վարում է 39 տարի: Ավելին՝ Պարսից դուռը ոչ միայն Վասակ Սյունու հասանելիքն է տալիս, այլև իր կարևոր պաշտոններն է վստահում նրան. նախ՝ նշանակվում է

³⁴ Անդրկին հաջորդող Միսակյան տան մյուս անդամների մասին տեղեկությունները հիմնականում քաղված են Օրբելյանի գրքից:

³⁵ Մա, ըստ Եղիշե պատմիչի, լինում է Վասակի հորեղբայրը:

³⁶ Ըստ Վասակ Սյունուն ատող ու մամիկոնյանսեր Եղիշեի՝ Վաղինակին սպանել է տալիս Վասակը, իշխանությանը տիրելու համար, որն, իհարկե, իրականությանը չի համապատասխանում:

Վրաստանի, ապա Հայաստանի մարզպան (Վասակ Սյունու՝ Հայաստան գալու ժամանակ հայոց թագավորությունն արդեն վերացել էր): Միսակյան տան այս շառավիղը մեծ դեր է կատարել (ու կատարելու է...) ոչ միայն Միսակյան, այլև հայոց ամբողջական կյանքում: Եկեղեցական պատմագրությունն (Եղիշեի ու Փարպեցու գլխավորությամբ) է նրա դերը նսեմացրել, նրան անգամ «դավաճան» դարձնելով: Վասակ Սյունու՝ ինչպիսին որ նա եղել է իրականում, ճանաչողները նրան ճշմարիտ նկարագրով են, սակայն, բնութագրել: - Վասակը «քաջ... խելացի ու հանճարեղ և կանխագետ, աստվածային իմաստության շնորհիքով օժտված մի մարդ էր», - ասում է Մաշտոցի վարքագիր Կորյունը՝ Վասակին լավ ճանաչող իր ուսուցչի պատմածների հիման վրա: - «Վասակը իր ժամանակին (հայերի մեջ, - Ս.Մ.) ամենանշանավոր մարդն էր: Եթե բոլոր հայ նախարարների գլուխները թափ տալու լինեիր, նրա կեսի չափ խելք չէր դուրս գա», - ասում է հայոց պատմությունը ամենից լավ զգացող մեր պատմավիպասան Րաֆֆին: - «Երկու պատմիչներն էլ՝ Եղիշեն և Ղազարը, վայելում էին Մամիկոնյանների հովանավորությունը և նրանց հանձնարարությամբ գրեցին իրենց երկերը: Ջարմանալի չէ, որ նրանք իրերը դիտում են իրենց հովանավորների աչքերով (որոնք տանել չէին կարողանում Վասակին, - Ս.Մ.)», - ասում է մեր լավագույն պատմաբաններից մեկը՝ Ն. Արոնցը: Վասակ Սյունին իմաստուն պաշտոնյայի համբավ էր ձեռք բերել Պարսից դռանը, այդտեղ հանձին նրա տեսնում էին Հայաստանի թագավորացուի: Եվ ուր որ է Պարսկաստանի հովանավորությամբ Վասակ Սյունու գլխավորությամբ հայոց թագավորությունը պետք է վերականգնվեր. եթե չլիներ միայն 451-ի ապստամբության առիթով Տիգրանում տեղի ունեցած ատյանում մարզպանին հակառակորդ եկեղեցականների և Մամիկոնյանների կողմից՝ որպես այդ ապստամբության նախաձեռնող ու կազմակերպիչ՝ մարզպանին մատնումը (ատյանում դրանց կողմից Վասակի կնիքով կնքված ապստամբությանը վերաբերող փաստաթղթերն են ի ցույց արվում...):

Հայաստանի զրադաշտականացման³⁷ դեմն առնող մարզպան Վասակին պարսկական ատյանը պետական դավաճանության, մատնիչների օգնությամբ ապացուցված, մեջ է մեղադրում և ցմահ նետում զնդան: Որտեղ և հայոց ամենամեծ պետական – քաղաքական, ինչպես նաև պետական – հավատքային այրերից մեկը երկրային կյանքը ընդհատում է:

Շարունակենք ներկայացնել Սյունիքի իշխանների հաջորդականությանը՝ ըստ Օրբելյանի: Վասակից հետո Սյունիքի իշխանությունը անցնում է նրա փեսա Վարազվաղանին, ով իշխում է 25 տարի: Նրանից հետո «Չինգ տարի ընդմիջում է լինում: Ապա իշխում է Գդեհոնը՝ 17 տարի»: Պատմիչը գտնում է, որ «Այս վերջին երեքը (Վասակը, Վարազվաղանը և Գդեհոնը, - Ս.Մ.) բաժանվեցին եկեղեցու աստվածադրոշմ միաբանությունից՝ չարությամբ հիմարանալով և խաբվելով կրակապաշտությունից»: (Ասվածում որոշ ճշմարտության կա: Բայց, ստույգ ասած, Սյունյաց իշխանները կրակապաշտության քողի տակ իրականում իրենց ազգային հավատքն էին իրենց իշխանությունում հովանավորում ու վերականգնում...): Մի քանի էջ անց պատմիչը Գդեհոնի մասին ասում է, որ նա «անձոռնի հսկա էր, որը զորությամբ անպարտելի էր և միշտ պատերազմում էր մնացած

³⁷ Վասակի մարզպանության ժամանակ, ինչպես հայտնի է, Պարսկաստանից մի ահավոր հրաման եկավ՝ ընդունել զրադաշտականություն:

հայերի դեմ³⁸, նրան՝ այդ ահավոր բուրգ Գդեհոնին էլ Վարդանի եղբորորդի Վահանը խփեց – սասկեցրեց պատերազմի ժամանակ...»: Մամիկոնյաններից մեկի կողմից Գդեհոնին սպանելու փաստը ասում է այն մասին, որ 451-ից սկսած Հայաստանի եկվոր (Ճենազն) Մամիկոնյանների և բնիկ Սիսակյան տան միջև թշնամանք էր առաջացել, որից երկրորդը ոչ քիչ վնասներ էր կրում...

«Զորությամբ անպարտելի» Գդեհոնից հետո, դարձյալ ըստ Օրբելյանի, Սիսակյան տոհմաձառը («մինչև Քուրդոն») հետևյալ պատկերն ունի. «Գդեհոնից հետո, - Ս.Մ.) Վռամն իշխում է 7 տարի, ..., մյուս Վասակը³⁹՝ 11 տարի, Աչիրը՝ 9 տարի, ..., Բաբկենը՝ 10 տարր, ..., Հովհանը՝ 18 տարի, Վասդուղը⁴⁰՝ 1 տարի, Գրիգորը՝ 10 տարի, Միհրարտաշիրը՝ 23 տարի, ..., Պիրանը՝ 1 տարի, ..., Սարգիսը՝ 2 տարի, ..., Սահակը՝ 10 տարի, ..., Գրիգորը, որ առողջ և ուժեղ կազմը վաճքի առավելության պատճառով «քաջաց նվիրակ» կոչվեց, իշխեց 16 տարի, Հրահատը՝ 16 տարի, Հովհանը՝ 27 տարի, Քուրդոն՝ 18 տարի: Ահա սրանք են, որ Բաբկից ի վեր մինչև այժմ⁴⁰ իշխեցին՝ որդին հորը հաջորդելով, թվով 20, 332 տարի»:

«Քաջաց նվիրակ» կոչված Գրիգորը եղավ Սիսակյան տան այն առաջին տանուտերը, ով ոչ հայկազուն կին ընտրեց, այդպես մինչև իրեն հասած Սիսակյան ազնվական արյունը խառնելով այլ արյան հետ: Գրիգորից հետո Սիսակյան տան սերունդները, - գրում է Օրբելյանը, - «ոչ թե սոսկ հայկազուն է, այլ խառնված է Պահլավիկ և Արշակունի թագավորական ցեղին, ուստի այսուհետև սրան ճանաչիր (նաև, - Ս.Մ.) որպես Արշակունի զարմ ու Պահլավունի սերունդ»: Քրիստոնյա պատմիչ Օրբելյանի համար այդ բարեբախտությունը, իսկ ըստ մեզ՝ դրժբախտությունը ահա թե ինչպես է տեղի ունենում: Օրերից մի օր պարսից Արշակունի Խոսրով արքան Գրիգորի հայկյան՝ զարմանք հարուցող՝ ամենադիպուկ նետաձգությանն է ականատես լինում և, ցնցված դրանից նրան «ցանկալի ամենամեծ բանն» է խոստանում: Մյունիքի տերը արքայից նրա դստերն է խնդրում իրեն կնության տալ, որը և լինում է: Այդպես Գրիգորից հետո եկողից սկսած՝ Սիսակյան տան իշխանների երակներում սկսեց «Աբրահամից սերած» Արշակունյաց ու Պահլավիկ արյունը (այդ մասին տես Խորենացի) նաև հոսել⁴¹:

Քուրդոյից հետո եկող «երկու կամ երեք իշխանների» տոհմական իսկությունը Օրբելյանը չի կարողանում պարզել: Ենթադրում է, որ դրանք Մյունի իշխաններ չեն եղել: Պատմիչին անծանոթ իշխաններից հետո, սակայն, դարձյալ Մյունյաց տան տեր են դառնում Մյունի իշխանները. «դրանցից առաջինը Վասակն էր, ապա՝ նրա երկու որդիները՝ Փիլիպեն ու Սահակը և մյուս իշխանը՝ Գրիգորը, նույն ցեղից»: Վասակից հետո Մյունյաց միաստանությունը վերանում է (Արշակունի – Պահլավիկ արյունն արդեն սկսում է խոսել...): «հայրենի

³⁸ Պատճառը, ըստ երևույթին, հավատքային է եղել. Գդեհոնը իր իշխանությունում իր նախնյաց հավատքն էր վերականգնում, իսկ հայոց մյուս իշխանները տակավին շարունակում էին քրիստոնեական կրոնի թելադրանքով առաջնորդվել:

³⁹ Սիսակյան տոհմի մեջ դարձյալ Վասակ անվան հայտնվելը, որը հետագայում հաճախակի կրկնելու էր, - ասում է այն մասին, որ Վասակ մարզպանը տոհմի հիշողության մեջ ապրում էր որպես երևելի նախնի...

⁴⁰ Խոսքը 8-րդ դարի առաջին կեսերի (մոտավորապես 731 թվականների) մասին է:

⁴¹ շեռտ Սիսակյան տան մեջ մենք երբեմն հանցագործ երևույթների (օրինակ՝ եղբայր եղբորը սպանելուն) ենք ականատես լինում. դրա գլխավոր՝ կենսաբանական պատճառը այդ արյունախառնումն էր:

ժառանգական իրավունքը միմյանց միջև բաժանում են նրա որդիները՝ Փիլիպեն ու Սահակը»։ Փիլիպեն թողնում է երեք որդիներ՝ Բաբկենին, Վասակին ու Աշոտին։ Սահակը իրեն հաջորդ է թողնում իր՝ Սուփան կոչված Գրիգոր որդուն։ Այս վերջինս ու Փիլիպեի ավագ որդի Բաբկենը «հայրենի տիրույթների նկատմամբ եղած ինչ որ չնչին պատճառով» կռվում են և Բաբկենը Գրիգորին սպանում է⁴²։ Բաբկենը թողնում է իր Վահան որդուն, ով և ժառանգում է Փիլիպեի իշխանությունը։ Իսկ Գրիգորը երկու որդի է թողնում՝ Վասակ Գաբուռին և Հրահատին։ Նրա իշխանությունը ժառանգում է Վասակ Գաբուռը։ Փիլիպեի Վասակ որդին մեռնելով՝ իր իշխանությունը թողնում է եղբորը՝ Աշոտին։ Սա ունենում է չորս որդի՝ Սմբատին, Սահակին, Բաբկենին և Վասակին, ովքեր իրենց հոր թողած ժառանգությունը բաժանում են իրենց մեջ։ Վասակ Գաբուռը՝ Գրիգոր Սուփանի որդին մարմնական կյանքը թողնելով՝ իր կյանքը շարունակում է երեք որդիների՝ Գրիգորի (ով ևս Սուփան կոչվեց), Սահակի ու Վասակի մեջ։ Իշխանությունը ժառանգում է Գրիգոր Սուփանը։ Երբ Սմբատի եղբայր Վասակը սպանվում է՝ նրա ժառանգությունը անցնում է Սմբատին։ Սա իրեն հաջորդ է թողնում իր Վասակ որդուն։ Իսկ Սմբատի Սահակ եղբայրը իր իշխանությունը ժառանգում է դարձյալ Սմբատ անունով որդուն։ Երբ Սմբատի Վասակ որդին «երկար իշխելուց ու շատ գովելի գործեր կատարելուց հետո մեռնում է, Միսակյան համայն աշխարհին տիրում է Սմբատը՝ Սահակի որդին, գահերեց իշխանությամբ»։ Այդպես վերականգնվում է Միսակյան տան միատանուտերությունը։

Աշոտի որդի Սահակի որդի Սմբատը (իշխել է մոտավորապես 960-998թթ.) նոր էջ է բացում Սյունյաց տան պատմության մեջ։ Նա 973թ. իրեն հռչակում է որպես Սյունյաց թագավոր։ Պատմիչը այդ «պանծալի բանը», սակայն, բնավ չի համարում կենտրոնախույս, այդ ժամանակ գոյություն ունեցող Բագրատունյաց Հայոց թագավորության դեմ ուղղված քայլ, քանի որ «Միսակյան տոհմը, որ սերվում է Հայկից, ..., երբեք չըմբոստացավ (այդ թվում նաև Սմբատի քայլով, - Ս.Ս.) հայրենի իշխանությունների դեմ»։ Պարզապես հանգամանքները այնպես դասավորվեցին, որ Սյունյաց տանուտերը ստիպված եղավ Սյունիքը թագավորություն հռչակել։ Բանն այն է, որ «այդ ժամանակ Բագրատունիները իշխում էին միայն Շիրակին ու Այրարատին՝ մինչև Գեղարքունիք, Ուտիք, Կարին, Վասպուրա-կանի սահմանը, Չորագետ ու Գարդման, իսկ Սյունիքը կտրված էր նրանցից»։ Ահա և ելնելով դրանից «Սմբատը քրեական մեղք չհամարեց», որ Սյունիքը հռչակեց որպես թագավորություն։ Սակայն ազգայնորեն ավելի հիմնավոր է Սյունյաց թագավորության հռչակման անհրաժեշտության համար պատմիչի բերած մյուս փաստարկը. «Եթե Բագրատունիները, որ գերևարությամբ բերված էին Հրաչեից (նկատի ունի հրեաների երկիրը, - Ս.Ս.)⁴³, արժանի գտնվեցին դրան, ապա որքան անոավել արժանի էին սրանք, որ Հայկից ակնհայտ հարազատությամբ որդիները հայրերին փոխարինելով բնիկ իշխանությամբ եկել – հասել են մինչև այժմյան ժամանակները»։

⁴² Սյունյաց տան պատմության մեջ երբևէ նման հանցագործություն չէր դիտվել. դրա պատճառի որոնումը տանում է դպի... հրեական արյունը։

⁴³ Պատմիչը հետևելով Խորենացուն՝ Բագրատունիներին հրեական ծագում է վերագրում։ Ըստ Խորենացու Արշակունի Տիգրան Մեծի ժամանակներում, Միսակյան Ռշտունի նահապետ Բարգավիրանը հրեաների երկրից հարյուր հազարավոր հրեա զբրինք է բերում Հայաստան։ Օրբելյանը դրանց նկատի ունի ասելով «զերեվարությամբ բերված էին»։

Մյունխաց տան առաջին արքայից՝ Սմբատից թագավորությունը անցնում է նրա «կտրիճ որդի Վասակին, ով մեծահանդես համախմբությամբ... (մոտավորապես 998 թ.-ին, - Ս.Մ.) օժվում է Մյունիքի», ավելին՝ նաև Բաղքի թագավոր: Մյունխաց և Բագրատունյաց թագավորությունների բարիդրացիականության մասին է խոսում այն փաստը, որ Վասակ թագավորը Բագրատունի Գագիկ առաջին թագավորի աներն էր. նա իր Կատրամիդե դստերը Գագիկ առաջինին էր կնության տվել:

«Հաճելի... և բոլոր գործերի մեջ հաջողակ» Վասակը իր քրոջը կնության է տալիս նույն Միսակյան տոհմից Աշոտ իշխանին: Միսակյան թագավորը իր փեսային «թագավորության իշխանաց իշխան» տիտղոսին է արժանացնում: Իշխանաց իշխանը երկու որդի է ունենում՝ Սմբատին ու Գրիգորին: Երբ թագավորը մահանում է, քանի որ նա թագաժառանգ չի ունենում, թագավոր են դարձնում Աշոտ իշխանի Սմբատ որդուն: Աշոտի իշխանաց իշխան տիտղոսն էլ անցնում է մյուս որդուն՝ Գրիգորին: Սմբատ արքան, որ «առավել հաճելի ու հեզահամբույր էր, ահարկու էր, սակայն, շրջակա բոլոր ժողովուրդների համար»: Նրա մահից հետո թագավորությունը անցնում է նրա եղբայր Գրիգորին:

Գրիգորը իրեն կին էր վերցրել Աղվանից տնից Շահանդուխտին, ով տան թագավորագն մեծ իշխան Սևադայի դուստրն էր: Գրիգորը, սակայն, Շահանդուխտից ժառանգ չի ունենում: Քանզի «թագավորությունը մնալու էր առանց ժառանգորդի»՝ իշխանները խորհուրդ են անում և որոշում նույն Աղվանքից բերել Շահանդուխտի եղբորը՝ «թագավորագն մանուկ Սենեքերիմին՝ խիստ գեղեցիկ տեսքով, առողջ կազմվածքով, իմաստուն ու հանճարեղ»:

Գրիգորից հետո գահին է նստում Սենեքերիմը, ում Աղվանաց տունը, ինչպես արդեն գիտենք, նույնպես Միսակի տնից է սերում: Սենեքերիմ թագավորի ժամանակ հզորանում են թուրք-սելջուկները, որոնց «ամբողջ աշխարհը ենթարկված ու հարկատու է դառնում»: Սրանք Միսակյան աշխարհի բնիկ տերերի ձեռքից շատ գավառներ են խլում: Սուլթանության աթոռին նստած Մելիքշահի ժամանակ (1072-1092թթ.-ներ) Սենեքերիմը կարողանում է, այնուամենայնիվ, սուլթանության հետ պահպանել խաղաղություն: Մելիքշահից հետո եկողները, սակայն, խախտում են խաղաղությունը և հարձակվում Մյունխաց ու Բաղքի թագավորության վրա՝ նրան ոչ քիչ վնասներ հասցնելով: Կռիվներից մեկի ժամանակ թուրք-սելջուկները խարդավանքով Սենեքերիմին գերի են վերցնում և սպանում:

Սենեքերիմից հետո արդեն թուլացած թագավորությունը ժառանգում է նրա Գրիգոր որդին, ով թագավորում է «քիչ և թույլ»: «Այն տարում, - գրում է Մյունխաց տան պատմիչը, - երբ հայոց հինգ հարյուր հիսուններկու թվականն էր (այսինքն մոտավորապես 1103թ.-ը, - Ս.Մ.), եղավ Կապան գավառի և Բաղաց ամուր աշխարհի ավերման ու նրանց թագավորների և իշխանների տիրապետության վերացման սկիզբը»: Այդուհետ «թագավորությունն օրըստօրե սկսեց թուլանալ ու ապա վերացավ»: Մյունխաց աշխարհի տեր ու տնօրեն դարձավ թուրք-սելջուկը: Այս ամենը չկարողանալով տանել՝ Գրիգոր արքան ու նրա եղբայր Սմբատը վախճանվում են (թե՞ ինքնասպան են լինում, - Ս.Մ.): «Ահա այսպես վերացավ Մյունիքի ու Բաղքի իշխանությունը, եղավ Միսակի տոհմի ու Մյունխաց նախարարության վախճանը, քանի որ բոլորը, որ կային շատ առաջ, Սմբատի և Սահակի ժամանակներում, ոմանք անզավակ մնացին, ոմանք անժամանակ մեռան, ոմանք էլ սպանվեցին ու գերեվարվեցին. մնացել էին միայն այս Գրիգորն ու

Սմբատը, որոնք և այս ձևով վերացան», - ամփոփում է Սյունյաց աշխարհի իր եղեռնապատումը Օրբելյանը: Բնականաբար, այստեղ էլ ընդհատվում է Միսակյան Մեծ տան տոհմաձառը, և դրա՝ մեր կողմից ներկայացնելը:

Բայց միայն ընդհատվում է: Քրիստոնյա պատմիչը՝ Օրբելյանը, հավատալով միայն իր «աստծո»՝ Հիսուսի մեռնում-հառնումին, կարծում է, որ Միսակյան տունը մեկընդմիջտ վերացավ - անէացավ: Բայց այդ՝ Հայկազուն տան ոգին, նրա՝ թե՛ սյունեցու և թե՛ հայազունների մեջ պահպանված գորեղ գենը, նույնիսկ դժնդակ պայմաններում շարունակեց ապրել ու նեցուկ լինել թե՛ Սյունյաց և թե՛ համայն Հայոց աշխարհին: Վկան Սյունյաց բուն տան «վախճան»-ից դարեր անց այդ տան նոր տանուտերերի՝ սկզբում Դավիթ Բեկի, ապա Նժդեհի ծնունդներն են և նրանցով հանուն հայրենյաց ու ի սարսափ թշնամաց՝ Տան մասունքների ի մի բերում - ամբողջացումը: Միսակյան մեծ տունը շարունակեց ապրել ու շարունակելու է ապրել: Միսակյան տոհմաձառը չի ընդհատվել:

С.Л. МАНУКЯН – Родословное дома Сюникского княжества. – В статье представлена история Сюникского княжеского дома, происходившее от потомков Айка. На основе богатых материалов фактически указывается на патриотическую деятельность представителей этой династии в разные промежутки времени истории Армении. Эта династия богатырей всегда была на страже сохранения независимости и самостоятельности армян, в отличие от многих представителей чужеродных княжеских домов.

ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄՆ ԸՍՏ Ռ. ԽԱՆԱԶԱՏԻ ՀՈՒՇԵՐԻ

Ս.Թ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ոգևորվելով բալկանյան երկրների օրինակով՝ 19-րդ դարավերջին հայ ժողովուրդը երկարդարյա ընդարմացումից հետո վերջապես սթափվեց և պարզեց ազատության դրոշը: Ազատագրական այդ պայքարը ղեկավարելու և ուղղորդելու առաքելությամբ իրար ետևից ասպարեզ իջան հայ ազգային կուսակցությունները: Նրանցից Հնչակյան կուսակցության պատմության շատ հարցերի ուսումնասիրության համար խիստ կարևոր և միաժամանակ արժեքավոր են նրա հիմնադիր գործիչներից Ռուբեն Խանազատի (Կարապետյան Նշան) հուշերը⁴⁴: Դրանցում հեղինակը լուսաբանում է մասնավորապես կուսակցության առաջին քայլերը Կ. Պոլսում, հնչակյան գործիչների մուտքը Թուրքիա և Արևմտյան Հայաստան, նրանց ծավալած գործունեությունը: Խանազատն իր հուշերում ներկայացնում է կուսակցության գործունեության առանձին դրվագները Անդրկովկասում, Պարսկաստանում, Ռուսաստանում, եվրոպական որոշ երկրներում: Լինելով ՀՅԴ հիմնադրման աշխատանքների մասնակիցը՝ նա մանրամասնորեն նկարագրում է այդ գործընթացը, ցույց տալիս, որ նախ այն ձևավորվեց որպես Հայ Յեղափախականների Դաշնակցություն՝ միտում ունենալով իր մեջ միավորելու նաև Հնչակյան կուսակցությանը, սակայն որպես այդպիսին չկայացավ: Ժամանակագրական առումով հուշերը հասնում են մինչև 20-րդ դարի սկիզբը, երբ ինքը հեռացավ կուսակցական ակտիվ գործունեությունից: Իր հիշողությունների նախաբանում նա շեշտում է, որ դրանք անաչառ են և ոչ կուսակցականացված: Դա պայմանավորում է նրանով, որ 1905թ. հեռացել է Հնչակյան կուսակցությունից և քաղաքական գործունեությունից և, ինչպես ինքն է գրում, իր «դատողություններն ու քննադատությունները լինելու են ըստ ամենայնի անաչառ և անկողմնապահ»⁴⁵: Իսկապես, իր հիշողություններում նա ձգտում է այդպիսին լինել՝ առանց ինքնագովեստի և սեփական անձի գերազնահատման:

Հուշերի Ա. գլխում նա մի հետաքրքիր տեսակետ է առաջ քաշում, ըստ որի՝ հայոց նորագույն պատմությունն սկսվել է 1877թ. ռուս-թուրքական պատերազմով, կամ «այդ պատերազմի առիթով Բեռլինում կայացած մեծ պետությունների վեհաժողովով»⁴⁶:

Հասկանալի է, որ նա այս ենթադրության հիմք է դարձրել այդ վեհաժողովից հետո հայության մեջ թևակոխած ազգային զարթոնքը, Բեռլինի վեհաժողովում առաջին անգամ արծարծված, բայց ձախողված Հայկական հարցը: Բայց դա ամեննին չի նշանակում, որ դրանով է սկսվում մեր նորագույն պատմությունը: Սրան հակառակ, որում նա ճիշտ է յուրովի, Ռ. Խանազատը ճիշտ է մեկնաբանում Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16 և Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածների

⁴⁴ Տես Խանազատ Ռ., Հայ յեղափոխականի յուշերից, «Հայրենիք» ամսագիր, թիվ 8-10, Բոստոն, 1927:

⁴⁵ Նույն տեղում, էջ 60:

⁴⁶ Նույն տեղում, էջ 61:

տարբերությունները և այստեղից էլ՝ այն պատճառները, որոնք թղթի վրա թողեցին դրանք: Նա միանգամայն ճիշտ է, որ պատճառն հիմնականում կայանում էր նրանում, որ եթե 16-րդ հողվածով հայկական նահանգներում նախատեսված բարենորոգումների իրականացումը պետք է վերահսկեր Ռուսաստանը, ապա՝ 61-ով «Թուրքիան պարտաւորվում է բարենորոգումներ մտցնել հայկական վիլայեթներում եւ այդ մասին պարբերաբար հաշիւ տալ Եւրոպական բոլոր վեց պետութիւններին: Այլ խոսքով, - ընդհանրացնում է հեղինակը, - Թուրքիային ազատութիւն էր տրվում, մեծ պետութիւնների հակամարտ շահերից օգտուելով, ո՛չ մի բարենորոգում չի մտցնել Հայաստանում»⁴⁷:

Դրվատելի է, որ Ռ. Խանազատը դրսևորում է Հայկական Հարցի նկատմամբ մեծ տերությունների հակասական քաղաքականության կարևոր ըմբռնողունակություն: Հիրավի, մեծ տերությունների հակասությունները արգելք էին ծառայում Թուրքիայի վրա համատեղ ճնշմանը, որը վերջինիս ձեռքերին ազատություն էր տալիս հայերի նկատմամբ որդեգրած դավադիր նպատակադրումներն իրականացնելու առումով: Ցավոք, այս ըմբռնումն ուներ հայ քաղաքական գործիչների ոչ ստվար մասը: Արդյունքում մնում էր այդ նույն տերությունների կողմից իրենց համար նպաստավոր պահերին Թուրքիայի վրա ճնշում գործադրելը, որից ոչինչ գործնականում չէր շահում արևմտահայությունը: Սա ճիշտ ըմբռնել է նաև Ռ. Խանազատը, գրելով, որ 61-րդ հողվածը զենք դարձավ այդ տերությունների ձեռքին՝ «ուզած ժամանակ վախեցնել Թիւրքիային Հայաստանի բարենորոգումների ուրուականով ու իր սեփական շահերն առաջ տանել: Բայց դրանով հայերի դրութիւնը Թիւրքիայում մագաչափ անգամ դեպի լաւը չէր փոխում»⁴⁸:

Անդրադառնալով միամիտ հայ մտավորականության՝ 61-րդ հողվածի նկատմամբ ունեցած ոգևորությանը՝ Ռ. Խանազատը կովկասահայ քաղաքական մտքի առաջնորդ Գր. Արծրունուն էլ այս առումով չի խնայում, քանզի վերջինիս իրեն թույլ էր տվել կարծելու, թե «Թուրքիան Անգլիայի կամ Ռուսաստանի ստորադրեալ վասալն էր երեւում, որին ամէն բոլոր կարող էին հրամայել՝ Հայաստանին ազատութիւն տալ, եւ նա պիտի տար անպայման»⁴⁹: Եվ իրոք, այս թյուր ըմբռումը հիշյալ տերությունների մասին հայ ազատագրական պայքարի տարանջատ ընթացքի կարևոր պատճառներից մեկն էր, քանի որ հայտնի է այդ պայքարի հույսով մեծ տերությունների միջամտությանն հասնելու հայ քաղաքական գործիչների և կուսակցությունների անհիմն համոզումը: Այս դարձյալ հաստատում է նույն Խանազատը, գրելով, որ շուտով իջնում է հայ ժողովրդի ոգևորությունը և այն համոզումն է առաջ գալիս, որ անհրաժեշտ է բուլղարացիների օրինակով «ապստամբական շարժումներ առաջացնեն, որպէսզի մեծ պետութիւնները առիթ ունենան միջամտելու ի պաշտպանութիւն հայերի»⁵⁰:

Իսկապէս, Խրիմյան Հայրիկի, Գամառ-Գաթիպայի և Բաֆու գաղափարների ազդեցության ներքո հայությունը հակվեց դեպի այդ գաղափարը, առանց լուրջ քննարկելու այն հարցը, թե ի՞նչ պետք է հասկանալ ապստամբական շարժում-

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ Նույն տեղում:

⁴⁹ Նույն տեղում, էջ 60-61:

⁵⁰ Նույն տեղում, էջ 62:

ներ ասելով: Եվ միանգամայն տրամաբանական են հնչում նրա հետևյալ հարցադրումները՝ «Ներկայումս կարդալով Գամառ-Գաթիպայի եւ մանաւանդ Բաֆֆու չափազանց մանկամիտ եւ ոչ մի քննադատութեան չդիմացող յեղափոխական ծրագիրները, մարդ զարմանում է, թէ ինչպէ՞ս կարող էին լուրջ, հասարակական ու գրական բարձր դիրք ունեցող մարդիկ ոգևորվել ու տարուել այդ աշխատութիւններով»⁵¹: Իսկ դրա պատասխանը նա տալիս է յուրովի, գտնելով, որ հայ ազգն իր մանուկ հասակն էր ապրում, իսկ մանուկի ոգևորությունը ներելի է: Հասկանալի է, որ այստեղ խոսք պետք է գնա հայ ժողովրդի, կամ ավելի ճիշտ նրա ղեկավարների քաղաքականության մեջ մանուկ լինելու մասին, որը գեղարվեստական ստեղծագործությունները համարել է քաղաքական ծրագրեր և առաջնորդվել է դրանցով: Եվ սա հատուկ էր նաև Հնչակյան կուսակցությանը:

Հայ ազատագրական պայքարի վերելքի դրդապատճառների մեջ չանտեսելով տնտեսական գործոնը՝ Խանազատն այդ վերելքը պայմանավորում է նաև ռուս հեղափոխական – նարոդնիկների գաղափարական ազդեցությամբ, որից ինքնին պարզ է դառնում, որ այդ պայքարը չի ձևավորվել տեղական պայմանների ուսումնասիրության և քաղաքական ծրագրերի մշակման արդյունքում: Նարոդնիկների ազդեցության առումով Խանազատը մի հետաքրքիր տեսակետ է առաջ քաշում: Նա գտնում է, որ հայ ուսանողները, տարվելով ռուսական բռնապետությունը տապալելու նրանց հայացքներով, չնչին բացառությամբ, չէին գնում նրանց հետ աշխատելու, այլ իրենց հայացքն ուղղում էին դեպի Արևմտյան Հայաստան: Ստացվում է, որ նրանք արհեստականորեն այնտեղ էին տանում այլ իրականության մեջ և այլ հողի վրա ձևավորված գաղափարներ: Իսկ թե ինչու էին նրանք ընտրել այդ և ոչ թե Ռուսաստանի դեմ պայքարում նարոդնիկներին միանալու ուղին, Ռ. Խանազատը բացատրում է նրանով, որ հայերը բնածին ազգայնական էին, որի հետ դժվար է համաձայնվել՝ հաշվի առնելով նրանց գրեթե 600-ամյա գերությունը: Այդ ընթացքում նրանք ավելի շատ ապավինում էին օտարին, քան թե սեփական ուժերին, որը ազգայնականների թիվ մեկ խնդիրն է: Թերևս կարելի է համաձայնվել մյուս պատճառի հետ, ըստ որի՝ Ռուսաստանն իրենից ներկայացնում էր հզոր մի պետություն, որին տապալելը դյուրին խնդիր չէր, մանավանդ, որ այնտեղ արդեն իշխում էր ռեակցիան և նարոդովոլեցներն արդեն հուսախաբ էին եղել իրենց գործելավճից: Ահա այս պատճառով, ըստ նրա, այն կարծիքն էր իշխում, որ հետամնաց և ռուս-թուրքական պատերազմից հետո «այնպես ջախջախուած, այնպես ոչնչացած» Թուրքիային տապալելը դյուրին խնդիր էր: Թյուր համոզմունք, որը չունի արդարացման ոչ մի հիմք, նարոդնիկական մարտավարությամբ տապալել մի երկրի իշխանություն, առանց խորանալու նրա ներքին էության մեջ, առանց ըմբռնելու այն դիրքորոշումները, որոնք ունեին շահագրգիռ տերությունները Թուրքիայի նկատմամբ, ճիշտ չէր: Որ համակ միամտություն էր բուրում նրանց մտածելակերպից, երևում է Խանազատի հետևյալ վկայությունից. «Շատ լավ յիշում եմ, որ դուրս էին եկել մարդիկ, նոյնիսկ զինուորականի աստիճանով, որոնք ամենայն լրջութեամբ ու վստահութեամբ խոստանում էին մի քանի հարիւր զինուորներով գնալ եւ մի քանի օրուան մէջ Վանը վերցնել: Թիւրքիայում աշխատելու պայմանները ռուսահայերի երեսակալութեան մէջ հեշտացնում էին այն խիստ տարածուած համոզումով, թէ մեծ

⁵¹ Նույն տեղում:

պետությունները, եւս առաւել Անգլիան, առիւծի պէս կանգած են հայերի թիկունքում եւ մի աննշան առիթի են սպասում, որպէսզի վրայ հասնին եւ թիրքերին դուրս վռնդելով հայկական նահանգներից, ազատ Հայաստան ստեղծեն»⁵²: Այնուհետև Խանազատը ճշտորեն նկատում է, որ մարդիկ այնքան էին տարվել Անգլիայի միջամտության հույսով, որ անտեսում էին վերջինիս և Թուրքիայի միջև կնքված գաղտնի դաշնագիրը, որով Կիպրոսը իսլամ Անգլիան պարտավորվում էր Թուրքիային պահել Ռուսաստանի ոտնձգություններից: Մենք կավելացնեինք՝ մոռանում էին, որ 16-րդ հոդվածը 61-ի վերածվեց և չիրականացավ նույն Անգլիայի մեղքով: Այս բոլորը մոռացվում էր, իսկ թե ինչու՞, որովհետև «Այսպէս եւ այսչափ էր միայն հայ ղեկավար մտատրականութեան դիւանագիտական ամբողջ ըմբռնումը մեր նորագոյն պատմութեան արշալոյսին»⁵³:

Խանազատի այս ընդհանրացումն ունի հայեցակարգային նշանակություն:

Այնուհետև նա իր հուշերում անդրադառնում է Բեռլինի կոնգրեսից հետո Երևանում ստեղծված մի գաղտնի կազմակերպության գործունեությանը, որն իր առջև որպէս նպատակ դրել էր Արևմտյան Հայաստանի ազատագրությունը: Ըստ նրա՝ այս խմբակի հիմնադիր - ղեկավարներ բժ. Լևոն Տիգրանյանը, փաստաբաններ Վասիլ Եղիազարյանը, Ռուբեն Ջալալյանը, Տրդատ Վարդանյանը ապրանքներ տեղափոխող ընկերության նախագահ Թովմաս Մհերյանը, բացի վերջինից, համալսարանական կրթության տեր անձնավորություններ էին և հիմնականում աշխատում էին գաղափարական նախապատրաստման ուղղությամբ, «մտքեր պատրաստելու» ապագա ապստամբության համար: Խումբը նաև մարդ է ուղարկում Արևմտյան Հայաստան՝ պայմաններն ուսումնասիրելու համար, հանձին՝ Բ. Թավաքայանի, Դարալագյազի Տեր Գրիգորի: Խմբի մեջ էր և Սամսունը՝ Բաֆֆու ապագա հերոս Վարդանը: Արևմտյան Հայաստան առաքվածները Ալաշկերտում քարոզչություններ են անում, սակայն կառավարությունն իմանում է այդ մասին և ձերբակալվելուց խույս տալով՝ նրանք կրկին գալիս են Երևան: Ահա այս Թավաքայանի ազդեցությամբ է Խանազատը Երևանի Կլասիկական գիմնազիան ավարտելուց հետո անցնում Թիֆլիս՝ սովորելու տեղի ռեալական դպրոցում: Այս խումբը երկար գոյություն չի ունենում, և նրա ղեկավարները մատնության հետևանքով ձերբակալվում են ու արքայազն Ռուսաստանի տարբեր քաղաքներ: Խմբին այս փոքրիկ անդրադարձը կատարեցինք, ցույց տալու համար, որ իսկապէս 1880-ական թթ, վերջերին հայ ազգային ազատագրական պայքարը զարթոնքի մեջ էր, և Արևմտյան Հայաստանի ազատագրման խնդրի շուրջը ձևավորվում էր ոչ թե արևմտահայ, այլ ընդհանուր հայ ազգային-ազատագրական պայքարը:

Խանազատը բավական հետաքրքիր տեղեկություններ է տալիս ռուսական հալածանքների մասին, որը, կարծում ենք, այսօր էլ կարևոր է: «Ռուսաց կառավարութեան հալածանքը, - գրում է նա, - Թիրքիայում ազատ Հայաստան ստեղծել ցանկացողների դէմ, առաջին անգամից մեծ իրարանցում առաջացրեց հայ հասարակութեան շրջանակներում: Մարդիկ չէին կարողանում հասկանալ, թե ի՞նչպէս կարող է «Հայկական Հարցի» հեղինակ կառավարութիւնը հակառակ լի-

⁵² Նույն տեղում, էջ 64:

⁵³ Նույն տեղում:

նել այժմ այդ հարցին»⁵⁴: Այս հարցադրումը այսօր էլ հաճախ է հնչում՝ կապված այս կամ այն առիթով Ռուսաստանի մեր հանդեպ ունեցած քաղաքականության դիրքորոշման փոփոխության հետ, որը վկայում է այն մասին, որ հայ քաղաքական միտքը այն օրերի համեմատ քաղաքական հատունացում չի ապրել: Ճշմարիտ է, թեև հատկապես 1894թ. կառավարության կողմից հայկական ծխական դպրոցների փակումը հակառուսական տրամադրություններ առաջացրեց և ինչպես վկայում է Խանազատը՝ հայ երիտասարդներին տրամադրեց իր դեմ, բայց հայոց քաղաքական զարգացումները ցանկացած հայանպաստ արտահայտության պահին հետագայում էլ ընթանում էին ռուսական աշխարհակալական շահերին տրվելու միտումով՝ առանց լուրջ հաշվեկշռի ենթարկելու դրանց վնասը հայ դատին: Սա է պատմական անողոք ճշմարտությունը:

Ռ. Խանազատը բավական անաչառորեն է գնահատում Մ. Փորթուգալյանի գործունեությունը, մանավանդ նրա «Արմենիայի» ոգևորիչ նշանակությունը հայ երիտասարդության համար: Բայց չնայած դրան՝ Մ. Փորթուգալյանը, ըստ նրա, հիասթափեցնում է այդ նույն երիտասարդությանը՝ թերթում հայտարարություն տպելով այն մասին, որ նրա նպատակն է «մեծ զարկ տալ հայ վաճառականությանը»⁵⁵: Սա հեղինակը բացատրում է նրանով, որ Մ. Փորթուգալյանն իր էությամբ հեղափոխական չէր, այլ լիբերալ անձ, բացի այդ՝ ուներ դրամի խնդիր: Այս ամենով հանդերձ՝ նրա տեսակետն այն է, որ «Արմենիան» չդարձավ վաճառականների թերթ, այլ շատ հեղափոխական և այն աստիճանի, որ արգելվեց նրա մուտքը Թուրքիա և Ռուսաստան:

Հետաքրքիր է նաև նրա այն տեսակետը, որ «Արմենիայի» երիտասարդների վրա ազդեցությունն իր նպաստն ունեցավ հեղափոխական կազմակերպություններ ստեղծելու գործում, և չի սխալվում: Մ. Փորթուգալյանի աշակերտները Վանում ստեղծեցին Արմենական կուսակցությունը: Եվ ահա, Խանազատի վկայությամբ, այդ նույն անձնավորության թերթը նպաստում է, որ ինքը, Գաբրիել Կաֆյանը, Մկրտիչ Մանուչարյանը և Նիկոլայ Մատինյանը, որոնք ժննում համալսարանական կրթություն էին ստանում, տարվեն հեղափոխական կազմակերպություն ստեղծելու գաղափարով: Հետաքրքիր է նաև այն, որ նույն Խանազատի վկայությամբ՝ Փարիզի և Մոնպելեյի շատ ուսանողներ հողվածներ էին տպում «Արմենիայում», որոնցից հայտնի էր հատկապես թավրիզեցի Լեոնենցը՝ Ա. Նազարբեկյանը: Վերջինս Մարիամ Վարդանյանի հետ 1886թ. գալիս է ժնն, ուր հաջորդ տարի ծնունդ է առնում Հնչակյան կուսակցությունը վերոհիշյալ անձանց և վերջիններիս խորհրդակցությունների արդյունքում: Գ. Կաֆյանի կողմից խումբը համալրվում է Մոնպելեյից եկած մի խումբ ուսանողներով, որոնց մեջ էին Գևորգ Ղարաջյանը (հետագայում բոլշևիկ՝ Արկումեդ անունով), Քրիստափոր Օհանյանը, Պողոս Աֆրիկյանը և Մաթևոս Շահազիզյանը: Հետաքրքիր է Խանազատի այն տեղեկությունը, որ Ա. Նազարբեկյանն առաջարկություն է անում Մ. Փորթուգալյանին՝ նախաձեռնելու կազմակերպության ստեղծումը, ստանձնելով ժամանակավոր գանձապահի պաշտոնը և գումարներ հավաքել՝ հեղափոխական կազմակերպության համար: Բայց վերջինս մերժում է այն՝ տպելով և՛ մերժման խոսքը և՛ Նազարբեկյանի առաջարկը: Նրա մերժումն, ընդ որում այն պատ-

⁵⁴ Նույն տեղում, էջ 67:

⁵⁵ Նույն տեղում, էջ 68:

ճառաբանությամբ, որ նոր կազմակերպություն է ստեղծում, խորը հիասթափություն և զայրույթ է առաջ բերում հայ ուսանողության մեջ: Նազարբեկյանը գրում է «Հայակեր քամելեռնը» հոդվածը, որը տպագրում և տարածում են ամենուրեք: Փորձենք պատասխանել այն հարցին, թե ինչու՞ է Մ. Փորթուգալյանը մերժում այդ առաջարկը: Պատճառն, ինչպես նշեցինք, ըստ Խանազատի, նոր կազմակերպության ստեղծումն էր Փորթուգալյանի կողմից, որը շուտով ի հայտ եկավ «Հայրենասիրաց միություն» անունով, «որի նպատակն էր՝ Հայաստանից պատանիներ բերել Եւրոպա, կրթել, ուսում տալ նրանց, որպէսզի նրանք, հայրենիք վերադառնալով, բարեկարգեն երկիրը»⁵⁶: Բայց, կարծում ենք, որ Մ. Փորթուգալյանի նման վերաբերմունքը մեկ այլ պատճառ ուներ: Գործելով Արևմտյան Հայաստանում՝ նա, ի տարբերություն եվրոպահայ ուսանողության, ճշգրիտ գաղափար էր կազմել տեղի պայմանների մասին և գիտեր, որ այն գաղափարները, որոնցով տոգորված էին նազարբեկյանականները, Արևմտյան Հայաստանում կյանքի կոչելը տվյալ պահին անհնարին էր: Հարկ էր նախ՝ գաղափարապես նախապատրաստել ժողովրդին, ապա զինել հանուն ինքնապաշտպանության և ոչ թե հեղափոխության, որը դեռ չէր հասունացել: Պատահական չէ, որ այս ըմբռնումներով էին Վանում գործում նրա աշակերտները Մ. Ավետիսյանի գլխավորությամբ: Ահա սա էր մերժման բուն պատճառը, որը նպաստեց Հնչակյան կուսակցության ծննդին: Իսկ այդ կուսակցության ստեղծման մանրամասների մասին Խանազատը բավական հետաքրքիր տեղեկություններ է տալիս արդեն իր հուշերի հաջորդ գլխում: Ընդգծենք, որ Հնչակյան կուսակցությունը հրապարակ է իջել բավականին յուրահատուկ ձևով: Նախաձեռնող խումբը ծրագրել է այն ստեղծել ոչ թե ընդհանուր ժողով գումարելու արդյունքում, այլ նախ մշակել է ծրագիրը, ստեղծել է կազմակերպության կորիզը և ապա նոր միայն կոչ է արել երիտասարդությանը՝ գալու և միանալու իրենց: Ծրագիր մշակելու համար ստեղծվել է մի հանձնախումբ, որի մեջ մտել են Մ. Վարդանյանը, Ա. Նազարբեկյանը և Գ. Ղարաջյանը: Ստեղծվելիք կազմակերպության գաղափարախոսական ուղղվածությունների մասին պատկերացում կազմելու համար հարկ ենք համարում մեջբերել Խանազատի հետևյալ վկայությունը.

«Այդ առաջին հայ յեղափոխական ընկերութեան ծրագիրն ու ոգին լաւ ըմբռնելու համար անհրաժեշտ է ի նկատի ունենալ հետեւեալ հանգամանքները. –

Նախ այն, որ հայ յեղափոխական ընկերութիւն հիմնողներիս ամբողջ խումբակը ռուսահայեր էինք, կը նշանակէ՝ ամբողջապէս ռուս յեղափոխական հոսանքների ազդեցութեան տակ գտնուողներ: Իսկ այդ ժամանակ 1886թ. ռուս յեղափոխականների մէջ երկու գլխավոր եւ միմեանց դէմ խիստ մաքառող հոսանքներ կային. «Նարոդովոյցիներ» եւ «Մարքսիստներ»: Առաջինը թէւ կատարել էր իր պատմական դերն ու խիստ անյաջողութեան հանդիպել Ալեքսանդր Բ. ի սպանութիւնից յետոյ, բայց եւ այնպէս նա դեռ իր զենքերը վայր չէր դրել: Ընդհակառակը՝ Նարոդովոյցիները իրանց դեռ բավական ուժեղ էին զգում. յեղափոխականօրէն տրամադրուած ռուս մտաւորականութեան մեծագոյն մասը, թէ՛ Ռուսիայում եւ թէ՛ արտասահմանում՝ նրանց կողմն էր:

Երկրորդը՝ Մարքսիստների հոսանքը նոր էր սկսել երեւան գալ ռուս իրականութեան մէջ: Ռուս Մարքսիստներին այդ ժամանակ կարելի էր լինում մինչեւ

⁵⁶ Նույն տեղում, էջ 67:

իսկ մէկ ձեռքի մատներով համրել: Դրանք էին՝ յայտնի տարագիրներ՝ Գ. Պլեխանով, Ա. Աքսելրոդ, Վերա Չասուլիչ, Դէյզ եւ ... իրենց գրաշար Ռայդչինը»⁵⁷:

Հասկանալի է, որ Խանազատի այս տեսակետները երկու հետևությունների տեղիք է տալիս. ա. ստեղծվելիք կազմակերպության ծրագրային դրույթներն ամեննին չէին բխելու արևմտահայության իրավիճակի խորը վերլուծությունից, այլ՝ հիմնականում ռուսական հեղափոխական գաղափարների ազդեցությունից, բ. նրանցում միախառնված էին լինելու նարոդնիկական և մարքսիստական գաղափարախոսությունները միաժամանակ: Այսպիսով, հայ հեղափոխական կազմակերպություն էր ի հայտ գալիս, որի ծրագրերը ամեննին կիրառելի չէր կարող լինել արևմտահայության համար, քանի որ Թուրքիայում էլ Ռուսաստանի նման ցածր մակարդակի վրա էր արդյունաբերությունը և ձևավորված չէր պրոլետարիատը, որը ըստ մարքսիզմի հեղափոխության շարժիչ ուժն էր, իսկ նարոդնիկների հեղափոխական-ահաբեկչական գործունեությունն արդյունավետության առումով Ռուսաստանում իրեն արդեն սպառել էր, որը նշանակում է՝ նույնը կարող էր լինել Թուրքիայում:

Նորաստեղծ հանձնախումբը հիշյալ գաղափարախոսությունների միա-հյուսումով կազմում է մի գրքույկ, որը դառնում է Հնչակյան կուսակցության ծրագիրը: Ըստ հեղինակի, ծրագիրը բաղկացած էր վեց բաժիններից, որոնց ծանոթանալիս եզրակացնում էս, որ նարոդնիկական և մարքսիստական գաղափարական հիմքերի վրա կառուցվում էր հայության ազատագրման ծրագիրը, որը ժամանակի ընթացքում քննություն չբռնեց: Այնտեղ հստակեցվում էին հեռավոր և մոտավոր նպատակները, որոնց չենք անդրադառնում, քանզի հայտնի են գիտական և ընթերցող շրջանակներին:

Խանազատը սակայն մի հետաքրքիր տեղեկություն է տալիս, որը ցայսօր անտեսվել է և որը, կարծում ենք, շատ հետաքրքիր և կարևոր է: Յայսօր ուսումնասիրություններում և դասագրքերում որպես Հնչակյան կուսակցության մոտակա նպատակ մատնանշվում է Արևմտյան Հայաստանի ազատագրման խնդիրը: Բայց ըստ Խանազատի՝ մոտակա նպատակն սկզբում այսպես է ձևակերպված եղել. «Կուսակցութեան մօտակայ նպատակն է - կռիւ մղել՝ միապետական կարգերը տապալելու համար եւ նրանց փոխարինելու հանրային ռամկավարական կարգերով»⁵⁸:

Այսպիսով, փաստորեն, ծրագրում չի դրվել միայն միապետական Թուրքիան տապալելու և արևմտահայությանը ազատագրելու խնդիրը, այլև նույնն իրականացնել Ռուսաստանում և Պարսկաստանում: Այս մասին վկայելուց հետո Խանազատը հետևյալ հարցադրումն է անում. ինչպիսի գործունեություն պետք է ծավալեր կուսակցությունը, որպեսզի հայության երեք հատվածներում էլ կարողանար իրագործել իր նպատակը: Պարզ է, որ դա անհնար էր: Իր առաջադրած հարցին նա հետևալ կերպ է պատասխանում. «Ծրագրի 3-րդ բաժինը կարդալով՝ մենք տեսնում ենք, որ 2-րդ բաժնի մէջ նշանակուած մօտակայ նպատակը դեռ էլի մի որոշ աստիճանով հեռաւոր նպատակ է հանդիսանում եւ որ նրանից մի ավելի շատ մօտակայ նպատակ կայ, որը պատմական մի առաջնակարգ անհրաժեշտութիւն է իրանից ներկայացնում:

⁵⁷ Նույն տեղում, էջ 52:

⁵⁸ Նույն տեղում, էջ 56:

Այդ պատմական առաջնակարգ անհրաժեշտութիւն ներկայացնող մտաւկայ նպատակը Թիւրքիայում անկախ Հայաստան ստեղծելն է»⁵⁹: Ստացվում է, որ անկախ Հայաստանի ստեղծումը մոտակա նպատակների մեջ առաջնահերթին էր, իսկ կուսակցության մոտակա նպատակն, ինչպէս նշեցինք երեք միապետութունների տապալումն էր: Սա կարևոր մի ուղղում է՝ Հնչակյան կուսակցության պատմության անդրադարձներում: Որ դրա կարիքն իսկապէս կա, երևում է ծրագրի հետևյալ հոդվածներից.

«1) Որ հայ յեղափոխական գործունէութիւնն այսօր բացառապէս նուիրուէ թիրքահայ ժողովրդային դատի պաշտպանութեան ու լուծման, համաձայն մոտակայ նպատակի.

2) Որ ուրեմն, յեղափոխական գործունէութեան ասպարէզն է Թիւրքա – Հայաստանը.

3) Որ հայ ժողովրդի ու Հայաստանի ճակատագիրը միանգամից ընդմիջտ պէտք է գատուէ թիրքական կայսրութեան ճակատագրից, ըստ որում պատմական պահանջ ու անհրաժեշտութիւն է ներկայացնում – հայ ազգային անկախութիւնը, որն էլ, այդպիսով կազմում է մոտակայ նպատակի մի հիմնական մասն ու առաջին պայմանը»⁶⁰:

Թուրքիայում այս նպատակն իրականացնելուց հետո, որն, ինչպէս խոստովանում է Խանազատը, պէտք է իրականանար նարողնիկներից փոխառնված պրոպագանդա, ազիտացիա, տեռոր և հույներից ու բուլղարներից փոխառնված ասպատակային գնդերի կազմակերպում մարտավարությամբ, նույն ձևով այնուհետև պէտք է ազատագրվելին Ռուսահայաստանն ու Պարսկահայաստանը, որոնք, կցելով «արդէն ստեղծուած անկախ Հայաստանի հետ, մի ընդարձակ հայկական պետութիւն կազմել: Այլ խոսքով՝ ծրագիրը ձգտում էր «հին, անկախ Հայաստանը վերականգնել իր վաղեմի պատմական ընդարձակ սահմանների մէջ»⁶¹:

Այսպիսով՝ Ռ. Խանազատը բավական հստակություն է մտցնում Հնչակյան կուսակցության ծրագրային դրույթների մեջ, որոնք օգնում են ավելի ճիշտ հայեցակարգային մոտեցում մշակել այդ քաղաքական կազմակերպության մոտակա նպատակների վերաբերյալ: Ծրագրի 5-րդ բաժնում, որտեղ տեղ է գտել հիշյալ ձևակերպումը, խոսվում է նաև հեղափոխական պայքարում դաշնակից այլազգիների գրավելու մասին, որոնք էին ասորիները, քրդերը, մակեդոնացիները, հույները և այլն: Այնուհետև Ռ. Խանազատը մի հետաքրքիր դիտարկում է կատարում, որի հետ կարելի է համաձայնել. «Ճիշտ 40 տարի է անցել այն օրուանից եւ ինչպէս ասում են, բազմաքանակ ջրեր են հոսել ու անցել կամուրջների տակից: Եւ եթէ մենք փորձենք, ներկայ ժամանակի ու պայմանների ակնոցներով նայիլ այդ ծրագրի վրայ, անշուշտ շատ թերի կողմեր պիտի գտնենք: Բավական է նկատել հէնց այն, որ Թիւրքիայի սահմաններում աշխատող սոցիալիստ կուսակցութեան ծրագիրը ո՛չ մի խոսք չի ասում թիւրք ժողովրդի մասին, կարծես թէ այդ երկրում թիւրք ժողովուրդ իսկի չի էլ ապրում»⁶²: Իսկապէս, կարծես թէ Թուրքիա-

⁵⁹ Նույն տեղում, էջ 56:

⁶⁰ Նույն տեղում, էջ 57:

⁶¹ Նույն տեղում:

⁶² Նույն տեղում:

յի տերն ու տնօրենը հայերն էին, որոնց պետք է զատեին թուրքերից, չհաշված այն, որ մարքսիզմը ենթադրում է բոլոր աշխատավորների միավորում՝ կապիտալիստական կարգերի դեմ պայքարում:

Ռ. Խանազատի հուշերի մնացյալ մասը չենք վերլուծում, քանզի դրանք ունեն ավելի շատ սկզբնաղբյուրային, քան թե հայեցակարգային նշանակություն: Մոսկ ավելացնենք, որ դրանք որպես սկզբնաղբյուր հետաքրքրական են Հնչակյան կուսակցության յուրօրինակ ձևավորման պատմության լուսաբանման առումով: Այդ յուրօրինակությունը կայանում է նրանում, որ սկզբնական շրջանում այդ կուսակցությունն իրենից ներկայացրել է մի փոքրիկ խումբ, որը հրատարակել է «Հնչակը» (առաջին համարը լույս է տեսել 1887թ. նոյեմբերին), և որի շուրջ աստիճանաբար համախմբվել են շատ երիտասարդներ՝ վերածելով այն կուսակցության՝ խմբի հրատարակած թերթի անունով կոչվելով Հնչակյան: Այն հրապարակ չի իջել որպես ընդհանուր ժողովի արդյունքում հիմնադրված կուսակցություն և կուսակցության նկարագիր է ստացել ոչ 1887 թվականին, այլ ավելի ուշ՝ 1889-1890թթ.: Այս տեսակետին են մղում նաև Ռ. Խանազատի հուշերը:

Տ.Տ. ՏԱՐԳՏՅԱՆ – *Национально-освободительная борьба армянского народа 1885-1908гг. в оценке Рубена Ханазата.* – В 1880-ых годах - в период формирования национальных партий, освободительная борьба армянского народа переживала бурный подъем, становясь более организованной и зрелой. Однако в 1908г. ввиду многих объективных и субъективных причин она завершилась печальным поражением.

Младотурецкий переворот и конституция 1908г. притупили бдительность не только рядовых граждан, но и представителей партий и опытных деятелей-руководителей борьбы. Воспользовавшись созданной ситуацией и благоприятными условиями Первой мировой войны, младотурки сумели осуществить свой коварный план - посредством геноцида решить Армянский вопрос.

Освободительной борьбе 1885-1908 гг. посвящено множество научных публикаций. К этой теме обращался также Рубен Ханазат. Выдающийся деятель Социал-демократической партии Гнчакян. Р. Ханазат, излагая историю своей партии, показывает, что Гнчакская партия возникла в последствии отказа М. Португальяна создать новую партию, цель которой будет освобождение Западной Армении от турецкого ига.

ԿՆՈՋ ԱՐՏԱՔԻՆԻ ՊԱՏԿԵՐՈՒՄԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ՄԻՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վ.Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

Միջնադարյան գեղագիտական սկզբունքներին հետևող հայ քնարերգուների տաղերում գերակշռում է սիրուհու արտաքինի նկարագրությունն ու գովերգը: Տաղերից մեզ որոշակիորեն ներկայանում է միջնադարյան գեղեցկուհու արտաքինի կենդանի ու ամբողջական պատկերը: Միրահար բանաստեղծները պատկերում են սիրելի կնոջ բարեմասնությունները և դա անում են այնպես վարպետորեն, որ նա կարծես հառնում է մեր աչքի առաջ որպես կենդանի էակ՝ բարձրահասակ, բարակիրան ու թեթևաքայլ: Նկարագրվում է գեղեցկուհու հագուստը, կեցվածքը, քայլվածքը, պարը, իրանը, հասակը, դեմքի ձևը, երեսի ու մազերի գույնը, սանրվածքը, աչքերը, ունքերը, բերանը, ատամները, լեզուն, խոսվածքը և այս ամենը ամենանուրբ, ամենաարտահայտիչ ու լիարյուն մակդիրների ու համեմատությունների ընտրությամբ:

Քնարերգուները շարունակում են օգտագործել պատկերային այն համակարգերը, որոնք արդեն ձևավորվել էին դեռևս վաղնջական ժամանակներից՝ Երգ երգոցյան փեսայի և սիրեցյալ հարսի սիրո արտահայտությունից, հին հընդկական և եգիպտական սիրերգությունից, ժողովրդական բանահյուսությունից: Շարունակում է թևածել Սողոմոնի սիրո երգը, որը, որքան էլ քրիստոնեական միջնադարում ստանար իր կրոնական մեկնությունները, այնուամենայնիվ, մարդկությունն ընկալում է այն գերազանցապես իբրև սիրո երգ:

«Ահաւաղիկ կաս գեղեցիկ, մերձաւոր իմ, ահաւաղիկ կաս գեղեցիկ, աչք քո աղանիք, վարսք քո իբրև գերամակս այծից, որք երևեցան ի լեռնէ Գաղաաղու: Ատամանք քո իբրև գերամակս կտրելոց, որք էլանեն ի լուալեաց: Իբր զթել որդան են շրթունք քո, և խօսք քո գեղեցիկք, իբրև գկեղև նռան են այտք քո, իբրև զաշտարակն Դավթի պարանոց քո: Երկու ստինք քո իբրև գերկուս ուլս երկուորիս այծեման, որք արածին ի մեջ շուշանաց: Ամեննին գեղեցիկ ես, մերձաւոր իմ, և արատ ինչ ոչ գոյ ի քեզ: Մրտակաթ արարեր զմեզ միով ակամբ քով և միով քառամանեկաւ պարանոցի քո: Մեղր կաթեցուցանեն շրթունք քո, մեղր և կաթն ի ներքոյ լեզուի քո, և հոտ հանդերձից քոց իբրև զհոտ կնդրկի»⁶³:

Գեղեցիկ կնոջ պատկերով ուղղակիորեն ընկալվում է հեթանոս սիրո շունչը: Ահա այսպես, սերը թնատարած ճախրում էր մարդկության սրտերում, երբ հնչեց «մի՛ շնացիր» պատվիրանը: Մեզանում Նարեկացին էր, որ խախտեց հագարամյա լռությունն ու, թեև կրոնական շղարշով, երգեց սիրո զգացումը: Աբեղյանը գրում է, որ «Առաջին անգամ գտնում ենք մեր գրականության մի բանաստեղծական տեսակը, որի մեջ հեղինակը սիրո և բնության, զարնան և կանացի գեղեցկության երգն է երգում, միայն այդ սերը չունի ոչինչ նյութական, ֆիզի-

⁶³ Աստվածաշունչ մատենան Հին և Նոր կտակարանց, գլ. Դ, էջ 7-11:

կական. դա երկնային սեր է, ուղղված առ Աստվածածինը»⁶⁴: Եվ քիչ հետո էլ հիացմունքով շարունակում է. «Եվ այնքա՛ն նուրբ, ազնիվ ու մաքուր կերպով, միաժամանակ և վառ արտահայտություններով է նա այդ անում և պայծառ գծագրում է մի կնոջ իդեալական պատկեր, որ այնուհետև իշխում է մեր հին բանաստեղծության, մեր սիրո երգի մեջ: Այս արդեն նշան էր, որ բանաստեղծությունը փոխվում էր»⁶⁵:

Արեղյանը մեր սիրո երգի սկզբնավորումը բուն էությունը կապում է Կոստանդին Երզնկացու անվան հետ. «Թեպետև Գր. Նարեկացուց մինչև Կ. Երզնկացին երեք դար ժամանակամիջոց է ընկել, բայց մենք, ցավոք, չունենք ոչ մի սիրո երգ, որ այդ երկար ժամանակաշրջանում հորինված լիներ»⁶⁶: Նարեկացուց հետո սիրո երգը կլռեր, եթե մի Կ. Երզնկացի, թեև չար ու նախանձ մարդկանց միջավայրում կաշկանդված, չխիզախեր սեր երգել: Ամբողջ բարդությունը հին ավանդության խախտումն է, իսկ այդ ավանդապահները, որոնք «չար են հետ ինձ, կըրճեն ատամ ի իմ վերայ»⁶⁷, պատրաստ են անգամ «արիւն հեղուլ»: Ուրեմն՝ Կ. Երզնկացին այն խիզախ բանաստեղծն է, ով «Բանքըս վարդի օրինակազքրիստոս պատմէ» տաղի մեջ, թեև իբրև այլաբանություն, բայց հանդգնում է երգել աշխարհիկ սիրո երգը: Այնուհետև սիրո այլաբանությունը մի կողմ թողած՝ Կ. Երզնկացին երգում է ազատ ու անկաշկանդ: Նա երգում է աշխարհ, ծառ ու ծաղիկ, վարդ ու բլբուլ, լույս ու արև, սեր և ուրախություն. կին ու գինի: Կ. Երզնկացու տաղերում առաջին անգամ մեր քնարերգության մեջ նկարագրվում ու գովերգվում է ոչ թե երկնային, այլ երկրային կինը: Տաղերգուն գովերգում է նրան որպես երկնարժան գեղեցկություններով օժտված էակ՝ գտնելով, որ երկրի վրա ոչինչ նրա նման գեղեցիկ լինել չի կարող: Սերը և կինը լցնում են Երզնկացու ամբողջ էությունը.

Ի յերկրի ի նչ կայ նըման քեզ յօրինակ,
Դու յերկնից լուսեղենքն ես նմանակ,
Քու տեսվըդ ես դու լուսին պատրի թամամ,
Որ իմ սրտիս խաւարեալ լույս կու ծագես»⁶⁸:

Շատ կողմերով Կ. Երզնկացու պատկերած կինը նմանվում է Գրիգոր Նարեկացու լուսաշող Մարիամ Աստվածածնին: Սակայն այս դեպքում, մեր առջև նշմարվում է իրական գեղեցկուհին, որի նկատմամբ բանաստեղծը անհամար սեր ու ջերմ զգացմունքներ է տածում:

Իր ամբողջության մեջ կինը Կ. Երզնկացու համար նույնն է, ինչ բնության համար գարունը, առավոտը, լույսը: Սակայն նրա առաջնային բնութագիրը լույսն է. պատկեր «լուսատես», «լուսին սուրաթով լոյս», «զինչ արեգական լոյս», աչերու «լոյս», «լուսեղեն լոյս» և վերջապես՝ գոյության հիմք, կենաց աղբյուր, հոգու հոգի: Երգելով սիրած կնոջ գովքը՝ Կ. Երզնկացին օգտագործում է Գրիգոր Նարեկացու կիրառած հնարանքներն ու համեմատությունները, որոնք հետագայի մյուս սիրերգակները ևս պիտի օգտագործեին իրենց «լուսնի» նման սիրած կնոջ գովերգելիս.

⁶⁴ Մանուկ Արեղյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 620:

⁶⁵ Մանուկ Արեղյան, նշվ. աշխ., էջ 624:

⁶⁶ Մանուկ Արեղյան, Երկեր, հ. Դ, Երևան 1970, էջ 389:

⁶⁷ Կոստանդին Երզնկացի, Տաղեր, Երևան, 1962, էջ 191:

⁶⁸ Նույն տեղում, էջ 166:

Աչքերդ է ի ծով նրման,
Ուներդ՝ աղեղան լարման
Կանգնել սուրաթիդ փասպան,
Վախեն թե խոցես մահուան:
Շրթունքն բերե գփարդան,
'Ի իւր լեզուն խօսի լարման,
Քաղցր է ու շիրին իւր ձայն,
Այն որ մեզ շաքրի համ տան⁶⁹:

Ինչպես նկատում ենք, մեջբերված հատվածի առաջին տողը կարծես Նաբեկացու «Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ...» տողի նմանությամբ ստեղծված լինի: Պետք է նկատել, որ Կ. Երզնկացին առաջինն էր, որ սկսեց գինու գովքը՝ այն գուգակցելով սիրո վայելքի հետ: Նրան հաջորդած միջնադարյան մեր մյուս հեղինակները ևս սիրո վայելքը մշտապես ներկայացնում են գինու վայելքի հետ: Կ Երզնկացին գինին համարում է անուշ սիրո նշան՝ սիրով արբած լինելու համար: Այս ամենի կողքին բանաստեղծը աստվածացնում ու բացարձականացնում է սիրած կնոջը՝ համեմատելով գարնան քամու, երկնային լուսատուների հետ.

Ի յերկրի ինչ կայ նրման քեզ յօրինակ,
Դու յերկնից լուսեղենքն ես նմանակ,
Քու տեսովդդ ես դու լուսին պարտի թամամ,
Որ իմ սրտիս խաւարեալ լոյս կու ծագես⁷⁰:

Համեմատությունների նմանատիպ կիրառության այս ճանապարհով դեռևս պիտի անցնեին նաև Թլկուրանցին, Աղթամարցին ու Նաղաշը՝ սիրած էակին համեմատելով լուսնի ու աստղերի հետ:

Կ. Երզնկացին մնացած տաղերում ևս շարունակում է ներկայացնել սիրած կնոջ բարեմաստությունները (շաքար ու շիրին շրթունք, երես՝ լի գունով ծաղկունք, թուխ աչեր ու կամար ունք, կարմիր, լի գունով վարդ): Ընթերցողի առջև պատկերվում է Կոստանդինի սիրած կինը, բայց սա դեռևս նորություն չէր, քանի որ թե՛ Նարեկացին և թե՛ Հովհաննես Երզնկացին արդեն նման պատկերներ ստեղծել էին: Բականն այստեղ այն է, որ Կոստանդինի սիրած կինը սկսում է երևան գալ նաև իր բնավորությամբ, ներքին ապրումներով:

Կոստանդին Երզնկացու հետ համեմատած՝ սիրուհու արտաքին նկարագիրը Հովհաննես Թլկուրանցու գրչի տակ ստանում է ավելի որոշակի ուրվագիծ: Եթե Կ. Երզնկացին շատ դեպքերում սերը պատկերում էր բնությանը միահյուսված, և վայելքի մեջ բնությունը մեծ տեղ էր գրավում, ապա Թլկուրանցին ուղղակիորեն ձգտում է ոչ թե բնությանը, այլ միանգամից կնոջը. «...Սիրելի կինը բանաստեղծին ներկայանում է գրեթե (միայն) իր գեղեցիկ մարմնով, որ հափշտակում է նրան և որին մեծ սիրով նվիրում է տաղերը»⁷¹: Ինչպես արդեն նկատեցինք Կ. Երզնկացուն նվիրված հատվածում, Նարեկացուց սկսած՝ կնոջ գեղեցիկ մարմինը նկարագրելու համար, անշուշտ, ընտրվել են որոշակի համեմատություններ և պատկերների համակարգ՝ հասակը, բերանն ու շրթունքը, լեզուն ու ձայնը, ծոցը, ժպիտը և այլն: Թլկուրանցին ևս Կոստանդինի նման մեծ ուշադրություն է

⁶⁹ Կոստանդին Երզնկացի, էջ 156:

⁷⁰ Նույն տեղում, էջ 166:

⁷¹ Մանուկ Աբեղյան, նշվ. աշխ., էջ 486:

դարձնում կնոջ արտաքինի նկարագրություններին, և շատ դեպքերում դրանք դասվում են մինչև այդ մեր պոեզիայում արդեն հանդիպած համեմատությունների շարքին.

Աչեր ունիք գէտ ըզծովեր,
Ուներ ունիք քան զթուխ ամպեր.
Շողայր կըլափն ու լար շըրթունք
Եւ մարգարտէ շար ատամունք⁷²:

Արդեն նկատելի է դառնում, որ Թլկուրանցու կինը ավելի այրող ու կրակոտ է, քան Կ. Երզնկացունը, իսկ կնոջ արտաքինի գովերգը դառնում է ավելի ազատ, անկաշկանդ.

Երեսդ է արև, ճակատդ է Ջօհրան,
Կըլափդ է խընծոր, ծըծերդ է շամամ,
Զինչ յեղեմ դրախտի ի քո ծոցըդ կան,
Երբ շաքարն ի մօտս՝ ինձ ի Մըսր ի՞նչ բան:
Միրով մի՛ սպանաներ, ճէլլատ էֆենտի⁷³:

Ճիշտ է նկատում Մ. Աբեղյանը, որ Թլկուրանցու սերը բռնկուն սեր է, այնպիսին, որ ամեն անգամ բորբոքվում է սիրած կնոջ տեսքից. «Այսպիսի մարմին երգողի ու գնահատողի համար, բնականաբար, սերն այլևս մի ներքին մտերմական ուժ չէ, հոգեկան գաղտնի ցավերի ու վշտի աղբյուր, այլ ֆիզիկական հույզի մի բռնկում միայն գեղեցիկ կնոջ տեսքից, բայց այնպիսի բռնկում, որ նրան հափշտակում, վառում է և սպառում, և այսպես ամեն անգամ, երբ նրան երևում է գեղեցիկ պատկերը»⁷⁴:

Եթե փորձենք պատկերացնել Թլկուրանցու գովերգած կնոջ արտաքինը ամբողջության մեջ, սպա կտեսնենք, որ գեղեցկուհին ունի «աղուոր, գեղեցիկ կերպի սուրաթ», իսկ այդ գեղեցիկ սուրաթ-դեմքի նկարագիրն շատ տեսանելի է պատկերում տաղերգուն. սև ու խոշոր աչքեր, կամարակապ ունքեր, լույս ու սպիտակ ճակատ, «շարքով իլի» բերան, որից «ի վայր թափի ջուհար» (հիշենք Երգ երգոցի «մեղր կաթեցուցանեն շրթունք քո») լար շրթունք, որը նմանվում է լուսեղեն շողի, «մարգարտէշար ատամունք, որոնք սպիտակին են տալիս, երբ գեղեցկուհին մանրիկ-մանրիկ ծիծաղում է, իսկ երբ խոսում է՝ ձայնը «կաքույ» նման է: «Ոսկի թելով» քաշած մազերը, որոնք «հոգեհան» են անում բանաստեղծին, «կակաչ այտերի» ու «սպիտակ թշերի» վրայով ալիքվում են «շող կտան» վիզն ի վեր:

Թլկուրանցու սերը դառնում է պաշտամունք, սակայն բանաստեղծը կարծես մի տեսակ հայտնված է գոհի կարգավիճակում.

Զսիրտ երեցիր ու տղկեցիր ու քաշեցիր յաչքող սուրմայ,
Դարձար զարիւնըս վաթեցիր ւ՛ ի ոտվընիդ դրիր հիմայ:
... Կերակրեցանք ի մի սեղան, ու խըմեցաք ի մի կըթխայ,
Մէկտեղ էլաք, մէկտեղ նըստաք, ան ժամանակն ու ը է հիմայ,
Ու ը է դավլըդ, ու ը է երդումն, որ բռնեցաք զաստուած վըկայ,

⁷² Հովհաննես Թլկուրանցի, Տաղեր, Երևան, 1960, էջ 142:

⁷³ Նույն տեղում, էջ 155:

⁷⁴ Մանուկ Աբեղյան, նշվ. աշխ., էջ 488:

Ի գատ ընկանք օտարացանք, չարկամն եղև մեզ մահանայ⁷⁵:

Միջնադարյան մյուս քնարերգուն՝ Գրիգորիս Աղթամարցին, սերը երգելիս, Թլկուրանցուց էլ ավելի է խտացրել գույները.

Արեգակնափայլ գեղով լի լուսին ի տասնունհնգէ.

Աչէր ծով ի ծով ունիս, սուկայի վարսաւոր սերովբէ.

Ուներդ է քաշած կամար, զինչ գարնան աղեղն է յամպէ.

Լեզուդ տապարչի շաքար, քո շրթունքըդ վարդի թերթ է⁷⁶:

Աղթամարցու, ինչպէս սովորաբար միջնադարյան մյուս բանաստեղծների սիրո տաղերում, երգվում է գեղեցիկ կինը, որը սեր է ներշնչում և դրանով կարողանում է իշխել բոլորին.

Ծաղիկ փթթեալ առաւօտու, հոգոյս մարմնոյս իշխանն դու.

Լուսաբորբոք ակն արևու օդ քաղցրութեան ի հարաւու⁷⁷:

Բանաստեղծը, երբ որ սիրուհուն «հոգոյս մարմնոյս իշխանն» է անվանում, կամ թե երբ մի ուրիշ տեղ ասում է, «թէ տես անեմ զքեզ կրկին, լուսաւորի միտս իմ մթին», բնավ նկատի չունի «ակն արևու» սիրուհու և իր միջև եղած ներքին հոգեկան որևէ ներդաշնակություն, այլ՝ միայն նրա ֆիզիկական անսահման գեղեցկությունը:

Աղթամարցին նույնպէս շարունակում է կիրառել պատկերային այն համակարգերը, որոնք արդեն ձևավորվել էին միջնադարյան հայ քնարերգության մեջ: «Դու ես արեգակ, լուսին ի լրման» տաղում սիրած էակը նախ համեմատվում է երկնային լուսատուների հետ, ապա սկսում է գովերգել նրա երեսը, լեզուն, ունքերը, շրթունքներն ու խոսվածքը.

Նորաբոյս ծաղիկ և տունկ նշենի,

Երեսդ է պայծառ քան ըզթերթ վարդի...

...Շրթունքդ է շաքար, խօսանքըդ դանտ է,

Լեզուդ ի բերանդ անգին ճօհար է...

Ունենդ է քաման, թարթափդ է քո թիր,

Ջանգ աստ ու լաշքար մէքունի թատպիր,

Թըրով ու սրով շատ ոք խոցեցիր,

Ձեհէ հուքմ ու հրաման, զեհէ սախթադիլ⁷⁸:

Միրած կնոջը ներկայացնելիս՝ Նահապետ Քուչակը ևս զարգացնում է իրենից առաջ կիրառված պատկերային համակարգը.

Ա՛յ իմ նշենի ծաղիկ,

Ծաղկեցար ու դարձար ի նուշ,

Բերանդ է աղուշ մաղուշ,

Պըռկներս է արմաւ ու նուշ,

Ջայախդ որ ափիդ ունիս,

Դու խմէ, որ ասեմ անուշ,

Պագնեմ գայդ բերնիդ բոլորն,

Որ գինւոյն հոգ գայ անուշ⁷⁹:

⁷⁵ Հովի. Թլկուրանցի, էջ 217-218:

⁷⁶ Գրիգորիս Աղթամարցի, Երևան, 1963, էջ 185:

⁷⁷ Նույն տեղում, էջ 216:

⁷⁸ Նույն տեղում, էջ 211:

⁷⁹ Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, Երևան, էջ 523:

Քուչակը գույներ չի խնայել պատկերելու իր «խոշ յարին, գոգալին, աղվորին»: Շատ անգամ դիմում է ոչ միայն այս անուններով, այլև բազմաթիվ այլ ձևերով, որոնք խիստ բնորոշ են նրան: «Կարմիր ու ճերմակ երես», «Հա յ իմ սերկևիլ մորճիկ», «Կարմիր վարդ՝ կանաչ թուփով, կանաչ թուփ՝ կարմիր խնձորով», «Ա՛յ իմ մարգարտե շարոց», «Ա՛յ իմ նոսնա խալաս», «Հա՛յ իմ ֆռանկի դումաշ» և այլ արտահայտություններով Քուչակը գովերգում է իր սիրուհուն, բարձր կատարելության ու ինքնատիպության հասցնելով կնոջ պատկերի նկարագրությունը.

Լուսի՛ն, պարծենաս, ասես, «լուս կուտամ աստնվորիս»,
Ահա հողեղեն լուսին ի գիրկս և երեսն երեսիս:
Թե չես ավտար այս գերուս, ետ տանեմ զփեշ կապայիս,
Վախեմ սիրո տեր լինիս, լուս պակաս տաս աստնվորիս⁸⁰:

Նահապետ Քուչակի «գործը» շարունակությունն ու զարգացում է գտնում Նաղաշ Հովնաթանի սիրերգներում: Հովնաթանից մեզ հասած սիրո երգերում արդեն ձևավորված ենք տեսնում նաև կնոջ կերպարը:

Հովնաթանը այնպիսի մանրամասնություններով է նկարագրում իր «գալումին», «յարին», որ ընթերցողին թվում է, թե երբևիցե տեսել է նրան: Նա գովերգվում է իբրև մի գեղեցիկ պատկեր, ունի այն նույն գույները, ինչ հանդիպում ենք միջնադարյան վաղ շրջանի տաղերգուների երգերում:

«Առաւօտեց մէկ մի տեսայ զարդարած» տաղում իր սիրած կնոջ բոլոր բարեմասնությունները բանաստեղծը գովերգում է օգտագործելով մեզ արդեն ծանոթ պատկերավորման միջոցները.

Լայն և սպիտակ ճակատ, երեսդ՝ վարդի թեր.
Շամալ կուռդ մեկնէ, ծաղիկ դէպ ինձ բեր,
Մեզ դանտ ու շաքար տամ իմ ձեռքն կեր,
Դու իմ խելքն տարար,
Ես չունիմ դարար:
Աչքերդ այնախանայ, ոսկեղէն սուրայ,
Սիահ արտևանունքդ կապած է թուրահ...
Ունքերդ է հիշալ, վարսերդ լալայ...
Լեզուդ քաղցրախօս հազարան բլբուլ...
Ծամերդ՝ ոսկեթել, բօյդ է սավլի...⁸¹:

Սակայն, նմանություններով հանդերձ, Հովնաթանի գեղեցկուհին նաև տարբերվում է մյուս սիրերգակների կանանցից: Նա արդեն ասող-խոսող էակ է, կենդանի, աշխույժ: Արդեն չի թաքցնում իր սերը, նույնիսկ ինքն է սիրահետում: Վերաբերմունքի նման անմիջականությունը արդյունք է բանաստեղծի և սիրուհու հարաբերությունների ինտիմացման: Պատահական չէ, որ բանաստեղծը ոչ միայն ազատ նկարագրում է իր գեղուհու ավանդաբար թաքցվող բարեմասնությունները, այլև անվախ ուզում է վայելել իր սերը: Իհարկե, այստեղ առկա է նաև աշխարհից ձեռնունայն հեռանալու մտայնությունը.

Օոցիդ շամամները խիստ են նորահաս,
Վախեմ թե թառամի, շատ մի՛ կենար պաս...⁸²:

⁸⁰ Նույն տեղում, էջ 555:

⁸¹ Նաղաշ Հովնաթան, Երևան, 1983, էջ 53-54:

⁸² Նաղաշ Հովնաթան, էջ 14:

Բաղչի դուռն բաց է. այս է լավ վախստն,
Զալու՛մ, ծոցդ էլ բաց, մտնեմ դրախտն,
Թող ես շամամ քաղեմ, դու նստիր թախտն.

Ես եղե՛քեզ հեյրան,

Դու՛՝ մարալ-ջեյրան:

Գիտեմ, որ դու, քանց զիս, սիրոյ թամահ ես,
Նոներըդ հոդ կու դառնայ, է՛ր պինդ կու պահես,

Թող համբուրեմ, օրհնեմ, հոգով զարդարվես.

Ես եղե՛քեզ հեյրան,

Դու՛՝ մարալ-ջեյրան⁸³:

Ինչպես արդեն նշել ենք, Հովնաթանի սիրած կինը ազատ խոսում է, սիրում, ծիծաղում, նամակ գրում, այցելում բանաստեղծին (Պաղչումն ծաղիկ քաղես, Ծածուկ դեպ ինձ ծիծաղես, Կրակով սիրտըս դաղես, Գիր ես գրել տողշարով, Մեջն լցել շաքարով): Այս կինն արդեն ինքն էլ դեմ չէ սերը վայելելու, չնայած, սկզբում խնդրում է. «Տաղ գրե՛, ինձ համբուրե՛», իսկ երբ բացվի «պաղչի վարդը», անպայման «ցույց կու տա ծոցի զարդը»:

Ճիշտ են նկատել ուսումնասիրողները, երբ նմանություններ են նկատում Հովնաթանի սիրային երգերի և ժողովրդական-աշուղական սիրերգերի ու հայրենների միջև: Խոսքը վերաբերում է ոչ միայն պատկերներին, դարձվածքներին ու պատկերվող իրավիճակներին, այլև արտահայտված ընդհանուր ոգուն: Բանաստեղծի երբեմն նույնիսկ գերհամարձակությունը այժմ էլ կարող է ամենաազատը ընկալվել իր գեղեցիկ ու կատարյալ ձևի մեջ.

Շամամներիդ համար դառն եմ,

Թո՛ղ, որ ձեռս մեջն խառնեմ,

Ինձ ծախեմ՝ է՛դ բախչե՛դ առնեմ...⁸⁴:

...Վարդ ձգեցիր ի մեջ գոգիս,

Չլինի՛՝ ձեռս ծոցե՛դ ջոկիս,

Թող հուպ տամ, մի՛ առնե՛ հոգիս...⁸⁵:

Այս ամենից հետո դժվար է չհամաձայնվել Մ. Աբեղյանի այն գնահատականի հետ, թե. «Նաղաշի (Հովնաթան-Վ. Ա.) երգերով մեր քնարերգությունը կատարելապես աշխարհականացել է, նա արդեն նոր ժամանակի երգիչ է: Նրա երգը պետք է երևան գար 17-րդ դարի վերջերում, այլ 15-16-րդ դարերում»⁸⁶:

Իրոք, միստիկական մտածողության և ոչ մի նշույլ չկա Հովնաթանի տաղերում: Նա վերացրեց տղամարդու և կնոջ միջև գոյություն ունեցող միջնադարյան անջրպետը: Նրա տաղերում կինը դարձավ հստակ տեսանելի և ընկալելի ոչ միայն իր գեղեցկությամբ, այլև շարժուձևով, կանացի նազանքներով, սիրահարին այրող իր չարածճի վարմունքներով: Միրո վայելքի մեջ արդեն տաղերգուները ամրագրել էին գինու տեղը, սակայն Հովնաթանը, կինը, գինին ու բնությունը միացնելով իրար, ձևակերպեց կյանքի վայելքի իր փիլիսոփայությունը:

⁸³ Նույն տեղում, էջ 37:

⁸⁴ Նույն տեղում, էջ 48:

⁸⁵ Նույն տեղում, էջ 45:

⁸⁶ Մանուկ Աբեղյան, նշվ. աշխ., էջ 510:

Միջնադարյան հայ պոեզիայի մտքի վարպետների շարքը եզրափակում է Մայաթ-Նովան, որն իր նախորդներից առավել չափով հաղթահարեց միջնադարյան քարացած կաղապարները: Նրա պոեզիան իր ոգով ու էությունը ավելի շատ կապվում է մեր նոր գրականության հետ, և սա է պատճառը, որ նա համարվում է միջնադարի վերջին և նոր շրջանի առաջին բանաստեղծը:

Միջնադարյան գեղագիտական սկզբունքներին հետևող Մայաթ-Նովայի սիրերգերում գերակշռում է սիրուհու արտաքինի նկարագրությունն ու գովերգը: Մեզ որոշակիորեն ներկայանում է սայաթնովյան գեղեցկուհու արտաքինի կենդանի ու ամբողջական պատկերը:

Սիրահար բանաստեղծի աչքին սիրած կինը փայլել է անգուգական գեղեցկությամբ և իր հմայքներով տարբերվել բոլորից: Մի հայերեն խաղի մեջ երգիչն ասում է.

Շատ մարթ կոսե, թե յար ունիմ, դուն ու՛րիշ յար իս, գովե՛լի⁸⁷:

Ինչպես մեր տաղերգուներն ու գուսանները, Մայաթ-Նովան որքան էլ ձգտել է անհատական լինել, լայնորեն օգտվել է և չէր կարող չօգտվել բանաստեղծական պատկերների այն ընդհանրական գանձարանից, որ դարերի ընթացքում ստեղծել է ժողովուրդը: Մայաթ-Նովան էլ իր սիրուհու անձը հաճախ է նմանեցրել ծառ ու ծաղկի՝ ներկայացնելու համար նրա գեղեցկությունը, քնքշությունն, սլացիկությունը, փարթամությունը, նազանքը և այլն: Բերենք օրինակներ «Գուլ իս կոկոն, տերիվակալ», «Նովափար ծաղիկ ծովային, մանիշակ՝ բացարած հովին», «Աշխարիս շրվաք իս անում, սալբու-չինար իս, գովե՛լի», «Դուն վարթի դրախտ իս, գո՛ գալ», «Գարունքվա ծաղիկ՝ բաց իս էլի մարտի միջումըն», «Շիմ-շատի ծառ՝ բիամ եկած», «Նուր բաղ իս, նուր բաղչի մեչըն, բոլորքըտ վարթով չափարած», «Հուտով հիլ, միխակ, դարչին, վարթ, մանիշակ, սուսանբար իս», «Բադումըն վարթ ու մանիշակ, սարումըն՝ ամբուլ-սուսան իս»:

Իր գեղեցկուհուն երգիչը համեմատել է նաև որոշ թռչունների ու կենդանիների հետ, նախընտրելով հատկապես փարշևանգ-սիրամարգին, թութի դուշին, ջեյրանին ու ոռչին: Ինքնատիպ են հատկապես հայերեն ու վրացերեն խաղերից քաղված հետևյալ տողերը.

Յիփ նըստում իս՝ թութի դուշ իս, յիփ կանգնում իս՝ ոռչ, նագա՛նի (46):

Վուրսնութի ձեռնեմեն փախած ջեյրա՛ն, մա՛րալ արմանալու(73):

Փարթամ ու շքեղ է Մայաթ-Նովայի գովերգած կինը: Մի խաղի մեջ կարդում ենք. «Բոյեմեդ չուրս մատըն ավելի լըցվիլ է դոշտ ու թիկունքըտ(43)»: Բանաստեղծը զգացել է, որ այդպիսի կատարյալ գեղեցկությունը դժվար է, գուցե և անհնար է ամբողջապես լեզվով կամ վրձնով ներկայացնել, առանց խաթարելու ու նսեմացնելու այն:

Ուստի և դագաճարտար վարպետ պիտի լինել այդ գեղեցկուհու «թարիփն անելու» համար և կամ էլ պիտի լինել մեծ նկարիչ՝ նրա «թահիր դալամով հանելու» համար: Նկարիչն անգամ անկարող է ճշտորեն պատկերել այդ կատարյալ դիմագծերը («Ճակտետ ունքըտ չի կանա գա, քանի գուգե վուր շատ ջանա» (48): Նկարիչն ինքը դժվարվում է այդ գեղեցկության առաջ.

Ղալամըն ձեռին չի կանգնում, մաթ շինեցիր նաղաշքարին(46):

⁸⁷ Մայաթ-Նովա, Խաղերի ժողովածու, Երևան, 1987, էջ 21:(Այսուհետև մեջբերումները կլինեն քնարերգուի նշված աշխատությունից : Փակագծերում կնշենք միայն էջը):

Երբեմն հազար ու մի համեմատություններ անելուց հետո երգիչը չբավարարվելով և ասես անգորացած բացականչել է.

Վուր աշխարը լիզու առնե, քու թարիփըն դըժար կանե(103):

Նույն «մտահոգությամբ» բանաստեղծը հայերեն խաղերից մեկում ասում է.

Ղու մաշ ասիմ՝ շուրեղեն է կու մաշվի,

Մա՛լբի ասիմ՝ ախըր մին օր կու տաշվի,

Ջե՛րյան ասիմ՝ շատ մարթ քիզիդ կու յաշվի,

Բաս վու՛նց թարիփ անիմ՝ մա՛րա իս, գո՛ գալ:

Թե մանիշակ ասիմ՝ սարեմեն կոսին,

Թե ջավահիր ասիմ՝ քարեմեն կոսին,

Թե վուր լուսին ասիմ՝ տարեմեն կոսին.

Արեգակի նրման փարա իս, գո՛ գալ(31):

Ծով աչքերի, «ղալամով քաշած», աղեղնաձև կամար ունքերի և նետ ու նշտար թարթիչների ավանդական պատկերների կողքին աշուղ բանաստեղծը յուրօրինակ կերպով ստեղծել է կանացի աչք ու ունքի ինքնատիպ պատկերներ.

Օսկու մեչըն մինա արած աչկիրըտ, ակնակապ թաս է(34):

Աչկիրուտ ունքիրըտ էլավ մահուջար.

Թերթերուկիտ մազըն՝ գար, օսկու գարնիշ(68):

Բանաստեղծը գովերգում է սիրուհու «ղանտ ու նաբաթ» շուրթերն ու «յաղութ-ալմաս», «լաք-մարգարիտ», «անգին քար» ատամները:

Ավանդականի և անհատականի այսպիսի փոխներթափանցմամբ է երգիչը գովերգել նաև սիրուհու «բրոլե սուրահ» պարանոցը, դամիշ ու սալբու-ջինարի պես բարակ մեջքը, քաղցրախոս լեզուն և անուշ բուրմունքը.

Հուտըտ աշխարհըս բըռնիլ է, բերնումտ ունիս զանջափիլըն,

Կանց քիզ լավ հուտ չի ունենա Հընդու էկած դարանփիլըն(59):

Ձենըտ քաղցըր ունիս լա՛ մգով կու խոսիս...

Մեչքըտ ցեյրան է, ռանգըտ՝ շաքարի(31):

Մե խոսկըտ կանց շաքար քաղցըր, մե խոսկըտ վառ՝ քուրա-քուրա(60):

Սիրուհու կատարյալ գեղեցկությունը շարունակում ու լրացնում են նրա «ռանգե-ռանգ» հանդերձանքները: Նա հագնում է գար ու դումաշ, բեհեզ-ծիրանի, դուշլու զարբաթ, խաս ու ատլաս, ճակատին կապում է «գարլու մուղայիշ», մեջքին՝ ոսկե քամար, ուսերը ծածկում է թիրման շալով... Ոչ միայն հագուստն է գեղեցկացնում սիրուհուն, այլև նա ինքն է շուք տալիս իր հագած խամ ու խասին.

Թե խամ հագնիս, թե խաս հագնիս, կու շինես դումաշ նագանի(46):

Սիրելի կնոջ տեսքով հիացած է սիրահար բանաստեղծը: Թվում է, թե այլևս խոսքեր չկան պատկերելու նրա աստվածային գեղեցկությունը, և այդ գեղեցկությունից խենթացած բանաստեղծը բացականչում է.

Ղու ն կրակ, հա գածըտ կըրակ, վու ր մե կըրակիին դիմանամ(46):

Այսպիսով, ուրեմն, Սայաթ-Նովան, մի կողմից օգտագործելով ու զարգացնելով ընդհանրական, ավանդական պատկերները, մյուս կողմից՝ իր բանաստեղծական վառ երևակայությամբ ստեղծելով նոր, ինքնօրինակ, անհատական պատկերներ, կարողացել է իր խոսքի ուժով վերարտադրել կանացի կատարյալ գեղեցկությունը:

Այլ կերպ ասած՝ նա յուրացրել է իր նախորդների փորձը և հարստացրել ու կատարելության հասցրել կնոջ արտաքին գեղեցկության գովքը, որը, ի վերջո, փառաբանություն և օրհներգ է՝ ուղղված մարդկային գեղեցկությանը:

В.А. АГАБАБЯН – *Изображения внешности женщины в средневековой армянской любовной лирике.* – В статье затронуты вопросы изображения внешности женщины в средневековой армянской любовной лирике.

В произведениях средневековых армянских лириков преобладает изображение и восхваление внешности возлюбленной. В стихах определенно предстает целостный и живой образ внешности средневековой красавицы. Влюбленные поэты изображают прелести любимой женщины, причем делают это так искусно, что она словно предстает перед нами как живое существо.

Лирики продолжают использовать те образные системы, которые были сформированы еще с древнейших времен: с древнеиндейской и египетской любовной лирики с фольклора .

В статье обратились к любовной лирике К. Ерзнкаци, О. Тлкуранци, Гр. Ахтамарци, Н.Кучака, Н Овнатана и Саяат-Новы.

ՎԵՐԱԾՆՆԴԻ ՄԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻՆ

Հ.Ս. ՎԱՆՑԱՆ

«Վերածնություն» եզրույթն առաջացել է արևմտաեվրոպական գրականության մեջ 13-16-րդ դարերում՝ ներառելով անտիկ մշակույթի վերածնման գաղափարը՝ ի հակադրություն միջնադարյան կաղապարված կրոնական մշակույթի: Մակայն *վերածնություն* երևույթի համաշխարհային ընդգրկման շրջանակներում անտիկ մշակույթի վերածնունդը չէ եականը և ոչ էլ որոշիչը, այլ մարդու մեջ մարդկայինի, նրա անհատականության բացահայտումն ու լայն իմաստով՝ բնության ճանաչողությունը, որոնք, ընդհանուր լինելով հանդերձ, տարբեր երկրներում ազգային ուրույն դրսևորում են ունեցել: Այլ խոսքով՝ տվյալ երկրում անտիկ արվեստի վերածնման երևույթի բացակայությունը բնավ չի նշանակում, թե այդ երկրում *վերածնունդ* չի եղել:

Արևելքի ու Արևմուտքի շատ երկրների, այդ թվում և դրանց խաչադիններում գտնվող Հայաստանի համար *վերածնությունն* ընդհանուր երևույթ էր: Այլ խնդիր է, որ *վերածնությունն* Արևելքում ունեցել է այլ դրսևորում և առաջացել այլ ժամանակներում, քան Արևմուտքում, ուր այն հասել էր բարձր զարգացման: Դրանում պակաս դեր չեն կատարել պատմահասարակական գործոնները:

Արևմուտքի *վերածնունդը*, ըստ Կոնրադի, ընդգրկում է 13-16-րդ դարերը, Արևելքի *վերածնունդը* (չինական, ճապոնական)՝ 8-10-րդ դարերը, իսկ Հայաստանը՝ որպես Արևելքի և Արևմուտքի միջանկյալ երկիր, իր *վերածնունդն* ապրել է 10-12-րդ դարերում:

Հայկական *վերածնությունն* ուսումնասիրելով համաշխարհային *վերածննդի* համապատկերում և ըստ նրա սոցիալ-պատմական հիմունքների՝ Վ. Չալոյանն առանձնացնում է հայկական *վերածնության* երկու շրջան. «Ժամանակի տեսակետից Հայաստանում վերածնության պատմության առաջին էտապը համընկնում է Անիի ժամանակաշրջանի Հայաստանի X-XI դարերին՝ մինչև սելջուկների արշավանքները Հայաստանի վրա: Վերածնության երկրորդ էտապը, ըստ ժամանակի, համընկնում է Հայաստանի՝ Անիի ժամանակաշրջանի հետևյալ էտապին՝ XII-XIII դարերին, երբ Հայաստանը սելջուկների երկրից վնասվելուց հետո նորից բռնեց սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի բուռն վերելքի ուղին»⁸⁸:

Հայկական *վերածնությունը*, որն ինքնատիպ է իր ընթացքով, իր ծագման ու զարգացման համար ունեցել է պատմահասարակական նախապայմաններ, որոնք են՝ պետականության վերածնունդ, տնտեսական վերելք, քաղաքների աճ և զարգացում:

«Մեր հայկական վերածնությունը,- մատնանշում է Մ. Աբեղյանը,- ազգային կուլտուրայի ու գրականության շարունակական զարգացման մի իրականություն է, արդյունք հայկական քաղաքային կյանքի բարգավաճման, դրա հետևանք-

⁸⁸ Վ. Չալոյան, Հայկական ռենեսանս, Եր., 1964, էջ 72:

քով և ներքին ուժերի այն ռեալիստական շարժման, որ առաջ էր եկել հարյուրամյա խաղաղության միջոցին»⁸⁹:

IX դարի կեսերից մինչև XI դարի կեսերը՝ հայտնի հարյուրամյա խաղաղության շրջանում, Հայաստանը ապրեց քաղաքական, տնտեսական և մշակութային աննախադեպ վերելք:

X-XI դարերում Հայաստանը դարձավ համաշխարհային առևտրի հանգուցակետ, Արևելքի և Արևմուտքի միջև տարանցիկ երկիր, որի շնորհիվ քաղաքները դարձան առևտրի կենտրոններ:

Հայտնի է, որ այդ ժամանակաշրջանում Հայաստանի քաղաքների թիվը բազմապատկվեց. հնագույն Դվին, Վան, Խլաթ և մյուս քաղաքների բարգավաճմանը գուզնթագ ծաղկում ապրեցին նոր քաղաքներ՝ Անին, Արծնը, Կարսը և այլք:

Երեքդարյա (1080-1375) Կիլիկյան Հայաստանն էլ XII-XIII դարերում դարձավ ծովային առևտրի խոշոր կենտրոն, որն առևտրական գործարքներ էր կնքել Ջենովայի, Վենետիկի, Ֆլորենցիայի հետ:

Հիշյալ շրջանի (X-XI դդ.) համար հատկանշական է բուն Հայաստանում առաջ եկած թնդրակյան շարժումը, որը եկեղեցուն դիտում էր որպես «ժողովրդին խաբելու» միջոց, պայքարում սոցիալական ու գույքային հավասարության համար: Թեև այն ճնշվեց, բայց արդեն իր ծագմամբ մարդկանց գիտակցության մեջ սերմանում էր հնի ժխտման և նորի ձևավորման որոշակի հիմքեր:

Մեզանում *վերածնությունն* ընդգրկեց հասարակական-մշակութային կյանքի գրեթե բոլոր բնագավառները՝ գիտություն, բժշկություն, նկարչություն, ճարտարապետություն, գրականություն: Գիտական շրջանառության մեջ դրվեցին անտիկ մշակութային գործիչների երկերի թարգմանությունները: Հիշարժան են Պլատոնի «Տիմե» և «Ֆեդոն» երկերը, Արիստոտելի, Կալլիմախի, Հռոնոսցու աշխատությունները, Պորփյուրի և Օլիմպիոդորի մեկնությունները, Թեոնի ճարտասանությունը, Դիոնիսիոս Թրակիացու քերականությունը, Էվկլիդեսի «Երկրաչափությունը» և այլն:

Զարգացավ բժշկությունը, որի մեջ մեծ է Մխիթար Հերացու (XII դար) ներդրումը՝ իր «Զերմանց մխիթարութիւն» կարևոր աշխատությամբ: Մխիթար Հերացին է, որ 12-րդ դարում Շոգին կամ Շունչը համարում է նյութական այն նախահիմքը, որը մարդու օրգանիզմում իրականացնում է «բուսական», «կենդանական» ու «իմացական» գործառույթներ, և նա այդ հասկացությունների մեջ չի դնում գերբնական, միստիկական խորհուրդ⁹⁰:

Այդ շրջանում բարձր զարգացման հասան որմնանկարչությունը և մանրանկարչությունը:

Կոմպոզիցիոն բարդ ու հարուստ որմնանկարներով առանձնանում են Աղթամարի, Հաղպատի և Ախթալայի, ինչպես և Անիի ու Դվինի հուշակոթողներն ու կառույցները: Բսկ մանրանկարչությունն այնքան զարգացավ, որ ունեցավ իր դպրոցները: Այդ մասին են վկայում Գլաձորի, Տաթևի, Սսի, Տուրուբերանի, Խիզանի և այլ վայրերի մանրանկարիչների՝ հարուստ երևակայությամբ ստեղծված նրբաճաշակ գործերը: Այս իմաստով խոսուն է հայկական ձեռագրերի արվեստին

⁸⁹ Մ. Աբեղյան, Երկեր, հ. 7, Եր., 1970, էջ 20:

⁹⁰ Տե՛ս Մ. Հերացի, Զերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832, Գլուխ 2-րդ:

Մտասովի տված արժևորումը. «Նկարների շքեղությունը, զարմանալի բազմազանությունը և մանրամասների հնարամտությունը, ներկերի փայլը և կատարման նրբությունը ձեռագրերի նկարները դարձնում են իսկական մանրանկարչության ադամանդներ»⁹¹:

Անգուգական է XIII դարում մանրանկարչության ու դիմանկարչության վարպետ Թորոս Ռոպինի արվեստը:

Մտածողության աշխարհականացման երևույթն իր դրսևորումը գտավ և ճարտարապետական արվեստի մեջ: Հայ ճարտարապետության գիտակ Թորոս Թորոմանյանի հիմնավորմամբ՝ մեր ճարտարապետությունը, որի զարգացումն ընդհատվել էր արաբական արշավանքների հետևանքով, զարթոնք ապրեց X-XI դարերում, ընդ որում՝ դա արտահայտվեց մեր անցյալի դասական ճարտարապետության վերածնմամբ, որի բարձրակետը Զվարթնոցն է: Նրա նմանությամբ կառուցվեց Գազկաշենը, Էջմիածնի մայր տաճարի նախատիպով՝ Առաքելոց եկեղեցին, Հռիփսիմեի վանքի հետ ճարտարապետական որոշ ընդհանրությամբ՝ Աղթամարը:

Այսպիսին էր հասարակական կյանքի տարբեր ոլորտներն ընդգրկած հայկական *վերածնության* ընդհանուր պատկերը: Ինչ վերաբերում է հայ գրականությանը, ապա այս դեպքում *վերածնության* սկզբնավորումն իրավացիորեն Գրիգոր Նարեկացու անվան հետ է կապվում:

Իսկ ի՞նչն է մեզ թույլ տալիս Նարեկացուն անվանել մեր *վերածնության* «նախակարապետ» (Մ. Աբեղյանի բնորոշմամբ):

Եթե միջնադարյան կրոնական մտայնության համաձայն՝ մարդը ոչ կամային էակ է, որը պետք է ուղղորդվի միմիայն պատվիրանային ցուցումներով, ապա ըստ վերածննդյան ըմբռնումի՝ մարդը անդեմ արարած չէ, այլ մի հարուստ ինքնություն, որի մեջ ներդաշնակության են ձգտում հոգին ու մարմինը: Ի հակադրություն կրոնական աշխարհայեցողության՝ *վերածնունդը* բերում է բանական ազատության ձգտումը: *Վերածնության* գլխավոր հատկանիշներն են մարդու՝ որպես նոր արժեքի բացահայտումն ու բնության վերախմաստավորումը, որոնք էլ ընկած են Գրիգոր Նարեկացու ստեղծագործության հիմքում: Ըստ որում՝ բնությունն իր հարուստ ծավալումներով դրսևորվել է գլխավորապես նրա տաղերում, իսկ մարդն իր հոգու բուռն ակբախություններով ու երազներով՝ «Ողբերգության մատյան»-ում:

«Նարեկացու տաղերից լավագույնները, - գրում է Մ. Մկրյանը, - թե՛ իրենց գաղափարական բովանդակությամբ, և թե՛ բանաստեղծական արվեստով հայ գրականության մեջ վերածնության սկզբնավորումը նշող լիրիկայի առաջին փայլուն նմուշներն են»⁹²:

Մեր գրականության մեջ, հիրավի, առաջին անգամ Գրիգոր Նարեկացին է, որ իր մի քանի տաղերում ներբողում է բնությունը, զարունն ու կանացի գեղեցկությունը՝ արդեն որոշակիորեն չենթարկվելով կրոնական կապանքներին:

Այդ տաղերից մեկում խիտասաղարթ ծառերին ու բողբոջախիտ ծաղիկներին հղած ողջույնի ներքո բանաստեղծը կյանքի, զարնան զարթոնքն է տարփո-

⁹¹ В. Стасов, Армянские рукописи и их орнаментация, 1886:

⁹² Մ. Մկրյան, Գրիգոր Նարեկացի, Եր., 1955, էջ 141:

ղում: Բնության շռայլաշատ պնակից Նարեկացին նրբաճաշակ ընտրություն կատարելով՝ ստեղծում է գույների զարմանալի դաշնություն՝ կանաչագեղ ծառածածկույթի և ականահաճո պտուղների մասնակցությամբ.

Աւետիս ծառոց, ծաղկանց՝
Բողբոջախիտ, խիտասաղարթ,
Գոյն գեղեցիկ, պտղինաւէտ,
Ակնահաճոյ, համ քաղցրունակ...

«Ծննդյան տաղ»-ում սեր է երգում Նարեկացին, ու թէն Քրիստոսից՝ «կույսի ծոցից ծնված ծաղկից» է ծավալվում այդ սերը, միննույն է, այն արդեն հանդես է բերված որպես մարդկային երջանկության ակունք ու ելակետ: Այստեղ ուղղակիորեն զարմացնում է Նարեկացու բանաստեղծական անսանձ-անկապանք երևակայությունը, որը ծովանում է բնության պատկերներում. արևածագից թռչում թուփ ու տերևին, նրանց վրա իջած շող-շաղիկին, որ «արեգակից վառ ի վառեալ փայլուն», կամ ցողագին ամպից անցնում է լիալուսնին, որի հետևից գառ-վառ աստղերով ձեւում է գիշերավար արուսյակը.

... Ի սիրոյ սեր ծանուցեալ,
սիրաբողբոջ տարփմամբ լցեալ,
սիրով ընդ սեր միաբանեալ:
Լուսինն ի լոյս ի լրումն եկեալ,
ճոխ ձեւելով՝ ի գիշերավարն
ըզկնի ձեւէր բարկ աստեղօք:

«Ծննդյան» վերնագրված մի այլ տաղում որպես լիարյուն կերպար ներկայանում է Ս. Կույս Մարիամը՝ նախկին անկյանք պատկերի փոխարեն շունչ ու ոգի ստացած, կենդանի, շարժուն մի կին՝ իր գեղեցկությամբ և համակ կանացիական հմայքով.

Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ,
Ծաւալանայր յառաւօտուն,
Երկու փայլակնաձև արեգական նման
Շողն ի ժմին իջեալ յառաւօտէ լոյս...
Բերանն երկթերթի, վարդն ի շրթանց կաթէր,
Լեզուին շարժողին քաղցր երգանայր տաւիղն:

Եվ իբրև պսակ հյուսված գովքի՝ այս մարգարտափայլ գեղուհին շող է ձառագում.

Անձինն ի շարժել մարգարտափայլ գեղով,
Ոտիցն ի գնալ՝ շողն ի կաթել առնոյր...

Ի՞նչ է սա, այս շողը, լույսի խայտանքը: Մի թե դարձ չէ՝ դեպի մեր հին հեթանոսական բանաստեղծությունը, որը նկատել է Արշակ Չոպանյանը. «Այս վառ պատկերներու, ծաղիկներու, արևի և բուրմանց այս ուրախությունը, վանկերու այս լուսավոր երաժշտությունը ... զարնան գույներու բողբոջում մը կծածանեն բառերուն մեջ, ասիկա դարձ մը չէ՞՞ արդյոք դեպի բուն հայ բանաստեղծությունը, դեպի լույսի, փափկությանց, խրոխտ գեղեցկության ու հրեղեն քնարերգության բանաստեղծությունը մեր գողթան երգերուն, անզիտակից, բնագդական, թեպետ

հազվադեպ դարձ մը, որ ... զանի կտանի նորեն ծովուն ու երկնքին մեծ արևոտ բանաստեղծության. «Երկներ երկին եւ երկիր, երկներ եւ ծիրանի ծով...»⁹³:

Դրա վկայությունն է հենց «Վարդավառի» անվանված տաղը, որի անունն իսկ քրիստոնեական ծագում չունի, այլ հեթանոսական, որի արարողակարգի համաձայն՝ վարդ և ջուր էր հեղվում ջրի դիցուհի Աստղիկի պատվին: Ընթերցող աչքին են զարնվում ծաղկափթթող բնությունը. բողբոջող, պտղող ու ոստարձակող ծառեր՝ հուշիկ հեքով շրջող նոճիներ ու արոսենի, շաղով ցողվող համակ ծաղկունք՝ փթթող գոհար վարդ ու շողշողացող գիրգ շուշան, ապա՝ լուսնյակ և լուսնի դեմ գունդ-գունդ բոլորող, շուրջպար բռնող աստղունք ամեն.

Գոհար վարդն վառ առեալ
Ի վեհից վարսիցն արփենից,
Ի վեր ի վերայ վարսից
Ծաւալէր ծաղիկ ծովային:
Շուշանըն շաղով լըցեալ,
Շող շաղով և շար մարգարտով.
Ծաղկունքդ ամեն շա՛ղ առին,
Դեմ լուսնին գունդ գունդ բոլորին...

Մերը դեպի բնությունը *վերածնության* սկզբնավորման շրջանում մարդկային գիտակցության մեջ տեղի ունեցող վերափոխման, դեպի մարդը տանող գեղարվեստական ձգտման արտահայտություն էր: Մեզանում Գրիգոր Նարեկացու և նրա «Մատյան ողբերգության» շնորհիվ առաջացավ Մարդու վերահայտնաբերման մեծ ձգտումը, ավելին՝ այդ ձգտմամբ Նարեկացին շատ առաջ անցավ արևմտաեվրոպական հեղինակներից՝ ոչ միայն ժամանակի, այլև գաղափարի դրսևորման իմաստով:

Հայտնի է, որ անտիկ արվեստը կոսմոլոգիկ (տիեզերակենտրոն) էր, միջնադարյան արվեստը՝ թեոլոգիկ (աստվածակենտրոն), իսկ վերածննդյան արվեստը՝ անթրոպոցենտրիստական (մարդակենտրոն): Ուրեմն՝ իր բնույթով ինչպիսի՞ն է միջնադարյան իրականության մեջ ծնված «Մատյան ողբերգության» ստեղծագործությունը, ի՞նչ հիմքով է այն կապվում մեզանում *վերածնության* սկզբնավորման հետ:

«Մատյան ողբերգության»-ը, ամենակարող երկնավորին ուղղված աղոթք-մրմունջ լինելով հանդերձ, խորապես երկրային է, նրա բուն բովանդակությունը վերաբերում է երկրային գործերին, իսկ բանաստեղծի մտահոգության առանցքը կազմում է աշխարհի ու մարդկանց ճակատագիրը: Հոգու ուղղահայաց շարժման ընթացքը «Մատյանում» սկսվում է երկրից (մարդուց), բարձրանում դեպի երկինք (Աստված) և վերադառնում կրկին երկիր (մարդուն): Նարեկացին առաջինը դնում է մարդու և Աստծու հեռացվածության և մերձեցման խնդիրը, մերձեցում մարդու՝ դեպի Աստված, դեպի աստվածային բնությունը դարձի հիման վրա.

Ի՛նձ նայիր, գորե՛ղ ամենակարող,
Որ չարություններս փախուստ տան
ինձնից, և գա քո բարին փոխարինելու:
Հրամայիր, գթա՛ծ, ինամակալ, գովյալ,

⁹³ Ա. Չոպանյան, Երկեր, Եր., 1988, էջ 320:

լու՜յս անշիջելի,
Որ զորությամբդ անհուն նորոգվի
հաստատապես
Բնական կառուցվածքն անդամների՝
մարմնեղեն իմ տան,
Որպեսզի այնտեղ անհեռանալի
բնակվես բազմած
ԵՎ հանգստանաս հաճո տենչանքով՝
քեզ հետ իմ հոգու ամուր միությամբ⁹⁴:

Հուզախոռով երկվություն է իշխում (ապրում) «Մատյանում», նույնիսկ Աստված՝ իր էությանբ, որը մե՛կ դատապարտող է, մե՛կ՝ ներող, նրանից գթություն աղաչող մարդը, կինը՝ որպես Սուրբ Մարիամ Աստվածածին և որպես անբարո Մարիամ Մագդաղինացի, որոնք երկուսն էլ գնում են դեպի մաքրագործում:

Հատկանշական է, որ այդ երկվությունը հակադրության սկզբունքով գործում է ոչ միայն նրանցից մեկի, օրինակ՝ մարդու էության մեջ. «Մինևույն սրտում երկու զգացմունք՝ մեկը կասկածելի հույսի և մյուսը՝ ճշգրիտ կորստյան...» (Բան ԼԲ, էջ 207), այլև, որ առավել հաճախ է «Մատյանում»՝ մարդ-Աստված հարաբերության մեջ.

Ահա՛ չարության դեմ գերում՝
կա քո բարությունը,
Մահապարտիս դառնության դեմ՝
քո քաղցրությունը
Կորուսյալիս գտնելու համար՝
քո ճառագայթը,
Հանդուգնիս մոլության դիմաց՝
քո ողորմությունը...(Բան ԼԴ, էջ 209-210):

«Մատյան»-ի բովանդակային երկակիության (մարդակենտրոն-աստվածակենտրոն) և զգացմունքի ուժով դոգման խախտելու մասին Լև Օզերովն իր «Վշտակոծ հոգու քերթություն» հոդվածում այսպես է արտահայտվում. «Զգացմունքի ուժը գերազանցում է կրոնական վարդապետությանը, դոգմային՝ բարոյախոսությանը: Ընկճված մարդը, ծունկի եկած մարդը ոտքի է կանգնում և ոգորելով խոյանում անծանոթ բարձունքներ: ... Երբ ունկնդրում ենք Բախի պատարագը կամ կարդում Հովերոսի քերթվածը, խորասուզվում ենք ոչ թե կրոնի ոլորտը, այլ մեր հայացքը դեպի մարդն է, նրա ճակատագիրը, նրա հոգեկան կյանքը: Նույնն է տեղի ունենում և Գրիգոր Նարեկացի ընթերցելիս: Մարդը մեծարված է: Այս է Նարեկացու գրքի իմաստը»⁸:

Մարդը, մեծարված է, Վերածննդի ըմբռնումով ասած՝ բացարձակացված է, որը ենթադրում է, թե մարդը՝ իբրև նոր արժեք, պիտի ձգտի ճանաչել տիեզերքը, Աստծուն և ինքն իրեն: Գոյություն ունի այդ ճանաչողության իրականացման երկու ձև՝ միստիցիզմ (խորհրդավոր, անքննելի, անգիտակցական կապը Կատարյալի հետ), որն առավել բնորոշ է Գր. Նարեկացուն, և ռացիոնալիզմ (ռեալիստա-

⁹⁴ Գր. Նարեկացի, Մատյան ողբերգության, Եր., 2007, էջ 538 (Նարեկացու «Մատյան»-ից բերվող մյուս մեջբերումների հղումները կտրվեն տեղում՝ փակագծի մեջ, կնշվեն միայն գրույթը և էջը):

կան, քննական կապը, ճշմարտության հաստատումը), որն ավելի ուշ դրսևորվել է Գր. Մագիստրոսի ու Հովհ. Իմաստասերի ստեղծագործությունների մեջ: Նարեկացու հերոսի ճանաչողության ճանապարհը համայն մարդկության ճանապարհն է: Մարդը պիտի ձգտի ճանաչել, բայց արդյո՞ք ի գորու է: Ճանաչողության ուղու կիսաճամփին որոնման ձգտումը խառնվում է տազնապին:

Չլինի, որ երկնեմ ես, եւ չծնեմ,
Ողբամ՝ եւ չարտասվեմ, խորհեմ՝ եւ
չհառաչեմ,
Ամպեմ, եւ չանձրեւեմ, ընթանամ՝ եւ
չհասնեմ...(Բան Բ, էջ 13)

Բանականությամբ Կատարյալին հասնելու որոնումներ, ոգորումներ, տառապանք, խոյանք, բայց, ի վերջո, դրա անհնարինության ողբերգական գիտակցում: Այստեղից էլ՝ *վերածննդին* բնորոշ մյուս հատկանիշը՝ մեծ ձգտումից և կատարելության հասնելու անհնարինությունից ծնվող ողբերգությունը:

Ընդհանրացնելով նշենք, որ Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունը թե՛ բովանդակությամբ և թե՛ բանաստեղծական արվեստով գեղարվեստական մտածողության նոր շրջան բացող մեծ երևույթ է: Տաղերում շարժվող ու զարգացող բնության, կանացի գեղեցկության պատկերում, բանաստեղծական արվեստի մեջ առձայնությի ու բաղաձայնությի կիրառում, տաղի՝ իբրև նոր ժանրի գործածություն, տաղերում և «Մատյան»-ում բառաստեղծական բազում նորաբանություններ, հատկանիշներ, որոնք անառարկելիորեն ապացուցում են մեզանում *վերածնության* սկզբնավորումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ., *Երկեր*, հ. Գ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1968, 694 էջ:
2. Աբեղյան Մ., *Երկեր*, հ. Դ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1970, 635 էջ:
3. Ավետիսյան Զ., *Նարեկացու մատյանը*, Եր., ԵՊՀ հրատ., 2005, 148 էջ:
4. Գր. Նարեկացի., *Խռովահույզ՝ Բայի խորալների պես*, Եր., «Նաիրի», 1999, 174 էջ:
5. Գր. Նարեկացի, *Մատյան ողբերգության*, Եր., «Նահապետ», 2007, 644 էջ:
6. Թամրազյան Հր., *Հայ քննադատություն*, գիրք Բ, Եր., «Սովետ. գրող», 1983, 540 էջ:
7. Մահե Անրի, Մահե Ժան-Պիեռ, *Գրիգոր Նարեկացին և իր «Մատենան ողբերգութեան» երկը*, Եր., «Նաիրի», 2004, 324 էջ:
8. Մկրյան Մ., *Գրիգոր Նարեկացի*, Եր., ԵՊՀ հրատ., 1955, 305 էջ:
9. Մկրյան Մ., *Հայ գրականության պատմություն*, գիրք Ա, Եր., «Լոյս», 1974, 292 էջ:
10. Չալոյան Վ., *Հայկական ռենեսանս*, Հայպետհրատ, Եր., 1964, 252 էջ:
11. Չոպանյան Ա., *Երկեր*, Եր., «Սովետ. գրող», 1988, 872 էջ:

А.С. ВАНЯН – Начало Возрождения и Григор Нарекаци. – В статье на мировом фоне затрагивается вопрос армянского Возрождения, которое возникло раньше других, с Григора Нарекаци, постепенно вмещаая в себе все сферы социальной и культурной жизни.

**ԵՐԳԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐՈՒ
«ԱՅՐՎՈՂ ԱՅԳԵՍՏԱՆՆԵՐ» ՎԵՊՈՒՄ**

Մ.Լ. ՄԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Գուրգեն Մահարին իր անցած գրական ճանապարհի մասին Շահան Շահ-նուրին ուղղված նամակներից մեկում գրում է, «Եթե ես արձակ չունենայի, այո, իմ չափածոն պիտի գնահատվեր ըստ արժանվույն, բայց իմ արձակը... խիստ լեզվով ասած՝ իմ արձակը եղավ բանաստեղծությանս գերեզմանափորը»:

Հարկ է, նշել որ Մահարու չափածոն դեռևս կարիք ունի «ըստ արժանվույն» գնահատվելու, սակայն նրա արձակը բնավ «բանաստեղծության գերեզմանափորը» չէղավ, ավելին, այն մեծապես սնվեց բանաստեղծական ակունքներից: Այս առումով նրա քնարական արձակի լավագույն օրինակ կարելի է համարել «Այրվող այգեստաններ»: Վեպում զգալի տեղ է գրավում երգը, որն էլ իր հերթին քնարականություն է հաղորդում ստեղծագործությանը: Իսկ այդ երգի շունչը մի դեպքում թեթև ու կատակախառն է, մեկ այլ պարագայում այն նոր ելնեջումներ է ստանում՝ ձեռք բերելով արդեն գաղափարաբանական լուրջ արժեք: Վեպում երգը հիմնականում կարելի է դիտարկել երկու տեսանկյունից.

ա) Երգը ընկալվում է իր ուղղակի իմաստով և համահունչ է տվյալ միջավայրին:

բ) Ներկայացվում է երգ (առավելապես հեղափոխական), որը իր բովանդակությամբ խիստ հակադիր է ստեղծված իրավիճակին և որի միջոցով էլ առավելապես հստակեցվում է վեպի գաղափարաբանությունը:

Առաջին դեպքում դրանք հիմնականում ժողովրդական կատակերգեր ու սիրային երգեր են, որոնք կենցաղի ինքնատիպ ջերմ մթնոլորտ են ստեղծում և ունեն նաև ազգագրական լուրջ արժեք, քանի որ տարածված են եղել հենց վանեցիների շրջապատում:

Օհանես աղայի հարկի տակ ուրախություն է. հայի ընտանիքում զավակ է ծնվել: Ուրախությունն այնքան անափ ու անկեղծ է, որ նույնիսկ տեր Խորենն է տրվում գինու վայելքին ու երգում «Հայոց աղջիկները», որից «բորբոքվում է արյունը, զվարթանում են բոլորը»: Տեր Խորենի երգը պատասխան երգ է ծնում, և կանանց բաժնից լսվում են սիրային երգի արձագանքները.

Պաղ աղբյուրի մոտ կանգնած մի աղջիկ,

Ձեռքին սափոր բռնած, ինքն էր անուշիկ,

Մայրիկ, զարնվեցա, սիրում եմ նրան,

Մի փոքրիկ ակնարկով արավ ինձ նշան...⁹⁵

Այս ինքնաբուխ ուրախությանը նոր լիցք է հաղորդում տատմեր Թառիկի երգը, որ «գովաբանում է լաճ բերող ծննդկանին»: Այս երգը միջնադարյան Վասպուրականում առավել տարածվածներից է եղել: Նույն տատմեր Թառիկը, որ Վանի ընտանիքների մշտական այցելուն էր ու վեպի ամենակլորիտային կեր-

⁹⁵ Մահարի Գ., «Այրվող այգեստաններ», Երևան, 2004թ., էջ 59: Այսուհետ այս վեպից հղումները կտրվեն շարադրանքում՝ փակագծերի մեջ միայն էջը:

պարներից մեկը, Օհանես աղայի հարկի տակ մի այլ անգամ «օրորուն ու երգուն արտասանում էր իր գիտցած բազմաթիվ ժողովրդական ասքերից մեկը»: Նույն սրտաշարժ երգերից էր «Ջիլանա ձորի խաղը», որը քրդական ժողովրդական բանահյուսության փայլուն նմուշ էր: Վանի ժողովրդական խաղասացության բացառիկ օրինակներից էր Նոր տարվա երգը, որը ճշգրտորեն տալիս էր հարազատ միջավայրի պատկերը, բացառիկացնում այն. «Երգում են, և ի՞նչ քաղցր ձայնով: Վանի «Ալէլուիա» երգողների պես երգիչներ հիմա որտե՞ղ կան:

-Ո՛չ մի տեղ» (էջ 329):

Երգի մեջ անգամ Վանն ու վանեցին մնում են եզակի ու չգերազանցված:

Երգի երկրորդ տեսակը լուրջ գաղափարաբանական խնդիր է լուծում վեպում: Այստեղ ակնհայտորեն երևում է հեղինակային միտումը: Օհանես աղայի մայրը՝ Սրբուհին, վերհիշում է իր երիտասարդ տարիները, հարսանյաց հանդեսն ու պսակադրման երգը.

Աստված իջեր ի Հայաստան, ի Հայաստան

Հայոց քաջերն պսակել... (էջ 39):

Կենցաղային նկարագրության մեջ հիշատակվող հարսանեկան երգը անպասելի մեկնաբանություն է ստանում հեղինակի կողմից. անթաքույց հեզնանքը զգալի է, քանզի «պարզվեց, որ հայ քաջը մոխրագույն, իշանման ջորու կամ ջորիանման ձիու վրա նստած միջահասակ ու լիաթուշ երիտասարդն էր» (էջ 97):

Հեղինակային միտումը ավելի ակնառու է դառնում հեղափոխական երգին անդրադառնալիս: Այստեղ Մահարին երգը հնչեցնում է այնպիսի միջավայրում, որը այդ նույն միջավայրին կումիցմ է հաղորդում: Գևորգ վարժապետի գործունեության երկրորդ շրջանի համախոհներից մեկը, առագաստանավի վրա գինովցած, «ձգվել էր վառարանի կողքին, երկու ձեռքերը գլխի տակ՝ երգում էր.

Ստամբուլը պիտի լինի արյան ծով,

Ամեն կողմից կռիվ կսկսի շուտով,

Կոտորենք Բաշկալեն, անցնենք հեշտ կերպով.

Աջից Վարդանը, ձախից Իշխանը,

Գրավենք Աղբակ,

Տարածենք սարսափ,

Փա՛ռք դաշնակցության...» (էջ 98):

Նշենք միայն, որ Գևորգի ընկերը այս երգը երգելուց անմիջապես հետո պիտի ձեռնամուխ լիներ Աղթամարի թալանին: Իսկ նրա մյուս գործընկերը՝ Դբլոշ Շավարշը, բառափոխում է երգը՝ առավել ներդաշնակ դարձնելով ստեղծված մթնոլորտին.

Երկու գավաթ օդու համար

Մենք հոս ընկանք միասին... (էջ 192):

Երգում է նաև Գևորգի ավագ եղբայրը՝ Օհանես աղան. Նա հիշում է «տարածված երգը» և սկսում է «քթի տակ երգել».

Ես կուզեմ խմել ջրի տեղ արյուն,

Ես կուզեմ կովել, ես կուզեմ մեռնել... (էջ 193):

Երգելուց զատ Օհանես աղան փորձում է մեկնել երգի խորհուրդը և հանգում է հետևյալ մտքին. «Հիմար խոսքեր,-անդրադարձավ նա,-տխմարություն և մասամբ նորին: -> կուզեմ մեռնել»՝ ի՞նչ խոսք է: Էն ո՞ր սարսափ Թաթոսն ի, որ կուզի մեռնել: Նա մտքում ուղղեց սխալը և երգեց սրբագրությամբ.

Ես կուզեմ կովել
Չեմ ուզեր մեռնել... (էջ 163):

Ի դեպ, երգի «արբագրության» օրինակները վեպում զգալի են:

Հետաքրքրական է հատքրքրական է հատկապես հեղափոխական երգի վերաբերյալ հեղափոխականի մտորումները, որ երգելուց զատ իր ուսերին կրում էր հեղափոխական պայքարի բոլոր դառնություններն ու զրկանքները: Ցավոք, հեղափոխական երգը ոչ միշտ է համահունչ եղել ստեղծված իրավիճակին: Հեղափոխական երգի մասին Իշխանի մտքերը գրեթե չեն տարբերվում Օհանես աղայի կարծիքից: Իսկ Իշխանը բարոյական իրավունք ուներ ասելու, որ «այն ժողովուրդը, որը շատ է խոսում մեռնելով հաղթելու մասին, կմեռնի, բայց չի հաղթի»: Վեպի առաջին տարբերակում Իշխանը հիշատակում է հեղափոխական մի երգ, որը վեպի երկրորդ տարբերակում սուր անկյունների կոկման ընդհանուր համատեքստում կրճատվում է: Ահա այդ երգի խոսքաշատ տարբերակը իր մեկնարանությամբ.

Ազատության այն վառ սերը
Թունդ որոտաց իմ սրտում,
Մեր հայրենյաց սուրբ անունը
Ինձ պատերազմ է կանչում

Այս լուրջ գործի մեջ հանկարծ՝

Թրա՛յ-լա՛յ-լա՛յ-լա՛յ-լա՛յ-լա՛յ-լա՛յ...

Ո՛ր թշվառական է հնարել այս «լայ-լայը», և արդյոք ծաղր ու հեզմանք չէ՞ այս՝ հեղափոխություն կոչեցյալի հասցեին: Ծաղր ու հեզմանք չէ՞, երբ ժողովուրդը երգում է.

Խմբապետերը հոգով են զինված... (էջ 285):

Երգի կրճատման այս փաստը ինքնին վկայում է, որ այն վեպում կարևոր, գաղափարական դեր է կատարում: Երգի շարունակությունը առավել վերամբարձ երանգներ է ստանում.

Թեև չունենք ոչ սուր, ոչ թուր, ոչ նիզակ,
Մեր բահերով, մեր բահերով
Նրանց կանենք շանսատակ... (էջ 226):

Իսկ դեպքերը այնպիսի ողբերգական ընթացք են ստանում, որ հնարավոր չի լինում «մեր բահերով» «նրանց շանսատակ» անել: Ստեղծված իրավիճակում Իշխանը փորձում է առավել սթափ ու իրատես լինել, ճանաչել թշնամու իրական դեմքը և հանգում է այսպիսի խորունկ ընդհանրացման. «Իսկ թուրքը չի երգում, գործի ժամանակ ի՞նչ երգ, նա գործ է անում, նա կոտորում է: Հայն է կոտորվում ու մեռնում երգելով... Երգն էլ երգի նմա՛ն լիներ» (էջ 270): Այս անհող, օղեղեն ոգևորության ու ստեղծված օրհասական իրավիճակի հակադրության մասին միանգամայն համոզիչ տեսակետ է արտահայտում գրականագետ Ազատ Եղիազարյանը. «Մինչև 1915թ. Հայ երիտասարդները ոգևորված երգում էին՝ «սարսափը պատեց թուրք սուլթանին» և հավատում էին դրան: Այնինչ թուրքական բանակն ու սուլթանը ոչնչացրին ժողովրդի կեսը, նրա մի ամբողջ հատվածը»⁹⁶: Այս նույն համատեքստում է Մահարիսի դիտարկում Միամանթյոյի «Ես երգելով կ'ուզեմ մեռնիլ» բանաստեղծությունը: Այս բանաստեղծությունը ևս դառնում է

⁹⁶ Եղիազարյան Ա., XX դարի հայ գրականություն. դեմքեր և խնդիրներ, Երևան, 2002թ., էջ 149:

Իշխանի դառը մտորումների առարկան, և նա այսպես է մեկնաբանում բանաստեղծության հետևյալ քառատողը. «Ու երգում են այսպիսի հիմարություններ.

Նպատակիս հասնեմ միայն,
Թող զիս հանեն կախադան,
Կախադանից խեղդով ձայնով
Պիտի գոչեմ,- «Ա՜խ, Հայաստան...»

Ի՞նչ ահավոր սովորություն, մեռնելու՝ սովորություն: - Ազատություն ձեռք բերելուց հետո էլ մարդիկ պատրաստ են կախադան բարձրանալու, որպեսզի հնարավորություն ունենան կախադանի բարձունքից գոչելու «ա՜խ, Հայաստան... (էջ 481):

Միամանթոյի այս բանաստեղծության առիթով, Նյու-Յորքում լույս տեսնող «Երիտասարդ Հայաստան» հանդեսում Գանգրունին, անտեսելով վիպական մթնոլորտն ու գրողի ստեղծած պայմանականությունը, անտեղի ցավ է ապրում, որ «այսպիսի սիրտ յուզող և սերունդներու հաւատք և քաջութիւն ներշնչող երգ մը շրջուած իմաստ կ'ունենայ դժբախտաբար Մահարիի մօտ»⁹⁷:

Ահա այդ նույն տրամաբանությամբ Գանգրունին, պիտի շատ ավելի խոր ցավ ապրեր Չարենցի «Մահվան տեսիլի» հերոսների՝ Ալիշանի, Բաֆֆու, Պատկանյանի, Դուրյանի, Վարուժանի, նույն Միամանթոյի և այլոց կերպավորման համար: Սակայն Չարենցի պոեմի և Մահարու վեպի մթնոլորտը այնքան ողբերգական են, որ բնավ անհրաժեշտություն չի առաջանում քննելու հիշյալ անունների անձն ու գործը:

Մահարու գրական ժառանգության նորահայտ էջերը և դրանց վերաբերյալ մեկնաբանությունները վկայում են, որ նա ջերմ սեր ու հարգանք է տածել Միամանթոյի պոեզիայի հանդեպ. «Պատանի Մահարու բանաստեղծական նախասիրությունները եղել են ոչ միայն քնարերգականեր Մեծարենցն ու Դուրյանը, այլև Միամանթոն: Առանձնակի վերաբերմունքը Միամանթոյի նկատմամբ պահպանվեց ողջ կյանքում: Նամակների մի ամբողջ շարք (Վ. Ալազանին, Վ. Նորենցին, Վ. Դավթյանին, Ռ. Լուսինյանին) գրվեց սիամանթոյական ոճաձևերով»⁹⁸:

Նույն, սարկազմին սահմանակցող հեգնանքով է Մահարին անդրադառնում կուսակցությունների հիմներին, որտեղ ևս շեշտվում է նրանց հոչակած գաղափարների և իրական գործունեության ակնհայտ անհամապատասխանությունը. «Ինչպես հայտնի է ամբողջ աշխարհին, հնչակյանների հիմնը «Հեռավոր երկիրն» էր, ռամկավարները հիմն չունեն, անհիմն էին, ավելի շուտ՝ նրանց ունեցած հիմնը ոչ թե հիմն էր, այլ ողբ,-դա Սեպուհի մոր երգն» էր.

Յարալու սրտիս յարաբ է՞րբ էիր,
Իմ ազիզ բալից խաբար ո՞չ բերի...

Այդ ի՞նչ կուսակցություն է դրանց կուսակցությունը,-ասել է Արամը,-որ հիմնի փոխարեն ողբ է երգում... ողբերգակա՞ն կուսակցություն...

Իսկ դաշնակցության հի՞մնը... Օ՛, դաշնակցության հի՞մնը...-երբ տղերքը երգում էին այդ հիմնը. «Ազատության լույսի» հիմքերը ցնցվում էին...

Մշա՛կ, բանվո՛ր, ռանչպա՛ր, ախպե՛ր,

⁹⁷ Գանգրունի Հ., <<Այրվող այգեստաններ>> վեպը և հնչակեան կուսակցությունը, <<Երիտասարդ հայաստան>>, Նյու- Յորք, 1968թ., 4-7:

⁹⁸ Մահարի Գ., Երգիծանք և հուժուր, Երևան, 2004թ., էջ 241:

Արի՛ք, միանա՛նք, յառա՛ջ, գնանք
Աշխատանքի դատի պաշտպան
Դաշնակցութեան բարև մ'ալ տանք...

Այս անկեղծ, մարտական, պոչավոր կոչը, սակայն չհասավ ո՛չ մշակին, ո՛չ քանվորին, ոչ էլ ռանչպարներին՝ մանավանդ. Ոչ մի տեղ աշխատանքի դատի պաշտպանությամբ չգրադվեց նա, և նրան «բարև մ'ալ տալու» մասին ոչ ոք չմտածեց, իսկ եթե բարևեցին՝ բարևեցին վախից»⁹⁹ էջ 253):

Երգի միջոցով Մահարին բացահայտում է հերոսի հոգեբանության թաքնված կողմերը: Միհրանի մայրը ճակատագրական ինքնապաշտպանությունից առաջ «Մենք պետք է կռվենք և ոչ լաց լինենք» երգի միջոցով հանդիմանում է որդուն, որ կռվելու «իսկական ժամանակն եկավ»: Համանման երգ-մեղադրանք է Միհրանին ներկայացնում այս անգամ Քարմիլեն.

Ամոթ է քեզ, հազար ամոթ
Որ զենք չունես քո ձեռքին... (էջ 309-310):

Հեղափոխական երգի մահարիական մեկնաբանությունը նոր չէր, դեռևս հեռավոր 1908-ին հրատարակված «Հայրենիք» երգարանի առաջաբանում ևս այն մտայնությունն է արտահայտվում, որ այդ երգերը հեռու էին իսկական պայքարի ոգուց, ավելի շատ փքուն էին ու վերամբարձ՝ անհարիր ստեղծված ողբերգական մթնոլորտին. «Յեղափոխական անունը կրող երգերը, աննշան բացառությամբ՝ հեղինակուած են այնպիսի անձերէ, որոնք փոքր ի շատէ կանոնաւոր ու սովորական խօսակցութեան լեզուին իսկ անձանօթ են. Պարզ կ'երեւի, որ այդ մարդիկ կռուի մասին շատ մութ գաղափար ունին, թերեւս զենքի երես չտեսած: Մեր բանաստեղծներէն շատեր օրէնք էին ըրած թիւրքի եւ քիւրդի ոչնչացումը ընդունել իբրէւ միակ ու անհրաժեշտ պայման ազգային ազատագրութեան: «Թշնամիի երկիրն աւերելը ու հարուստ աւարով տուն դառնալը» բացարձակապէս անպատուաբեր է ո՛րևէ ինքզինքը ոչ վայրենի ճանաչող ցեղի համար: Նոյնը պետք է ըսել «վրէժի» զգացումի տիրապետութեան մասին մեր երգելու մէջ, որը ջանալու է մեղմացնել լուսաւորուած մարդ-էակի մը իմացականութեամբ: Հայիոյական գրականութիւն մը այս կամ այն բռնապետի դէմ, յափշտակութեան ու անազակութեան բնագոյի գրգռում, վրէժի ծարաւը բորբոքելու ամէն ճիգ չեն կրնար յեղափոխական դաստիարակութեան զօրաւոր ազդակներ համարուիլ»⁹⁹: Ահա, այս առումով եզակիորեն առանձնանում է Իսահակյանի «Հայդուկի երգերից»¹⁰⁰ շարքը, որը ընդհակառակը, միանգամայն բնականորեն և հավասարապէս արտահայտում է ոչ միայն հայդուկի անօրինակ պայքարը, աննկուն ոգին, այլ նաև այդ դաժան պայքարի դառնությունը, կեսճանապարհին ընկած հայդուկի մահվան ողբերգությունը:

Երգը լայն հնարավորություն է տալիս քննելու նաև հայ-թուրք բազմաշերտ ու կնճռոտ հարաբերությունները: Խնդրին անդրադառնալուց առաջ հարկ է ընդգծել, որ, Մահարին, որքան էլ մարդկայնորեն դժվար էր, հստակ սահմանագիծ է անցկացնում թուրք պետականության և թուրք ժողովրդի միջև: Իհարկէ, թուրք իշխանությունները երբեք ջանք չեն խնայել սեփական ժողովրդին թունավորելու

⁹⁹ «Հայրենիք» երգարան (Նուրի հայ ազատագրութեան հերոսներու անմահ յիշատակին), Բոստոն, 1908թ. էջ -2:

¹⁰⁰ Իսահակյան Ա., «Հայդուկի երգեր», Երևան, 1990թ.:

մեծապետականության և կրոնական թշնամության ախտով և հաջողության են հասել: Սակայն, այսուհանդերձ, վեպում թուրք ժողովրդի նկատմամբ թշնամանքի որևէ արտահայտություն չկա: Պատահական չէ, որ Միհրանը թուրքական ժողովրդական երգի մասին այսպես է մտածում. «Լավ, սրտառուչ երգեր ունեն թուրքերը, անցավ Միհրանի մտքով,- և ինչպե՞ս բարբարոս մի ժողովուրդ կարող է ունենալ տխուր, սիրտ կեղեքող այսպիսի երգեր: Պարզ է, ավելի քան պարզ, Մուլթան Համիդը չի հյուսել թուրք ժողովրդի երգերը, ոչ էլ Ջելվեթ փաշան: Խոնարհ, անանուն, հասարակ մարդիկ հյուսում են իրենց սրտի խոսքը, դարձնում երգ, հառաչում են նրանք սրտի հառաչով, և այդ հառաչանքը վերածվում է հոգեզմայլ եղանակի» (էջ 285): Իսկ ահա հեղափոխական երգը հայ-թուրք հարաբերությունների համատեքստում բոլորովին այլ մեկնաբանություն է ստանում: Այն նրբորեն բացահայտվում է Միհրանի և թուրք մյուտուրի երկխոսության միջոցով: Այստեղ առավել հետաքրքրական է հատկապես թուրք պաշտոնյայի վերաբերմունքը հեղափոխական երգի նկատմամբ: Վերջինս հայ-թուրք խաղաղ համակեցության համար խիստ վտանգավոր է համարում հեղափոխական երգերը, «որոնք կարող են տուն քանդել, մանավանդ, երբ այդ երգի ձայնը հեռվից է գալիս...Ժնկից, Թիֆլիսից»: Ճիշտ նույն կերպ, թուրք իշխանությունները համառ հետևողականությամբ անտեսել են այն հանգամանքը, որ այդ նույն երգն ու պայքարը իրենց իսկ ազգահաված քաղաքականության հետևանք էին:

Հայ-թուրք հարաբերությունների համատեքստում անդրադառնալով երգին՝ անհնար է չհիշել նաև Ստեփան Ջորյանի «Երգը» պատմվածքը: Հայտնի է, որ երբ թնդանոթները որոտում են, ապա մուսաները լռում են, սակայն Ջորյանի պատմվածքում ճիշտ հակառակն է տեղի ունենում (գոնե մի կարճ ժամանակ): Թուրք զինվորի սրտառուչ երգի մեղեդիները հակամարտողներին ստիպում են դադարեցնել հրացանաձգությունը՝ երկու կողմերին էլ ակամայից ստիպելով խորհել կյանքի մասին. «Այդ գիշեր թե՛ մեր և թե՛ թուրքերի դիրքերը հրացան չարձակեցին: Երգը վաղուց լռել էր, երգող թուրքը աներևութացել, բայց բոլորիս նայվածքը դեռ այն տան գլխին էր, ուր երևաց ու անհետացավ երգիչ թուրքը որպես գիշերային տեսիլք... Օղբդեռ լիքն էր ասես նրա երգի ելևէջներով, և մենք կարծես լսում էինք նրան ու ոչ ոք չէր համարձակվում հրացանի կրակոցով խանգարել այդ հանդիսավոր ժամը»¹⁰¹ :

Շարունակելով գեղարվեստական գրականության մեջ հայ-թուրք հարաբերությունների արժարժումների կարևոր և արդիական թեման՝ նկատենք նաև, որ Զապել Եսայանը, ապրելով ու ստեղծագործելով սուլթանական բռնապետության ամենամոռայլ ժամանակներում, իր «Միլիտարի պարտեզները» շատ կողմերով ինքնակենսագրական վեպում նույնպես հստակ սահմանագիծ է անցկացնում թուրք ժողովրդի և թուրք իշխանությունների միջև. նրա հերոսներից մեկը արդարացիորեն պնդում է. «-Աղջիկս, չկա գեշ ժողովուրդ այս աշխարհի վրա: Կան գեշ մարդիկ և լավ մարդիկ:

-Հապա թուրքե՞րը:

-Նո՛ւյնպես»¹⁰²:

¹⁰¹ Ջորյան Ստ., Երկերի ժողովածու 12 հատորով, հատոր երկրորդ, Երևան, 1978թ., էջ 342:

¹⁰² Եսայան Զ., «Միլիտարի պարտեզները», Երևան 1959թ., էջ 247:

Մրանով, իհարկե, թուրքական մեղքի բաժինը բնավ չի մեղմվում, պարզապես ցրվում է ժամանակի ընթացքում ձևավորված այն առասպելը, թե թուրքը անպարտելի հրեշ է, և հստակ ուրվագծվում է, որ բոլոր եղեռնագործությունների հետևում իրար հաջորդող թուրք իշխանություններն են կանգնած:

«Այրվող այգեստաններ» վեպում երգի մեղեդիները՝ ուրախ ու տխուր, սկզբից մինչև վերջ ուղեկցում են ընթերցողին, և նույնիսկ մեռած քաղաքի «մթնոլորտում դեռ թրթռում են Հակոբ Կանդոյանի աղեխարշ մեղեդու վերջին հնչյունները»:

Մ.Լ. ՏԱՐՈՒՄՅԱՆ – *Պեսնյա և եր յե յնաչենյե վ ռոմանե Գ. Մաարի “Գորյաշչե սադյ”* – Статья посвящена роману Гургена Маари “Горящие сады”, в котором немаловажную роль играет песня. Она исследуется в двух направлениях. Во-первых, народные частушки и лирические песни, которые имеют этнографическую ценность. Во-вторых, исследуется революционная песня, которая в романе решает идеологическую задачу и автору дает возможность выразить свою позицию по отношению к политическим партиям.

ԳՈՅԱԿԱՆԻ ԱԾԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՖՐԱՆՍԵՐԵՆԻ
ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑ

Ա.Ա. ՄԱՐԴԱՆՅԱՆ

Հասարակական կյանքի զարգացման ու փոփոխության գործընթացը, գիտական, տնտեսական, մշակութային, քաղաքական տարբեր ոլորտներում արմատական փոփոխությունները անհրաժեշտություն են առաջացնում նոր երեվույթները, նոր իրողությունները անվանելու համար: Ցանկացած նոր երևույթ պետք է իր արտացոլումը գտնի լեզվի մեջ: Որոշ դեպքերում լեզուն դիմում է փոխառությունների օտար լեզուներից, իսկ որոշ դեպքերում օգտագործում է բառակազմության իր ներքին հնարավորությունները, ինչպես, օրինակ, կոնվերսիայի (փոխանցման կամ փոխադրման) միջոցը:

Ժամանակակից ֆրանսերեն լեզվի բառապաշարի զարգացման և հարստացման խնդիրը իրենից ներկայացնում է ամենահաճախ ուսումնասիրվող խընդիրներից մեկ՝ լեզվում նոր բառերի գործածության, ինչպես նաև բառակազմության խնդիրների հետ:

Փորձենք քննության առնել ժամանակակից ֆրանսերենում գոյականի ածականացման եղանակներից մեկը՝ կոնվերսիայի (փոխադրման) երևույթը՝ հիմնական շեշտը դնելով ածականացված գոյականների լեքսիկական բնութագրի վրա:

Ածականացումը իրենից ներկայացնում է կոնվերսիայի ձևերից մեկը, որի ժամանակ գոյականի կարգից ածականին անցած միավորը պետք է բավարարի ածականի համապատասխան չափանիշներին:

Բառակազմության համակարգում կոնվերսիայի գործընթացի վերլուծությունը լուսաբանում է հետևյալ հարցերը՝

- ա) կոնվերսիայի միջոցով ստեղծված միավորների տեսակները,
- բ) նրանց զարգացման էտապները,
- գ) կոնվերսիայի միջոցով ստեղծված միավորների գոյության ժամանակը,
- դ) տվյալ միավորների լեքսիկական բնութագիրը:

Որպես բառակազմության ձև՝ ածականացումը բնութագրվում է հետևյալ մոդելով՝

Article + substantif ---adjectif

օր.՝ le + directeur --- directeur

Սա նշանակում է, որ ածականացված միավորը չի ենթարկվում փոփոխության: Բառակազմության այս ձևի առանձնահատկությունն այն է, որ ածականացված միավորը չի կորցնում իմաստային կապը ելակետային բառի հետ, քանի որ գոյականը և ածականը կապված են ներքին կապերով:

Կանգ առնենք ճշգրիտ անվանական իմաստ ունեցող ածականացված գոյականների վրա:

նր.՝ La plantation de bouture pour les dahlias nains (Presse française)

Nains ածականացված գոյականը, որը հաստատական կերպով մտել է լեզվի մեջ գաճաճ, թզուկ իմաստով, dahlias գոյականի հետ օգտագործվելով, ցույց է տալիս ծաղիկների տեսքը : Այս բառը, որը nain (m.) թզուկ գոյականից է, սերտորեն կապված է ելակետային գոյականի հետ: Հարկ է նշել, որ ֆրանսերենում շատ տարածված են ածականի կարգին անցած գոյականները, որոնք ծաղիկների և բույսերի տեսքն են մատնանշում.

Օր.՝ parasol (pins parasols), cactus (dahlias cactus), pompon (dahlias pompons)
Քննարկենք մեկ ուրիշ օրինակ.

Jean-Noël ressemblait étrangement au portrait enfant de son grand-père. (P. Dubois "La chaussée des geants" 1958).

Ածականացված **enfant** գոյականը իմաստային ուղղակի կապ ունի ելակետային գոյականի հետ: Այն օգտագործված է դիմանկարը նկարագրելու, ժամանակաշրջանը ցույց տալու համար: Ածականացված գոյականները կարող են գործածվել նաև թղթի, ավտոմեքենայի, հագուստի, կոշիկի տեսքը ցույց տալու համար:

Վր.՝ Il découpa soigneusement l'article et le glissa dans une chemise de papier bulle. (G. Simenon "La pipe de Maigret")

Le cabriolet sport quittait la banlieue parisienne. ("La Dame de Londres" 1960)

Եթե ելակետային գոյականը ունի փոխաբերական իմաստ, ապա ածականացված գոյականը ևս կարող է հանդես գալ փոխաբերական իմաստով:

Վր.՝ Là était la grande ligne directrice qui permettait de conduire à la solution du problème sanglant. (P. Gamarra "L'assassin a le prix Goncourt", 1963)

Վերլուծելով ածականացված գոյականների լեքսիկական առանձնահատկությունները՝ անհրաժեշտ է կանգ առնել այն միավորների վրա, որոնք առաջացել են որպես լրացուցիչ իմաստային երանգ ունեցող միավորներ, որը աստիճանաբար կորցրել են:

Վր.՝ Un fauteuil crapaud, en tapisserie usée aux bras (Colette "Claudine à Paris" 1949)

Crapaud ածականացված գոյականը, առաջանալով որպես լրացուցիչ իմաստային երանգով լեզվական միավոր, իրենից ներկայացնում է փոխաբերական համեմատության արդյունք՝ լայն և ցածր: Օգտագործվելով որպես piano (m.), fauteuil (m.) գոյականների որոշիչ՝ այս միավորը աստիճանաբար վերածվել է դաշնամուրի և բազկաթռոխի տեսքը արտահայտող միավորի.

Rognon ածականացված միավորը գործածվում է կահույքի տեսքը ցույց տալու համար: Crapaud ածականացված միավորի նման այն սերտորեն կապված է ելակետային գոյականի իմաստի հետ:

Վր.՝ Un gros homme pâle était assis dans un énorme fauteuil de cuir derrière un bureau rognon. (Wilson S. "L'homme au complet gris", 1960)

Miroir, glace, aiguille, semoule ածականացված գոյականների համադրությունը carpe (f.), talon (m.), sucre (m.) գոյականների հետ հանգեցնում է փոխաբերությունների կազմությանը : Ահա մի քանի օրինակ ֆրանսիական մամուլից.

On y trouve des carpes miroirs.

Il semble que le talon aiguille cède à la place à des hauteurs modérées.

Fouettez les oeufs en sucre semoule.

Որոշ բառարանների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ **miroir**, **glace**, **aiguille**, **semoule** ածականացված միավորները հիմնովին չեն մտել լեզվի մեջ, քանի որ կապված են էլակետային գոյականների հետ:

Soleil(m.), **étoile (f.)** գոյականների ածականացումը հանգեցրել է նրան, որ նրանք արտահայտիչ երանգ են ձեռք բերել: Այն փաստը, որ նրանք լրացուցիչ իմաստով երանգավորված միավորից դարձել են ածականացված գոյականներ, հիմք է տալիս ենթադրելու, որ նրանք օգտագործվում են որպես առարկայի տեսքը ցույց տվող գոյականներ:

Danseuse étoile կապակցության մեջ **étoile** բառը ձեռք է բերել «առաջին պարուհի» իմաստը:

Այս խմբի մեջ կարելի է դիտարկել **adolescent** և **accusateur** ածականացված գոյականները, որոնք լեզվի մեջ մտել են **պատանեկան** և **մեղադրական** իմաստով: Առաջին օրինակը սերտորեն կապված է էլակետային գոյականի իմաստի հետ, երկրորդը՝ ավելի քիչ:

Քննարկված օրինակներում լրացուցիչ իմաստային երանգով ածականացված միավորները ենթատեքստում կորցնում են լրացուցիչ երանգը:

Այժմ անդրադառնանք այն ածականացված գոյականներին, որոնք կոնվերսիայի արդյունքում պահպանում են իմաստային երանգը:

Նր.՝ *La visite en grande pompe des régions reconstruites en un temps record.* (M. Druon, "Les grandes familles", 1958).

Լեզվում լիովին չհիմնված ածականացված **record** գոյականը հանդես է գալիս ռեկորդային իմաստով: Լրացուցիչ իմաստային երանգը սովորաբար ընդգրծվում է **record** ածականացված գոյականի գրեթե բոլոր գործածություններում:

Օր.՝ *Vos camarades qui ont participé en temps record* (Presse)

Le pourcentage record de la tuberculose (Presse)

Gavroche ածականացված գոյականը հանդես է գալիս **հանդուգն**, **անհնազանդ** իմաստով:

Նր.՝ *La fumée montait le long des cils de son oeil gauche et il clignait de cet oeil d'un air gavroche et entendu.* (Presse)

Chouette միավորը, որը հաստատապես կիրառվում է լեզվում, հանդես է գալիս «**շքեղ**» իմաստով և ըստ Շ. Բալլիի՝ **chic** բառի հոմանիշն է: Ինչպես շատ ածականացված միավորներ, **chouette** և **chic** միավորները դրվում են գոյականից առաջ և, հենց այդ առաջադասությունն էլ ընդգծում է նրանց արտահայտչականությունը:

Նր.՝ *On descendrait chez Ruisle, un chouette copain, une chouette auberge.* (A. Lay "La Route" 1959)

Gâteau(m.) ածականացված գոյականը հանդես է գալիս **բարեհամբույր**, **սիրալիր**, **քաղցր** իմաստով: Այս իմաստը փոխաբերական է էլակետային բառի համեմատությամբ:

Նր.՝ *C'est un grand-père gâteau et mes enfants l'adorent.* (Presse)

Նմանատիպ ածականացված գոյականներից են **vache**, **vedette**, **passé-partout**, **ventouse** միավորները:

Քննարկելով ժամանակակից ֆրանսերենում գոյականների ածականացման երևույթը մամուլի և գեղարվեստական գրականության օրինակների միջոցով՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ ածականացված գոյականները

ձեռք են բերում ածականի բոլոր կատեգորիաները և հիմնականում համալրում են հարաբերական ածականների ցանկը:

Ածականացված գոյականների մի խումբը, ստեղծվելով լրացուցիչ իմաստային երանգով, աստիճանաբար կորցնում է այդ երանգը: Վերոհիշյալ միավորների թիվը հետզհետե աճում է:

Եթե համեմատենք ածականի կարգից գոյականի կարգին անցած միավորները, գոյականի կարգից ածականի կարգին անցած միավորների թվի հետ, ապա կնկատենք, որ վեջիններս ավելի սակավաթիվ են, սակայն այս երևույթը միանշանակ համարվում է ժամանակակից ֆրանսերենի բառապաշարի հարստացման ուղիներից մեկը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ch. Bally – Linguistique générale et linguistique française; Berne 1950
2. P. Robert – Le petit Robert; Paris 1979
3. В. Гак – О глагольно-именной конверсии во французском языке; 1961
4. Ю. Степанов – Синтаксическая конвезия во французском языке; 1962
5. Г. Соколова – Транспозиция прилагательных и существительных; Москва 1973
6. К. Ганшина – Французско-русский словарь; Москва 1971

Ա.Տ. ՄԱՐԴԱՆՅԱՆ – *Адъективация существительных как важнейшее средство обогащения французского языка.* – Словообразование является основным способом развития словарного состава языка, так как в области словообразования особенно наглядно выступают законы развития языка.

Пополнение и развитие лексического состава современного французского языка представляет собой одну из наименее изученных проблем романистики.

Как и во всех языках, во французском языке, языковые единицы образуются посредством различных видов словообразования – аффиксальной деривации, транспозиции, словоцеления и др.

Рамотрев адъективированные существительные и их лексические особенности, мы пришли к заключению, что в системе языка закрепятся лишь те адъективированные существительные, которые не могут быть однозначно замещены другими. Этот вывод нашёл свое отражение в критерии однозначной замены, который распространяется на единицы, обладающие экспрессивной окраской.

В материале анализа преобладают единицы, ещё не прочно вошедшие в систему языка, что свидетельствует о непрерывном пополнении класса прилагательных.

LES EUPHEMISMES ET LEUR RÔLE DANS LA LANGUE FRANÇAISE

S.H. HOVHANNISSIAN

L'euphémisme est l'une des rares catégories savantes qui s'est installé dans le parler quotidien. En effet, une des figures centrales de la rhétorique, l'euphémisme a fait l'objet d'investigation également en lexicologie, en sémantique lexicale, en pragmatique et dans les théories de l'énonciation où il a été mis en relation avec les notions de polyphonie et d'interdiscours. L'**euphémisme** est une figure d'atténuation qui consiste à adoucir une idée (généralement négative désagréable, triste, vulgaire, brutale, péjorative ou déplaisante) au moyen de termes plus tempérés. Le mot «euphémisme» a été enregistré pour la première fois dans le dictionnaire de l'Académie française par un grammairien de talent César du Marais. Le terme «euphémisme» est d'origine grecque : euphêmia, puis euphêmos (eu – bien ; phêmê – parole), relève originellement du vocabulaire sacré. L'emploi des euphémismes est dicté tantôt par la décence, la politesse, la prudence, tantôt par quelques craintes superstitieuses. Par conséquent, on distingue deux grandes catégories de cette notion :

1. Euphémisme de superstition
2. Euphémisme de politesse, de décence

A ces deux catégories principales on ajoute encore les euphémismes de pudeur et les euphémismes paraphoniques.

Les tabous sont à la base des euphémismes de superstition. Ce dernier indique l'interdiction d'un mot pour des raisons religieuses, sociales, culturelles ou d'autres. Dans les sociétés dites primitives surtout la valeur, la puissance quasi magique prêtés aux mots exerce son influence et interdit, par exemple, de prononcer le nom des chefs, des prêtres, des êtres surnaturels, des totems, des animaux nuisibles, etc. C'est ainsi que s'explique la grande diversité des termes servant à dénommer un tel animal qui a été l'objet d'un tabou. Cependant dans les sociétés civilisées les tabous ont cédé leurs places aux euphémismes de superstition. Par exemple on remplace volontiers par des périphrases euphémiques tout ce qui se rapporte à la mort. Si l'on ne peut rien changer dans la réalité brutale, on veut au moins essayer de la représenter sous un jour moins cruel. Alors on évite le mot «mort» et on le remplace par des périphrases tels que : éternel repos, éternel sommeil, *grand voyage*, *adieu suprême*, *départ sans retour*, etc.

A côté des euphémismes de superstition, il existe un autre groupe, caractéristique surtout de la langue des sociétés civilisées et qu'on dénomme euphémismes de pudeur. Il est vrai que ce qui sera pudeur pour telle société paraîtra pruderie, préciosité, affection, même hypocrisie pour une autre. Or, comme la pudeur est une qualité essentiellement féminine, il faut s'attendre à ce que ce soit dans les sociétés où la femme fait le plus sentir son empire et que les crudités seront voilées par des euphémismes. Il est vrai que dans le développement de la société française la femme a toujours joué un rôle très important surtout à l'époque des salons et de la littérature mondaine (XVII^e siècle). A cette époque- là, c'est le règne de la préciosité et de la littérature bienséante, donc qui

dit préciosité et bienséance, dit nécessairement langue euphémique, périphrases élégantes, mots nobles, etc. Voici quelques exemples de ce type des euphémismes : *le balai – instrument de la propriété, les dents – l'ameublement de la bouche, le mariage – l'amour fini, la nuit – la mère du silence, la guerre – la mère du désordre, l'eau – l'élément liquide, l'ongle – le plaisir innocent de la chair, etc.* Il est évident que ces euphémismes sophistiqués sont de courte durée, car ils n'enrichissent pas le lexique du français.

L'autre série des euphémismes se sont les euphémismes paraphoniques qui peuvent aussi comporter un élément métaphorique. Du point de vue du rôle délétère de l'euphémie, les euphémismes paraphoniques illustrent les mêmes processus : inaptitude du mot à remplir ses fonctions « normal », sa dégradation progressive qui le fait remplacer à son tour par de nouveaux euphémismes (*p. ex. astiquer pour fourbir*), sa mort enfin ou bien sa transposition dans quelques locutions figées, quelques langage spécial ou quelque lointain dialecte.

Les études montrent que les euphémismes de superstition ainsi que les euphémismes de pudeur sont moins nombreux en comparaison avec ceux de décence ou de politesse. Ces derniers sont sans doute moins anciens. Et si les premiers perdent constamment du terrain, le nombre des euphémismes de décence augmente sans cesse. Leur but est de voiler les vices, les crimes, les défauts, etc.

Exemples : «*Solution final*» pour le génocide des Juifs, «*Contrat*» pour assassinat commandité, «*Troisième âge*», «*sénior*» pour vieillesse, vieux, «*Défavorisé*» pour pauvre, «*Boulevard des allongés*» pour le cimetière, «*Connaître*» (sens biblique) pour désigner des relations sexuelle, «*Frappe chirurgical*» ou «*frappe ciblée*» pour désigner un bombardement, «*Opération*» pour attentat, «*Etre intime*» pour désigner les relations sexuelles, «*Le repos éternel, le rappel à Dieu*» pour la mort, «*Mourir des suites d'une longue maladie*» pour «*mourir d'un cancer ou de SIDA*».

Depuis belle lurette l'euphémisme et la litote sont utilisés pour atténuer l'expression de choses trop crues. Dans la vie courante ce procédé de langage fait partie des codes habituels des relations humaines. Alors il est normal que les humains en viennent à adoucir leur propos en usant des figures euphémiques. Tout cela est sans enjeu particulier tant qu'il s'agit d'une forme de politesse ou de pudeur entre les individus. On a recours à l'euphémisme à tous les niveaux de langage, dans l'argot et dans la langue populaire comme dans l'académisme. La littérature elle-même s'y plie, comme chez Gustave Flaubert dans «*L'Education sentimentale*», où il dépeint le personnage de Rosanette qui se «*laisse renverser sur un divan*» par Frédéric: euphémisme pour désigner l'acte sexuel - expression qui s'explique par le fait que l'auteur a été auparavant accusé d'outrage à la morale après la publication de son *Madame Bovary*.

Ce phénomène a toujours existé, mais aujourd'hui ce procédé est largement systématisé par les élites et tout particulièrement dans les médias. Ce n'est plus seulement une mode, mais un code de communication, voire de manipulation, une forme de «*novlangue*» à la Georges Orwell. Il a pris sous l'influence des Etats-Unis, le nom de «*politiquement correct*» (*politically correct*). L'adverbe «*politiquement*» suggère que la politique est le lieu privilégié de ce phénomène. Pourtant, on pourrait aussi bien s'exprimer en termes de socialement correct, religieusement correct, sexuellement

correct, publicitairement correct, culturellement correct, etc. Alors, une question se pose: pourquoi les anglophones ont choisi l'adverbe *politically* pour englober tous ces domaines et pas un autre terme plus générique? Cela s'explique par le fait qu'effectivement, le domaine politique constitue un terrain propice où se manifestent l'hypocrisie, le mensonge (vérité déformée), la tromperie (apparence différée). D'après les études ce procédé a ses termes de prédilection: voiler la stigmatisation des gens différents (handicapés, étrangers), atténuer les choses terribles, comme les horreurs de la guerre; cacher les injustices, notamment les inégalités sociales ou les décisions économique difficiles; parler avec pudeur excessive des sujets jugés difficiles à aborder.

Ces dernières années dans nos sociétés technocratiques, adeptes au jargon médiatico-administratif, la figure moderne de l'euphémisme – le *politiquement correct*, prospère généreusement au fil des déclarations gouvernementales et des communiqués institutionnelles.

Ainsi, il vaut mieux dire:

Malentendant plutôt que sourd, Non-voyant qu'aveugle, Personne à mobilité restreinte qu'infirme, Être diminué qu'être handicapé, Personne de petite taille que nain, Afro-Américain, un homme de couleur que nègre, Asiatique qu'à peau jaune, Pays en voie de développement, un pays émergent, un pays du tiers- monde qu'un pays sous- développés, SDF que vagabond, mendiant, Défavorisé que pauvre, Intégration qu'assimilation, Un conflit qu'une guerre, Une ethnie, une communauté qu'une race, Les forces de l'ordre que la police ou la gendarmerie, Des jeunes que de jeunes délinquants issus d'immigration, Un ralentissement de la croissance économique qu'une crise économique, La précarité que la misère, Des personnes aisées que des riches, Des personnes modestes que des pauvres, Mis en examen qu'un accusé, Un sans-emploi qu'un chômeur, Une IVG que l'avortement.

Dans le corpus du discours publicitaire, on montre que les euphémismes y jouent un rôle fondamental tant dans l'atténuation que dans l'amélioration de certaines réalités. En effet si on considère le discours publicitaire comme une «euphémisation diffuse» en ce qu'il adopte souvent une rhétorique appréciative, l'atténuation euphémique n'entre en jeu que dans la présentation de «produits problématique», comme dans les cas pour les assurances, décès ou pour les premières campagnes contre le SIDA. La deuxième fonction rattachée aux euphémismes concerne leur rôle d'appeler certains produits comme les risques nucléaires et les produits érotiques. En particulier dans ce dernier cas on montre comment diverses stratégies euphémiques (hypéronymie, métaphorisation, métonymie, etc.) contribuent à détourner d'une certaine manière la condamnation globale du sexuel dans les médias. Ainsi, loin de constituer une stratégie incompatible avec le discours publicitaire, l'atténuation euphémistique agit non seulement du côté de la persuasion mais aussi dans la contre-connotation de certains produits.

Naturellement, il ne faudrait en aucune manière croire que les euphémismes sont des mots tout à fait naturels et qui se sont tout à coup changés en mots "acceptables socialement". Au fond, la langue évolue, le sens des mots évolue aussi sans cesse. Donc il faut donner aujourd'hui un grand coup de pouce à cette évolution.

L'utilisation abusive d'euphémismes permet de ne pas contrarier les «bien-pensants» et d'éviter les situations anormales, choquantes ou plus simplement inquiétantes qui peuvent être ainsi plus facilement admises par la société. Rappelons

que depuis l'Antiquité, les figures de style ne sont pas innocentes mais au service de la rhétorique (art de persuader), il convient de rester vigilant et de chercher à comprendre la manipulation. Ce fait était nécessaire, il faut tout simplement que les divers groupes et les fonctionnaires fassent preuve de mesure, sinon cela tournera à la parodie.

En guise de conclusion, nous pouvons dire que l'euphémisme est l'unique phénomène linguistique qui nous rappelle que la langue est un fait social. Certes, les changements subis par les sons, les élargissements et les restrictions des sens des mots, les innovations grammaticales, les néologismes doivent leur permanence et leur propagation au consentement de la communauté linguistique, mais ces phénomènes sont à l'origine, des faits individuels, quoique conforme aux caractères généraux de l'esprit humain. L'euphémisme, au contraire, est essentiellement un fait social qui trouve son origine dans l'action, la pression exercée par la collectivité sur l'individu. C'est le groupe, avec toutes les croyances, tous les préjugés qui le caractérisent qui frappe d'interdit tel mot ou telle expression et oblige l'individu soit au silence absolu (c'est l'euphémisme zéro, l'euphémisme absence), soit à tourner autrement. Et finalement, les euphémismes se révèlent ainsi comme voués normalement à une existence relativement transitoire à la différence souvent des mots brutaux ou obscènes qu'ils servent à voiler. Ceux-ci, ostracisés de la langue bienséante, n'en continuent pas moins à mener une vie vigoureuse là où aucun souci de bienséance ne fait obstacle à leur emploi. Les euphémismes au contraire, menacés qu'ils sont d'une synonymie entière et subissant toujours l'action des forces à moins qu'ils n'aillent rejoindre dans la pègre linguistique les mots qui les ont fait déchoir.

BIBLIOGRAPHIE

1. Aram Barlézizian: *"Précis de lexicologie du français moderne"*; Erevan, 2007
2. <http://www.lettres.org/files/euphemisme.html>
3. <http://jpdubs.hautetfort.com/archive/2006/03/12/la-mode-de-l-euphemisme.html>
4. http://www.hku.hk/french/dcmScreen/lang3033/lang3033_tropes_a_e.htm#euphemisme
5. <http://www.planete-enseignant.com/humour/blagues/consult-blague.asp>
6. <http://semen.revues.org/document2351.html>
7. <http://pikereplik.unblog.fr/2008/05/18/les-euphemismes-du-politiquement-correct/>
8. http://farum.it/lectures/ezine_articles.php?lectures=29459cc14a1eaf0060ec0857428588f9&art_id=137
9. http://www.persee.fr/web/revues/home/prescript/article/caief_0571-5865_1953_num_3_1_2029
10. <http://fr.wikipedia.org/wiki/Euphémisme>

Մ.Ն. ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ – Մեղմասությունները և նրանց դերը ֆրանսերեն լեզվում. – Հռոկվածում ներկայացված են մեղմասությունները, նրանց տեսակները և դերը ֆրանսերեն լեզվում: Մեղմասությունը լեզվաբանական այնպիսի միավոր է, որի նպատակն է մեղմացնել տհաճ, գռեհիկ, կոպիտ և բացասական երևույթների դրսևորումները: Մեղմասությունների կիրառումը բխում է քաղաքավարության, խոհեմության, հարգանքի, երբեմն էլ սնահավատության պահանջներից: Ըստ այդմ էլ տարբերում ենք մեղմասությունների երկու հիմնական տեսակ՝ սնահավատության մեղմասություններ և քաղաքավարության մեղմասություններ: Սնահավատության մեղմասությունները առավել հին ծագում ունեն. դրանց հիմքում ընկած են տաբուները: Վերջիններս փոխարինում են վատ նախանշան արտահայտող բառերին: Ի տարբերություն սնահավատության մեղմասություններին՝ քաղաքավարության մեղմասությունները առավել ժամանակակից են: Նրանց նպատակն է քողարկել թերությունները, արատները, հանցագործությունները և այլն: Դեռևս վաղ ժամանակներից մեղմասությունները կիրառվել են՝ թուլացնելու դաժան իրականությունը: Առօրյա կյանքում այս երեվույթը մարդկային հարաբերությունների մի մասն է կազմում: Շատ բնական է այն փաստը, որ մարդիկ մեղմացնում են իրենց խոսքը՝ որպես բարեկրթության և քաղաքավարության դրսևորում:

Մեղմասությունները օգտագործվում են լեզվական բոլոր ոճերում՝ առօրյա խոսակցական, գեղարվեստական և գիտական: Մեր օրերում այս երևույթը հատկապես մեծ տարածում է գտել լրատվամիջոցներում: Նրա նպատակն է քողարկել խոցելի դասի խարանդը, մեղմացնել սարսափազդու երևույթները, թաքցնել անարդարությունները, հատկապես սոցիալական անհավասարությունները և այլն: Սակայն պետք չէ կարծել, թե մեղմասությունները անմիջապես ընդունվել են հասարակության կողմից, բնականաբար նրանք երկար ճանապարհ են անցել մինչև լեզվի բառապաշարի մեջ ընդգրկվելը: Ի վերջո, լեզուն անդադար զարգանում է, բառիմաստը՝ նույնպես: Սակայն, մյուս կողմից էլ, պետք չէ չարաշահել մեղմասությունների կիրառումը, քանի որ դա կարող է հանգեցնել ծիծաղելի և անհարմար իրավիճակների:

Մեղմասությունը հասարակական երևույթ է, որ ծագել է անհատի հանդեպ գործադրվող ճնշումից և այն թուլացնելու, մեղմացնելու միտում ունի:

ՆԱԽԴԻՐՆԵՐՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀՈՒՈՎԱՅԻՆ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ռ.Պ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ժամանակակից լեզուները, անկախ իրենց արտասանական, բառակազմական, ձևաբանական և շարահյուսական տարբերություններից, ունեն հնչյունաբանական, բառային կամ քերականական որոշ ընդհանրություններ:

Անգլերենը և հայերենը, լինելով միևնույն լեզվաընտանիքի ներկայացուցիչներ, ունեն որոշ քերականական նմանություններ: Դիտարկելով նմանությունները՝ կանգ առնենք քերականական տարբերությունների վրա և քննարկենք դրանցից մեկը:

Քերականության առումով ժամանակակից լեզուները տարբեր են: Ըստ լեզուների ձևաբանական կամ տիպաբանական դասակարգման, որը հենվում է լեզուների կառուցվածքային ընդհանրությունների վրա, անգլերենը դասվում է վերլուծական լեզուների շարքին: Անգլերենում որպես քերականական արտասանության միջոցներ՝ հիմնականում գործադրվում են բառերի դասավորությունը, շեշտը, հնչերանգը, օժանդակ բառերը: Մինչդեռ հայերենը դասվում է համադրական լեզուների շարքին: Հայերենում քերականական իմաստներն արտահայտվում են այնպիսի միջոցներով, ինչպիսիք են ներքին թեքումը և ուրույն մասնիկավորումը:

Հայերենն ունի զարգացած հոլովական համակարգ: Նորագույն քերականական աշխատություններում քննադատվում է լեզուների շարահյուսական ըմբռնումն ու բնորոշումը, քանի որ հոլովական իմաստը չի կարելի նույնացնել հոլովի արտահայտած կոնկրետ հարաբերության, շարահյուսական պաշտոնի, ֆունկցիայի հետ: Յուրաքանչյուր հոլով ունի իր գլխավոր նշանակությունը և շարահյուսական կիրառությունը, որոնց վրա և հենվում է հոլովի ձևաբանական իմաստը: Հայերենում միայն ուղղական հոլովն է, որ ձևով հակադրվում է մյուս բոլոր հոլովներին, քանի որ չունի հատուկ վերջավորություն և ելակետային ձև է մյուս՝ այսպես կոչված՝ թեք հոլովների համար:

Ժամանակակից անգլերենը չունի հարուստ հոլովական համակարգ: Այստեղ հոլովական իմաստին հատուկ շարահյուսական կիրառություններն արտահայտվում են ոչ թե հոլովային վերջավորությունների միջոցով, այլ՝ օժանդակ բառերի: Ընդ որում, այդ օժանդակ բառերի դերը կատարում են նախդիրները: Հենց նախդիրների միջոցով էլ արտահայտվում են միևնույն բառի տարբեր քերականական իմաստները.

Օր՝ . փողոցից - from the street

փողոցում - in the street

փողոցի - of the street, etc.

Եթե հոլովական վերջավորությունները ձևային են և ուսումնասիրվում են ձևաբանություն բաժնում, ապա նախդիրները, որպես անկախ բառեր, համարվում են լիիմաստ բառեր և նախադասության մեջ կարող են հանդես գալ որպես

ինքնություն անդամ, մինչդեռ հոլովական վերջավորություններն անկախ գործածություն չունեն, քանի որ որպես առանձին ձևույթ, զուրկ են իմաստից: Այնուհանդերձ որոշ լեզուներում հոլովական վերջավորությունների և նախդիրների ունեցած դերը գրեթե հավասարագոր են:

Նախդիրների դերն առանձնապես մեծ է ժամանակակից անգլերենում: Նախդիրը կարող է օգտագործվել գոյականի կամ գոյականին համարժեք դերանվան կամ Gerund դերբայի հետ՝ արտահայտելու նախադասության մեջ դրա հարաբերությունը մեկ այլ բառից: Նախդիրը գործածվում է նաև գոյականաբար օգտագործված այլ խոսքի մասերի հետ: Կառուցվածքային տեսակետից նախդիրները լինում են պարզ՝ մեկ բառից բաղկացած /on, in, at, for, with, etc./, բարդ /into, upon, throughout, etc./, ածանցավոր /behind, below, across, along, etc./ և բաղադրյալ /in front of, by means of, as for, etc./:

Նախդիրները կարող են օժտված լինել առանձին բառային իմաստով.

e.g. Her sister appeared carrying a wine-glass in which there was a raw egg, with a little sherry on it.

Քույրը հայտնվեց գինու մի բաժակ ձեռքին, որում ձու կար՝ վրան մի փոքրիկ բալ:

The path felt springy beneath his feet.

Արահետը կարծես փախչում էր նրա ոտքի տակից:

He dropped into a chair beside his mother.

Նա ընկավ աթոռի վրա, մոր կողքին:

Նախդիրները լինում են տեղի /e.g. on, in, under, over, at, near, to, into, out of, from, towards, etc./, ժամանակի /e.g. after, before, during, for, in, on, at, etc./, և տարբեր վերացական հարաբերությունների արտահայտող /e.g. by, with, for, against, because of, instead of, owing to, according to, etc./:

Որոշ նախդիրներ կարող են ունենալ երկակի իմաստ.

e.g. I've been here for already two weeks.

Արդեն երկու շաբաթ է՝ ես այստեղ եմ:

He's brought a letter for you.

Նա քեզ համար նամակ է բերել:

I was punished for my little joke.

Ես պատժվեցի իմ փոքրիկ կատակի պատճառով:

They went for a walk

Նրանք զբոսանքի գնացին:

The sent for a doctor.

Նրանց ուղարկեցին բժշկի ետևից:

Նախդիրի ընտրությունը որոշվում է տարբեր գործոններով: Երբեմն այն միանգամայն ազատ է և կախված է այն իմաստից, որը խոսողը ցանկանում է ներկայացնել:

Շատ դեպքերում էլ նախդիրի ընտրությունը որոշվում է՝ կախված այն գլխավոր բառից, որի հետ այն գործածվում է.

e.g. No one could account for his objection to our plan.

Ոչ ոք չէր կարող ակնկալել, որ նա կառարկի մեր ծրարին:

He should be ashamed of himself.

Նա պետք է որ ամաչի իր արածից:

You shouldn't rely on him.

Չպետք է հույս դնելիք նրա վրա:

Who is going to look after your children while you are away?

Ո՞վ է խնամելու երեխաներիդ, եթե դու գնում ես:

I've been dependent on both of you so long.

Ես երկար ժամանակ ձեր երկուսից էլ կախված եմ եղել:

Շատ հաճախ նախդիրի ընտրությունը կախված է այն գոյականից, որը հաջորդում է նրան.

e.g. Who was the first to speak at the meeting?

Ո՞վ պետք է խոսեր ժողովին:

He went there on business.

Նա գործով գնաց այնտեղ:

He is now on a concert tour in Europe.

Նա հիմա համերգային հյուրախաղերի է Եվրոպայում:

I'm planning to finish it in February.

Ես որոշում եմ ավարտել դա փետրվարին:

Անզլերենում ժամանակը ցույց տվող նախդիրների արտահայտած իմաստը հիմնականում համապատասխանում է հայերենի տրական հոլովի արտահայտած իմաստին.

Օր՝ . Դասերն սկսվում են ժամը իննին:

Classes begin at 9 o'clock.

Երևանը գեղեցիկ է կեսգիշերին:

Yerevan is beautiful at midnight.

But:: Նա ամուսնացավ տասնյոթ տարեկան հասակում:

She got married at the age of 17.

Ինչպես երևում է օրինակներից, անզլերենի at ժամանակի նախդիրին համապատասխանում է հայերենի տրական հոլովի -ին վերջավորությունը:

Անգլերենի from նախդիրին համապատասխանում են հայերենի բացառական հոլովի -ից, -ուց վերջավորությունները.

e.g. Most people work from 9 to 5.

Շատ մարդիկ աշխատում են իննից մինչև հինգը:

They flew from Paris to Rome.

Նրանք Փարիզից թռան Հռոմ:

I translated the article from Russian into English.

Ես հոդվածը ռուսերենից թարգմանեցի անգլերեն:

Անգլերենի by նախդիրը կարող է համապատասխանել հայերենի գործիական հոլովի -ով, -բ վերջավորություններին.

e.g. He likes to travel by car.

Նա սիրում է երթևեկել ավտոմեքենայով:

Ամփոփելով՝ պետք է նշել, որ հոդվածի նյութը ենթակա է հետագա ուսումնասիրության՝ ելնելով անգլերենի նախդիրների և հայերենի հոլովական վերջավորությունների համապատասխանությունն ուսումնասիրելու անհրաժեշտությունից: Նման ուսումնասիրությունները կարող են հանգեցնել քերականական կոնկրետ կանոնների ստեղծմանը, որոնք բնականաբար կհեշտացնեն թարգմանչական աշխատանքը հայերենից անգլերեն և անգլերենից հայերեն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան, *Ճամանակակից հայոց լեզվի քերականություն*, Վաղարշապատ, 1906
2. Աբրահամյան Ս.Գ., *Ճամանակակից հայերենի քերականություն*, Երևան
3. Ասատրյան Է.Մ., *Ճամանակակից հայոց լեզու*, Երևան, 1983
4. Raymond Murphy, *English Grammar in Use*, second edition Cambridge University Press
5. Thomson, Martinet, *A Practical English Grammar*, Oxford University Press, 1986
6. Gordon E.M., Krylova I.P., *A Grammar of Present-day English*, Moscow, 1980
7. Aksanenkov B.N., *The Prepositions of the English language*, Moscow, 1956
8. Anderson, *The Grammar of Case towards a Localistic Theory*, Cambridge University Press, 1971
9. Мхитарян Е.С., *Структурно-семантические оппозиции в системе пространственных предлогов*, Ереван, 2000

Р.П. АВЕТИСЯН – Предлоги в английском и подежные окончания в армянском. – Вопросы обсужденные в этой статье могут рассматриваться как полезный материал, чтобы изучать соответствие предлогов в английском языке и подежных окончаний в армянском языке. Такое исследование может принести к созданию нескольких полезных грамматических правил, с помощью которых можно будет делать переводы с английского на армянски или с армянского языка на английский язык боле простым и естественным путем.

ԱԾԱՆՑՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՐԱՆԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Գ.Գ. ՄԿՐՏՉՅԱՆ

Ածանցումը, լինելով հայերենի զարգացման բոլոր փուլերում գործող բառակազմական միջոց, բառարտադրման մշտակա գործոններից ու եղանակներից է¹⁰³: Համաժամանակյա կտրվածքում կատարվող քննության համատեքստում Ապարանի տարածաշրջանի բազմատարր 21 խոսվածքներում գործում են ուշադրության արժանի շուրջ 100 բառակազմական մասնիկներ, որոնց մեծագույն մասը գործածվում է այլ տարածական միավորներում ու հայերենի գրական տարբերակներում: Ըստ դիրքի՝ խոսվածքներում գործում են **ան-, բէ-, նա-/նը-, չ- նախադաս** և **-ա, -ագ, -ագան/-գան, -ալի, -աձ, -ային, -ան, -անագ, -անօց/նօց, -աշ, -ավ, -ավօր/վօր, -ատ, -արան/ըրան, -արար/րար, -աց, -ացի/-էջի/-ցի, -ացու, -է, -էկ, -էղէն, -էն, -էնի, -էնց, -էնք, -էր, -էրք, -ի, -իգ, -իլ, -իճ, -ին, -ինկ, -իշկ, -իչք, -իստ, -իք, -լան, -լիկ, -կա, -կի, -ճի, -ման, -միշ, -մուք, -պաղիգ, -պան, -ս, -սուն, -վարի, -տու, -րօրդ/-էրօրդ, -ու, -ուգ, -ութուն/ուտէն, -ուձ, -ում, -ուն, -ունդ, -ունի, -ունք, -ուշկ, -ուտ, -ուրիգ, -ուց, -ք, -օ, -օդ, -օծ, -օծի, -օդ, -օն, -օնք, -օշ, -օվի, -օրդ, -օցք, -օք** հետադաս ածանցները: Նշյալ ածանցները գործածվել են հայերենի զարգացման ավելի վաղ շրջափուլերից սկսած¹⁰⁴, միայն վերոնշյալներից **բէ-, նա-/նը-** նախադաս և **-ա, -ավ, -ա/րար, -գան, -էնց, -էնք, -էրք, -իշկ, -լան, -լիկ, -լու, -ճի, -միշ, -պան, -ս, -ուշկ, -ուրիգ, -օ, -օնք, -օք** վերջադաս մասնիկները, լինելով այլ ածանցների հնչյունական տարբերակներ, բառարմատներից, բառահարաբերական ձևայիններից առաջացած ածանցներ և նորամուտ ածանցներ, կան Ապարանի խոսվածքներում ու այն բարբառներում, որոնց ներկայացուցիչներ են համարվում դիտարկվող ենթախոսվածքները: Ինչպես փաստերն են ցույց տալիս, նշված ածանցները նախորդ լեզվափուլերում կամ չկային, կամ էլ տակավին բառակազմական ածանցներ չէին:

Ըստ իմաստային գործառության՝ Ապարանի խոսվածքներում կան միայն ժխտական նախածանցներ, իսկ հաստատական նախածանցները բացակայում են: Ինչպես հայերենի բոլոր դրսևորումներում¹⁰⁵, Ապարանի խոսվածքներում գործածության անհամեմատ մեծ ընդգրկում ունի հնդեվրոպական ծագում ունեցող, այս կամ այն իրողությունը բացասող, ածականակերտ, ժխտական **ան-** նախածանցը, որը հիմնականում ավելանում է. **ա. տարատեսակ բնիկ և փոխառյալ բառարմատների՝** *անքաշ, անօտմալ, անօթի, անժուռ, անարուռ, անանգաճ, անբան, անաղ, անճարակ, անմամ, անմարդ, անյօլազյալդի,*

¹⁰³ Տե՛ս **Ս. Գալստյան**, Ժամանակակից հայերենի վերջածանցների համաժամանակյա դասակարգման մի քանի հարցեր, Բանբեր Երևանի համալսարանի, Եր., 1997, N 2, էջ 77:

¹⁰⁴ Հմմտ. **Գ. Զահուկյան**, Հին հայերենի վերջածանցների ծագումը, Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, պրակ. 2, Եր., 1998, էջ 5-44, **Ռ. Ղազարյան**, Միջին գրական հայերենի բառապաշարը, Եր., 2001, էջ 195-210:

¹⁰⁵ Հմմտ. **Ս. Հ. Բաղդասարյան**, Ածանցները և ածանցման մի քանի օրինակափոխությունները Արարատյան բարբառում, ԳԱԱ, Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., 1972, N 10, էջ 92:

անսրպէ՛ռ, անսի՛ֆաթ, անփէ՛շագ, անլէ՛զու, անկու՛շտ և այլն: **բ. մի շարք բայարմատների՝** անէ՛փ, անլ՛վա, անթ՛աղ, անմե՛ռ, անկէ՛ր և այլն: Բայանունուններից միայն **«անկըշտում»** բառում է հանդիպում **ան-** նախածանցը, իսկ **«անտղէլ»** բառում՝ ավելանում է անորոշ դերբային: Խոսվածքներում չկան փաստեր, որ **ան-** ժխտականն ավելանա ածականների: Խոսվածքներում **ան-** ժխտականի իմաստն արտահայտվում է նաև «առանց» կապի միջոցով՝ *«առանց մատթ», «առանց տուն»* և այլն: Ըստ երևույթին, **ան-** ժխտականի հնչյունական տարբերակներն են **նա/նը-** մասնիկները, որոնք կան *նամարդ/նըմարդ «անմարդ», նամուրթ «անմուրթ», նաչար «անճար», նըբխէր «անխէր»* բառերում: **Բէ-** ժխտական, ածականակերտ նախածանցը, ըստ իմաստի, համարժեք է **ան-** ժխտականին և գործածվում է միայն փոխառյալ գոյականների հետ: Հավանաբար, այն արևելյան լեզուներից փոխառյալ բառակազմական մասնիկ է՝ *բէխէրություն, բէորվաթ, բէմուրագ, բէնամուս, բէջուռա, բէհուշ, բէքէֆ, բէխաբար, բէֆայլ* և այլն: Հնդեվրոպական ծագում ունեցող, ածականակերտ **չ-** ժխտական նախածանցն ավելանում է հետևյալ ածականներին՝ *չըխօսկան, չըկիրուկ, չուզան, չաճան, իսկ չըբէր, չըկամ, չըհաս, չըտէս, չըհավան, չունէվօր* բառերում այն ավելացել է բայարմատների:

Խոսվածքներում իրենց իմաստային, ձևային բազմազանությամբ ու տեսակարար կշռով մեծ թիվ են կազմում վերջածանցները՝ ավելանալով պարզ և բաղադրված հիմքերի: Ապարանի տարածաշրջանի խոսվածքներում, գործառվում են սահմանափակ թվով, ուշ շրջանում կատարված փոխառյալ վերջածանցներ, այն է՝ **-լու, -միշ, -չի, -վօ, -խստ:** Արևելյան լեզուներից փոխառյալ, հարակատար դերբայի իմաստ արտահայտող **-լու** ածանցը հանդիպում է *դարդլու «վշտահար», յարալու «վերքոտ, վիրավորված», սազդալու «գեղեցիկ», նազլու «հեզ, խոնարհ», մագալու «ծիծաղաշարժ», դադալու «վիրավորված», սավդալու «սիրահարված մարդ»* բառերում, ինչպես նաև *«Թաքառլու», «Տանջըլլու»* փոխառյալ տեղանուններում: **-Լու** ածանցը կա նաև գրաբարի շրջանում պահլավերենից փոխառված *նըշանլու «նշանված»* բառում: Թուրքերեն ծագում ունեցող **-միշ** ածանցը, որը հարակատար և վաղակատար դերբայների իմաստն է արտահայտում, ածականական կիրառությամբ հարադրավոր բայերում հանդիպում է *ցնդըռմիշ «ցնդած», դընդըռմիշ «դանդաղել», շընթըռմիշ «քնած», չաթլամիշ «տանջված, տառապած», գօշլամիշ «մահացած»* բառերում: Ինչպես նկատելի է, **-միշ** ածանցն ավելանում է բացառապես փոխառյալ բառերի: Փոխառյալ **-չի** ածանցը գոյականակերտ է և կցվում է ինչպես փոխառությունների, այնպես էլ բարբառային բառերի՝ *գաթըրճի «սպօրինի օղի վաճառող», արախչի «թաշկինակ», սընըխչի «ինքնուս բժիշկ, վիրակապ անող», բօստընչի «հողագործ», սիթասչի «ջրաբաշխ», հանաքչի «կատակարան», փինասչի «կոշիկ կարկատող», փօղրասչի «արտագնա աշխատանքը դեկավարող անձ», քէֆչի «քէֆ անող», գուռնըչի «փողհար», յալանչի «ծաղրածու», սվչի «որսորդ», նախըրչի «անասնապահ»:* Թախլասչի «երկերեսանի» բառում **-չի** ածանցն ածականակերտ է: Ռուսերենից փոխառյալ **բօրդասլօ** բառից խոսվածքներում կա *բօրդասլօ «թափք ունեցող բեռնատար մեքենա»* բառը, ուր **-վօ** մասնիկը, ըստ էության, վերջածանց է: Դարձյալ ռուսերենից փոխառյալ **-խստ** ածանցը կա *պիանիստ «հարբեցող»* բառում: Եթե փոխառյալ ածանցները, ըստ խոսքամասային պատկանելության, մենիմաստ են, այսինքն՝ կերտում են միայն գոյականներ՝ **-չճի**, ու ածականներ՝ **-միշ, -լու**, ապա հայերենի զարգացման

տարբեր փուլերից ավանդված բնիկ, փոխառյալ, բաղադրված ու քերականական ածանցներից առաջացած վերջածանցները հավասարաչափ և՛ մենիմաստ են՝ մեկ խոսքի մաս կերտելու բնույթով, և՛ բազմիմաստ՝ մի քանի խոսքի մաս կերտելու բնույթով¹⁰⁶: Ինչպես փաստերն են ցույց տալիս, խոսվածքներում ավելի մեծ թիվ են կազմում մենիմաստ ածանցները:

Ստորև կտանք Ապարանի տարածաշրջանի խոսվածքներում գործող հայերենի զարգացման ներքին փոփոխություններով առաջացած վերջածանցները: - **Ա** վերջածանցը հանդիպում է հետևյալ գոյականներում՝ *քրշհանա «գիշերահան», սարինա «հով», մերա «մայր», պայչինգա «պատվաստ», պառդանգա «պարկ», յրռռնդա «փայտ տաշող, կտրող գործիք, ճրմճրմա «հահճոտ հող»,* և ածականներում՝ *շիվարա «խեղճ», ճիլա «նիհար», զրոզամա «մեծ, սահագին»*: Իրանական ծագման **-ազ** վերջածանցով կազմվում են տարատեսակ գոյականներ՝ *կէծակ «կայծակ», պիճազ «անասունների վրա նստող փոքր ճանճ», էրրժնագ «երեքնուկ», լօշտագ «բուժիչ բույս», խրռտըլագ «կոկորդ», ջրխտակ «գույգ», պուլպուլակ «ցայտաղբյուր», քիսակ «ղրամապանակ», չագուչակ «հողը փխրեցնող գործիք», լաչագ «գլխաշոր», զիլակ «զիլ, աշխույժ» և այլն: Խոսվածքներում գործառվում է **-սկան** ածանցը՝ հնչյունական **-կան** տարբերակով՝ կերտելով մեծ մասամբ ածականներ՝ *հորէնագան «հայրական», պարէնագան «պապական», տիրագան «տիրական», սագագան «համապատասխան», ջօջական «մեծական», ալական/լալական «համեստ», օրէկան «օրական», զրնալական «զնացող», գէղագան «գյուղական» և այլն, մասամբ գոյականներ՝ *բազրոզան «վաճառական», փօխադրագան «փոխադրամիջոց»*: Խոսվածքներում կենսունակ **-կան** ածանցը, ըստ երևույթին, ոչ թե **-սկան** ածանցի հնչյունական տարբերակն է, այլ **-իկ** և **-ան** ածանցների բաղադրությունից ձևավորված **-գան** վերջածանցը, որը հիմնականում ածականներ է կազմում՝ *թոխական «թուխս», վօրսկան «վորսորդ», ավիրգան «ավերող», խոսկան «խոսող», նըստկան «անգործունյա», քրֆրրկան «հայհոյող», վախկան «վախկոտ», բըստըրգան «հորինող», կըռվըրգան «անհաշտ», մըսկան «մրտող» և այլն: -Ած* մասնիկի ծագումը կապվում է **«ածել»** բայի **ած** բայարմատի հետ, ինչպես Գ. Ջահուկյանն է նշում. «հնարավոր է համարվում նաև գոյականակազմ **-ած**-ի հնդեվրոպական ծագումը»¹⁰⁷, որը խոսվածքներում, բացի հարակատար դերբայի կազմությանը և բայական ժամանակաձևերի կազմությանը մասնակցելուց, ածականական նշանակությամբ հանդես է գալիս հետևյալ բառերում՝ *ամբաճ «ամպամած», քրռնաճ «ծաղկատար», քէռոտաճ «ծաղկատար», քօքրցաճ «զեր», նըշանաճ «նշանած», հառփաճ «խամած», լըլկըրվաճ «խամած», կայճաճ «խամած», կըռդաճ «ամորձահատած» և այլն: Ած* բայարմատից և **ոյ**-ի հնչյունափոխությունից առաջացած **ու** մասնիկի բաղադրությունից ձևավորված **-ածու**՝ «մի բան անող նշանակությամբ» վերջածանցը հանդիպում է հետևյալ գոյականներում՝ *սէրմածու, մըսացու, մէրացու, հարսնացու, փէսացու, հէրացու, տագացու «ներքնագգեստ»*:**

¹⁰⁶ Տե՛ս **Մ. Գալստյան**, Ժամանակակից հայերենի վերջածանցների համաժամանակյա դասակարգման մի քանի հարցեր, Բանբեր Երևանի համալսարանի, Եր., 1997, N 2, էջ 80:

¹⁰⁷ Նմտ. **Գ. Ջահուկյան**, Հին հայերենի վերջածանցների ծագումը, Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, պրակ. 2, Եր., 1998, էջ 8:

Դեռևս դասական հայերենի շրջանից որպես հոգնակերտ մասնիկ վկայված¹⁰⁸ բազմիմաստ **-ան**՝ «ինչ-որ հատկանիշ ունեցող» ածանցը լայն գործածություն ունի խոսվածքներում, որով կազմվում են՝ **ա. գոյականներ**՝ *հովան «տաք ջուրը սառեցնելու համար առանձնացրած սառը ջուր», թացան «անասնակամուտ՝ կով, ոչխար, խոզ», չրվան «տաշած փայտը՝ որպես ամրակ», չայդան «թեյնիկ», ժողովկրթան «մուրացկան», տրտան «տան շեմ, տան մուտք», ճրջջորան «ճնճանակ», չիման «անմշակ տարածք», կրպչան «մանր փայտ, որով կրակ են կպցնում», շարօդան «ողնաշար» և այլն: **բ. բազմաթիվ ածականներ**՝ տրոճրգան «արագավագ», պրլպրլան «փայլուն, քրթվրթան «արագաշարժ», խաձան «կծող», կրձվրձան «կծու», ուզան «ուզող», յարան «սիրելի էակ», ճելվան «ծորուն», դուրան «ուղիղ», ուտան «ուտող», աձան «ածող» և այլն: Ինչպես նկատելի է, **-ան** վերջածանցը հիմնականում ավելանում է բայաբների, արմատական ձևույթներին ու որոշ բնաձայնույթների՝ *ֆրոռան «շրջող», բրբրլլան «անհասկանալի խոսող», դրժրժան «շատախոսող», լրխրխան «գեր», զրրրնզան «զրնգուն», ճրռճրռան «ճռճոացող», բրռբրռան «մայող ոչխար», զրմբզրմպան «կարկաչուն» և այլն: «Ինչ-որ բան ունեցող» նշանակությամբ **-անի** ածանցով կազմվում են ածականներ՝ *ճրդանի «ճյուղ ունեցող», թելանի «թև ունեցող», պլանի «ոչ աղի», չորսմադնանի «չորս մատ ունեցող», վօտանի «ոտք ունեցող», լեզվանի «լեզու ունեցող», զրլխանի «զլուխ ունեցող», ծիրանի «թերխաշ», իսկ պլանի «դեղձի կեղևից պատրաստված քաղցրավենիք» բառում այն գոյականակերտ է: Ածականակերտ **-ային** ածանցը գործածվում է *աչային «ուշադիր, աչալուրջ»* և ժարգոնային *հավայի «անխելք»* բառերում՝ վերջինիս դեպքում **ն**-ի անկմամբ, ինչպես նաև գրական փոխառություններում՝ *յերգրային, դաշտային, լեռնային* և այլն: Ժամանակի, տեղի, ձևի մակբայներ կերտող **անցանել** բայի **անց** բայարմատից ձևավորված **-անց** ածանցը գործածվում է *զրլխանց «սկզբից», տրկանց «տակից», կողքանց «կողքից», սրրդանց «սրտով», յերեսանց «երեսից», չորեքօդմանց «չորս կողմից», յեղեղանց «ետևից», հեռվանց «հեռվից», կօխքանց «կողքից»* բառերում: Տեղ ցույց տվող **-անոց** ածանցը գոյականակերտ է, հանդես է գալիս նաև **-նոց** տարբերակով հետևյալ բառերում՝ *թրրթրնոց «գոմաղբի կուտակման տեղ», հորթանոց «հորթերի հավաքման տեղ», զիրբլնոց «աղբանոց», շրնանոց «անառականոց», տասնոց «տասանոց», թեվնոց «թևի զարդ», առդագնոց «գուգարան», զրդալնոց «սպասքի տեղ», ավրզնոց «ավազի տեղ», ժեխնոց «աղբանոց», խօտանոց «խոտերի կուտակման տեղ», ցանանոց «չորացած գոմաղբի կուտակման տեղ» և այլն: Միայն *զրրկանոց «փոքր, չքայլող երեխա»* բառն է, ուր **-նոց** ածանցն ածական է կերտում: «Մի բան ունեցող, հատուկ» նշանակությունն ունեցող **-ավոր/-վոր** տարբերակներով հանդես եկող վերջածանցը հանդիպում է մեծ մասամբ ածականներում՝ *զրլխավոր, ըխտավոր, պաճառավոր «հղի», ճրրագվոր «գեր», ծօծվոր «հղի», սրգավոր, գօլավոր «գոլեր ունեցող», չրքա-վոր, քօչվոր «մեկնող, հեռացող», չարդախավոր «ծածկ ունեցող տուն», համավոր «հեգ, խոնարհ», պակասավոր «թեթևալիկ», օյնրվոր «ձևավոր», մեձավոր, մի քանի գոյականներում՝ կրթվոր, խաղըվոր «պարող», տուգավոր «խոտը հակավորող», քաղվոր, հացվոր «դաշտը հաց տանող», յուզվոր, գերընդվոր «հնձվոր» ու երկու մակբայներում՝ շաղվոր «շատ», քրչվոր «քիչ»: Ածականակերտ **-ալի** ածանցը հանդիպում է միայն *ջրրալի «ջրով առատ», յեղալի «յուղային»* բա-*****

¹⁰⁸ Տե՛ս. **Ա. Աբրահամյան**, Գրաբարի ձևերի, Եր., 1958, էջ 22:

ներում: Ածականակերտ **-ատ** ածանցը հանդիպում է *չէկատ «մերկ», կիսատ «կիսատ», պօջատ «անպոջ»* ածականներում, իսկ **-ուտ** ածանցը՝ *չըլուտ «մերկ»* ածականում: Դիտարկվող տարածքային միավորներում սահմանափակ կիրառություն ունի բաղադրյալ **-աց** ածանցը՝ կերտելով *կենաց «բաժակաճառ»* գոյականը և *դիմաց, ձեռաց «ձեռքից»* մակբայները և *վոդաց «ոտքի»* ածականը: **-է** ածանցը խոսվածքներում հանդիպում է *դադէ «տատ», պարէ «պաս», հարսէ «հարս», մամէ «մայր»* գոյականներում և *փեղէ «փայտե», արձաթէ «արձաթե», խըշտէ «թեթևամիտ», չըֆտէ «թեթևամիտ», օսկէ «ոսկե», պըտէ «շատախոս»* ածականներում: Հավաքականություն արտահայտող **-եղէն** ածանցով խոսվածքներն ունեն *օսկեղէն, ամնեղէն, կանաչեղէն, բրդեղէն* կազմությունները: **-էն** մակբայակերտ ձևայթը ևս իր սահմանափակ դրսևորումն ունի խոսվածքներում՝ *խօսալէն «խոսելով», վարկէն «խոսելով», ուղեղէն «ուտելով»* և այլն: Խոսվածքներում հանդիպող **-ի** վերջածանցը կերտում է գոյականներ՝ *գորձէլի «ածուխ», տատի «տատ», աշկի «ակնոց», շըվի «փող», պըռօշտի «համբույր», ճըլօրթի «ճոճանակ, թոկ», յըռագի «համաձայնություն», ածականներ՝ վօտի «ատողջ», դըրի «աշխույժ», ալիֆըռանգի «այլ երկրների սովորություններին նման», մակբայներ՝ յարախտի «բախտի քմահաճույքին հանձնված», նաղդի «այսպես», փշումի «մի փոքր», գըլուխկօնձի «գլխիվայր անել», բառադի «իզուր», թաթարյախի «փսկոյն», բառադարի «անիմաստ»: Բաղադրյալ **-էնի** ածանցով կազմվում են *գյարմըշէնի «բուսանուն»* գոյականը, *ալէնի «բացահայտ»* մակբայը: **-եր** ածանցով կազմվում են *կալեր «բերքի կուտակման և մշակման տեղ», դըրեր «քարքարոտ տեղ»* գոյականները: Բաղադրյալ **-երք** ածանցը կա *լընդերք «լնդեր», աղջրկերք «աղջիկներ», տըղերք «տղաներ», մօղերք «մոտակա տարածքներ», սանդերք «բուրդ գգելու սարք», հընգերք «ընկերք»* գոյականներում: Ակնհայտ է, որ **-երք**-ը նաև հոգնակիության իմաստ էլ է արտահայտում: Բաղադրյալ **այ>է** և **ք** մասնիկներից առաջացած **-երք** վերջածանցը կազմում է բացառապես գոյականներ՝ *հաչերք «սարի կատար», ճըլլէկ «կարկուտ», դանդըռնէկ «ուտելի բանջար», փառերք «շորի քղանցք», թարերք «փայտ, որի վրա դնում են ամանները», չարերք «հացահատիկ չափող աման», կօղպերք «փական», ջըրօրիներք «ջուր օրինելու օր», նըշանդըրերք «նշանդրություն», պառէկ «մեջք», վառէկ «մի քանի ամսական էգ հավ», լալէգ «համր»* և այլն:*

Գրաբարից վկայված **-իկ** ածանցը բազմիմաստ է, ավելանում է բազմաթիվ բնիկ ու փոխառյալ բառերի, այն է՝ **ա. տարատեսակ գոյականներ՝ բունիգ «մատուցարան», ժածիգ «հորած պանիր», արէշիկ «անտառապահ», թէշիկ «թէլ մանող գործիք», խըլօրիկ «կարկուտ», հէրրիկ «բուրդ խուզող մկրատ», ժառօվնիգ «թավա», բաբուլիկ «գատիկ», ճավիգ «բազուկի տերև», թըպլիգ «արտևանունք»** և այլն: **բ. տարատեսակ ածականներ՝ ջըրիգ «ջրալի», կուռուշիգ «կեռ բահ», ջօջիկ «մեծ տատ», ծուռուծըռթիկ «թեթևստիկ», թըլիկ «վատ խոտող», կաղլիկ «կաղ», օղօրմաձիգ «մահից հետո օրհնության արժանի մարդ», ճընդըրիգ «շատ մուգ գույն», պուզիկ «պուզիկ, հաստ փոր ունեցող», պիձիկ «փոքրիկ, մանրիկ»** և այլն:

Բաղադրյալ **-ին** ածանցով խոսվածքներն ունեն *սըղին «սառույցի բարակ շերտ», տըկօղին «կաղին», սարին «ստվեր», ախպին «աղբանոց»* գոյականները, *բարթթին «մեծ»* ածականը և *դընին «կողմը», շնօրթին «շնորքով»* մակբայները:

Բաղադրյալ **-ինք** ածանցը հանդիպում է *վերջինք «ընթրիք», միջինկ «գաթա», գօղինք «անկողին», բաժինք «օժիտ», շըլինկ «վիզ», ուլինկ «գարդեղեն»* գոյականներում: Քերականական մասնիկներից ձևավորված **-իք** վերջածանցը խոս-

վածքներում հանդիպում է կրպցընէլիք «կրակ անելու կայան», մատնիք, տալիկ «պարտք», բալնիք, մեռնէլիք, կըշտանէլիք, ստանալիք, տալիք, առնէլիք, ուտէլիք, հաքնէլիք, խսէլիք բառերում՝ ստեղծելով գոյականներ: Ըստ էության, խոսվածքներում գործող **-իք** վերջածանցը հայերենի կատարելի դերբայի **ի** վերջավորության, գրաբարում եղած **-անի** ածանցի **ի** վերջնահնչյունի և **ք** հոգնակերտի բաղարկումից ձևավորված վերջածանց է: **-անք/էնք** բաղադրյալ վերջածանցներով կազմվում են գոյականներ՝ *զըզվանք, պաղատանք, սըրտացավանք, աչքալուսէնք, բոցանք «փայտեղեն, որով թոնիրը վառում են», հերանք «հոր տունը», սըրփանք «կնոջ և անասունի ընկերք», փըսլանք «անասունի ընկերք», էրէրմանք «վշտից իրեն կորցրած, անէծք»:* Խոսվածքներում հանդիպող երբեմնի քերականական մասնիկ **-իչ** վերջածանցը կերտում է գոյականներ՝ *խէտիճ «խայթոց», ծըծկէրիչ «հորթերին կաթ տվող արհեստական ստնտու աման», կըսորիճ «հալած դմակից մնացած կտորները, կաթնակէրիչ «հորթերին կաթ տվող արհեստական ստնտու աման», քէրիչ «անասունների մաշկը քերող գործիք», կանգիճ «փայտյա կեռ կամ ճանկ, որ կապում են թոկի ծայրին և նրանով ձգում թոկը՝ բեռ բարձելիս», զըդիչ «կաթ ու հացահատիկ զատող սարք», կալիչ «քուրջի կտորից պատրաստված գունդ, խցան, որով փակում են թոնրի ակը, կախիչ «այն գամը, որի վրա կախում են շորերը»:* Խոսվածքներում տարբերակվում են նաև բաղադրյալ գոյականակերտ **-իչք** ածանցը՝ *զըդիչք «զատող մեքենա», քէրիչք «անասունների մաշկը քերող գործիք»:*

Խոսվածքներում մակբայակերտ է **-ման/ց**, որը, որպես ձևի մակբայ, համարժեք է հարակատարի **-ած** և գործիականի **-ով** մասնիկների իմաստներին՝ նըստման «նստած, նստելով», նըստմանց «նստած, նստելով», կըզման/ց «կզած, կզելով», լալման/ց «լացած, լացելով», քէլման/ց «քայլած, քայլելով», վազման/ց «վազած, վազելով», յեման «եռալով», դըժման «դժալով», կըծման «կծու համով», վառման «վառած, վառելով» և այլն: Ծագմամբ անհայտ **-աշ** ածանցով¹⁰⁹ կազմվում են *թըթվարաշ «ուտելի թթու բանջար»* գոյականը և *մադրաշ «դալար», թըթվաշ «թթու»* գոյականները: **-ավ** մասնիկը, իբրև բառակազմական ձևույթ, կա կըժավ «բույսի թմբին հատուկ թեքություն, որի արդյունքում ջուրը դուրս չի հոսում», *թանավ «սպուր»* գոյականներում: Բայարմատից առաջացած **-աբար** ածանցը՝ **-բար** հնչյունական տարբերակով, հանդիպում է *փոցխրար «փոցխ անող», կաբըրար «խոտ հակավորող», կիսրար «կիսովի»* ածականում, իսկ **-աբան** ածանցը՝ **-բան** հնչյունական տարբերակով հանդիպում է *հանգիստարան «զերեզմանատուն», ավէդըրան «եկեղեցի», աղօթըրան «վաղ առավոտյան»* գոյականներում: Խոսվածքներում կենսունակ ու արտադրողական են **-ացի/-եցի/-ցի** տեղանիշ ածանցները՝ *քաղքըցի, տընէցի, դըրսէցի, գէղացի, յէրէվընցի* և այլն: Անորոշ դերբայի **լ** արմատահնչյունի և **-ան** մասնիկի բաղարկությունից ձևավորված **-լան** ածականակերտ ածանցը հանդիպում է *վախլան «վախկոտ», խափլան «խաբեբա», դըզողլան «հակառակ սեռին հակում ունեցող»* բառերում: Որևէ կերպ չբացատրվող **լ** մասնիկի առկայությամբ **-լիկ** վերջածանցն առկա է *փամփըրիկ «փափուկ, չաղիկ «գեր», պըստըրիկ «փոքր», շէկլիկ «շեկ»* ածականներում և *թփլիզ «արտևանումք»* գոյականում: Ըստ երևույթին, **-իկ**

¹⁰⁹ Տե՛ս **Գ. Զահուկյան**, Հին հայերենի վերջածանցների ծագումը, Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, պրակ. 2, Եր., 1998, էջ 15:

ածանցից և **-օտ** ածանցից բաղարկված **-կօտ** ածանցն առկա է *անչրկօթ, վահխօթ, մըռսըկօթ, մըծկօտ «պեպենտո»* ածականներում: Գոյականակերտ **-կա** ածանցը լուսննգա *«լուսնյակ», լուրկա «օրորոց», լուլկա «օրորոց», ուռկա «ուռուցք»*, իսկ **-կի** ածանցը հանդիպում է *վէցկի «արոր», գօռակի «դժվար», լուցկի* գոյականներում: **-Մ** ձևությո՞ր, որպէս բառակազմական մասնիկ, առկա է *ցանքս «ցանք», փօխս «դրափոխված»* գոյականներում: Մակբայակերտ **-վարի** ածանցը կենսունակ է, որով կան հետևյալ կազմությունները՝ *ջօջավարի «մեծավարի», ճրժավարի «երեխայավարի», մեձավարի «մեծավարի», գեղավարի «գյուղավարի», քաղքըվարի «քաղաքավարի», տընավարի «տնավարի»* և այլն: Տալ բայի **տու** բայարմատը խոսվածքներում «ինչ-որ բան տվող» նշանակությամբ կա *մըսատու, կաթնատու, բէրքատու* ածականներում, որը որոշ լեզվաբաններ համարում են որպէս վերջածանց¹¹⁰, բայց այն կարող է դիտվել նաև հոդակապավոր իսկական բարդություն՝ գոյական +բայարմատ կաղապարով:

Ոյո հնչյունափոխությունից առաջացած **-ու** ածանցը կազմում է գոյականներ՝ *սարու «փայտ, որի վրա փաթաթվում են լոբու տերնները», կուռտու «թուխս», աղու «թույն», ճրրագու «ճարպ»,* ածականներ՝ *կըռու «դժվար», կիսու «կիսովի», կըթու «կյթվող», պիդու «պիտանի»,* մակբայներ՝ *ամօթու «ամոթից», գօղտու «գաղտնի», ինադու «հակառակ», կըսկըձու «երկյուղից, ցավից», խստու «մտածված»:* Խոսվածքներում անսահմանափակ կիրառություն ունի հայերենի ամենաարտադրողական **-ութուն/ուտէն** ածանցը, որը, ավելանալով նյութական նշանակություն ունեցող խոսքի մասերի բառակազմական հիմքերին, կազմում է վերացական գոյականներ, այն է՝ *հիվընդութէն, բէխերութուն, տաքութէն, ջրբի-գութուն, յուզվօրութուն, տըղուտէն, քյալագօգութուն, օյինբագութուն, խաբարու-թուն, խամութուն, ծըռութէն* և այլն: Ուսումնասիրվող խոսվածքներում կենսունակ է բազմիմաստ՝ գոյականակերտ ու ածականակերտ **-ուկ** վերջածանցը, որ ավելանում է մեծամասամբ բառարմատների ու բայաբների վրա: **-Ուկ** մասնիկով կազմվում են բազմաթիվ գոյականներ՝ *գազգըզուկ «եղինջ», կօղմուզ «կոտեմ», հալիվորուկ «ուտելի բանջար», ջրըղուզ «հողամաս ջրելը», քօթուկ «ծառարնի կոճղը», դօշուկ «երեխայի կրծքին կապվող շոր», պաճուկ «ուտելի բանջար», սօխուկ «ուտելի բանջար», սընդըրուկ «ուտելի բանջար», իրէքնուկ «երէքնուկ»* և այլն: Խոսվածքներում **-ուկ** ածանցով արտահայտվում է նաև հարակատար, վաղակատար դերբայների իմաստները, որոնք շատ հաճախ գոյականացել են՝ *կըծուկ «խայթոց», ճօղուկ «ոչ բնական բացվածքով ոտքեր ունեցող», խըփնըվուկ «գիծ, ուռուկ «ուռուցք», փըքվուկ «ուռուցք», յավէլցուկ «ավելորդ իր, բան», խագուկ «գիծ», որոշ բառերում էլ ածականացել՝ ծանդըրուկ «հղի», յէղըռուկ «սննդից հագեցած», գօլխըռնուկ «կիսատաք», գոլցուկ «թերխաշ ձու», խըմուկ «հարբած», լօկ-տուկ «շատակեր, ազահ», լըգուկ «հարբած», ցամկուկ «ցամաքած», կիստուկ «կարճահասակ», ճօթուկ «մեծաբերան», խըշկուկ «չոր»* և այլն: Միայն *գօխտուկ «գաղտնի»* բառն է խոսվածքներում մակբայական կիրառությամբ հանդես գալիս: Գոյականակերտ **-ում** ածանցը կա *պըրձում «փրկություն», պաղըռում «զզվանք», յօրտում «երդում», յուտում «ուտում»* գոյականներում: Խոսվածքներում գործող **-ուն** վերջածանցը բազմիմաստ է և ավելանում է բառարմատների, բայաբների ու

¹¹⁰ Տե՛ս **Դ. Գյուրջիյան**, Արդի հայերենի վերջածանցակերպները, Եր., Բանբեր Երևանի համալսարանի, 1998, N 2, էջ 79:

բնաձայնությունների վրա: **-Ուն**-ով կազմվում են ածականներ՝ *պըլպըլուն, նըխշուն, վառվրռուն, ծըձղուն, լըպըստրուն, զըրընգուն, դադարգյուն, գոյականներ՝ յիրի-գուն, բըզուն, դըռուն, խըռուն, մակբայ՝ լուսուն*: **-Ունի** ածականակերտ ածանցով խոսվածքներն ունեն միայն *յվելունի «ավելորդ», մերունի «մայր խոզ», վիրունի «չար երեխա»* բառերը: Խոսվածքներում հավաքական **-անք, -էնք, -օնք, -ունք** վերջածանցներով կազմվում են հետևյալ գոյականները, որոնցից **-ունք** ածանցն ունի հոգնակիության նշանակություն՝ *օրթունկ «որդեր», աշկունք «աչքեր», լօր-ձունք «լորձ», հուլունք «գարդ», քառսունք «մարդու մահից հետո քառասուներորդ օրը», ժըժօնք «շատ մանր», տաշտադրօնք «նշանդրեք, հարսանիքի նախապատրաստություն», հապկունգ «քարկտիկ, երեխաների խաղ», փըշըանք, իսկ **-էնք**-ով կազմվում են անձնանուններից կազմված հավաքական գոյականներ՝ *Սուրօյէնք, Կարօյէնք, Դերօյէնք* և այլն: Գոյականակերտ **-ուստ** ածանցը կա *արբուստ, հօրե-գալուստ, հօրեպահուստ, կօրուստ, պահուստ, դրբուստ «ճիշտ», գօսպուստ «բռունցք», բօնկուստ «բռունցք», իսկ **-ունդ** ածանցը կա խօրունդ «խոր անդունդ»* բառում: **-Անագ** վերջածանցը խոսվածքներում հանդիպում է *ջօջանագ «մեծական», փոխանագ «փոխարեն»* բառերում՝ արտահայտելով «պես», «նման» մակբայների իմաստը, այդ թվում նաև գրական հայերնից փոխառյալ *հաղթանագ, մըրցանագ* գոյականներում: Գոյականակերտ **-պան** ածանցը կա *ջաղչըպան «ջրաղացը դեկավարող», նախրապան «հոտաղ»* գոյականներում: Բաղադրյալ **-մունք** վերջածանցով խոսվածքներն ունեն *չարչրմունք, արարմունք, վարմունք* բառերը: Խոսվածքներում ոչ կենսունակ է մակբայակերտ **-ունց** ածանցը՝ *շուղունց «վաղուց», պըտղունց «մատների ծայրով վերցրած քանակություն»*: Գոյականակերտ **-ուշկ/-իշկ** ածանցները գործառվում են *մանդրրուշկ «հացահատիկի մնացորդը», տըկուշկ «արմատ», աղիշկ «հալած յուղի տականք», թալիշկ «հալած յուղի տականք», քերուշկ «կաթսայի մեջ մնացած կերակրի մնացորդ»* բառերում: Կարևորելով խոսվածքներում եղող *թալիսչք «յուղի հալելուց հետո տակի մնացորդը»* բառի առկայությունը, կարող ենք ասել, որ վերոնշյալ **-իշկ** ածանցը **-ինչք** ածանցի հնչյունական պարզեցված տարբերակն է:*

Ծագումնաբանորեն չբացատրվող **-ուձ** ածանցը կա *չաքուց «հողը փխրեց-նող գործիք», բըրդուձ «լավաշով փաթաթված ուտելիք»* գոյականներում: Բաղադրյալ **-ուց** ածանցով խոսվածքներում կազմվում են *հընուց «վաղուց», շուղուց «վաղուց», յէկուց «վաղը»* մակբայները և *պաղուց «սառույց, դէղնուձ ձվի դեղնուց»* գոյականները: Հարակատար դերբայի իմաստ և ինչ-որ հատկանիշի իմաստ արտահայտող **-ուրիգ** ածանցն առկա է *մերածուրիգ «մերած», տըվածուրիգ «տված», զըղածուրիգ «գտնված», տընածուրիգ «տնական»* բառերում: Ըստ երևույթին, **-ուրիգ** ածանցը կազմված է **-ուր** անորոշ դերանունից և **-իկ** ածանցից: Ծագմամբ անհայտ **-ուրդ** ածանցը գործում է միայն *ժողովուրդ* բառում: Խոսվածքներում գործող գոյականակերտ ածանցներից է նաև **-ք**-ն՝ *կաթիք «կաթիլ», սառուձկ «սառույց», ծալք «ծալ», օրօծք «օրորոց», թուլք «ազդր», ծուձկ «ոսկորների մեջ եղած հյուլք», հավք «հավ», շէմկ «շեն», պէձք «վառարան», գէժաբնուլք «խելագար», քէլք «քայլելու ձև», չարք «ղև», ձօձք «ձոձանակ»* և այլն: Խոսվածքներում տարածված է նաև ածականակերտ **-օտ** ածանցի կիրառությունը՝ *քընգօղ «քնկոտ», արկօտ «ծաղկատար», բէրօղ «պեպենտ», նըմնօղ «նոթերը կիտող», հէրսօտ «ներվային», շառօղ «վնասատու», նամօտ «խոնավ», տըլօղ «կեղտոտ», մըռղըլօղ «կեղտոտ», լըքօտ «գեր», կըծվօտ «կծու»* և այլն: Խոսվածքներում աչքի է

ընկնում նաև հայերենում **-օ** բազմիմաստ վերջածանցը, որով կերտվում են՝ **ա. ածականներ՝** կուսօ «ժյատ», կեո «խուլ», պաճօ «կճատ քիթ», լօպօ «գլուխգովան», կուզօ «կորամեջք», շրլղօ «կլորածև ականջներ ունեցող», դօդօ «հիմար», գօնճօ «գեր», մընջօ «լռակյաց», պիդօ «պիտանի» և այլն: **բ. գոյականներ՝** աիօ «հայր», ջօճօ «մեծ տատ», լաբօ «նապաստակ», պըտօ «գարեկ», յարօ «սիրելի էակ»: Ենթակայական դերբայի **-օղ** վերջավորությունը, որպես գոյականակերտ վերջածանց, հանդիպում է հետևյալ կըրթօղ «կովկիթ», պըղօղ «սառույց», շարօղ «ողնաշար», քընօղ «ծաղկատար», նայօղ «բախտագուշակ» բառերում: Գոյականակերտ **-օն** վերջածանցը հանդիպում է հետևյալ փեղօն «չորացած մոլախոտ», կըրջօն «ավերորդ անասնախոտ», կըթօն «աղանդեր», դափօն «սպրանքի կույտ», պարգօն «պանիրը քամելու կտավե տոպրակ», մեոն «օրհնված հաց, բլիթ», պիժօն «աշխույժ երիտասարդ» բառերում: **-օշ** վերջածանցը առկա է թաթալօշ «ոչ վարժ խոտող», դանդալօշ «կոպիտ», թըփոշ «ոչ նվազ», մարիօշ «կիսաթթու», լալօշ «ոչ վարժ խոտող», լափաոշ «մեծաբերան», խըրթօշ «թեթևամիտ», մըրթօշ «անտրամադիր» ածականներում և փըրթօշ «հաց ու մածուկը իրար խառնած կերակուր», պադօշ «կոշիկի կոշտ կրունկ» գոյականներում:

Գործիական հոլովի **-օվ** վերջավորությունը, որպես բառակազմական ձևույթ, կազմում է մակբայներ և ունի հետևյալ կիրառությունները՝ վօղօվ ձեռով «ողջ առողջ», գօղօվ «ստիպողաբար», կարթօվ «կարծով ապուր» գոյականը, համօվ ածականը: Հարակատար դերբայի իմաստ արտահայտող **-օվի** վերջածանցը հանդիպում է ջըրօվի, բերօվի, շինօվի, կիսօվի, յընգերօվի, հանօվի, պըջղօվի «կորիզից հեշտությամբ պոկվող դեղձ», վարօվի, դըրօվի ածականներում: **-Օրդ** գոյականակերտ ածանցը հանդիպում է նախըրօրդ «հոտաղ» բառում: Բառահարաբերական **ո** և **ց** մասնիկներից առաջացած կենսունակ **-օց** վերջածանցը բազմիմաստ է, ավելանում է բառարմատներին, բայաբներին ու բնաձայնություններին: Նրանով կերտվում են հիմնականում գոյականներ՝ մերօց «կովկիթ», իւեոց «խայթոց», հալօց «ձյան հալելը», բըրօց «ոչխարների մայելը», ճըլճըլօց ջրի կարթկոցի ձայնը», շըփշըփօց «անընդհատ լսվող ձայն», չըրօց «շառաչուն ջրի ձայնը», պաղօց սառույց, վարօց «մտրակ», ցամքօց «սրբիչ» և այլն: Ընդ որում, հատկապես մեծ են բնաձայնություններին ավելացող **-օց**-ով ածանցումները: Միայն երկու՝ արեվմըրօց «արևամուտ», յիրգընօց «երեկոյան», բառերում է, որ **-օց** մասնիկով կերտվում են մակբայներ: Բաղադրյալ, գոյականակերտ **-օցի** ածանցը հանդիպում է հետևյալ խաղանուն գոյականներում՝ բըրնօցի, մըրրօցի, լարօցի, պաղկըվօցի, ջըրրօցի, տապօծի, դընօցի, քըցօցի: Բաղադրյալ **-օցք** գոյականը հանդիպում է դօղօցք «տենդ», էրօցք «տենդ», հալօցք «գարնանը ձյան հալելը», էրօծք «տենդ», մեռելօցք «մահացածներին նվիրված տոն» գոյականներում: Բաղադրյալ **-օք** ածանցը հանդիպում է ճօրօք «մեծաբերան» ածականում և փօրօք «կենդանիների ներքին օրգանները» գոյականում: Դիտարկվող խոսվածքներում **-յալ** ածանցը հանդիպում է անգյալ «անաշխատունակ» ածականում, **-օլ** ածանցը շըվիշտօլ «սուլիչ խաղալիք» գոյականում, **-օնծ** ածանցը աճկօնծ «պատի մեջ ամանեղեն դնելու տեղ» գոյականում, **-ուծկ** ածանցը սերուծկ «կարթի սեր» գոյականում: Ապարանի խոսվածքներում համակարգայնորեն գործառվում են թվականակերտ **-րօրդ/էրօրդ՝** յերօրդ, տասներօրդ և այլն, **-տուն՝** քառտուն, վաժուն և այլն, դերանվանակերտ **-էնց՝** ըսէնծ, ըղէնծ, ընէնծ և մակբայակերտ, բաղադրյալ, **-պաղիզ՝** քառապաղիզ, դասնապաղիզ և այլն ածանցները: Թեև Ապարանի խոսվածքներին

տիպաբանորեն հատուկ չեն գրական հայերենում գործող բազմաթիվ ածանցներ, բայց երբեմն հանդիպում են նաև գրական լեզվից կատարված ներքին փոխառություններում:

Ապարանի տարածաշրջանի խոսվածքներում գործող ածանցներին նվիրված սույն քննությունը կատարելուց հետո կարող ենք անել հետևյալ եզրակացությունները՝ **ա.** Խոսվածքների մենիմաստ ածանցներն են՝ **ան-**, **բէ-**, **նա-/նը-**, **չ-**, **-լու**, **-միշ**, **-վօ**, **-իստ**, **-գան**, **-աձ**, **-աձու**, **-ային**, **-անց**, **-անօց/-նօց**, **-ալի**, **-ատ**, **-ուտ**, **-էղէն**, **-էն**, **-էր**, **-էրք**, **-էք**, **-ինք**, **-իք**, **-անք/-էնք**, **-իչ**, **-իչք**, **-ման/ց**, **-աշ**, **-ավ**, **-արար/րար**, **-ացի/-էցի/-ցի**, **-լան**, **-կօտ**, **-կա**, **-կի**, **-ս**, **-վարի**, **-տու**, **-ութուն/ուտէն**, **-ում**, **-ունի**, **-անք**, **-էնք**, **-օնք**, **-ունք**, **-ուստ** **-ունդ**, **-պան**, **-մունք**, **-ունց**, **-ուշկ/-իշկ**, **-ուճ**, **-ուրդ**, **-ուրիգ**, **-ք**, **-օտ**, **-օղ**, **-օն**, **-օվի**, **-օրդ**, **-օցի**, **-օցք**, **-օք**, **-յալ**, **-օկ**, **-օնձ**, **-ուծկ**, **-րօրդ/-էրօրդ**, **-սուն**, **-էնց**, **-պաղիգ**: **բ.** Խոսվածքների բազմիմաստ ածանցներն են՝ **-ա**, **-ական/-կան**, **-չի**, **-ան**, **-անի**, **-ավօր/-վօր**, **-աց**, **-է**, **-ի**, **-էնի**, **-իկ**, **-ին**, **-լիկ**, **-ու**, **-ուկ**, **-ուն**, **-անագ**, **-ուց**, **-օ**, **-օշ**, **-օվ**, **-օց**: **գ.** Ըստ գործածության հաճախականության, խոսվածքներում կենսունակ ու արտադրողական են **ան-**, **-գան**, **-աձ**, **-անօց/-նօց**, **-արար/րար**, **-ացի/-էցի/-ցի**, **-ութուն/ուտէն**, **-անք**, **-էնք**, **-օնք**, **-ա**, **-ական/-կան**, **-չի**, **-ան**, **-անի**, **-ավօր/-վօր**, **-է**, **-ի**, **-իկ**, **-ու**, **-ուկ**, **-ուն**, **-անագ**, **-օ** ածանցները, իսկ մնացյալը սահմանափակված են որոշակի բառերի փնջում, այսինքն անկենսունակ են՝ գիտակցվող և քարացած ենթախմբերով: **դ.** Ըստ ծագման, խոսվածքներում տարբերակվում են բնիկ հնդեվրոպական ծագման (**ան-**, **չ-**, **-ական**, **-ացի**, **-էցի**, **-ցի**, **-սուն**, **-աշ**, **-էստ**, **-իստ**, **-աստ**, **-ուստ** **-ունդ**, **-ին**, **-իչ**, **-ութուն**, **-րօրդ/-էրօրդ**, **-ավօր**, **-ում**, **-ան**, **-անի**, **-ավօր/-վօր**, **-ուն**, **-յալ**, **-օտ**, **-ք**, **-ոց**, **-ու**, **-ուրդ**, **-ում**, **-օղ**), տարբեր մասնիկների բաղաբառային, հնչյունափոխական երևույթներից առաջացած (**-ային**, **-ոտի**, **-ունի**, **-այք**, **-իք**, **-էղէն**, **-էնի**, **-ավ**, **-լան**, **-կօտ**, **-էնի**, **-էր**, **-էք**, **-ին**, **-ինք**, **-իք**, **-անք**, **-էնք**, **-էրք**, **-ացու**, **-էն**, **-աձու**, **-գան**, **-ուտ**, **-ալի**, **-ս**, **-ուրիգ**, **-անոց**, **-աց**, **-կա**, **-կի**, **-ի**, **-անք**, **-ման/ց**, **-կի**, **-իչք**, **-է**, **-պաղիկ**, **-մունք**, **-ունց**, **-ունի**, **-ուց**, **-անագ**, **-անք**, **-էնց**, **-էնք**, **-օնք**, **-ունք**, **-վարի**, **-ուծկ**, **-ուշկ**, **-իշկ**, **-ու**, **-օն**, **-օնձ**, **-օվի**, **-օվ**, **-օց**, **-օցի**, **-օցք**, **-օք**), բառարմատների մթազնունմից առաջացած (**-անց**, **-ատ**, **-տու**, **-արար/րար**, **-ոտ**, **-աձ**), փոխառյալ (**-ակ**, **-ական**, **-ստան**, **-իկ**, **-ուկ**, **-արան**, **-ան**, **-անք**, **-էստ**, **-պան**, **բէ-**, **-լու**, **-միշ**, **-վօ**, **-իստ**, **-չի**) և նորահայտ (**նը-/նա-**, **-ա**, **-պան**, **-լիկ**, **-ուճ**, **-օկ**, **-օ**, **-օշ**) ածանցներ:

Г.Г. МКРТЧЯН – *Особенности ауффиксации в говорах Апарана*. – В статье "Особенности ауффиксации в говорах Апарана" исследовано около 100, действующих на территории Апарана, разнообразных говоров: с точки зрения продуктивности и непродуктивности, употребляемых в них, словообразовательных аффиксов. Вследствие данного исследования, мы пришли к выводу, что в изучаемом материале, подавляющая часть действующих аффиксов унаследована из говоров на более ранних этапах развития армянского языка.

ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ «ՊՍՏՍՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՐԻՄ

Կ.Պ. ՊՈՂՈՍՅԱՆ

Փոխառությունները լեզվի բառապաշարի համալրման և հարստացման միջոցներից են: Ժողովուրդներն իրենց պատմության ընթացքում զանազան փոխհարաբերությունների և շփումների մեջ են գտնվում, և լեզուների բառային կազմում ի հայտ են գալիս փոխառյալ բառեր: Աշխարհում չկան «մաքուր» լեզուներ, այսինքն՝ այնպիսի լեզուներ, որոնց բառային կազմը զերծ լինի փոխառություններից: Որոշ լեզուներ զգալի չափով են կատարել փոխառություններ, որոշ լեզուներ՝ համեմատաբար քիչ: Ինչպես նշում է Հ. Օհանյանը¹¹¹, սա հետևանք է մի շարք գործոնների՝ սովյալ լեզվի զարգացման աստիճանի, բառակազմական հնարավորությունների, լեզուն կրող ժողովրդի քաղաքական, տնտեսական դիրքի և վիճակի և այլն: Աշխարհի շատ լեզուների նման հայոց լեզուն ևս իր զարգացման բոլոր շրջաններում կատարել է փոխառություններ: Այդ փոխառություններից «շատերն արդեն հարազատացել են, որդեգրված են մեկընդմիջ»¹¹²: Սա վերաբերում է հատկապես հնագույն և հին փոխառություններին, որոնք «մեր լեզվի մեջ են մտել և հայացել»¹¹³:

Որպես ուղեցույց ունենալով Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» և «Հայերեն արմատական բառարան» աշխատությունները՝ մենք վեր ենք հանել և քննել Բուզանդի պատմության լեզվում գործածված փոխառյալ բառերը:

Գրաբարի կազմավորման շրջանին են վերաբերում հնագույն փոխառությունները, որոնց մի մասը գալիս է դեռևս նախագրաբարյան շրջանից: Այդ փոխառությունները կատարվել են փոքրասիական լեզուներից, ասորերենից, իեթերենից, խուրիտերենից, ուրարտերենից, կովկասյան լեզուներից, հին պարսկերենից, հին հունարենից, հին լատիներենից և այլն: Նշենք, որ գիտության մեջ կա նաև այն վարկածը, որ հիշյալ լեզուներով խոսող որոշ ցեղախմբեր մասնակցել են հայ ժողովրդի կազմավորմանը՝ ձուլվելով նրա մեջ, և դրանով ևս մեր լեզվի բառապաշարը հարստացել է նոր միավորներով:

Փոքրասիական մեռյալ լեզուներից, ինչպես նաև իեթերենից, խուրիտերենից, ուրարտերենից կատարված փոխառությունները Գ. Սևակը¹¹⁴ համարում է *ստացվածքային*: «... *ստացվածքային* կոչում ենք միայն այն բառերը, որոնց կրող ժողովուրդը կամ ցեղը լիովին ձուլվել է հայերի մեջ և անհետ կորցրել է իր լեզուն: Իրանական և կովկասյան (իբերական) որոշ ցեղեր ևս ձուլվել են հայ էթնոսի մեջ, բայց իրանական ու իբերական լեզուները շարունակում են ապրել, ուստի և հայերենի մեջ առկա նրանց բառերը սուսկ փոխառություններ են»¹¹⁵ :

¹¹¹ **Օհանյան Հ.**, Փոխառության վերաբերյալ տեսակետների քննություն (Ակնարկներ ժամանակակից հայոց լեզվի բառագիտության և տերմինաբանության), Եր.: 1982, էջ 5-7:

¹¹² **Թումանյան Հ.**, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1959, էջ 160:

¹¹³ «Թումանյանը՝ քննադատ», Երևան, 1939, էջ 150:

¹¹⁴ **Սևակ Գ.**, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 109:

¹¹⁵ Նույն տեղում:

Ստորև ներկայացնում ենք Փավստոս Բուզանդի բառապաշարի փոխառությունները՝ ըստ առանձին խմբերի:

1. Ստացվածքային կամ ենթաշերտային բառեր:

Ինչպես հայտնի է, հայերենն ունի մոտ 11 հազար արմատ, որոնց կեսն է միայն ստուգաբանված: Մյուս կեսը (մոտ 5500 արմատ) դեռևս ստուգաբանված չէ: Հր. Աճառյանը ենթադրում է¹¹⁶, որ այդ բառերի (որոնց համագումարն է 5572) մեծագույն մասը պետք է լինի իսաղիական (ուրարտական) փոխառություն: Հետագա շարադրանքում նա տալիս է իր կարծիքով ուրարտական ծագում ունեցող բառերի ցանկը, որից մենք առանձնացրել ենք միայն այն բառերը, որոնք կան Բուզանդի բառապաշարում¹¹⁷: Դրանք են՝ թուխ, երկաթ, ոսկի, ցորեան, կահոյր, կարաս, սափոր, կարել, աղջիկ, կոյս, աներ, փեսայ, զաւակ, թոռն, խնամի, թուղթ, էջ, կծեալ, հիւսեալ, իսկ **լուրջ** և **կապար** ուրարտական ծագմամբ բառերից կազմված են **լրջամտութիւն** և **կապարահատ** բառերը:

Սակայն, ինչպես նշում է Աճառյանը, զանազան պատճառներով Արմատական բառարանում ինքը խաղերեն կամ ուրարտերեն է համարում միայն 15 բառ¹¹⁸, որոնցից Բուզանդի բառապաշարում արձանագրված են՝ ծիրանի (< ծիրան), կարաս, կարասիք, կրթել, կռել: Հարցականով տալիս է **տոռ** բառը: Ըստ Էդ. Աղայանի՝ այս բառը ոչ թե խաղական փոխառություն է, այլ հնդեվրոպական ծագում ունի, այսինքն՝ բնիկ հայկական բառ է¹¹⁹:

Գ. Ղափանցյանի կարծիքով¹²⁰ ուրարտական ծագում ունեն նաև **ծով**, **հատանել**, **հոսել**, **ուղի** և **շերտ** բառերը: Վերջինից Բուզանդի երկում կազմված են **շերտատոր** և **շերտափակ** բառերը: **Շերտ** բառը Էդ. Աղայանը կապում է **քերել**, **քերթել**, **քերծել**, **քարք** բառերի հետ և համարում հնդեվրոպական ծագում ունեցող բառ¹²¹:

Բաղաձայնական **-ն**-ով հիմք ունեցող ոչ հնդեվրոպական բառերը, գոնե մասամբ, ըստ Գ. Ջահուկյանի, պետք է ունենան ուրարտական ծագում կամ հայերենին անցած լինեն ուրարտերենի միջոցով: Այդպիսի բառերից են, օրինակ, **եղեգն**, **խաշն**, **խուրձն**, **կառափն**, **որումն**, **սկիզբն**¹²²:

Բուզանդի բառապաշարում կան երկու բառեր՝ **խնձոր**, **ծառայ**, որոնք, ըստ Գ. Ղափանցյանի ստուգաբանության¹²³, հայերենին են անցել խոտիտերենից, որը ուրարտերենին ցեղակից լեզու է համարվում: Գ. Ջահուկյանն անվերապահորեն ընդունելի է համարում **խնձոր** բառի ստուգաբանությունը, իսկ **ծառայ** բառինը՝ ոչ¹²⁴:

Հայ ժողովրդի կազմավորման մեջ մեծ դեր են խաղացել խեթական էթնիկ խմբերը, որոնցից, բնականաբար, հայերենը ժառանգել է լեզվական շատ տարրեր, այդ թվում նաև՝ բառեր:

¹¹⁶ Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, I մաս, Եր., 1940, էջ 181:

¹¹⁷ Հմմտ. նույն տեղում, էջ 180 – 185:

¹¹⁸ Նույն տեղում, էջ 186:

¹¹⁹ Տե՛ս Աղայան Էդ., Բառաբանական և ստուգաբանական հետազոտություններ, Եր., 1974, էջ 140:

¹²⁰ Ղափանցյան Գ., Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), Երևան, 1961, էջ 136 – 139:

¹²¹ Տե՛ս Աղայան Էդ., նշվ. աշխ., էջ 129:

¹²² Տե՛ս Գ. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 440:

¹²³ Ղափանցյան Գ., նշվ. աշխ., էջ 104 – 130:

¹²⁴ Տե՛ս Գ. Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 314 – 315:

Հ. Աճառյանը նշում է խեթերենից (հաթերեն) հայերենին անցած 10 բառ, որոնցից Բուզանդի պատմության մեջ առկա են հետևյալները՝ ապա, հատանել, խանգարել, վառել, փշրել, առաւօտ¹²⁵:

Գ. Ղափանցյանը¹²⁶ Հ. Աճառյանի նշած խեթական փոխառություններին ավելացնում է ևս մի քանի բառ, որոնցից **աղանդեր** և **մանաւանդ** բառերն առկա են Բուզանդի պատմության լեզվում:

Լեզվաբան Գ. Ջահուկյանը որոշ վերապահությամբ հայերենին խեթերենից է անցած համարում նաև այլ բառեր՝ **ընթրիք**, **խաղամ**, **հսկեմ**, **փախչիմ**, ինչպես նաև՝ **Մուշեղ** անձնանունը¹²⁷:

Հայերենը հնագույն ժամանակներից ի վեր շփման մեջ լինելով փոքրասիական լեզուների, թրակերենի, փոյուզերենի հետ, այդ լեզուներից կատարել է փոխառություններ¹²⁸, որոնցից Բուզանդի երկում առկա են հետևյալները՝ ազարակ, աղիւս, աստուած, սայլ, **սրինգ** բառից՝ **սրնգահար** կազմությունը:

Մեր լեզուն փոխառություններ է կատարել նաև սեմական լեզվաընտանիքին պատկանող հնագույն լեզուներից մեկից՝ ասորերենից, որով խոսում էին հին աշխարհի հզոր երկիր Ասորեստանում (մ.թ.ա. XV դ.): Ներկայացնենք այն փոխառյալ բառերը, որոնք կան Բուզանդի երկի լեզվում. **բերդ**, **գազաթն**, **կղզի**, **կնիք**, **նահանգ**, **տարածել**, **փոխել**, **քաղաք**¹²⁹:

2. Կովկասյան փոխառություններ:

Հին շրջանում հայերենը փոխառություններ է կատարել նաև կովկասյան լեզուներից, որոնք բաժանվում են երկու խմբի՝ հյուսիսային և հարավային: Կովկասյան լեզուներից կատարած փոխառությունները որևէ մշակութային արժեք չեն ներկայացնում: Դրանք հիմնականում կենցաղին վերաբերող սովորական բառեր են: Ըստ Աճառյանի՝ դրանք հիմնականում կատարվել են այն պատճառով, որ հայերի մեջ ձուլվել են կովկասյան տարբեր մանր ցեղեր, որոնք մեր լեզու են բերել իրենց մայրենի լեզվի հետքերը: Այդպիսի ազդություններից Աճառյանը մասնավորապես նշում է ուտեացիներին և աղվաններին՝ հյուսիս-արևելքում, գուգարացիներին և տայեցիներին՝ հյուսիս-արևմուտքում¹³⁰:

Ըստ խմբերի ներկայացնենք այն փոխառությունները, որոնք կան Փավստոս Բուզանդի երկում¹³¹:

Հարավային կովկասյաններից՝ աղբ, բոգ, գաւառ, խռովեալ, մշակ, ոչխար, ջախջախեալ, վաղ, փշրեմ, փռշի:

Հյուսիսային կովկասյաններից փոխառյալ միայն մեկ բառ կա երկում՝ խոտ:

Ակադ. Գ. Ջահուկյանը կարծում է, որ **աղբ** բառը հնդեվրոպական աղբյուրից է գալիս, **գաւառ** բառը՝ հնդեվրոպականից, կասկածելի է համարում **ջախջախել** և **փշրել** բայերի կովկասյան լինելը և համեմատություն է կատարում խեթական արմատների հետ¹³²:

¹²⁵ Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 149:

¹²⁶ Ղափանցյան Գ., նշվ. աշխ., էջ 149 – 150:

¹²⁷ Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 423:

¹²⁸ Նույն տեղում, էջ 141 – 144:

¹²⁹ Հմմտ. Աճառյան Հ., նույն տեղում, էջ 194 – 201:

¹³⁰ Տե՛ս Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 216:

¹³¹ Նույն տեղում, էջ 212 – 213:

¹³² Տե՛ս Գ. Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 592:

3. Իրանական փոխառություններ:

Հայերը դարեր շարունակ ապրել են իրանական ցեղերի հարևանությամբ՝ ընդ որում մեծ մասամբ ուղղակի հպատակ լինելով կամ պարսից գերիշխանության տակ վասալի կարգավիճակում լինելով: Այդ իսկ պատճառով մեծ էր հայերի վրա պարսից մշակույթի, սովորույթների, բարքերի, ինչպես նաև՝ լեզվական ազդեցությունը: Իրանյան փոխառություններն այնքան շատ էին մեր լեզվում, որ մինչև Հյուբշմանը հայերենն ուսումնասիրող լեզվաբանները մեր լեզուն համարում էին իրանյան լեզվաընտանիքին պատկանող մի լեզու:

Իրանական փոխառությունները հայերենում թվով ամենաշատն են՝ 1405, որից 960-ը փոխառված են պահլավերենից, իսկ 445-ը՝ նոր պարսկերենից (11-րդ դարից հետո)¹³³: Բնականաբար, Բուզանդի երկում առկա են միայն միջին իրանական լեզուներից կատարված փոխառությունները, որոնցից նշենք հետևյալները՝ ¹³⁴ ազատ, ազգ, ազդ, ախտ, ակամայ, ամբարիշտ, ամբարտաւան, անդամ, անդերձապետ, անոյշ, աշխարհ, ապաշխարել, ապաստան, ատրուշան, արագ, արժան, բագուկ, բագում, բաժակ, բդեշիւ, բիւր, բնակել, բոյր, գէս, գոյն, գուշակ, գուսան, դաժան, դահիճ,երամ, երամակ,գէն, զինդկապետ (զնդկապետ), թագ, թշնամանք, ժանուար, ժոյժ, իշխան, իշխել, խրատ, կախարդ, հրեշտակ, հրովարտակ, դամդայեալ, ճակատ, ճամբար, մոյր, մուրհակ, յանդիման, յալիտեան, նշանակ, նշդեհ (նժդեհ), շտապ, ոյժ, ոստան, պատրաստ, պարեգաւտ, ռազմ, ռամիկ,վարժ, վարձ, տաճար, տաճիկ, փիղ, փշտիպան (փուշտիպան), քանդել և այլն:

Լեզվաբան Գ. Ջահուկյանի կազմած ցանկից բերենք այն բառերը, որոնք, ի հավելումն Հր. Աճառյանի բառաշարքի, առկա են Բուզանդի երկում: Այդպիսիք են՝ **աշխատ** (=հոգնություն, չարչարանք), **արուեստ**, **աւզուտ**, **դեւ**, **մերժեմ**, **պարիսպ**, **պէշասպիկ**, **քաղաք**¹³⁵:

Վերը նշված փոխառություններից Բուզանդի երկում ածանցման և բառաբարդման միջոցով կազմվել են բազմաթիվ բառեր, ինչպես՝
ազատ - ազատագունդ, ազատազատ, ազատախումբ
ազգ - ազգական, ազգականություն, ազգակից
աշխարհ - աշխարհաբնակ, աշխարհագատ, աշխարհաժողով
իշխան - իշխանական, իշխանություն
պատուիրան – պատուիրանազանցություն, պատուիրանակատար
վկայ – վկայանոց, վկայարան

Բուզանդի «Պատմություն Հայոց» երկում կան ածանցավոր և բարդ բառեր, ինչպես նաև բայաձևեր, որոնք կազմված են փոխառյալ արմատներից, սակայն այդ արմատները առանձին գործածված չեն երկում: Օրինակ՝ **ախոռ**ապետ, **ասպար**ակիր, **թշուառ**ական, **կաղամբ**ավաճառ, **սրսեհ**ակ և այլն :

Բուզանդի պատմության մեջ գործածվել են նաև փոխառյալ այլ բառեր, որոնք արձանագրված չեն Աճառյանի «Հայոց լեզվի պատմության» մեջ՝ պարսկական փոխառությունների ցանկում, սակայն «Հայերեն արմատական բառարանում» մեկնաբանվում են որպես պարսկական փոխառություններ: Դրանք են՝

դաշտ – պարսկերենում նշանակում է «անապատ, հարթավայր» (ՀԱԲ, I, 623)

¹³³ Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 323:

¹³⁴ Հմմտ. Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 240 – 292:

¹³⁵ Ամբողջական ցանկը տե՛ս Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 512-549:

դժնի – I, 663

երան - Բուզանդի մոտ կա եզակի գործածությամբ: Նշանակում է «ծնկա-
զլուխ» (II, 38)

խուժադուժ – «խուժ» արմատը նշանակում է «վայրենի, բարբարոս»: Ծագել է Պարսկաստանի Խուժաստան գավառի անունից, որի ժողովուրդը վայրենու համբավ ուներ (II, 414)

հաճ - նշանակում է «հաշտ, բարեհամբույր» (III, 15)

վաշտկան – նշանակում է «զինվոր» (IV, 306) և այլն :

Բուզանդի երկում շատ են նաև այն անձնանունները և տեղանունները, որոնք հայերենը փոխառել է պարսկերենից¹³⁶: Անուշ, Ասպուրակ, Արշակ, Բագարատ, Դրաստամատ, Մանաուզ, Շահէն, Վահագն, Տիգրան, Արտաշատ, Բագաւան, Զարեհաւան, Վաղարշապատ և այլն :

Պետք է նշել, որ պարսիկները, ընդունելով մահմեդական կրոնը, ընդունեցին նաև մահմեդական անունները և մեծ մասամբ կորցրին իրենց սեփական անունները, որոնք պահպանվեցին հայերենում:

4. Ասորական փոխառություններ:

Հր. Աճառյանը ասորական ազդեցությունը հայերենի վրա բաժանում է չորս շրջանի՝ նախնական շրջան, քրիստոնեական քարոզչության շրջան, մատենագրական շրջան և անկման շրջան¹³⁷: Առաջին շրջանի փոխառությունները կենցաղային, առօրյա բառեր են: Երկրորդ շրջանի բառերը հիմնականում եկեղեցական լեզվին պատկանող բառեր են: Երրորդ շրջանի փոխառությունները գիտական բնույթ ունեն: Չորրորդ շրջանի փոխառությունները նորից ժողովրդախոսակցական բնույթ են կրում և հասարակ, սովորական կյանքին վերաբերող բառեր են: Փավստոս Բուզանդի երկում կան սակավաթիվ ասորական փոխառություններ՝ կատարված առաջին երեք շրջաններում: Դրանք են՝ աբեղայ, աքսոր, գուբ, զոյգ, կոմս, հաշուել (հաշիւ), հեթանոս, հրեայ, շաբաթ, շաւիղ, սինհողոս, տառապել, տղայ, ցամաք, փրկել, քահանայ և այլն :

5. Հունական փոխառություններ:

Նախաքրիստոնեական շրջանում հայերենը հունարենից ոչ մի բառ չի փոխառել¹³⁸: Քրիստոնեական շրջանում հունարենը մեծ ազդեցություն չթողեց հայերենի վրա, քանի որ ստեղծվեց ազգային գիր և գրականություն, և բացի դրանից՝ հայ և հույն եկեղեցիների միջև կային էական տարաձայնություններ: Մակայն, այնուամենայնիվ, թարգմանությունների միջոցով հայերենին անցան որոշ հունական փոխառություններ: Այդ փոխառությունների մի փոքր մասն արտացոլված է Բուզանդի երկում: Դրանցից մի քանիսը կենցաղի տարբեր բնագավառներին վերաբերող բառեր են, ինչպես՝ աղաբողոն, անակիւղ, արգասիք, բարբարոս, բեւ, էնկոմիա, կամար, կեւ, կիրակե, մեքենայ, ստրատ, տիպ, փիլիսոփայ: Բառերի մի մասն էլ կրոնական է՝ արքեպիսկոպոս, արքեիդիակոն, եկեղեցի, եպիսկոպոս, կաթողիկե, կաթողիկոս, կանոն, կղեր (կղերիկոս), հերետիկոս, մատուռն, մարտիրոս, որթողոքս, սաղմոս, քորեպիսկոպոս, քրիստոնեայ:

¹³⁶ Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 306 – 307:

¹³⁷ Նույն տեղում, էջ 335:

¹³⁸ Տե՛ս Աճառյան Հ., նշվ. աշխ., II մաս, էջ 7:

Նշենք նաև, որ Բուզանդի պատմության մեջ հունական փոխառություններից բարդության կամ ածանցման եղանակով կազմվել են նոր բառեր: Օրինակ՝ արքեպիսկոպոս - արքեպիսկոպոսա**պետ**, եպիսկոպոս - եպիսկոպոս**ական**, եպիսկոպոս**ութիւն**, մարտիրոս - մարտիրոս**ական**, մեքենայ - մեքենայ**էլ**, մեքենայ**ութիւն**, տոկոս - տոկոս**իք**, քրիստոնէայ - քրիստոնէա**միտ**, քրիստոնէ**ութիւն**, Քրիստոս - քրիստոս**ական**, քրիստոսա**կոչ**:

Բուզանդը հիշատակում է նաև պատմական անձանց, որոնք կրում են հունական անուններ՝ Աթանազիոս, Ադրիանոս, Արիստակէս, Բարսեղ, Գայիանէ, Գրիգոր, Թէոդորոս, Պաղոս, Պետրոս, Փաւստոս և այլն :

Բուզանդի երկում կան նաև մեկ-երկու բառեր՝ փոխառված լատիներենից՝ հունարենի միջոցով¹³⁹: Դրանք են՝ կանթեղ, մագիստրոս (Բուզանդի մոտ՝ մագեստրիանոս, մագիստրիանոս - նշումը մերն է), փոս:

6. Հռոմեական փոխառություններ:

Բուզանդի պատմության մեջ գործածված են մի քանի բառեր, որոնք, ըստ Աճառյանի քննության¹⁴⁰, հայերենը վերցրել է լատիներենից՝ հռոմեական շրջանում, հիմնականում ուղղակի ձևով, առանց հունարենի միջնորդության: Դրանք են՝ կայսր, կառք, մարգարիտ, սկուտեղ:

7. Եբրայական փոխառություններ:

Փավստոս Բուզանդի պատմության մեջ եբրայական փոխառությունների թիվը խիստ սահմանափակ է: Ինչպես հայտնի է, այս փոխառությունները հայերենին են անցել Ս. Գրքի հունարեն թարգմանության միջոցով¹⁴¹: Բուզանդի երկում եբրայական փոխառություններից գործածված է **գեհեն** հասարակ գոյականը, մյուսները հատուկ անուններ են՝ Ահարոն, Դանիէլ, Թորգոմ, Իսրայէլ, Մանուէլ, Մարիամ, Մովսէս, Յակոբ, Յոբ, Յովհաննէս, Յովսէփ, Նոյ, Սամուէլ: Կան հատուկ անուններից ածանցված հետևյալ ձևերը՝ թորգոմական, մանուէլեան, նոյեան:

К.П. ПОГОСЯН – Заимствования произведения Павстоса Бузанда «История Армении». – В статье изучаются заимствования в книге Павстоса Бузанда «История Армении», источники их происхождения, а также различные мнения языковедов по этому вопросу, и представляются те новообразования, которые создал Бузанд из заимствованных корней.

¹³⁹ Տե՛ս Աճառյան Հ., նշվ. աշխ., II մաս, էջ 40:

¹⁴⁰ Աճառյան Հ., նշվ. աշխ., I մաս, էջ 326 – 330:

¹⁴¹ Աճառյան Հ., նշվ. աշխ., II մաս, էջ 55, 64:

Հ Ո Ք Ե Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ՀՈՔԵԲԱՆԱԿԱՆ ՏԻՊԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՐԱՊՏԱՑԻՈՆ ՊՈՏԵՆՑԻԱԸ

Ա.Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Այսօր ամբողջ աշխարհում առկա ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով մեծանում է գործազուրկների թիվը: Ժամանակակից Հայաստանում գործազրկությունը բնորոշվում է երկրի աշխատանքային պոտենցիալի ձևավորման առանձնահատկություններով: Զարգացող շուկայական տնտեսությունը դեռևս չի հստակեցրել իր ապագան: Այս օրինաչափությունը դիտվում է հասարակական կյանքի ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական ոլորտներում: Նոր աշխատանքային հարաբերությունները գոյություն ունեն մարդկանց մեծամասնության գիտակցության մեջ պահպանված դիրքորոշումների հետ միաժամանակ: Ունենալով տարբեր կենսափորձ՝ մարդիկ տարբեր ձևով են վերաբերվում նոր տնտեսական պայմաններին և ադապտացվում են ոչ միանման: Շատ գործազուրկներ բավարար ակտիվություն չեն ցուցաբերում իրենց կենսական պրոբլեմները լուծելիս և չեն համարձակվում իրենց վրա պատասխանատվություն վերցնել գոյություն ունեցող իրավիճակի փոփոխման համար:

Այսօրվա գործազրկությունը հայկական իրականության մեջ ռեալ փաստ է: 2009թ մարտի 1-ի դրությամբ Հայաստանում գրանցվել է գործազրկության աճ մոտ 6,5%-ով: Գործազրկության թվի նման աճը պայմանավորված է վերջին ամիսների ֆինանսատնտեսական ճգնաժամով: Արդեն իսկ առկա գործազուրկների շարքն են համայրում նախկին աշխատողները, քանի որ շատ հիմնարկներում կատարվում են կրճատումներ: Նվազել է թափուր աշխատատեղերի համար աշխատող որոնող գործատուների թիվը: Գործազրկության առանձնահատկությունները հետազոտվում են առավելապես սոցիալ-տնտեսական ուղղությամբ, և գործազրկության հոգեբանական գործոններն ու սոցիալ-հոգեբանական հետևանքները մնում են ոչ բավարար ուսումնասիրված: Գործազրկության բացասական ազդեցությունը հասարակության սոցիալական առողջության և քաղաքական կայունության վրա կասկած չի հարուցում, ինչպես նաև այն, որ գործազրկությունը անմիջական կապ ունի հանցավորության հետ:

Ակնհայտ են գործազրկության տնտեսական հետևանքները /գործազուրկների և նրանց ընտանիքների կենսամակարդակի կտրուկ իջեցում, նյութական անբավարարություն, ֆինանսական անկայունություն/, որն իր հետ բերում է նաև կարևոր հոգեբանական տեղաշարժեր: Խրոնիկ գործազուրկների հոգեկան վիճակը կարելի է ներկայացնել որպես խորը սոցիալ-հոգեբանական դեգադայացիա: Հետազոտությունները ցույց են տվել, որ գործազուրկ անձանց բնորոշ են այնպիսի անձնային որակներ, ինչպիսիք են բարձր տագնապալիությունը, դեպրեսիայի նկատմամբ հակվածությունը, հաղորդակցման դժվարությունները, ցածր ինքնագնահատականը և այլն: Հասարակության գիտական հետազոտությունների վերլուծությունը ցույց է տվել, որ ամենամեծ ուշադրությունը դարձ-

վում է գործազուրկ քաղաքացիների տարբերակիչ զծերի ուսումնասիրմանը, ինչպես նաև փորձեր են կատարվում նրանց դասակարգելու ըստ սոցիոլոգիական և հոգեբանական հիմքերի, նրանց ադապտացիայի առանձնահատկությունների և վարքագծի աշխատանքը կորցնելու դեպքում¹⁴²:

Օգտագործելով սոցիոլոգիական ուսումնասիրությունները՝ Ա. Ն. Դեմինը և Ի. Պ. Պոպովան գործազուրկներին դասակարգել են՝ ըստ նրանց կողմից գերադասելի ադապտացիայի միջոցների: Դրանք են՝

1. Պայքար պետության դեմ, որն անարդարացի է վարվել իր քաղաքացիների հետ՝ թալանելով նրանց:
2. Պետության հետ հարաբերություններն իրականանում են ռենտայի պայմաններում, որի դեպքում աշխատանք կորցնելը ընդունվում է որպես հանգստի, երկարատև արձակուրդի հնարավորություն, և քանի դեռ գործազրկության նպաստի չափն ընդունելի է նորմալ կյանքի համար, մարդիկ չեն շտապում աշխատանք փնտրելու ակտիվ գործողություններ ձեռնարկել:
3. Կյանքի այլընտրանքային ոճ, որի դեպքում սկսում են կարևորվել այնպիսի ոլորտներ, որոնք կապված չեն աշխատանքային գործունեության հետ: Սա իրենից ներկայացնում է գործազուրկների ակտիվության ուղղում երեխաների դաստիարակությանը, ընտանիքի խնամքին, սեփական առողջությանը և այլն: Որքան անձը շատ է խորանում այլընտրանքային գործունեության մեջ, այնքան դժվար է նրա համար աշխատանքային ոլորտ վերադառնալը:
4. Փախչող պաշտպանական վարք, որը բնութագրվում է ակտիվություն, համառություն պահանջող տարբեր առաջարկություններից հրաժարվելով: Նման մարդկանց գիտակցության մեջ իրական վիճակը փոխելու ցանկացած փորձ դիտվում է անիմաստ, նրանք չունեն բավարար չափով ինքնավստահություն, ապագան պատկերացնում են անհեռանկարային:
5. Քառսային փնտրտուք, որի դեպքում անձի վարքը չի իմաստավորվում, այսինքն մարդը ընդունում է աշխատանքի ցանկացած առաջարկություն: Արդյունքում աշխատանքը կարող է հեռու լինել ցանկալիից, նախկինից տարբերվել պայմաններով, ծանրաբեռնվածությամբ, աշխատավարձով: Մարդը ընկնում է լարվածության մեջ, որը տանում է ընդհանուր անբավարարվածության և կոնֆլիկտայնության: Ապագան ուրվագծվում է մտայն տոներով:
6. Սահմանափակ ինֆորմացվածության պայմաններում իրականացվող փնտրտուք, որն իրականանում է անհրաժեշտ ինֆորմացիայի դեֆիցիտի հիման վրա: Այդ դեֆիցիտի պատճառը անձնական կապերի և ինֆորմացիայի աղբյուրների անբավարարությունն է: Ընդհանուր առմամբ՝ ադապտացիայի այս տեսակը պայմանավորված է մարդու մոտ ինֆորմացիայի և դրա ձեռքբերման գործիքների բացակայությամբ, որն էլ նշանակալիորեն արգելակում է նրա ակտիվությունը:

¹⁴² Плюснин Ю. М. “Социальная психология безработных”, Новосибирск:ЦСА, 1997

7. Պրոդուկտիվ խնամառուական դիրքորոշում, որի դեպքում մարդիկ պատասխանատվությունը դնում են մոտ շրջապատի վրա և օգտվում են դրա ռեսուրսներից: Ադապտացիայի այս ձևը բնորոշ է բուհերի շրջանավարտների համար, որոնք ապրում են ծնողների հետ:
8. Սեփական միջանձնային ցանցի ռեսուրսների օգտագործում, որն իր մեջ ներառում է հարազատների, ընկերների հետ կապի նորացում նրանց օգնության դիմելու նպատակով, ինչպես նաև նոր աշխատանք գտնելու համար նախկին աշխատավայրում ձևավորված վարկանիշի օգտագործում:
9. Սեփական առավելությունների, հնարավորությունների հասկացում, սեփական գործողությունների պլանավորում և փորձի կուտակում աշխատանքի շուկայում էֆեկտիվ վարքագծի համար:
10. Ստեղծված իրավիճակում նոր հեռանկարների և հնարավորությունների հայտնաբերում, աշխատանքի ընդունվելու համար սեփական ռեսուրսների օգտագործում:

Ադապտացիոն վարքագծի ներկայացված ռազմավարություններից առաջին հինգը ապակառուցողական են, իսկ վերջին երեքը ամենաշատն են արտացոլում կառուցողական ռազմավարությունները: Մյուս տարբերակները անցումային են և կախված արդյունքից՝ կարող են լինել և՛ կառուցողական, և՛ ապակառուցողական¹⁴³:

Կարևոր ենք համարում բացահայտել, թե ըստ ադապտացիոն պոտենցիալի՝ մարդիկ ինչպես են արձագանքում աշխատանքը կորցնելու փաստին, և թե ինչ հնարավոր եղանակներ կարելի է առաջարկել նրանց՝ ադապտացիոն կարողությունների մեծացման նպատակով: Հետազոտության համակազմը կազմում են Տավուշի մարզի Իջևանի շրջանում բնակվող 25-35 և 50 գործազուրկներ, որոնք աշխատանքը կորցրել են վերջին 6 ամսվա ընթացքում: Տարբեր մասնագիտական աղբյուրների, ինչպես նաև անցկացված հարցազրույցի տվյալների վերլուծության արդյունքում մենք ուզում ենք առանձնացնել գործազուրկների հետևյալ տիպերը՝

1. Ուեալ աշխատանք փնտրող գործազուրկներ, որոնք չեն գրանցվում զբաղվածության կենտրոններում և ինքնուրույն են օգտվում աշխատանքի վերաբերյալ ինֆորմացիոն ուղիներից:
2. Աշխատանք փնտրող և աշխատանքի շուկայի ծառայություններից օգտվող գործազուրկներ, որոնք ակտիվ աշխատանք են փնտրում և բավական արագ տեղավորվում են աշխատանքի:
3. Որոշակի արտոնություններ /գործազրկության նպաստ, սովորելու հնարավորություն/ ստանալու նպատակով զբաղվածության կենտրոն դիմողներ:
4. Խնամառուական դիրքորոշումով գործազուրկներ, որոնք աշխատելու մտադրություն չունեն և գործազրկության նպաստը համարում են եկամտի հիմնական աղբյուր:

¹⁴³ Демин А. Н. «Способы адаптации безработных в трудной жизненной ситуации», Социологические исследования. - 2000

5. Այս խմբի գործազուրկները չունեն հեռանկարներ, չեն գտնում իրենց տեղը, անխմաստ են համարում հայրենիքում աշխատանք փնտրելը և մեկնում են արտագնա աշխատանքների:

Ըստ վերը նշված տիպաբանության՝ առանձնացվում են գործազուրկների վարքագծի հետևյալ տիպերը՝

1. Գործազուրկներ, որոնք առանձնանում են արտահայտված դեզադապտացիայով, որը դրսևորվում է բարձր կոնֆլիկտայնությամբ, տաքարյունությամբ և շրջապատող մարդկանց նկատմամբ թշնամական վերաբերմունքով: Նրանք հակված են իշխել շրջապատին, միաժամանակ պատասխանատվություն չեն կրում իրենց արարքների համար և գերադասում են, որ ուրիշները զբաղվեն իրենց պրոբլեմները լուծելով:
2. Գործազուրկներ, որոնք փորձում են կյանքի կոչել սեփական մտքերը առանց իրականությունը հաշվի առնելու և գտնում են, որ իրենց առաքելությունն է այլ մարդկանց և, ընդհանրապես, ողջ մարդկության համար բարեկեցիկ կյանք ապահովելը:
3. Գործազուրկներ, որոնք շատ լավ ադապտացված են հասարակության մեջ. նրանք պարզապես որոշակի իրավիճակների հետևանքով դարձել են գործազուրկ: Վերջիններս հակված են աշխատանքին, պատասխանատու են սեփական գործողությունների համար, սակայն ցանկացած բացասական իրադարձությունների համար մեղադրում են իրենց:
4. Գործազուրկներ, որոնք անբարենպաստ իրադարձություններին վերաբերվում են որպես հանգամանքների անհաջող փոփոխության և իրենց կենսակերպի լավացումը սպասում են ուրիշներից: Դա նրանց բնութագրում է որպես ոչ ինքնուրույն և ուրիշներից կախվածության մեջ գտնվող անձանց:

Խրոնիկ գործազրկությունը, անձի համար ունենում է կործանիչ հետևանքներ և իրենից ներկայացնում սոցիալական կայունության խախտման վտանգ: Ուստի առաջնահերթ խնդիր է համարվում գործազուրկների տվյալ համակազմի համար հոգեշտկողական արդյունավետ միջոցառումների մշակումը՝ հիմնված ժամանակակից ինտենսիվ տեխնոլոգիաների վրա: Այժմ մշակված են 2 ուղղություններ, որոնք կոչված են մեծացնելու տվյալ սոցիալական հանրության ադապտացիոն հնարավորությունները: Դրանցից մեկը վերաբերում է երկրի սոցիալտնտեսական ոլորտի աշխատանքներին, իսկ մյուսը՝ հոգեբանական ոլորտին:

1-ին խմբի գործազուրկների հետ աշխատելիս խորհուրդ է տրվում կիրառել այնպիսի մեթոդներ, որոնք ուղղված են սեփական պրոբլեմների գիտակցմանը՝ կապված նրանց իշխելու հակման հետ: Դրա հետ կապված՝ անհրաժեշտ է վերականգնել իրականությանը ադեկվատ հավակնությունները և ձևավորել հասարակական նորմերի և արժեքների նկատմամբ դրական դիրքորոշումներ:

2-րդ խմբի գործազուրկները կարիք ունեն ինքնագնահատականի բարձրացման և լարվածությունից ու ստրեսից դուրս գալու, որոնք կապված են սեփական անձի ոչ պիտանելիության զգացման հետ: Անհրաժեշտ է խմբային թրենինգների ընթացքում կոլեկտիվ քննադատության ենթարկել շրջապատող աշխարհի նկատմամբ նրանց դիրքորոշումները:

3-րդ խմբի գործազուրկների հետ աշխատելիս անհրաժեշտ է մեծացնել նրանց վարքի ինքնատիպությունը և նպատակին հասնելու մոտիվացիան:

Նրանց պետք է հասկացնել, որ մասնագիտական գործունեության երկարատև բացակայությունը տանում է որակավորման կորստի և ինքնագնահատականի նվազման:

4-րդ խմբի գործազուրկների հետ անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ, որոնք կհեշտացնեն մասնագիտական միջավայր մտնելը և ուղղված են սեփական գործողությունների համար պատասխանատվության ընդունմանը¹⁴⁴:

Այսպիսով՝ գործազուրկ մարդիկ ունեն կայուն անձնային առանձնահատկություններ, որոնք թույլ են տալիս նրանց բաժանել 4 խմբի՝ անհրաժեշտ և ադեկվատ հոգեշտկողական միջոցառումների մշակման նպատակով: Ստացված տիպաբանությունը հնարավորություն է տալիս աշխատանքի տեղավորման գործակալություններին աշխատելու գործազուրկների մասնագիտական ոլորտում ադապտացիոն պոտենցիալի մեծացման ուղղությամբ, որը թույլ կտա նվազեցնել կադրերի անկայունությունը և նվազագույնի հասցնել գործազրկության մակարդակը: Գործազուրկների դեգադապտացիայի հիմնական գործոնները՝ սեփական կարգավիճակի գնահատականը, հավակնությունների մակարդակը, արժեքային կողմնորոշիչները բացահայտելը, ինչպես նաև անհրաժեշտ շտկողական միջոցառումների կիրառումը կնպաստեն աշխատավայրի ադեկվատ ընտրությանն ու առավել բարեհաջող ադապտացիային ու ինքնակայացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Глуханюк Н.С., *Психология безработицы: введение в проблему*, 2-е изд., М.: Мос. Психол.-соц. Ин-т, 2003
2. Демин А.Н., *Способы адаптации безработных в трудной жизненной ситуации*, Социологические исследования. 2000
3. Плюснин Ю.М., *Социальная психология безработных*, Новосибирск: ЦСА, 1997
4. Татевян Г.А., *Социально-экономическое переустройство в Армении и психическое здоровье населения*, Тезысы докладов к международной научной конференции, Ереван 1997

Ա.Ա. ՄԱՐՏԻՐՕՍՅԱՆ – *Փսիխոլոգիկական տիպեր անհրաժեշտ և նրանց անհրաժեշտ և ադեկվատ հոգեշտկողական միջոցառումների մշակման նպատակով:* – В статье представлены современные социально-психологические последствия безработицы и социально- психологические последствия особенности людей, потерявших работу. В работе выделяются основные психологические типы безработных в соответствии с их адаптационными особенностями и формами борьбы с безработицей, дается их классификация.

По выделенным типам предлагаются определенные направления работы с ними.

¹⁴⁴ Глуханюк Н. С. “Психология безработицы: введение в проблему”, 2-е изд., М.: Мос. Психол.-соц. Ин-т, 2003

**ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ
ՇՐՋԱՆՈՒՄ /ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՕՐԻՆԱԿՈՎ/**

Լ.Ե. ԱԹԱԲԵԿՅԱՆ


Ժամանակակից քաղաքական և սոցիալ-տնտեսական անկայուն իրավիճակում և տնտեսական ճգնաժամի պայմաններում սովորական են դարձել տագնապը, նյարդային լարվածությունը, սթրեսներն ու հետվնասվածքային տեղաշարժերը: Այս պայմաններում առաջնահերթ է դառնում ոչ միայն կենսագործունեությունն արդյունավետ իրականացնելու, այլև գոյատևելու պահանջմունքը: Շրջապատող իրականության անկայունության զգացումը մարդկանց մեծամասնության մոտ առաջ է բերում ժամանակակից սոցիալական իրավիճակի, նրա զարգացման ուղղվածության ապակողմնորոշում, և սրա հետ կապված՝ սեփական կյանքի նկատմամբ հեռանկարային պատկերացումների անորոշություն: Նկատվում է նաև բարձր հոգեկան լարվածություն, որի ֆոնի վրա ձևավորվում են վարքային նոր կարծրատիպեր: Մարդը սկսում է սուր կերպով զգալ իր սոցիալական անապահովվածությունը ու անվստահ դառնում սեփական ապագայի հանդեպ: Իսկ այս ամենի արդյունքում տեղի են ունենում կենսագործունեության շարժառիթի, առաջնային պահանջմունքների, սոցիալական դիրքորոշումների և կենսական արժեքների խոր փոփոխություններ՝ հանգեցնելով անվտանգության պահանջմունքի արդիականացմանն ու միաժամանակ նրա բավարարման սահմանափակմանը: Անձի նորմալ կենսագործունեությունն ու սոցիալական վարքը պայմանավորված են բազային պահանջմունքների բավարարմամբ: Այս պարագայում որպես բազային պահանջմունք հանդես է գալիս անվտանգությունը, որ Հ. Մասլոուն դիտում է որպես պաշտպանություն այն ամեն վտանգից, ինչը հարվածի տակ է դնում անձի կյանքն ու առողջությունը, տնտեսական ապահովվածությունը, եկամտուների կայունությունը, կենցաղի ապահովումը, վստահությունն իր և իր ընտանիքի անդամների ապագայի համար [4-58]:

Անվտանգության պահանջմունքը գերիշխող է դառնում սոցիալական ճրգնաժամի պայմաններում, որը խախտում է վարքի սովորական դարձած կարծրատիպերը և ձևավորված կենսակերպը՝ վերափոխելով մարդու սոցիալական վարքի շարժառիթները, ինչպես նաև հոգեբանական առանձնահատկությունները և անձնային որակները: Անվտանգության պահանջմունքի բավարարումը մարդու նորմալ կենսագործունեության, զարգացման, ինքնահաստատման և ինքնադրսևորման կարևորագույն պայմանն է: Մարդու կենսագործունեության համար անբարենպաստ և վտանգահարույց իրավիճակները անցանկալի իրադրություններ են, որոնք մի քանի իրավիճակների փոփոխությունների դեպքում կարող են դառնալ անձնային համակարգի անկայունության պատճառ: Սպառնալիքի նկատմամբ պատկերացումը ձևավորվում է վտանգի նշանակալիությունից, որը դրան է վերագրում հասարակությունը, ըստ որի էլ անձը իմաստավորում և համապատասխան վերաբերմունք է դրսևորում վտանգի նկատմամբ: Իսկ յուրա-

քանյուր անձ վտանգավոր իրավիճակը վեր է լուծում՝ ելնելով իր հոգեբանական առանձնահատկություններից:

Սոցիալական տազնապի պայմաններում մարդու անվտանգությունը Վ. Ժ. Մուրմինը և Լ. Ա. Միխայլովը պայմանավորում են՝ մարդկային, միջավայրի և պաշտպանվածության գործոններով (Տես նկար 1) [100-67]:

Նկար 1. Անձի անվտանգության կառուցվածքը



Մարդկային գործոնը ներառում է վտանգի նկատմամբ մարդու ամենատարբեր հակազդումները: **Միջավայրն** ընդգրկում է սոցիալական և ֆիզիկական տարածքը, սոցիալական միջավայրը իր հերթին ներառում է մակրո- և միկրոսոցիալական մակարդակները: Մակրոսոցիալական մակարդակը վերաբերում է դեմոգրաֆիկ, տնտեսական և այն գործոններին, որոնք ազդում են մարդու վրա, իսկ միկրոմիջավայրը՝ անձի անմիջական շրջապատին (ընտանիք, ռեֆերենտալիս և մասնագիտական խմբեր): **Պաշտպանվածության գործոններն** այն միջոցներն են, որոնք մարդն օգտագործում է տազնապային և սպառնալից իրավիճակներից պաշտպանվելու համար: Վտանգավոր իրավիճակները կարող են լինել ֆիզիկական, սոցիալական, նյութական կորստի, հոգևոր ապրումների տեսքով՝ մարդու կյանքի համար ունենալով, ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի սպառնալի բնույթ: Այդ գործոնները կարող են լինել սոցիալական, հոգեբանական (հոգեբանական պաշտպանական մեխանիզմներ) և ֆիզիկական: Իսկ պաշտպանվածության մակարդակը կախված է մարդու վարքի և գործունեության ակտիվությունից ու կոնստրուկտիվությունից, ընդ որում կոնստրուկտիվ վարքի համար կարևոր նախապայման է մարդու պահանջմունքների, կարիքների բավարարումը սոցիալական ընդունելի ձևով: **Սոցիալական պաշտպանվածու-**

թյունը ենթադրում է տեղեկատվության կազմակերպում ու կարգավորում հասարակության կամ առանձին խմբերի մակարդակում, որը կարելի է իրականացնել հիմնականում կրթական համակարգի և սոցիալ-մշակութային արժեքների տարածման միջոցով՝ ապահովելով քաղաքացիների սոցիալական անվտանգությունը: **Ֆիզիկական պաշտպանությունը** ապահովվում է ամենատարբեր տեխնիկական սարքավորումների օգնությամբ: Ֆիզիկական մակարդակում անվտանգության զգացումը բարձրացնում է արտակարգ իրավիճակներում գործունեության արդյունավետությունը՝ նպաստելով տազնապայնության իջեցմանը և իրավիճակի հաղթահարման դրական վերաբերմունքի ձևավորմանը: **Հոգեբանական պաշտպանությունը** իր հերթին կասեցնում է անձի և սոցիալական հանրության, ներքին կայունության խանգարումները, ինչպես նաև ապահովում մարդու կենսագործունեությունը և վարքային առանձնահատկությունները արտաքին ազդեցությունների պայմաններում: Անձի հոգեբանական պաշտպանությունը ընթանում է սոցիալ-խմբային և անհատական-անձնային դրսևորումներով: Եվ եթե սոցիալ-խմբային պաշտպանությունը ենթադրում է կոնկրետ խմբի պաշտպանվածությունը, ապա անհատական-անձնայինը անհատի անձնային պաշտպանվածության մակարդակն է, որն ապահովվում է անձի պաշտպանական մեխանիզմների, վարքի ռազմավարության և շրջապատի հետ փոխազդեցության շտրիիվ [5-36]:

ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ տարածքներում կենսագործունեության համար նորմալ պայմանների բացակայությունը, ժամանակակից սոցիալ-տնտեսական, քաղաքական անկայուն լարված վիճակը, օրեցօր աճող նորանոր տագնապային գործոնները (հարևան պետության կողմից սահմանի խախտում, պատերազմի վերսկսման սպառնալիք, ականապատված ցանքատարածություններ, տնտեսական ճգնաժամ, գործազրկություն, կոմունալ ծառայությունների թանկացումներ, համաճարակներ, տարբեր ճանապարհով փոխանցվող հիվանդություններ, էկոլոգիական աղետներ, և այլն) մարդու ապրելակերպը կենսագործունեության համար դարձնում են անբարենպաստ: Նման իրավիճակները, որտեղ կան բազում սպառնալիքներ և հակամարտություններ, իրենց բնութագրով մասամբ համապատասխանում են արտակարգ իրավիճակների բնութագրին [Մ.Պ. Մկրտումյան (1995-2008), Վ.Գ. Գրաչև (2004)]: Եվ եթե մի քանի տարի առաջ այս բնութագրերը գերակայում էին միայն սահմանամերձ շրջաններում [Լ.Յու. Արամյան 1998], ապա մեր կողմից կատարված դիտարկումներն ու հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ կենսագործունեության համար վտանգավոր, անբարենպաստ պայմաններ են ստեղծվել, ինչպես ՀՀ սահմանին մոտ տարածաշրջանում (հարևան պետության կողմից սահմանի խախտում, կրակոցներ, սահմանային միջադեպեր, տնտեսական ճգնաժամ, տեղեկատվության պակաս), այնպես էլ սահմանից հեռու (տնտեսական ճգնաժամ, գործազրկություն, բնական աղետներ, ապատեղեկատվություն): Այսօր սոցիալական տազնապը իր ազդեցության գործոնների բազմազանությամբ, նրա դինամիկ զարգացման, տարածման աշխարհագրությամբ դարձել է համընդհանուր՝ ներառելով նաև ՀՀ-ի կենտրոնական շրջանները:

Կենսակերպի այդպիսի պայմանները խոցելի են դարձնում հատկապես երիտասարդներին՝ ստիպելով գտնվել մշտական լարվածության մեջ, թերահավատորեն վերաբերվել ապագային՝ վաղվա օրը դիտելով սպառնալից և անհեռա-

նկարային [Վ.Գ. Գրաչև]: Ելնելով վերը նշվածից՝ 2006-10թթ հետազոտություն ենք անցկացրել ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ վայրերում ապրող (Բաղանիս, Ջուջևան, Վազաշեն, Սարիգյուղ, Չինարի) և սահմանից հեռու բնակավայրերում Իջևան, Դիլիջան, Բերդ, Աչաջուր, Նոյեմբերյան) (առնվազն 18 կմ՝ ըստ սահմանամերձ գոտու տարածքային չափորոշիչների) միևնույն սոցիալ-տնտեսական պայմաններում բնակվող երիտասարդների հետ: Խմբում ընդգրկվել են 17-30տ 100 երիտասարդներ:

Կենսագործունեության անբարենպաստ պայմաններում սոցիալական տագնապի ընկալումը երիտասարդների մոտ պարզելու համար կիրառել ենք «Եվրասիական մոնիտոր» գործակալության կողմից մշակված հատուկ հարցարան: Հարցարանը ներառում է սոցիալական սպառնալիքների՝ վտանգների ու տագնապների ընկալմանն ուղղված հարցեր:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ անկախ բնակության վայրից՝ սոցիալական տագնապի ընկալումը երիտասարդների մոտ գրեթե էական տարբերություններ չի կրում. երիտասարդների մոտ գերիշխում են կյանքին և անվտանգությանը, սոցիալական հարմարավետությանը և մշակութային-հոգեբանական հարմարավետությանը սպառնացող գործոններ:

Կյանքին և անվտանգությանը սպառնացող գործոնների մեջ կարևորում են մասսայական համաճարակները, ռազմական հարձակումը հարևան պետության կողմից, միջազգային կոնֆլիկտը և էկոլոգիական աղետները:


Որպես սոցիալական հարմարավետությանը սպառնացող գործոններ՝ նշում են ահաբեկչության տարածումը, գործազրկությունը և աղքատությունը, էներգիայի և վառելանյութի մատակարարման կասեցումը, կոմունալ ծառայությունների թանկացումները:

Մշակութային-հոգեբանական հարմարավետությանը սպառնալիք են՝ ժողովրդական իրավունքների և ազատությունների սահմանափակումը, ազգային ինքնատիպության, ինքնագիտակցության, ավանդույթների և բարոյական արժեքների կորուստը, անբարոյականության, թմրամոլության, մոլեխաղերի տարածումը:


Հարցարանի՝ «Դուք վստահ եք ձեր ապագայի հանդեպ» և «Կյանքը մեր երկրում դառնում է...» հարցադրումների վերլուծության արդյունքները ցույց տվեցին, որ, սեփական ապագայի նկատմամբ վստահությունը ուղեկցվում է իշխանության նկատմամբ բարձր անվստահությամբ/տես՝ գրաֆիկ 1 և 2/:

Այս պարադոքսը կարելի է բացատրել նրանով, որ շուկայական հարաբերությունները սրում են երիտասարդների մոտ հոգեբանական անվտանգության պահանջումները՝ առաջ բերելով սոցիալական անկայունություն և վաղվա օրվա նկատմամբ անվստահության զգացում: Այս պայմաններում բացառապես տուժում է սոցիալական և հոգեբանական անվտանգությունը: Հոգեբանական անվտանգությունը ներառում է հիմնականում հասարակության կենսագործունեության պայմանները և ինֆորմացիոն միջավայրի վիճակը, ինչպես նաև սոցիալական սուբյեկտների հարմարվողական գործառույթներն ու զարգացումը:

Գրաֆիկ 1.



Գրաֆիկ 2.



Սոցիալական անվտանգությունը սոցիալական ոլորտի այնպիսի պայման է, որի դեպքում պահպանվում են անձի կայուն վիճակը, պահանջմունքների օպտիմալ բավարարվածությունը, կյանքի բարձր որակը, անձի զարգացման համար բարենպաստ մթնոլորտի ապահովումը: Սոցիալական անվտանգությունն ապահովում է ցանկալի կենսամակարդակ և կենսառճ:

Այսօր առաջին հերթին խոցելի է դարձել հենց սոցիալական անվտանգությունը, խարխիվել է կրթական համակարգը, խեղաթյուրվել են ազգային արժեքները, իսկ կենսաապահովման կառույցները դարձել են անմատչելի: Սոցիալական ապահովածությունն իր մեջ ներառում է կենսաթոշակը, սոցիալական, բժշկական ծառայությունները, առաջին անհրաժեշտության առարկաները, որոնք

իրենց հերթին կազմված են առանձին տարատեսակներից, որոնց կենսագործունեությունը կախված է պետության քաղաքական և սոցիալ-տնտեսական կոնկրետ պայմաններից: Իսկ սա հանգեցնում է անտարբերության, ակոհոլիզմի, թմրամոլության, անբարոյականության տարածմանը: Այս ամենը, իջեցնելով սոցիալական անվտանգության մակարդակը, բարձրացնում են սոցիալական լարվածությունը: Եվ եթե կյանքի տևողությունը և նրա որակը խոսում են սոցիալական անվտանգության կայուն մակարդակի մասին, ապա այսօր մեր երկրում օրեցօր նվազում է ազգաբնակչության կյանքի տևողությունը և աճում մահացությունը: Այսօր սովորական են դարձել երիտասարդների մոտ նկատվող մարմնահոգեկան՝ սիրտանոթային, աղեստամոքսային հիվանդությունները, շաքարախտը, ինքնասպանության փորձերը, մահացության աճը: Իսկ սոցիալական լարվածությունը դրսևորվում է երիտասարդների մոտ իրենց և երկրի ապագայի, իշխանության նկատմամբ անվստահությամբ: Սոցիալական տագնապի աճող տարաբնույթ գործոնները անվստահ են դարձրել երիտասարդներին երկրի ապագայի հանդեպ, քանի որ անվերջ փոփոխվում են կենսագործունեության պայմանները, աճում սոցիալ-տնտեսական ճգնաժամը: Մարզի երիտասարդ բնակչությունը, ակնկալիքներ չունենալով իշխանություններից, առավելապես հենվում է իր հնարավորությունների վրա՝ աշխատանք ու ապրուստի միջոցներ որոնելով իր տարածաշրջանում կամ նրա սահմաններից դուրս՝ դիմելով արտագնա աշխատաքի:

Վերջին տասնամյակների իրադարձությունները հիմք են տալիս ենթադրելու, որ արտակարգ իրավիճակների /սոցիալական տագնապի/ առաջացման հաճախականությունը և նրանց բացասական հետևանքները միտում ունեն աճելու: Այդ պատճառով էլ սոցիալական տագնապի պայմաններում անձի հոգեբանական անվտանգությունը պայմանավորող վարքային մեխանիզմները և նրանց հետևանքները պետք է լինեն մշտական ուսումնասիրությունների առարկա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արամյան Լ.Յու., *ՀՀ-ի սահմանամերձ վայրերի ազգաբնակչության հոգեվիճակների բնորոշ տեղաշարժերի հետազոտում*, Միջազգային գիտաժողով նվիրված պրոֆ. Ն.Ս. Թությունջյանի 80-ամյակին, Երևան, 1998թ., էջ 24-27
2. Грачев Г.В., *Информационно-психологическая безопасность личности: состояние и возможности психологической защиты*, М. изд-во РАГС, 2004г
3. EdwART., *Словарь терминов*, МЧС, 2010
4. Райгородский Д.Я., *Психология личности*, II том, Самара, 2002г., стр. 57-59
5. Соломин В.П., Михайлов Л. А., Маликова Т. В., Шатровой О. В., *Психологическая безопасность: учебное пособие*, ВЛАДОС, 2006.

Լ.Է. ԱՏԱԲԵԿՅԱՆ - *Восприятия социальной тревожности у молодежи.* – В условиях современной политической, социально-экономической нестабильности человек начинает остро ощущать свою социально-психологическую незащищенность. Молодежь не верит завтрашнему дню и свое будущее видит неопределенным и бесперспективным.

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ

ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԿՋԲՆԱԿՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ

Ա.Ա. ՆԵՐՄԻՍՅԱՆ

Հայ կամավորական շարժման սկզբնավորմանը հարցը ցայսօր թերի է ներկայացվել հայ պատմագրության կողմից, բուհական և դպրոցական դասագրքերում, ինչը նպաստել և նպաստում է այդ գործընթացի մասին թյուր պատկերացման ստեղծմանը, ինչպես նաև հիշյալ հիմնահարցի ոչ ճիշտ մատուցմանը բուհական դասավանդման ընթացքում: Այդ դասավանդման ընթացքում նախ և առաջ անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ պատմական իրողությունները:

1914 թվականի հուլիսի 19-ին (օգոստոսի 1-ին) բռնկվում է Առաջին համաշխարհային պատերազմը: Պատերազմի բռնկումով օրակարգից դուրս է գալիս հայոց բարենորոգումների խնդիրը, և Հայաստանի երկու օտարերկրյա կառավարիչները (Հոֆը և Վեստենենկը) հետ են կանչվում: Այս իրավիճակում հայ քաղաքական ղեկավարների (ինչպես նաև՝ մտավորականների) միակ հույսը մնում է Ռուսաստանը, քանզի ամենուրեք իշխում է այն համոզմունքը, որ նա, մասնավորապես Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց հետո, կարճատև ընթացքում կգրավի Արևմտյան Հայաստանը:

Այսպիսով՝ կարևոր է այն հայեցակարգային հիմքի մատուցումը, որ հայ ղեկավար ուժերը, մտռանալով ոչ վաղ անցյալի ցարական հալածանքները, ռուսթուրքական պատերազմի բռնկումով նորից որդեգրեցին ռուսական կողմնորոշումը:

Անաչառ լինելու համար պետք է պնդել, որ ՀՅ դաշնակցությունը, Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելուց առաջ, երբ այդ առումով կասկած չկար, ընդունում է բավական իրատեսական և ճիշտ որոշումներ: Այլ հարց է, որ գործնականում նա շեղվեց այդ որոշումներից: Առաջին համաշխարհային պատերազմի կամ Թուրքիայի հետ Ռուսաստանի պատերազմի մեջ մտնելու դեպքում Դաշնակցության որդեգրվելիք մարտավարությունը և ռազմավարությունը իր ձևակերպումները գտավ 8-րդ Ընդհանուր ժողովում, որն ավարտվելու վրա էր, երբ պայթեց Առաջին համաշխարհային պատերազմը: Եվ սա այն դեպքում, երբ, Ս. Վրացյանի արտահայտությամբ, բարենորոգումների խնդրով «Հայ ժողովրդի առջև բացվում էին նոր, անսահման հրապուրիչ հորիզոններ...»:¹⁴⁵

«Հրապուրիչ հորիզոնները» այդպես էլ չբացվեցին, պատերազմով կասեցվեց բարենորոգումների խնդիրը, ՀՅ Դաշնակցությունը շեղվեց իր իրատեսական որոշումներից և դատարկվեց Արևմտյան Հայաստանն իր բնիկ հայ տարրից:

Ընդհանուր ոգևորությունների ալիքի մեջ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ 1914թ. հուլիսին, Էրզրումում գումարվում է ՀՅԴ հայտնի

¹⁴⁵ Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Պեյրոթ, 1958, էջ 7:

ժողովներից մեկը՝ 8-րդ Ընդհանուր ժողովը: Ժողովը գումարվում է հուլիսի սկզբներին, քանզի, ինչպես վկայում է Ս. Վրացյանը, «Օրակարգի հարցերը ապահոված չէին դեռ, երբ ստացվեց եվրոպական պատերազմի լուրը»:¹⁴⁶ Փաստորեն Ընդհանուր ժողովն ավարտվում է հուլիսի 19-ից (հին տոմարով) ոչ ուշ:

Ընդհանուր ժողովը շարունակվում է երկու շաբաթ և ունենում է 28 նիստ:¹⁴⁷ Ժողովի կարևոր մասնակիցներից կարելի է հիշատակել Ակնունուն, Ռոստոմին, Ռ. Զարդարյանին, Ս. Վրացյանին, Ռուբեն Տեր-Մինասյանին, Ա. Օխիկյանին (Սլաք), Մ. Թերլեմեզյանին, Համազասպին, Ա. Հանըմյանին և բժ. Ավ. Բնճեճիկյանին:¹⁴⁸

Ընդհանուր ժողովը նախ և առաջ անդրադառնում է Թուրքիայի հետ հարաբերություններին, որոնք իրենց արտահայտությունն են գտնում տարբեր բաժիններում (մեր հարաբերությունը կառավարության հետ, զինվորական ծառայության հարցը, բարեփոխումների հարցը, կուսակցությունը և ազգային հաստատությունները, մեր հարաբերությունը Օսմանյան խորհրդարանի հետ, գրավոր և բանավոր պրոպագանդան և այլն):

Ընդհանուր ժողովի որոշումների մեջ ամենաուշագրավ կետը կարելի է համարել հետևյալը՝ **պատերազմի ժամանակ յուրաքանչյուրը պարտավոր է կատարել իր քաղաքացիական պարտքը պետության նկատմամբ: Այսպիսով՝ տեսականորեն Դաշնակցություն կուսակցությունը դեմ է արտահայտվել Ռուսաստանի կամ Թուրքիայի օգտին գործողությունների գնալուն պատերազմի ժամանակ:** Սա է հաջորդ, կարևոր պատմագիտական հայեցակարգը:

Սակայն կուսակցության հետագա գործելակերպը լրիվ հակասեց Ընդհանուր ժողովի, կարծում ենք իրատեսական, այս որոշմանը:

Դա հատկապես արտահայտվեց նրանում, որ ՀՅ Դաշնակցությունը ակամա հանդես եկավ ռուսական բանակներին կից հայկական կամավորական ջոկատներ կազմակերպողի դերում: Բնչ հանգամանքներ ստիպեցին նրան՝ գնալու դրան: Անհրաժեշտ է գտնել այս հարցի պատասխանը: Հենց սկզբից հարկ ենք համարում շեշտել, որ Ընդհանուր ժողովի արձանագրությունների մեջ ոչինչ չկա կամավորական շարժման մասին, թեպետ դրա կազմակերպման նպատակահարմարության շուրջը խոսակցություններ եղել են: Բավական ինքնօրինակ առաջարկ է արել ժողովում Ռուբեն Տեր-Մինասյանը: Այդ մասին վկայում են թե՛ Մինոն Վրացյանը և թե՛ Ռուբեն Դարբինյանը (Արտաշես Չիլինկիրյան): Ս. Վրացյանը հետևյալն է գրում. «Ռուբեն Տեր-Մինասյանը, Տարոնի ներկայացուցիչ, առաջարկեց կամավորական խումբեր կազմել թուրք բանակի կողքին ռուսների դեմ, բայց միտքը այնքան տարօրինակ թվաց, որ նույնիսկ քվեարկության չդրվեց»:¹⁴⁹

Ռուբեն Դարբինյանը, որն անդրադարձել է Ռուբենի առաջարկին, հետևյալն է գրում. «Հայտնի է այնուհետև իր մասնակցությունը (Ռուբենի-Ա.Ն.) Կարին ՀՅԴ Ընդհանուր ժողովին, որուն մեջ ան պաշտպանած էր թեև մեծամասնության հակառակ, **բայց թրքահայության ֆիզիկական պահպանման համար ուրիշներեն**

¹⁴⁶ Նույն տեղում, էջ 8:

¹⁴⁷ ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 88:

¹⁴⁸ Հրաչ Տասնապետյան, Հ.Յ. Դաշնակցությունը իր կազմութենեն մինչև Ժե Ընդհանուր ժողով (1890-1924), էջ 111:

¹⁴⁹ Տե՛ս Ս. Վրացյան, Կյանքի ուղիներով, Գ հատոր, Պեյրոթ, 1963, էջ 9:

ավելի խոստումնային տեսակետ մը: Ներկայի ակնոցով դիտելով անցյալի դեպքերը՝ կրնանք ըսել, որ Ռուբենի այս տեսակետը կամ ծրագիրը ևս ավելի առողջ, ավելի հեռատես և քաղաքականապես ավելի ճիշտ էր, քան այն ճամբան, որուն հետևեցավ գրեթե ամբողջ հայությունը ՅՅԴ գլխավորությամբ:

Բնական է, որ Ռուբեն չուզեց անցնիլ Կովկաս և միանալ հոն սկսվելիք կամավորական շարժման ի նպաստ Ռուսաստանի»:¹⁵⁰ (Ընդգծումները մերն են-Ա.Ն.)

Ընդգծումներից պարզ է, որ Ռուբենը իսկապես այնպիսի մի առաջարկ է փորձել առաջ քաշել, որոնք, ըստ Ռ. Դարբինյանի / և կարծում ենք, որ նա ճիշտ է/՝ արևմտահայության համար պատերազմի ժամանակ ինքնապաշտպանվելու երաշխիքներ էին տալիս և երկրորդ, ի տարբերություն շատերի, Ռուբենը դեմ էր ի նպաստ Ռուսաստանի կամավորական շարժմանը:

Հետաքրքիրն այն է, որ Ռուբենի այս ցանկությունն ունեին նաև երիտթուրքերը: Ս. Վրացյանը հետևյալն է գրում. «Ընդհ. ժողովը վերջացած էր, երբ Կարին եկան Իթթիհատի ներկայացուցիչներ Նաջի բեյը և Բեհաեդդին Շաքիրը մի խումբ կովկասցի մահմեդականների և պարսիկ հեղափոխականների հետ: Իթթիհատի ներկայացուցիչները եկել էին բանակցելու ՅՅԴ Ընդհանուր ժողովի հետ, բայց որովհետև ժողովը փակված էր, բանակցությունների մեջ մտան ՅՅԴ Հայաստանի Բյուրոյի ներկայացուցիչների՝ Ռոստոմի ու Վռամյանի և քաղաքական հանձնախումբի անդամներից մի քանիսի հետ: Բանակցությունները տևեցին մի քանի օր և դրական հետևանք չունեցան: Իթթիհատի ներկայացուցիչները առաջարկում և պահանջում էին, որ ՀՅ դաշնակցությունը, պատերազմի դեպքում Կովկասյան բանակի թիկունքում ապստամբություններ կազմակերպեր կովկասյան մյուս ժողովուրդների հետ: Փոխարենը հաղթության պարագայում խոստանում էին ստեղծել ինքնավար Հայաստան՝ Թուրքիայի հովանավորության ներքո: Դաշնակցության ներկայացուցիչները աշխատում էին համոզել, որ Թուրքիան պատերազմին չմասնակցի, մնա չեզոք, որ թուրքերի վարած հակահայ քաղաքականության հետևանքով հնարավոր չէ Կովկասում առաջ բերել որևէ ձևի շարժում ի նպաստ Թուրքիայի, որ պատերազմի դեպքում, հայ ժողովուրդը կը մնա օրնապահ և կը կատարե իր քաղաքացիական բոլոր պարտականությունները: Այսքանը, սակայն, թուրքերին չէր գոհացնում, և բանակցությունները վերջացան առանց որոշ արդյունքի»:¹⁵¹

Կ. Սասունին գրում է. «Թուրքերը կուզեին, որ մենք ապստամբինք Արարատյան Հայաստանի մեջ, **գործենք ռուսական բանակի կոնակեն, բացի օրինական զինվորներե, կամավորական գունդեր կազմակերպենք և Կովկասյան ճակատի վրա արշավենք**»:¹⁵²

Իսկ Ռուբեն Տեր-Մինասյանը հետևյալն է գրում. «Նրանք (Իթթիհատի պատվիրակները-Ա.Ն.) կառաջարկեին հոն գումարվող (Էրզրումում-Ա.Ն.) Դաշնակցության իննի հանձնախումբին՝ ստեղծել Հայաստան՝ կեդրոն ունենալով Էջմիածինը, միավնելով դրան Տաճկահայաստանի որոշ մասեր: Գործնականապես,

¹⁵⁰ Յառաջաբանի տեղ, տե՛ս Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ. է (7), էջ 126-127, այս մասին տե՛ս նաև՝ Աշոտ Ներսիսյան, Ռուբեն, Երևան, 2007, էջ 159:

¹⁵¹ Ս. Վրացյան, նշվ. աշխ., Գ. հատոր, էջ 10-11:

¹⁵² Կ. Սասունի, Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ, Բոստոն, 1927, էջ 22:

կառաջարկվեր միացյալ Հայաստան թուրքերի կողմից, պայմանավ, որ մենք և՛ պահաջատեր դառնայինք Ռուսաստանից, և՛ Անդրկովկասում առաջապահը դառնայինք Կովկասյան ապստամբության, պատերազմի պարագային:

Առանց ետին թվով մտնելու այդ պաշտոնական բանակցությանց մեջ, այստեղ կարևոր է շեշտել, որ **անկախ և միացյալ Հայաստանի առաջարկը կուզար Թուրքիայից**, Դաշնակցությունը այս կամ այն պատճառով կը մնար յուր համեստ պահանջների վրա - Անդրկովկասում՝ ֆեդերացիա Ռուսաց սահմաններում. Տաճկաստանում՝ «ատեմի մերքեզիաթ»:¹⁵³ (Ընդգծումները մերն են-Ա.Ն.)

Այսպիսով՝ Երզրումում թուրքերն առաջարկում էին.

ա) Ռուսաստանի դեմ թուրքերի հետ ստեղծել ընդհանուր ճակատ:

բ) Բացի թուրքական բանակին օրինավոր զինվորներ տալուց՝ կամավորական գնդերի ստեղծում նույն բանակին կից:

գ) Անկախ Հայաստանի ստեղծում (Արարատյան Հայաստան):

ՀՅԴ ներկայացուցիչները մերժեցին թուրքերին՝ առաջարկելով նրանց «չմտնել պատերազմի մեջ՝ խոստանալով լոյս (օրինավոր) մնալ, երկու հայկական մասերում քաղաքացիական պարտականություններից չխուսափելով»:¹⁵⁴

Իհարկե, Թուրքերին միանալով և ռուսների դեմ ընդհանուր ճակատ ստեղծելով՝ ճիշտ էր մտորումներն այն ուղղությամբ տանելը, որ դրանով մեր դեմ կը-տրամադրինք ռուսներին (Կ. Սասունին գրում է. «մեկ խոսքով կուզեին, որ ոչ միայն չմտածենք Թուրքիո մեջ ամփոփված հայության ինքնապաշտպանության մասին, այլ այնպիսի քայլեր առնեինք, որ ամբողջ Կովկասի հայությունն ալ ենթարկվեր ռուսական սուրին»:¹⁵⁵), բայց անշուշտ, անհրաժեշտ էին նաև այնպիսի մտորումները, որ **ռուսներին միանալով՝ նպաստում էինք, որ արևմտահայ տարրը «ենթարկվեր»** թուրքական սրին: Եվ այստեղից էլ՝ ինչո՞ւ չզնալ կամավորական գնդեր ստեղծելու թուրքական առաջարկին նա: Չէ՞ որ այս դեպքում ըստ հնարավորին կկանխվեր արևմտահայ եղեռնը: Իսկ ինչ վերաբերվում է անկախ Հայաստանի ստեղծման գաղափարին, ապա կարելի է մտածել, որ թուրքերը խաբում էին, բայց նրանք չմերժվեցին հայոց այդ համոզմունքի համար, այլ այն, որ Թուրքիան պարտվելու էր: Իսկ մեզ տվյալ իրավիճակում անհրաժեշտ էր հայության պահպանումը, որի առումով, մեր խորին համոզմամբ, քայլերը ճիշտ ուղղությամբ չգնացին:¹⁵⁶ Անդրադառնալով արևմտահայոց չեզոք մնալու որոշման խնդրին՝ Կ. Սասունին ճիշտ կերպով գտնում է, որ «Մեր չեզոքությունը կը նշանակեր թշնամություն հանդեպ թուրքին»:¹⁵⁷

«Այդ պարագան կատարելապես պետք է գիտակցեինք,-շարունակում է նա այնուհետև,-կար ուրիշ շեշտված երևույթ մը, այդ այն է, որ ոչ միայն ռուսական բանակները կարշավեին Թուրքիայի վրա, այլ ռուսահայ հատվածը և հոն ամփոփված տաճկահայությունը կամավորական գունդերով միացավ ռուսական հարձակվողներին: Այս ակնհայտնի դրության առջև հայերու **հնազանդությունը և ինքնապաշտպանությունը** անխելքություն էր, պարզ կարճամտություն, թուրքերը խաբելու միամտություն էր, ինչ որ բացարձակ անկարելիություն մըն էր: Հայերս

¹⁵³ Ռուբեն, նշվ. աշխ. հ. է (7), էջ 126-127:

¹⁵⁴ Նույն տեղում, էջ 127, նաև՝ Միմոն Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 9:

¹⁵⁵ Կ. Սասունի, նշվ. աշխ., էջ 22:

¹⁵⁶ Աշոտ Ներսիսյան, Ռուբեն, էջ 22:

¹⁵⁷ Նույն տեղում, էջ 25:

պետք է բռնեինք **ապստամբական** դիրք: Ինքնապաշտպանությունը այն առումով, ինչ որ մենք հայերս կըմբռնենք, ատիկա վերջին շունչը փչելու ջանք մըն էր և չի հասնիր իր նպատակին: **Ինքնապաշտպանությունը Թուրքիո մեջ, այն ժամանակաշրջանին, կարելի էր միայն ապստամբությամբ, վճռական ու խիզախ, Վանեն մինչև Կիլիկիա»**:¹⁵⁸

Անշուշտ, ճիշտ է Կ. Սասունին, երբ փրկության միջոցը տեսնում է ապստամբությունը: Բայց մի՞թե դա հնարավոր էր տվյալ իրավիճակում, երբ, ինչպես բազմիցս շեշտել ենք, 1908թ. հետո անտեսվել էին աշխատանքներն այդ ուղղությամբ: Նա ինքն էլ գտնում է, որ հայությունը և ՀՅԴ նման ձեռնարկի համար պատրաստ չէին: Բայց չէ՞ որ նման հնարավորություն հայերին ընձեռվում էր թուրքական բանակներին կից կամավորական գնդեր ստեղծելու առաջարկով, որը, սակայն, մերժվեց: Բայց դժբախտաբար միայն Ռուբենն էր, որ կողմ էր այս առաջարկին: Եվ նա իր ձգտումն արտահայտել էր դեռևս թուրքական պատվիրակության՝ Էրզրում գալուց առաջ:

Այս ամենը, եթե ընդհանրացնենք, մղում է հետևյալ հայեցակարգային հիմքի մշակման անհրաժեշտությանը, այն է՝ **Եթե Դաշնակցություն կուսակցությունը իր ընդհանուր ժողովում մերժեց կամավորական շարժումը հոգուտ Ռուսաստանի, բայց հետագայում դեպքերի բերումով գնաց դրան, ապա միաժամանակ պետք է կամավորական գումարտակներ ստեղծեր թուրքական բանակներին կից, որն արևմտահայերին կտար զինվելու հնարավորություն և միգրացե այդքան ահավոր չլինեին ջարդերի հետևանքները, որոնց համար առիթ էր նաև հոգուտ Ռուսաստանի կամավորական շարժումը:**

Այս հայեցակարգը դասապրոցեսի ընթացքում մատուցելը չափազանց կարևոր է և ունի արդիական հնչեղություն:

Սակայն ՀՅԴ 8-րդ Ընդհանուր ժողովը, մերժելով կամավորական գնդերի կազմակերպումը թե՛ թուրքական և թե՛ ռուսական բանակներին կից, դեպքերի բերումով գնում է նման գնդերի կազմակերպմանը ռուսական բանակներին կից: Մա արդյունավետ մարտավարություն չէր արևմտահայության անվտանգությունն ապահովելու տեսանկյունից: Այս ըմբռնմանն են բերում հետագա պատմական իրադարձությունները:

А.А. НЕРСИСЯН – Концептуальные основы преподавания истории движения армянских добровольцев в Первой мировой войне. – В статье представлены новые исторические концепции в течении преподавания движения армянских добровольцев в ВУЗ-ах. Согласно с этим партия Дашнакцутюн решает не идти движением добровольцев с русскими войсками, не правильно относится к предложению турцев о создании полков армянских добровольцев, приставленных к турецкой армии, и не партия Дашнакцутюн положила начало движению добровольцев в пользу России.

¹⁵⁸ Նույն տեղում:

О НЕКОТОРЫХ ПРИЕМАХ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ ПРЕПОДАВАНИЯ РУССКОГО ЯЗЫКА

А.Г. АЙДИНЯН

Образовательный процесс конца XX начала XXI в ориентирован на формирование личности с высокой культурой общественного сознания, что подразумевает высокий нравственно-этический и интеллектуальный уровень, владение иностранными языками, готовность к межкультурному общению.

Современные мировые социально-экономические и геополитические процессы диктуют необходимость владения несколькими иностранными языками, что является жизненно важным условием самосохранения и развития нации.

Именно поэтому новые социолингвистические проблемы, которые 10-15 лет назад не были столь глобальны и актуальны, требуют к себе особого внимания.

Только владение несколькими иностранными языками дает возможность нашему обществу выйти на передовые позиции научно-технического прогресса, особенно в сфере высоких технологий, более органично войти в международное экономическое и образовательное пространство.

Успешное развитие науки и производства обусловлено организацией подготовки высококвалифицированных специалистов. Следует отметить, что большое количество художественной, научной и научно-технической литературы издано на русском языке; в интернетсети существует огромный массив информации любого порядка на русском языке. Слабое владение русским языком закрывает доступ к самой современной и актуальной научной информации.

Русский язык выступает в роли языка – посредника для получения обширной информации из всех областей жизни, приобщения к мировым ценностям, интеграции в мировую культуру и науку.

